Միգրացիայի միջազգային կազմակերպություն

Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարություն

Շվեդական միգրացիոն խորհուրդ

# Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն Գնահատման առաքելության զեկույց

Գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության խնդրանքով՝ Շվեդական միգրացիոն խորհրդի կողմից ֆինանսավորվող ՄՄԿ-ի «Հայաստանում միգրացիայի կառավարման ոլորտում կարողությունների զարգացում. գնահատում» ծրագրի շրջանակներում

Ուսումնասիրությունը կատարող թիմ՝ Պիեր Ռոսի-Լոնգի, Թերեզ Լինդսքրյոմ և Քրիստինա Գալստյան

*Անգլերենից թարգմանեց Նունե Հարությունյանը*

Երևան, 2008 թ.-ի մարտ


**Միգրացիայի միջազգային կազմակերպության կենտրոնատեղի**

Շվեյցարիա  Ժնև 19  CH-1211
 Ռուք դե Մորիյոն 17

Հեռ.՝ (+41 22) 717 9111
 Հեռապատճեն՝ (+41 22) 798 6150
 էլ. փոստ՝ hq@iom.int
 http://www.iom.int

**ՄՄԿ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հետ տեխնիկական համագործակցության կենտրոն**
Ավստրիա  Վիեննա 1010 
Նիբելունգեն գասսե 13/4

Հեռ.՝ (+43 1) 5853322 12
 Հեռապատճեն՝ (+43 1) 5853322 30
 էլ. փոստ՝ infotccvienna@iom.int
 http://www.tcc.iom.int

**ՄՄԿ Հայաստանյան առաքելություն**

ՀՀ, ք. Երևան, 0010, ՄԱԿ-ի տուն, Պետրոս Ադամյանի փ. 14, 1-ին հարկ

Հեռ.՝ (+374 10) 58 56 92; 58 37 86
 Հեռապատճեն՝ (+374 10) 54 33 65
 էլ. փոստ՝ iom@iom.am
 http://www.iom.int/armenia

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

**Նախաբան** ........ 5
**Բաժին I. Ներածություն** ........ 7
Ա. Ամփոփում ........ 7
Ա.1 Քաղաքականություն ........ 10
Ա.2 Օրենսդրություն ........ 13
Ա.3 Վարչական կառույցներ ........ 15
Ա.4 Միգրացիայի կառավարման համակարգի գործառնական մեխանիզմներ ........ 16
**Բ. Նախապատմություն և հիմնավորում** ........ 17
**Գ. Մեթոդաբանություն** ........ 18
Գ.1 Գնահատող թիմ ........ 18
**Բաժին II. Գնահատման առաքելության եզրակացությունները և հանձնարարականները** ........ 20
**Դ. Հայաստանում միգրացիայի առկա միտումների ընդհանուր նկարագիրը** ........ 20
Դ.1 Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը ........ 20
Դ.2. Միգրացիայի միտումները ........ 21
Դ.2.1 Ներգաղթը (ներառյալ փախստականները) ........ 23
Դ.2.2 Աշխատուժի արտագաղթը ........ 27
Դ. 3 Միգրացիայի առկա միտումների հետևանքով ի հայտ եկած մարտահրավերները ........ 33
**Ե. Միգրացիոն քաղաքականությունը** ........ 34
Ե.1 Քաղաքականության մշակում ........ 38
Ե.2 Ներգաղթի ընթացիկ քաղաքականությունը ........ 40
Ե.3 Ներգաղթի քաղաքականության մարտահրավերները ........ 42
Ե.4 Արտագաղթի ընթացիկ քաղաքականությունը ........ 45
Ե.5 Արտագաղթի քաղաքականության մարտահրավերները ........ 47
**Զ. Միգրացիայի հարցերին վերաբերող օրենսդրությունը** ........ 48
Զ.1 Փախստականների հարցերին վերաբերող օրենսդրությունը ........ 54
Զ.2 Պետական սահմանների պահպանության և կառավարման մասին օրենսդրությունը ........ 54
Զ.3 Աշխատանքային օրենսդրությունը ........ 55
Զ.4 Անկանոն միգրացիայի վերաբերյալ օրենսդրությունը ........ 56
Զ.5 Մարդկանց առևտրի և միգրանտների կողմից սահմանի ապօրինի հատման հարցերի վերաբերյալ օրենսդրությունը ........ 57
Զ.6 Տվյալների պաշտպանության մասին օրենսդրությունը ........ 57
Զ.7 Օրենսդրական բնույթի մարտահրավերները ........ 58
Զ.7.1. Մինչմուտքային ընթացակարգեր/վիզա ........ 59
Զ.7.2. Մուտք և ընդունում ........ 62
Զ.7.3. Կացություն և բնակություն ........ 63
Զ.7.4. Քաղաքացիություն չունեցող անձանց վերադարձ, ռեադմիսիա և արտաքսում ........ 65
Զ.7.5. Անկանոն միգրացիա, միգրանտների կողմից սահմանների ապօրինի հատում և մարդկանց թրաֆիքինգ ........ 66
Զ.7.6. Միգրացիային վերաբերող տվյալներ և վիճակագրություն ........ 67

Զ.7.7. Միգրացիայի կառավարման ինստիտուցիոնալ համակարգ.................... 69
Զ.7.8. Արտագաղթի քաղաքականություն և Հայաստանից արտագնա աշխատանքների մեկնող միգրանտների պաշտպանություն.......................... 69

**Է. Միգրացիայի կառավարման համակարգի վարչական կառույցները** ................. 71
Է.1 Միգրացիայի կառավարման համակարգում ընդգրկված պետական կառույցների ընդհանուր պատկերը ...................................................... 71
Է.2 Լիազորությունները ............................................................... 74
Է.3 Առկա կառուցվածքային մարտահրավերները ........................................ 79
Է.3.1 Կրկնվող լիազորությունները ........................................................ 79
Է.3.2 Միգրացիոն ուղղվածության տեխնիկական օժանդակության բացակայությունը ................................................................ 80

**Ը. Կիրարկումը և գործառնական մեխանիզմները**.................................. 83
Ը.1 Սահմանները ........................................................................ 83
Ը.2 Միգրանտների մոնիթորինգը և բացահայտումը ...................................... 85
Ը.3 Օտարերկրացիների աշխատանքը և ձեռնարկատիրական գործունեությունը ........................................................................ 89
Ը.4 Աշխատակազմի ուսուցումը ........................................................ 90
Ը.5 Կիրարկման առկա մարտահրավերները .......................................... 90
**Թ. Եզրափակիչ նկատառումները և հետագա քայլերը** ................................. 93
*Հավելված 1. Տեխնիկական առաջադրանքը (կրճատ տարբերակ)* .................... 95
*Հավելված 2. Հանդիպումների ժամանակացույցը*.......................................... 104
*Հավելված 3. Միգրացիայի հարցերին առնչվող միջազգային համաձայնագրերի ցանկ*......................................................................... 112
*Հավելված 4. Օգտագործված հապավումները* ............................................. 118

## Նախաբան

Ձեր առջև դրված հրատարակությունը Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտի գնահատման առաջին համապարփակ փորձն է: Այն հանդիսանում է Հայաստանի, Շվեդիայի և Միգրացիայի միջազգային կազմակերպության միջև գործընկերության արդյունքը: Հայաստանի Հանրապետության Կառավարության խնդրանքով՝ գնահատման ուսումնասիրությունը կատարվել է ՄՄԿ-ի՝ միգրացիայի ոլորտում միջկառավարական առաջատար գործակալության, և Շվեդիայի միգրացիոն խորհրդի՝ ՄՄԿ-ի ամենակարևոր և մեծապես գնահատելի գործընկերներից մեկի, կողմից. վերջինս նաև տրամադրել է գործնական փորձագիտական աջակցություն և ֆինանսավորում:

Հայաստանի, Շվեդիայի և ՄՄԿ-ի միջև ծավալված գործընկերությունը, որի շնորհիվ հնարավոր դարձավ սույն հրատարակությունը, հաստատվել է «Խմբային գործընթացի» հովանու ներքո: Վերջինս միգրացիայի և ապաստանի կառավարման շուրջ միջ-տարածաշրջանային երկխոսություն է, որը ներկայում ընթանում է Հարավային Կովկասի երեք երկրների և ԵՄ-ի անդամ պետությունների, ինչպես նաև Շվեյցարիայի միջև Եվրոպական Հանձնաժողովի Միգրացիայի ու ապաստանի բնագավառում երրորդ երկրներին ֆինանսական ու տեխնիկական աջակցության ծրագրի (ՄԱԲԵԵՖՏԱԾ) շրջանակում:

Կցանկանայինք մեր երախտիքի խոսքը հղել Շվեդիայի միգրացիոն խորհրդին՝ տրամադրված ֆինանսական և գործնական աջակցության, այդ թվում տիկին Թերեզ Լինդսքրյոմին գնահատման աշխատանքներում որպես միգրացիայի գծով ավագ փորձագետ նշանակելու համար: Միաժամանակ, մեր շնորհակալական խոսքն ենք ուղղում հրատարակության մյուս երկու հեղինակներին՝ տիկին Քրիստինա Գալստյանին (ՄՄԿ-ի Հայաստանի առաքելություն), որի շնորհիվ ուսումնասիրությունում ներկայացվեց Հայաստանի համատեքստը, ինչպես նաև թիմի ղեկավար պարոն Պիեր Ռոսի-Լոնգհին (ՄՄԿ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հետ տեխնիկական համագործակցության կենտրոն Վիեննայում), որը տրամադրեց սահմանների կառավարման, միգրացիայի ոլորտը կարգավորող ԵՄ-ի ու ազգային օրենսդրությունների վերաբերյալ փորձագիտական աջակցություն:

Գնահատման զեկույցի համար մեծապես արժեքավոր էին Հայաստանի Հանրապետության Կառավարության պաշտոնյաների, հասարակական կազմակերպությունների և Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների տրամադրած կարծիքներն ու ուղղորդումը: Գնահատման թիմի անունից կցանկանայինք շնորհակալություն հայտնել Հայաստանի Կառավարությանը՝ գնահատման թիմին ցուցաբերած օգնության և ուղղորդման համար: Մեր հատուկ երախտիքն ենք հղում Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմին, Ազգային ժողովին, Արտաքին գործերի նախարարությանը, Տարածքային կառավարման նախարարությանը և նրա ենթակայության տակ գործող Միգրացիոն գործակալությանը, Ազգային անվտանգության ծառայությանը և նրա ենթակայության տակ գործող Սահմանապահ զորքերին, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և նրա ենթակայության տակ գործող «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությանը, ՀՀ Ոստիկանությանը, Արդարադատության նախարարությանը, Ազգային վիճակագրական ծառայությանը, Առողջապահության նախարարությանը, էկոնոմիկայի նախարարությանը, ինչպես նաև Գլխավոր դատախազությանը: Ի վերջո, գնահատման մեջ հաշվի են առնվել ՄՄԿ-ի Հայաստանի և Ավստրիայի առաքելությունների մեր գործընկերների, հատկապես տիկին Իլոնա Տեր-Մինասյանի և տիկին Կատարինա Լուգհոֆերի արժեքավոր կարծիքները:

Գնահատման զեկույցը պատրաստվել է ամենաշահեկան ժամանակաշրջանում, երբ Հայաստանի Հանրապետության Կառավարությունն սկսեց հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտի բարեփոխման նախաձեռնումը: Հուսով ենք, որ գնահատման զեկույցի հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները կօգնեն միգրա-

ցիայի կառավարման արդյունավետ և համապարփակ համակարգի ստեղծման համատեքստում խթանել բարեփոխման իրականացումը Հայաստանում, որի նպատակը կլինի ապահովել ճիշտ հավասարակշռություն միգրացիոն հոսքերի դյուրինացման և հսկման միջև: Նշված համակարգը, ի թիվս այլոց, կարող է ներառել միգրացիայի կառավարման հարցերով զբաղվող կենտրոնացված նոր մարմնի ստեղծումը, էլեկտրոնային անձնագրերի և անձի ինքնությունը հաստատող կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող քարտերի ներդրումը, միջազգային լավագույն փորձին և մարդասիրական ստանդարտներին համապատասխան միգրանտների հատուկ կացարանների ստեղծումը և սահմանների ինտեգրված կառավարման նախաձեռնումը:

Հուսով ենք նաև, որ սույն զեկույցի եզրահանգումները կծառայեն որպես ուղորդիչ սկզբնաղբյուր միգրացիայի և ապաստանի բազմամյա ազգային ծրագրի համար, որը ներկայումս մշակվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից Եվրոպական հարևանության ծրագրի շրջանակում:

Ցանկանում ենք հաճելի ընթերցում:



Դոկտոր Թոմաս Լոթար Վայս

ՄՄԿ Հյուսիսային ու բալթյան պետությունների ու Եվրոպական հարևանության (Արևելք) համար տարածաշրջանային ներկայացուցիչ, Հելսինկիում ՄՄԿ-ի տարածաշրջանային գրասենյակի տնօրեն

Զյունիկ Աղաջանյան

ՀՀ Արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության պետ

Դեյվիդ Նայթ

ՄՄԿ-ի Միգրացիայի ոլորտում տեխնիկական համագործակցության գծով տնօրեն, ՄՄԿ-ի Կենտրոնատեղի ժնևում

## *ԲԱԺԻՆ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ*

## *Ա. ԱՄՓՈՓՈՒՄ*

ՀՀ Կառավարության խնդրանքով, Շվեդիայի միգրացիոն խորհրդի (ՇՄԽ) ֆինանսավորմամբ և *«Հայաստանում միգրացիայի կառավարման ոլորտում կարողությունների զարգացում. գնահատում»* ծրագրի շրջանակներում 2007 թ.-ի վերջից մինչև 2008 թ.-ի սկիզբն ընկած ժամանակահատվածում ՄՄԿ-ն ու ՇՄԽ-ն կատարեցին երկրի միգրացիայի կառավարման համակարգի գնահատում: Գնահատման առաջնային նպատակն էր բացահայտել Հայաստանում միգրացիայի կառավարման ոլորտի և իրավական հիմքերի հիմնական բացերը և ուշադրություն պահանջող ոլորտները: Որպես առաջնահերթություն դիտվեց օտարերկրացիների ներգաղթը դեպի Հայաստան, որոշակի ուշադրություն նաև տրվեց Հայաստանի քաղաքացիների արտագաղթի հարցերին: Ս.թ. ապրիլի սկզբին Հայաստանի պետական պաշտոնյաների Շվեդիա կատարած ուսումնական այցի ընթացքում փորձագետները տեղեկացան միգրացիայի կառավարման գործընթացում ներգրավված տարբեր գերատեսչությունների վարչական կառուցվածքների և պարտականությունների հնարավոր վերանայման վերաբերյալ հայեցակարգային փաստաթուղթ պատրաստելու նպատակով աշխատանքային խմբի ձևավորման մասին: Փորձագետները հույս են հայտնում, որ միգրացիայի կառավարման սույն գնահատումն օգտակար առաջարկություններ և ուղղորդում կապահովի տվյալ աշխատանքային խմբի հետագա գործունեության համար:

Գնահատման հանձնարարականներն ի վերջո ուղղված են Հայաստանի իրողությունները հաշվի առնող և միջազգային ստանդարտներին, հատկապես ԵՄ Հարևանության քաղաքականությանը և այլ ԵՄ արտաքին քաղաքականության գործիքներին համապատասխանող իրատեսական և արդյունավետ միգրացիոն քաղաքականության մշակմանն ուղղված ՀՀ կառավարության կարողությունների զորացմանը: Բացի այդ, կատարվեց միգրացիայի վերաբերյալ առկա օրենսդրության նախնական ուսումնասիրություն` միգրացիայի վերաբերյալ ԵՄ օրենսդրությանն[1] այն հնարավորինս մոտեցնելու նպատակով:

Գնահատման թիմը նկատեց, որ ՀՀ Կառավարության առջև ծառացել են մի շարք մարտահրավերներ, որոնք կապված են երկրի միջազգային սահմանները հատող և կարճատև կամ երկարատև այցելությամբ երկիր ժամանող օտարերկրացիների հոսքերը կառավարելու հետ: Կարևոր է նաև հաշվի առնել Հայաստանում կենսամակարդակի բարձրացումը և երկրի աշխարհաքաղաքական դիրքը, սերտ կապերը սևծովյան տարածաշրջանի հետ և ԵՄ նորանդամ պետությունների` Ռումինիայի և Բուլղարիայի սահմաններին մոտ լինելը, ինչի հետևանքով հավանական է ԵՄ մուտք գործելու նպատակով ժամանող միգրանտների հոսքերի ավելացումը հատկապես Շենգենյան գոտուն[2] այս երկրների միանալուց հետո: Միևնույն ժամանակ, դեպի Հայաստան օրինական միգրացիայի համատարած մատչելիության բերումով անօրինական միգրացիայի խնդիրը գրեթե ամբողջությամբ վերանում է: Այս հանգամանքին նպաստող հիմնական գործոններն են.

---

[1] ԵՄ իրավական դաշտը կազմող օրենքի ուժ ունեցող կամ չունեցող փաստաթղթեր, որ ԵՄ պետությունները կիրառում են միգրացիայի ոլորտում: Մասնավորապես, տե՛ս ԵՀ արդարադատության, ազատության և անվտանգության (JLS) գլխավոր դիրեկտորատի միասնական օրենսդրությունը:

[2] Ներկայիս Frontex հետազոտությունը ցույց է տալիս, որ Ռումինիայի և Բուլղարիայի սևծովյան նավահանգիստները չեն հանդիսանում անկանոն միգրացիայի բարձր ռիսկի գոտիներ, թեպետ այս երկրների մուտքը Շենգենյան գոտի կարող է փոխել այս իրավիճակը: Frontex և Եվրոպոլն այն կարծիքի են, որ Հարավային Կովկասից և այս տարածքի միջոցով դեպի Եվրոպա տանող անկանոն միգրացիայի ուղիներն անցնում են Թուրքիայով և Ռուսաստանով/Ուկրաինայով (Եվրոպոլ, Անկանոն միգրացիայի գծով փորձագետների հանդիպում, Հաագա, 2008 թ.-ի մարտ):

- Դեպի Հայաստան մուտքի բավական ազատական և բաց քաղաքականությունը՝ ազատ շուկայի պայմաններում խթանելու զբոսաշրջության, ներդրումների, ինչպես նաև «կրթական ծառայությունների մատուցման» զարգացումը:
- Վիզաների տրամադրման խիստ ազատական ռեժիմը թե՛ վիզաների տեսակների և թե՛ սահմանի վրա վիզա տրամադրելու առումներով: Ներկայումս գործում է ցանկ, որում նշված մոտ 73 պետությունների քաղաքացիները չեն կարող մուտքի վիզա ստանալ սահմանի վրա, սակայն առաջարկվել է այդ ցանկում նշված պետությունների թիվը կրճատել մինչև 17-ի, ինչն ակնկալվում է 2008 թ-ի մայիսից:
- Բացակայում է միջգերատեսչական պատշաճ վարչական կառույց և տարբեր նախարարությունների[3] և գործակալությունների միջև հստակ համագործակցություն միգրացիայի կառավարման տարբեր ոլորտներում: Նման իրավիճակը խոչընդոտում է ներգաղթի տարբեր հարցերի նկատմամբ միասնական մոտեցման ձևավորումը:
- Կացության արտոնագրերի տրամադրման նկատմամբ հաստատուն և միասնական պահանջների և դրանց դասակարգման, ինչպես նաև հատկապես զբաղվածության հիմքերով տրված արտոնագրերի վավերության ժամկետների սահմանման բացակայությունը առավել կարևորվում են հայաստանցիների շրջանում գործազրկության նկատառումներից ելնելով:
- Գոյություն չունի օտարերկրացիների համար աշխատանքի թույլտվությունների համակարգ, ինչը նշանակում է, որ չկան սահմանափակումներ զուտ աշխատանքային պայմանագրի հիման վրա կացության արտոնագիր ստացած օտարերկրացիներին աշխատանքի ընդունելու նկատմամբ, ինչպես նաև օտարերկկացիներին վարձող գործատուների պարտավորությունները սահմանելու առումով:
- Մուտքը և ելքը գրանցելուց բացի գոյություն չունի երկրի ներսում գտնվող օտարերկրացիների «կարգավիճակի փոփոխությունը» բացահայտելու մեխանիզմ:
- Բացակայում է վիզայի ժամկետները խախտած (թե՛ վիզաների և թե՛ կացության արտոնագրերի ժամկետները լրանալու դեպքերում) օտարերկրացիների մասին միգրացիոն իշխանություններին իրազեկելու համակարգը, բացառությամբ երկրից դուրս գալիս:
- Ընդհանուր առմամբ մուտքի և ելքի վերաբերյալ սահմանը անցնելու կետերում գործող սահմանների վերահսկման էլեկտրոնային համակարգը (ՍԿՏՀ) ունի մեծ հնարավորություններ, սակայն դրանք չեն օգտագործվում Ոստիկանության (Անձնագրերի և վիզաների վարչության) տեղեկատվական համակարգերի և շտեմարանների հետ փոխկապակցված չլինելու հետևանքով:
- Գնահատման թիմը նկատեց, որ առկա է «անկանոն/անօրինական միգրանտների» սահմանման վերաբերյալ զգալի տարածայնություն, որի պայմաններում սահմանն անօրինական կերպով հատելու համար սահմանվում են անհամաչափորեն խիստ քրեական պատժամիջոցներ, ի տարբերություն ներգաղթի կարգը խախտելու հետ կապված այլ օրինազանցությունների, մասնավորապես՝ վիզայի ժամկետը լրանալուց հետո երկրից չհեռանալու համար սահմանված սահմանափակ թվով և մեղմ (վարչական) պատժամիջոցների:

[3] Անմիջականորեն ներգրավված գործակալություններն են. ՀՀ Արտաքին գործերի նախարարության հյուպատոսական բաժինը, ՀՀ Ազգային անվտանգության ծառայության անկանոն միգրացիայի բաժինը, ՀՀ Ազգային անվտանգության ծառայության սահմանային հսկողության ուժերը, ՀՀ Ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչությունը, ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունը և նույն նախարարությանն առնթեր գործող Միգրացիոն գործակալությունը: Այլ նախարարությունները, այդ թվում՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և Զբաղվածության պետական գործակալությունը, Առևտրի, Արդարադատության, Կրթության և Առողջապահության նապարարություններն ակտիվ դերակատարում չունեն, թեպետ իրենց համապատասխան ոլորտները կրում են միգրացիայի ազդեցությունը:

- Բացակայում են կալանավորված անկանոն միգրանտների պահման վայրերը թե՛ սահմանի մոտակայքում (48-ից 72 ժամ պահելու համար), թե՛ երկրի այլ վայրերում՝ 3-ից 6 ամիս պահելու համար: Սահմանն ապօրինի կերպով հատած անձիք կարող են տեսականորեն ենթարկվել բանտարկության[4]:
- Բացակայում են հարկադիր արտաքսում իրականացնելու համար անհրաժեշտ դրամական միջոցները, թեպետ նման դեպքերի թիվը դեռ համեմատաբար փոքր է:

Ավելին, միգրացիայի ներկայիս իրողություններն ու միտումներն երբեմն իրենց բավարար արտացոլումը չեն գտնում Հայաստանի գործող օրենսդրության մեջ: Թեպետ օրենսդրությունը կարգավորում է միգրացիոն գործընթացի հիմնական երևույթները, այն բավականին պարզունակ է, քանի որ պարունակում է զուտ ընդհանուր դրույթներ, որոնք չեն անդրադառնում միգրացիոն գործընթացին հատուկ բոլոր առանձնահատկություններին: Բացի այդ, իրավական դրույթները պետք է ձևակերպվեն առավել հստակ կերպով՝ ԵՄ պահանջներին համապատասխանությունն ապահովելու համար:

Այս հարցերը պահանջում են հզոր առաջնորդության և միասնական քասաքականության ձևավորում, իրավական և ենթաօրենսդրական բազայի մշակում, միգրացիայի կառավարման արդյունավետ, պատրաստված և անհրաժեշտ միջոցներով զինված վարչակազմ, ինչպես նաև գործուն կարգ:

Փորձագետների կողմից կատարված միգրացիայի կառավարման Հայաստանի կարողությունների գնահատումը բացահայտեց թերություններ, որոնք, ժամանակին չշտկվելու դեպքում, կարող են հանգեցնել դեպի երկիր անկանոն միգրանտների հոսքերի ավելացմանը, անդրսահմանային հանցավորության և միգրացիայի հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված այլ չարաշահումների տարածմանը, սրանով իսկ սպառնալով ազգային անվտանգությանը և շահերին: Միգրացիայի ոլորտում բացահայտված այս թերություններն են.

- Ընդհանուր ուղղվածության պակաս, քաղաքականության զարգացման և իրականացման կարողությունների սահմանափակվածություն:
- Թերի իրավական դաշտ և մուտքի ու կացության վերաբերյալ հստակ չափանիշների բացակայություն:
- Միգրացիայի կառավարումը համակարգող միասնական պետկառավարման մարմնի բացակայություն[5], խնդրով զբաղվող տարբեր գործակալությունների միջև պարտականությունների հստակ տարանջատման բացակայություն[6]:
- Միգրացիայի վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության փոխկապակցված համակարգի բացակայություն և միգրացիայով զբաղվող հաստատությունների միջև տվյալների փոխանակման համակարգերի թերզարգացվածություն:

Դրական կողմերից կարելի է նշել, որ միգրացիայի կառավարման բավական «երիտասարդ» սցենարը թույլ է տալիս վերանայել մոտեցումները և ստեղծել կամ զորացնել ԵՄ պահանջներին առավել համապատասխանող մի կառույց (ԵՄ միասնական իրավական դաշտ, գլուխ 24 JLS, Միգրացիայի ենթագլուխ): Սրա համար կպահանջվեն հետևյալ փոփոխված հայեցակարգային մոտեցումները.

---

[4] Գործնականում նման բան գրեթե տեղի չի ունենում, բացառությամբ այն դեպքերի, երբ սահմանի ապօրինի հատումը կապված է մաքսանենգության հետ: Իրավապահ մարմինները հերքում են միգրանտներին կալանավորելու տարբերակը զուտ սահմանն ապօրինի կերպով հատելու պատճառով:
[5] Ինչպես օրինակ՝ Շվեդիա:
[6] Ինչպես օրինակ՝ Չեխիայի Հանրապետություն:

1. Ճանաչել ներգաղթը վերահսկելու անհրաժեշտությունը, դյուրացնել օրինական միգրացիան և օտարերկրացիների կողմից կատարվող ներդրումները, միևնույն ժամանակ փորձելով կանխել անկանոն միգրացիայի բոլոր ձևերը **և ոչ թե միայն** սահմանի ապօրինի հատումները:
2. Զորացնել միջգերատեսչական միջավայրում առավել մեծ հեղինակություն վայելող նախարարությունը կամ գործակալությունը, այն վերածելով միգրացիայի կառավարման բոլոր հարցերը համակարգող արդյունավետ կառույցի, միաժամանակ չհրաժարվելով այլ գործակալությունների ներգրավվածությունից ներգաղթի կառավարման գործընթացում:

ԵՄ-ի հետ հարաբերություններն առանցքային դեր կունենան Հայաստանում միգրացիայի կառավարման համակարգի ապագա բարեփոխումներում: Եվրոպական հարևանության քաղաքականությունն ի թիվ այլ հարցերի նախատեսում է Միգրացիայի ոլորտում գործողությունների ծրագրի մշակում, որը պետք է հիմնված լինի միգրացիայի կառավարման կուռ ռազմավարության վրա:

ՀՀ Կառավարությունը պետք է ստանձնի միգրացիայի կառավարման հսկողությունը և ձևավորի այնպիսի մի տեսլական, որը հիմնված է հստակ կանոնակարգում և իրագործում ապահովող պատշաճ հայեցակարգերի և օրենսդրության վրա: Կառույցների առումով կարևոր է ապահովել հզոր համակարգող գործակալություն, թեպետ միգրացիոն գործընթացի առանձին հատվածները կպահանջեն այլ գործակալությունների ներգրավում: Միջազգային պրակտիկայի համաձայն միգրացիայի որակյալ կառավարումն ընդգրկում է չորս փոխկապակցված մակարդակ.

- քաղաքականություն,
- օրենդրական և ենթաօրենսդրական դաշտ,
- վարչական կառույցներ,
- կիրարկում և գործառնական մեխանիզմներ:

Ելնելով այս պրակտիկայից սույն զեկույցը ներկայացնում է հետևյալ առաջարկությունները.

### Ա.1. Քաղաքականություն

Փորձագետների խումբն ըստ պատշաճի անդրադարձավ ներգաղթի ոլորտում Հայաստանի քաղաքական առաջնահերթություններին և նշեց, որ այն հիմնված է «բաց դռների» քաղաքականության վրա, որի նպատակն է ապահովել օտարերկրացիների ներհոսքը հետևյալ զարգացումներն ապահովելու համար.

► Բարձրացնել զբոսաշրջության համար Հայաստանի գրավչությունը և ավելացնել այցելուների թիվը,

► Ներգրավել օտարերկրյա ներդրումներ ոչ միայն մեծ, այլ նաև փոքր և միջին ներդրողների ու ձեռնարկատերերի կողմից,

► Շարունակել հանդես գալ, որպես «կրթության ծառայությունների մատուցող» հարևան երկրների համար:

Տուրիզմի նկատառումներից ելնելով նպատակահարմար է քննարկել առանց վիզայի մուտքի հնարավորության ընդլայնումն ավելի մեծ թվով այն զարգացած երկրների համար, որոնք առավել մեծ թվով զբոսաշրջիկներ են կարող ուղարկել Հայաստան: Վիզայի անհրաժեշտության հանգամանքը հաճախ կանխորոշում է այս կամ այն երկրում հաջորդ արձա-

կուրդն անցկացնելու որոշումը: Սահմանի վրա վիզա ստանալու դյուրինությունը չի նպաստում զբոսաշրջիկների թվի ավելացմանը, այլ բերում է անվտանգությանը սպառնացող դեպքերի առաջացման և անցանկալի անձանց մուտքի հնարավորությունների ավելացմանը: Միանգամայն պարզ է, որ պետական եկամուտների տեսանկյունից վիզան «մուտքի հարկի» վերածելն առավել նպատակահարմար է, քան վիզաների անհրաժեշտությունն ամբողջությամբ վերացնելը: Միևնույն ժամանակ հարկ է հաշվի առնել անվտանգության հետ կապված բոլոր այն հետևանքները, որոնց կարող է բերել նման մոտեցումը:

Այս մոտեցումը կիրառելի է նաև փոքր ու միջին ձեռնարկատերերի կողմից ներդրումներ ապահովելու պարագայում: Ավելին, փորձագետների կարծիքով ներդրումների խրախուսումն առավել նպատակահարմար է կատարել ոչ թե մուտքի պարզեցված կարգ սահմանելով, այլ հատկապես փոքր ներդրումները պաշտպանելուն, երաշխավորելուն և խրախուսելուն ուղղված այլ միջոցներով: Կարելի է ստեղծել «ներդրումների խրախուսման կենտրոն», որը կզբաղվի ոչ միայն մեծ բիզնեսով, այլ նաև ՓՄՁ-ներով[7]: Ինչ վերաբերում է օտարերկրյա ուսանողների համար երկրի գրավչությունն ապահովելուն, նպատակահարմար է ուշադիր ուսումնասիրել, թե որ պետությունների քաղաքացիներն են հայցում այս տեսակի վիզաներ և օտարերկրյա ուսանողների որ տոկոսն է ավարտում իրենց ուսումը Հայաստանում: Ներկայումս տարեկան տրվում է մոտ 5000 ուսանողական վիզա հարևան պետությունների (Վրաստան, Ռուսաստան, Պարսկաստան, բայց նաև Սիրիա, Հնդկաստան)[8] հիմնականում համալսարանական ուսանողներին: Այն փաստը, որ այս դիմումները մշակելու թույլտվությունը տրված է «գործակալություններին» վկայում է այն մասին, որ ուսանողական վիզա հայցելը չի երաշխավորում հենց այդ նպատակով երկիր մուտք գործելու մտադրությունը: Պարզ չէ, թե արդյո՞ք բոլոր այդ ուսանողներն են ավարտում իրենց ուսումը Հայաստանում: Ավելին, տվյալ տարիքային խմբի այս պետությունների քաղաքացիները հաճախ հայտնվում են ԵՄ արտաքին սահմանների վրա[9], և փորձագետների կարծիքով այստեղ կա որոշակի կապ և հավանական է ոչ ցանկալի, սակայն օրինական, տրանզիտ ապահովելու մտադրությունը:

Այս նկատառումներից ելնելով փորձագետների թիմը **ներգաղթի** ոլորտի համար մշակեց հետևյալ հայեցակարգային առաջարկությունները.

1. Մշակել միգրացիայի առավել հավասարակշռված քաղաքականություն, որը թույլ է տալիս վերահսկել ոչ միայն անօրինական, այլ նաև օրինական միգրացիան, սրանով իսկ հավասարակշռելով հսկողությունն ու դյուրացումը:
2. Համապատասխանեցնել նոր քաղաքականությունը Հայաստանի ներքին և արտաքին միգրացիայի իրողություններին՝ նպատակ ունենալով հսկել և կառավարել միգրացիոն հոսքերն ազգային շահերից ելնելով և ԵՀՕ միջոցով ԵՄ նկատմամբ հանձնառություններին համապատասխան:
3. Անհրաժեշտ է նշանակել միգրացիայի քաղաքականության մշակման իրավասու մարմին. իդեալական կլինի եթե այդ մարմինը լինի քաղաքացիական, որը պաշտոնապես կստանձնի ոլորտի համակարգումը միգրացիայի առավել լայն համատեքստում, որը ներառում է նաև փախստականների ընդունումն ու տեղավորումը և հաշվի է առնում տնտեսական նպատակներով թե՛ արտագաղթի և թե՛ ներգաղթի հեռանկարային ավելացումը:

---

[7] ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը 2002 թ.-ին ստեղծել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն հիմնադրամը» (http://www.smednc.am/): ՓՄՁ ԶԱԿ-ն, ինչևիցե, ուղղված է չէ օտարերկրացիներին:

[8] Այս ուսանողների թվում շատ են ազգությամբ հայերը:

[9] Միտումը հաստատված է Լեհաստանի սահմանապահ ուժերի աղբյուրներից (Եվրոպոլ, Անկանոն միգրացիայի գծով փորձագետների հանդիպում, Հաագա, 2008 թ.-ի մարտ):

4. Անհրաժեշտ է վերանայել և միմյանց համապատասխանեցնել տարբեր ճյուղային նախարարությունների (աշխատանք և սոցիալական հարցեր, առողջապահություն, կրթություն, առևտուր և տնտեսական զարգացում[10], և այլն) կողմից իրականացվող ոլորտային քաղաքականություններն ու ռազմավարությունները՝ ներառելու միգրացիոն քաղաքականության հետ կապված հայեցակարգային խնդիրներ:
5. Անհրաժեշտ է անցում կատարել «laissez-faire» մոտեցումից դեպի այն մոտեցումը, որ երկրին օգուտ բերելու համար միգրացիան պետք է կառավարվի ու կանոնակարգվի:
6. Թեպետ քաղաքականությունը կարող է չմանրամասնել կանոնակարգման հետ կապված հարցերը, կարևոր է, որ ՀՀ Կառավարությունը գիտակցի վիզաների և կացության արտոնագրերի տրամադրման չափանիշների, այդ թվում՝ տրամադրման պայմանների, վավերության ժամկետի և կացության կարգավիճակ շնորհելու հիմնավորումների վերանայման անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիների արտահոսքին, առաջնահերթությունների շարքում պետք է ընդգրկել հետևյալը.

► Փորձել հաշվառել հայկական սփյուռքը, միաժամանակ ձգտելով հայաստանցիների իրավունքներն արտերկրում պաշտպանելու նպատակով ընդլայնել հյուպատոսական ծառայությունների ցանցը: Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող (բիոմետրիկ) անձնագրերն այս քաղաքականության մասն են կազմում:

► Փորձել դյուրացնել հայաստանցիների ազատ տեղաշարժն արտերկրում, մասնավորապես ԵՄ-ում, առավել պարզեցրած մուտքի կարգ հաստատելու և ապագայում այն վերացնելու շուրջ բանակցությունների միջոցով:

► Իրականացնել հատկապես դեպի ԵՄ պետություններ «պարբերական միգրացիայի» գաղափարը՝ դրամական փոխանցումների և մասնագիտական գիտելիքների միջոցով տնտեսական զարգացումը խթանելու նպատակով:

Այս նկատառումներից ելնելով փորձագետների թիմն **արտագաղթի** ոլորտի համար մշակեց որոշակի հայեցակարգիային առաջարկություններ.

1. Միգրացիայի արդյունավետ կառավարումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ քաղաքականությունն ու ռազմավարությունը հիմնված են միգրացիոն հոսքերի վերաբերյալ հստակ տվյալների վրա: Հետևաբար, հավաստի և ստուգված տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը և վիճակագրության ստեղծումը պետք է հանդիսանան ազգային միգրացիոն քաղաքականության անբաժան մասը:
2. Արտագաղթի վերաբերյալ քաղաքականության մշակում, հաշվի առնելով երկրի ժողովրդագրության և տնտեսության վրա արտագաղթի ազդեցությունը, ինչպես նաև դրամական փոխանցումների նշանակությունը և սփյուռքի ապագա հնարավոր դերը:
3. Կամավոր կամ հարկադրված կերպով Հայաստան վերադարձողների ռեադմիսիայի և վերաինտեգրման վրա շեշտադրումը պետք է շարունակի մնալ Հայաստանի արտաքին քաղաքականության կարևոր կետերի թվում, հեռանկարում ներառելով անկանոն միգրացիան ապախրախուսելուն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ:

---

[10] Ս.թ. ապրիլից Առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը վերանվանվեց էկոնոմիկայի նախարարություն: Քանի որ գնահատումը պատրաստվել է ս.թ. մարտ ամսին, տեքստում օգտագործվում է նախարարության նախկին անվանումը:

## Ա.2. Օրենսդրություն

Ներկայիս միգրացիոն գործընթացների արդյունավետ կառավարումն ապահովելու և գնահատման թիմի առաջարկությունները հիմնավորելու նպատակով առաջարկվում է, որ գործող օրեսդրության (հատկապես Օտարերկրացիների մասին օրենքի և այլ իրավական ակտերի) հետագա մշակումը ծավալվի հետևյալ ուղղություններով.

1. *Վիզայի տրամադրում մինչև երկիր մուտք գործելը (ներկայումս իրականացվում է Արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության կողմից).*

   Գերակա ոլորտներ.

   - վիզաների և թույլտվությունների/արգոնագրերի հստակ տարանջատում. ի վերջո, թույլտվությունն ուղարկվում կամ տրվում է դեսպանատան կողմից մինչև անձի Հայաստան մուտք գործելը: Եթե այս տարբերակն անհնար է, երկիր մուտք գործելու համար տրվում է ԽԻՍՏ սահմանափակ ժամկետով վիզա երկրում հաստատվելու, ընտանիքի վերամիավորման կամ այլ նպատակներով: Վիզան պետք է միայն թույլ տա օտարերկրացուն մուտք գործել երկիր՝ կացության թույլտվություն ստանալու համար: Ակնհայտ է, որ թույտվություն տրամադրելու մասին որոշումը պետք է արդեն իսկ ընդունված լինի և երևա տվյալների շտեմարանում այն պահին, երբ տրվում է վիզան:
   - վիզաների տեսակների առավել մանրամասն համակարգի մշակում, որն ընդգրկում է այն օտարերկրացիներին, ովքեր կարող են դիմել «սովորական» վիզա ստանալու համար: Հրավերի առկայությունը չպետք է ինքնաբերաբար երաշխավորի վիզայի տրամադրում:
   - Կարճատև ու երկարատև վիզաների և տարանցիկ վիզաների նոր դասակարգման սահմանում,
   - Արտերկրում վիզաների տրամադրման կարգի մշակում այն պետությունների քաղաքացիների համար, որ չեն կարող այդ վիզան ստանալ սահմանի վրա:
   - սահմանի վրա վիզա ստանալու հնարավորության սահմանափակում ճանապարհորդողների որոշ խմբերի (զբոսաշրջիկներ, մասնավոր այցելուներ) և որոշ երկրների քաղաքացիների համար:

2. *Մուտք և ընդունում (ներկայումս մասնակիորեն իրականացվում է Արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության, Ոստիկանության ԱՎՎ-ի և սահմանային վերահսկողության ստորաբաժանումների կողմից)*

   Գերակա ոլորտներ.

   - աշխատելու/ձեռներեցությամբ զբաղվելու նպատակով երկիր մուտք գործելու մտադրություն ունեցող անձանց վիզա տրամադրելու հստակ կարգի մշակում, ներկայումս աշխատանքի թույլտվության համակարգի բացակայությունից ելնելով,
   - հատկապես երկարատև ժամանակով երկիր ժամանելու դեպքերում մուտքի վերաբերյալ պահանջների հստակեցում,
   - վիզա ստանալու դիմումները մերժելու հիմքերի հստակեցում:

3. *Այցելություն և կացություն (ներկայումս մասամբ իրականացվում է Ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչության կողմից, իսկ օտարերկրյա դիվանագետներին գրանցում է Արտաքին գործերի նախարարությունը)*

Գերակա ոլորտներ.

- կացության արտոնագրերի հստակ դասակարգում,
- զբաղվածության հիման վրա կացության արտոնագրեր տրամադրելու համար պահանջների հստակեցում (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ կապի վերահաստատում), նույնը` ձեռներեցությամբ զբաղվելու դեպքերում (Առևտրի նախարարության հետ կապի հաստատում),
- կացության արտոնագրերի համակարգի հետ կապակցված աշխատանքի թույլտվությունների համակարգի ներդրում,
- ընտանիքի վերամիավորման նպատակով կացության արտոնագիր շնորհելու օրինական պահանջների մասով առավել մեծ թվով մանրամասների ներառում,
- կացության արտոնագիր շնորհելու օրինական պահանջների մասով կազմակերպության կողմից իրականացվող կրոնական և մարդասիրական գործունեության ներառում,
- այցելության համար միասնական փաստաթղթի տրամադրում, որտեղ նշվում են այն նպատակները, որոնցով տվյալ օտարերկրացին գտնվում է Հայաստանում,
- Հայաստանում բնակվող օտարերկրացիներին, այդ թվում վիզայի ժամկետները խախտողներին, բացահայտելու և հաշվառելու կարգի սահմանում:

4. *Վերադարձ, ռեադմիսիա և արտաքսում (ներկայումս մասամբ իրականացվում է Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության կողմից)*

   Գերակա ոլորտներ.

   - դատվածության և անօրինական հիմքերով երկրում գտնվելու հիմքերով երկրից արտաքսված օտարերկրացիների մուտքն արգելելու չափանիշների վերանայում,
   - անօրինական միգրանտներին կալանավորելու օրինական հիմքերի և կալանավորման մասին որոշումների ընդունման կարգի սահմանում, ներառյալ այդ որոշումները վերանայելու և բողոքարկելու կարգը,
   - կալանավորված անկանոն միգրանտներին պահելու ընփացակարգի մասին օրենսդրության մշակում` համապատասխան ԵՄ և միջազգային չափանիշներին,
   - վտարման և արտաքսման հստակ կարգի սահմանում,
   - արտաքսման ծախսերի համար պետբյուջեյում հատուկ հոդվածի ստեղծում:

5. *Անկանոն միգրացիա և թրաֆիկինգ (ներկայումս մասամբ իրականացվում է Ոստիկանության և Դատախազության կողմից)*

   Գերակա ոլորտներ.

   - միգրացիայի ոլորտում օրինազանցությունների, այդ թվում` սահմանի անօրինական հատումների (երբ բացակայում է այլ հանցավոր մտադրությունը) և վիզայի ժամկետները խախտելու դեպքերում կիրառել **վարչական իրավունք**,
   - սահմանել կալանավորման առավելագույն ժամկետներ և պահել նրանց սահմանն անօրինական կերպով հատած և վիզայի ժամկետները խախտաց օտարերկրացիների համար (քրեական այլ մեղադրանքներով անցնող այլ հանցագործներից առանձին վայրերում),

- ամբողջությամբ կիրառել «Անդրսահմանային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի «Միգրանտներին ցամաքով, ծովով և օդով անօրինական կերպով տեղափոխելու մասին» լրացուցիչ արձանագրությունը:

6. *Միգրացիայի ոլորտի տվյալներ և վիճակագրություն*

Գերակա ոլորտներ.

- ստեղծել իրավական հիմքեր միգրացիայի ոլորտի տվյալների հավաքագրման և փոխանակման համար, հաշվի առնելով տվյալների պաշտպանության խնդիրները,
- լիազորել Վիճակագրության ազգային ծառայությանը պատրաստել վիճակագրություն միգրացիոն հոսքերի մասին՝ Եվրոսատին (EUROSTAT) տարեկան զեկույցներ ներկայացնելու համար,
- ստեղծել իրավական հիմքեր միասնական տվյալների շտեմարան հիմնելու համար (ցանկալի է սահմանների վերահսկման տեղեկատվական համակարգի՝ ՍԿՏՀ-ի հիման վրա), սահմանելով նաև տվյալների կոդավորման, մուտքագրման և պաշտպանության կարգը:

7. *Միգրացիայի կառավարման ինստիտուցիոնալ հիմքեր (ըստ անհրաժեշտության նոր իրավական ակտերի ընդունմամբ)*

Գերակա ոլորտներ.

- նշանակել միգրացիայի ոլորտի միասնական լիազոր մարմին, սահմանել դրա գործառույթներն ու պարտականությունները,
- վերանայել միգրացիայի ոլորտում գործող այլ գործակալությունների գործառույթներն ու պարտականությունները, ելնելով համակարգող լիազոր մարմնի գործառույթներից և պարտականություններից,
- ապահովել օրենսդրական դաշտի համապատասխանեցումը միգրացիայի ոլորտում ԵՄ օրենսդրությանը և անդամ պետությունների պրակտիկային:

## Ա.3. Վարչական կառույցներ

1. Նշանակել միգրացիայի (այդ թվում նաև ապաստանի) ոլորտում միասնական, հզոր, համակարգում իրականացնող լիազոր մարմին : Համակարգումը պետք է իրականացվի հայեցակարգային որոշումների, օրենդրության վերանայման, կիրառման, ինչպես նաև փորձագիտական աջակցության և միջ-գերատեսչական համակարգերի փոխկապակցվածության ուղղություններով:
2. Լիազոր համակարգող մարմինը պետք է նշանակվի գոյություն ունեցող կառույցների շարքից՝ լիազորությունների ընդլայնման միջոցով: Մարմինը պետք է ունենա կացության արտոնագրերի ժամկետներն երկարացնելու և կացության վերաբերյալ այլ հարցեր լուծելու, այդ թվում՝ ապաստան տրամադրելու դիմումներն ուսումնասիրելու պարտականություն: Պարտականությունների շրջանակը չի ընդգրկում սահմանների հսկողությունը:
3. Տվյալ կառույցի ներկայացվածությունը մարզերում ապահովվում է ՀՀ Ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանումների միջոցով, որոնք ներկայումս տրամադրում են Հայաստանում օրինական կացությունը հաստատող փաստաքղթեր: Ինչևիցե, նկատի ունենալով ներգաղթի վերաբերյալ ՀՀ-ի ներկայիս քաղաքականությունը՝ համակարգող մարմինը պետք է

քաղաքացիական մարմին լինի, թեև այն կարող է լինել ներքին գործերի տիպի նախարարության կազմում:

4. Բացի օրինական միգրացիայի վերաբերյալ իրավասություններից, տվյալ կառույցը պետք է պատասխանատու լինի օտարերկրացիների անօրինական կացությունը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու համար: Այս առումով անհրաժեշտ է համագործակցել Ոստիկանության հետ, որն ունի Հայաստանի ամբողջ տարածքում նման գործողություններ իրականացնելու համար պահանջվող կարողություններ և միջոցներ, հիմնվելով այլ շահագրգիռ մարմիններից ստացված տեղեկատվության վրա:
5. Վարչական կալանքի տակ գտնվող օտարերկրացիներին պահելու համար փակ կենտրոնի մեկուսարանի ստեղծում:
6. Առաջարկվում է նշանակել մի կառույց, որը կզբաղվի զբաղվածության վերաբերյալ տեղական պահանջներին համաձայն օտարերկրացիներին աշխատանքի թույլտվություններ տալով և կվարի օտարերկրացիների կողմից կնքված բոլոր աշխատանքային պայմանագրերի շտեմարանը:

## Ա.4. Միգրացիայի կառավարման գործառնական մեխանիզմներ

1. Նշանակել իրավասու մարմին միգրացիայի կառավարման իրականացման աշխատանքները համակարգելու համար: Զարգացնել միգրացիայի կառավարմանը ներգրավված կառույցների միջև համագործակցությունը, կնքելով համագործակցության մասին լրացուցիչ համաձայնագրեր:
2. Ստեղծել միգրացիայի ոլորտի տվյալների կառավարման միասնական համակարգ՝ ոլորտում գործող մարմիններից տվյալներ հավաքագրելու, վերլուծելու և փոխանակելու նպատակով, միգրացիայի վերաբերյալ ընդհանուր և բոլոր մարմինների կողմից կիրառվող ցուցանիշների հիման վրա: Այս գործընթացի համակարգումը նույնպես կստանձնի միգրացիայի հարցերով միասնական լիազոր մարմինը:
3. Ապահովել Արտաքին գործերի նախարարության կողմից տրված վիզաների վերաբերյալ տվյալների հասանելիությունը ԱԱԾ-ի սահմանային հսկողության ստորաբաժանումների համար:
4. Առաջարկվում է, որ ԱԱԾ-ի սահմանային հսկողության ստորաբաժանումները և Ոստիկանությունը, այդ թվում՝ Անձնագրերի և վիզաների վարչությունը, աշխատեն ՍԿՏՀ (BMIS) տվյալների շտեմարանով և կարողանան օգտվել իրենց գործունեության համար անհրաժեշտ այդ շտեմարանում զետեղված բավարար ծավալի տվյալներից: Սահմանի վերահսկման և Ոստիկանության ԱՎՎ-ի շտեմարանների միջև պետք է անհապաղ կապ ստեղծվի՝ հօգուտ ՀՀ-ի անվտանգության:
5. Առաջարկվում է, որ լիազոր մարմինը մշակի համագործակցության մեխանիզմ, որը թույլ կտա բացահայտել վիզայի ժամկետները խախտող անձանց: Սա ենթադրում է համակարգչային տեղեկատվական համակարգի ստեղծում և սահմանապահների և ոստիկանության միջև երկիր մուտք գործող և երկրից հեռացող օտարերկրկացիների մասին տվյալների փոխանակում՝ այսինքն օտարերկրացու ողջ ներգաղթի գործընթացին հետևելը:
6. Զարգացնել համագործակցությունը և կնքել ռեադմիսիայի մասին պայմանագրեր ծագման և ընդունող հիմնական, հատկապես հարևան, պետությունների հետ:
7. Արտաքսում (հարկադիր և ոչ թե վարչական վտարում) իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել ֆինանսավորման աղբյուր (միգրանտներին կացարան, տրանսպորտ և բժշկական օգնություն տրամադրելու համար):

## Բ. Նախապատմություն և հիմնավորում

ՀՀ Կառավարության խնդրանքով Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) և Շվեդական միգրացիոն խորհուրդը (ՇՄԽ) կատարեցին Հայաստանի միգրացիայի կառավարման համակարգի գնահատում (այսուհետ՝ «Գնահատում»):

Գնահատումը կատարվել է Շվեդական միգրացիոն խորհրդի կողմից ֆինանսավորվող ՄՄԿ-ի «Հայաստանում միգրացիայի կառավարման ոլորտում կարողությունների զարգացում. գնահատում» ծրագրի շրջանակներում[11] (այսուհետ՝ «Ծրագիր»): Ծրագիրը ՄՄԿ-ի «Իրազեկված միգրացիա. Հարավային Կովկասի և Եվրոմիության միջև միջ-տարածաշրջանային երկխոսության ու ազգային մակարդակով կարողությունների զարգացման միջոցով ինտեգրացված մոտեցում օրինական միգրացիայի նպաստմանը» ծրագրի շրջանակներում Հարավային Կովկասի և Եվրոպական Միության միջև համագործակցության արդյունք է: Նշված ծրագիրն իրականացվում է Հարավային Կովկասի երեք հանրապետություններում՝ Եվրոպական Հանձնաժողովի Միգրացիայի ու ապաստանի բնագավառում երրորդ երկրներին ֆինանսական ու տեխնիկական աջակցության ծրագրի ֆինանսավորմամբ: Միգրացիայի կառավարման և վերադարձերի ուղղությամբ համագործակցության ընդլայնման նպատակով՝ Հայաստանը և Շվեդիան ձևավորել են երկրների թիմ՝ «Իրազեկված միգրացիա» ծրագրի ֆինանսավորմամբ տեղի ունեցած խմբային հանդիպումների շնորհիվ:

Գնահատման հիմնական նպատակն էր մշակել հանձնարարականներ կառավարման այնպիսի նոր կառույցի վերաբերյալ, որն ունակ է ավելի արդյունավետորեն կարգավորել միգրացիայի ոլորտում երկրի առջև ծառացած խնդիրներն ու մարտահրավերները: Ի լրումն, կատարվել է միգրացիայի մասին գործող օրենսդրության նախնական ուսումնասիրություն: Ծրագիրը գնահատել է գործող քաղաքականությունը, օրենսդրական հիմքերը, այդ թվում պատվիրակված լիազորությունները, կառույցները, տեխնիկական կարողություններն ու սարքավորումները:

Գնահատումը պետք է դիտվի որպես հիմնական ուսումնասիրություն, որն ապահովում է Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման իրավական և վարչական ոլորտների, ինչպես նաև դրանց կիրարկման մասին նախնական եզրակացությունները, որոնք կծառայեն որպես ուղեցույց ԵՀԾ-ի[12] շրջանակներում ԵՄ-ի կողմից պահանջվող ՀՀ Միգրացիայի և ապաստանի գործողությունների ազգային ծրագրի որոշ մասերի կազմման ժամանակ:

Ծրագրի նպատակն է գնահատել Միգրացիոն գործակալության (ՄԳ), ինչպես նաև որոշակի առումներով միգրացիայի կառավարման խնդիրներին առնչվող պետական այլ մարմինների, մասնավորապես, ԱԳՆ-ի, ԱՄՀՆ-ի, Ոստիկանության և Միգրացիայի գործակալության առկա կառուցվածքը և գործառույթները՝ միգրացիայի մասին օրենսդրության վերջերս կատարված փոփոխությունների համատեքստում, ուսումնասիրել մինչ օրս տրամադրված տեխնիկական աջակցությունը և հետազոտել ուսուցման ու ռեսուրսների կարիքները: Սույն գնահատման արդյունքում կազմված նախնական ուղեցույցները որպես հիմք կծառայեն Հայաստանի իշխանությունների և հնարավոր դոնորների համար՝ միգրացիայի կառավարման ոլորտում գործողությունների և աջակցության հիմնական ուղղությունները որոշելիս:

Ծրագիրը ներառում է երկրի միգրացիայի կառավարման համակարգի գնահատման երկու առաքելություն: Առաջին առաքելությունը տեղի ունեցավ 2007 թ.-ի հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 2-ը, իսկ երկրորդ առաքելությունը՝ 2008 թ.-ի հունվարի 28-ից մինչև փետրվարի 1-ը: Գնահատման առաքելությունների տեխնիկական առաջադրանքը ներկայացվում է հավելված 2-ում:

[11] Ծրագրի մեկ այլ բաղադրիչը ներառել է Հայաստանի պաշտոնյաների 2008թ.-ի մարտին կայացած ուսումնական այցը Շվեդիա:

[12] Եվրոպական հարևանության ծրագիր:

# Գ. Մեթոդաբանություն

Գնահատման մեթոդաբանությունը ներառել է պետական բարձրաստիճան պաշտոնյաների հետ քննարկումները մի շարք նախարարություններում, Ազգային ժողովում, ՀՀ Նախագահի աշխատակազմում, Հայաստանում ՄԱԿ-ի առաքելության բարձրաստիճան ղեկավարության հետ խորհրդակցությունները, միգրացիայի մասին գործող օրենսդրության ուսումնասիրումը, միգրացիայի կառավարման լավագույն փորձի առումով առաջատար տեղ զբաղեցնող որոշ երկրների, ինչպես նաև տարածաշրջանի մի շարք երկրների միգրացիայի կառավարման կառույցների վերլուծությունը: Գնահատման խմբի անդամներն իրենց ավանդն են ներդրել գլոբալ պատկերացումների միջոցով՝ ելնելով միգրացիայի, սահմանների  կառավարման ոլորտում իրենց մեծ փորձառությունից և միգրացիայի մասին ԵՄ-ի և տարբեր ազգային օրենդրությունների մասին խորն իմացությունից:

Գնահատման առաջնային նպատակն է որոշել սահմանագծերը, այսինքն՝ բացահայտել Հայաստանում միգրացիայի կառավարման ոլորտի և նրա իրավական հիմքերի հիմնական բացթողումները և ուշադրություն պահանջող հանգուցային ուղղությունները: Առաջնահերթ նշանակություն է տրվել օտարերկրացիների՝ դեպի Հայաստանի ներգաղթի հարցին, թեև հարկ է նշել, որ քննության է առնվել նաև Հայաստանի քաղաքացիների արտագաղթը:

Գնահատման հաշվետվությունն արտացոլում է 2008 թ.-ի մարտի դրությամբ Հայաստանի միգրացիայի կառավարման համակարգում տիրող իրադրությունը:

Ի լրումն Հայաստանում անցկացված հարցազրույցների և քննարկումների, Ծրագրի շրջանակներում միգրացիայի հարցերով զբաղվող ՀՀ պետական մարմինների կարևոր պաշտոնյաների համար կազմակերպվել է ուսումնական այց Շվեդիա: Իրականացման համադրելի մոդելների գնահատման և փորձի փոխանակման ընձեռված հնարավորությունից զատ, ուսուցողական այցի ժամանակ մասնակիցները քննարկումներ ունեցան միջազգային փորձագետների տված նախնական գնահատումների և եզրակացությունների շուրջ[13], որոնց ընթացքում ներկայացված գործակալությունները հստակեցրին բացթողումները և տեղեկատվության անճշտությունները՝ նախքան գնահատումը Հայաստանի Կառավարությանը ներկայացնելը:

Կառավարության անդամների հետ անցկացված հարցազրույցների ժամանակացույցերը ներկայացվում են հավելված 3-ում:

## Գ.1. Գնահատող թիմը

Գնահատող թիմի անդամները.

- ՄԱԿ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Տեխնիկական համագործակցության կենտրոնի ղեկավար Պիեր Ռոսի-Լոնգի: Որպես խմբի ղեկավար պարոն Ռոսի-Լոնգին իր ավանդն է ներդրել խմբի աշխատանքներում Եվրոպական Միության դիրքորոշումների և կարողությունների զորացման և միգրացիայի կառավարման ոլորտներում ԵՄ-ի անդամակցության ծրագրերում աշխատանքի 10 տարվա փորձի տեսքով:
- Շվեդական Միգրացիոն խորհրդի Օդանավակայանների և արտակարգ իրավիճակների բաժնի պետ Թերեզ Լինդսթրյոմ: Տիկին Լինդսթրյոմն ունի Ռումինիայում և Չեխիայում միգրացիոն զուգահեռ ծրագրերի իրականացման փորձ: Նա նաև միգրացիայի հարցերով խորհրդատվություն է տրամադրել Լիտվայում, Էկվադորում և Կոստա Ռիկայում:

[13] Ամփոփ եզրակացությունների նախնական տարբերակը ներկայացվել է:

- ՄՄԿ-ի Հայաստանի առաքելության ծրագրերի մշակման և իրականացման բաժնի ղեկավար Քրիստինա Գալստյան: Տիկին Գալստյանը Հայաստանի օրենսդրության և նրա կիրառման հարցերում փորձառություն ունեցող իրավաբան է:

Խումբն աշխատել է ՄՄԿ-ի Հայաստանի առաքելության գրասենյակի ղեկավար Իլոնա Տեր-Մինասյանի ընդհանուր ղեկավարության ներքո և ստացել է Հայաստանում ՄՄԿ-ի ծրագրերի մշակման և իրականացման բաժնի և ՄՄԿ-ի Միգրացիոն ռեսուրս կենտրոնի աշխատակիցների աջակցությունը:

# *Դ. Հայաստանում միգրացիայի առկա միտումների ընդհանուր նկարագիրը*

## Դ.1. Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը

Հայաստանի Հանրապետությունն անկախացավ նախկին ԽՍՀՄ-ից 1991 թվականին: Հայաստանում պետական իշխանությունն ապահովվում է Սահմանադրությամբ և օրենքներով՝ օրենսդրական, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա: Հայաստանի Հանրապետության Նախագահը պետության գլուխն է: Գործադիր իշխանությունն[14] իրականացնում է ՀՀ Կառավարությունը, որը կազմված է Վարչապետից և նախարարներից: Մեկ պալատից կազմված Ազգային ժողովը (ԱԺ) Հայաստանի Հանրապետության գերագույն օրենսդիր մարմինն է:[15]

Հայաստանի բնակչության թիվը 3,222,900 է[16]: Հայաստանի բնակչության 96 տոկոսը հայեր են: Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների շարքին են պատկանում եզդիները, ռուսները, քրդերը, ասորիները, հույները, ուկրաինացիները, հրեաները, վրացիները, գերմանացիները, բելառուսները, լեհերը և այլն:[17]

Հայաստանը ծովային սահման չունեցող փոքր երկիր է, որի ընդհանուր տարածքը կազմում է 29,800 կմ$^2$ (11,490$^2$ մղոն): Երկրի բնական ռեսուրսները սահմանափակ են, և մնացած աշխարհի հետ ցամաքային կապն ապահովվում է բացառապես Իրանի և Վրաստանի Հանրապետության հետ ցամաքային սահմաններով: Հաստատվել են նաև օդային կապեր, որոնք ավելի ծախսատար են: Հայաստանը շարունակում է մեկուսացված մնալ հարևան Թուրքիայից և Ադրբեջանից խորհրդային տարիներին Ադրբեջանի կազմում գտնվող հայաբնակ Լեռնային Ղարաբաղի շուրջ շարունակվող հակամարտության պատճառով:

Հայաստանը սահմանակցում է չորս երկրների: Դրանք են հյուսիսում՝ Վրաստանը, արևելքում՝ Ադրբեջանը, հարավում՝ Իրանը և արևմուտքում՝ Թուրքիան: Պետական սահմանի ընդհանուր երկարությունը 1,728 կմ է, ներառյալ Ադրբեջանի հետ 1090 կմ սահմանը (սա ներառում է Ադրբեջանի Հանրապետության հետ 802 կմ ձգվող սահմանը և Ադրբեջանի կազմի մեջ մտնող Նախիջևանի հետ 288 կմ սահմանը), Վրաստանի Հանրապետության հետ 265 կմ սահմանը, Իրանի հետ 45 կմ սահմանը և Թուրքիայի հետ

---

[14] Ելնելով Ազգային ժողովի (ԱԺ) պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա՝ Հանրապետության Նախագահը նշանակում է վարչապետ, որն առաջադրվում է խորհրդարանական մեծամասնության կամ դրա անհնարինության դեպքում, ԱԺ-ի ամենամեծ թվով անդամների կողմից: Վարչապետի առաջադրած թեկնածությունների հիման վրա Հանրապետության նախագահը նշանակում և պաշտոնից ազատում է կառավարության անդամներին: Վարչապետն ուղղակիորեն հաշվետու է Նախագահին: Նա նաև հաշվետու է Ազգային ժողովին: Կառավարության կազմը ղեկավարում է Վարչապետը:

[15] Ազգային ժողովն ունի 131 պատգամավոր, որոնցից 75-ը ընտրվում են համամասնական, իսկ 56-ը՝ մեծամասնական հիմունքով: Ազգային ժողովն ընտրվում է ընդհանուր ընտրությունների միջոցով հինգ տարի ժամկետով: Խորհրդարանի վերջին ընտրություններն անցկացվել են 2007 թվականին:

[16] Տվյալները վերցվել են «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության հրատարակած 2007թ. Հայաստանի Վիճակագրական տարեգրքից»: Տես՝ http://www.armstat.am/Arm/StatData/Taregirq_07/TAREGIRQ_07_3.pdf:

[17] Բնակչության էթնիկական կառուցվածքի մասին 2001թ. մարդահամարի տվյալները տես՝ http://docs.armstat.am/census/pdfs/51.pdf:

328 կմ սահմանը:[18] Հայաստանում գործում են սահմանի հատման 14 հսկիչ անցագրային կետեր: Ներկայումս Թուրքիայի և Ադրբեջանի հետ հետ սահմանները փակ են: Կան Ադրբեջանի հետ սահմանի հատման 2 հսկիչ անցագրային կետեր՝ Մարգարան և Ախուրիկը: Իրանի հետ սահմանի վրա Հայաստանն ունի միայն մեկ հսկիչ անցագրային կետ՝ Մեղրի Կարճևանը:

Հայաստան-Վրաստան պետական սահմանի վրա գործում են հետևյալ սահմանակետերը՝ Բավրա (Նինոծմինդա), Գոգավան (Գուգութի), Այրումի երկաթուղային կայարանը (Սադախլոյի կայարան), Բագրատաշեն (Սադախլո), Պրովոլնոյե (Ախքերպի) և Ջիլիզա: Պրովոլնոյեից և Ջիլիզայից դեպի Հայաստան ճանապարհները ձգվում են լեռնային տարածքներով, ասֆալտապատ չեն և հազվադեպ են օգտագործվում:

Սահմանային այլ կետերը ներառում են Երևանի Զվարթնոց օդանավակայանը, Երևանի Էրեբունի օդանավակայանը, Գյումրիի օդանավակայանը, Ստեփանավանի և Գավառի օդանավակայանները:[19]

Ազգային անվտանգության ծառայության ենթակայության տակ գործող սահմանապահ զորքերը պահպանում են Վրաստանի և Ադրբեջանի հետ սահմանները, մինչդեռ ռուսական սահմանապահ զորքերը շարունակում են հսկել Իրանի և Թուրքիայի հետ Հայաստանի սահմանները:

Խորհրդային Միությունում վերջին տարիներին մեծ լարվածություն կար հայերի և ադրբեջանցիների միջև: Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտությունը առաջնային խնդիր էր տարածաշրջանի քաղաքականության ասպարեզում 1990-ականների ողջ ընթացքում: Երկու երկրների միջև սահմանը մինչ օրս փակ է, և չնայած միջազգային կառույցների միջնորդական գործունեությանը, հակամարտության ուղղությամբ տևական լուծում ձեռք չի բերվել:

1915 թ.-ի հայոց մեծ ցեղասպանության շուրջ պետությունների՝ իրարից տարբեր կարծիքների համատեքստում Հայաստանի հետ Թուրքիայի վատ հարաբերությունները երկար տարիների պատմություն ունեն: Ղարաբաղյան հակամարտությունն այն գործոնն է, որ ակնհայտորեն պատճառ հանդիսացավ Թուրքիայի կողմից 1993 թ.-ին Հայաստանի հետ իր սահմանը փակելու համար:

## Դ.2. Միգրացիայի միտումները

Հայաստանում արտագաղթը տասնամյակների պատմություն ունի և պայմանավորված է քաղաքական և տնտեսական պատճառներով երկիրը լքող հայերի արտագաղթի տարբեր ալիքներով: Սոցիոլոգ Ռոջերս Բրուբեյքերի խոսքերով, կոնցեպտուալ հայրենիքի իր հանգուցային պատկերացմամբ հայոց սփյուռքը «դասական» սփյուռքներից մեկն է:

Հայոց սփյուռքի շատ համայնքներ ձևավորվեցին 20-րդ դարի սկզբին, Թուրքիայում հայերի ցեղասպանությունից և Օսմանյան Կայսրությունից և Թուրքիայից նրանց զանգվածային տեղահանումից հետո:

Հայաստանի Արտաքին գործերի նախարարությունը նշում է, որ այսօր մոտ 8 միլիոն հայերի շուրջ 60 տոկոսը ապրում է երկրի տարածքից դուրս: Հատկապես մեծաթիվ է Սփյուռքը Ռուսաստանում և Միացյալ Նահանգներում: Ավելի փոքր են հայկական գաղութները Խորհրդային Միության նախկին հանրապետություններում, Եվրոպայում և Լատինական Ամերիկայում:[20]

---

[18] Թվերը ցույց են տալիս Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության սահմանների երկարությունը, չհաշված «դե ֆակտո» Հայաստանի կողմից հսկվող տարածքները:

[19] Սահմանակետերը որոշվել են 1995թ. նոյեմբերի 22-ի ««Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի իրականացումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ Կառավարության թիվ 298 որոշման հիման վրա:

[20] Տես՝ Գևորգյան Ալեքսանդր Վ, Գևորգյան Արկադի և Մաշուրյան Կարինե, «Աշխատատեղերի փոքր աճը դարձնում է աշխատուժի միգրացիան և մասնավոր փոխանցումները նորմ հետ-Խորհրդային

Արտագաղթի պատմական զարգացումների հետևանքով ձևավորված սփյուռքի կապերը Հայաստանի հետ ավելի ամուր են, բացառությամբ կորցրած տարածքները լքած հայերի, ովքեր ժամանակակից Հայաստանը չեն համարում որպես իսկական հայրենիք: Ժամանակակից սփյուռքը (վերջին երկու տասնամյակում տնտեսական պատճառներով երկիրը լքած անձինք) և հայ միգրանտների երկրորդ սերնդի ներկայացուցիչները բավականին կոսմոպոլիտ են: Հայրենիքը նրանց և՛ ձգում է, և՛ վանում: Նախկին հայրենիքի հետ հուզական, անձնական և ինստիտուցիոնալ կապեր գոյություն ունեն, սակայն այդ կապերը կարող են կրել չափազանց ոչ տնական և ընտրողական բնույթ: Սփյուռքի ներկայացուցիչներին բնորոշ է միաժամանակ երկու երկրի (Հայաստանի և բնակության երկրի) քաղաքացի լինելու զգացումը, սակայն ընդհանուր առմամբ, Սփյուռքը շարունակում է ակտիվ մասնակցություն ունենալ հայրենիքի քաղաքական և տնտեսական կյանքում:

Այսօրվա Հայաստանում միգրացիայի երևույթը սերտորեն պայմանավորված է երկրի աշխատաշուկայում աշխատանք գտնելու հնարավորությունների սահմանափակությամբ, որը պարտադրում է շատ հայերին աշխատանք որոնել այլ երկրներում: Եվ պաշտոնական տվյալները, և անկախ հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ 1991 թ.-ից սկսած 800000-ից մինչև 1000000 մարդ արտագաղթել է Հայաստանից (օրինական կամ անօրինական ճանապարհով): Պաշտոնական տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործազրկության մակարդակը 7.5 տոկոս է,[21] թեև այլ տվյալներ վկայում են մինչև 30 տոկոս և դրանից բարձր գործազրկության մասին: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին թիվը 88900, որոնց միջին տարիքը 41.1 տարեկան է (պաշտոնապես գրանցված գործազուրկների 65.2 տոկոսը 31-ից մինչև 50 տարեկան են):[22] Գործազուրկների 13.8 տոկոսը ունի բարձրագույն կրթություն, իսկ 81.5 տոկոսը՝ միջնակարգ մասնագիտական կամ միջնակարգ կրթություն:[23]

Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարարության Միգրացիայի գործակալության տվյալների համաձայն, Հայաստանը լքող մարդկանց և վերադարձողների թվերի միջև տարբերությունը 2004 թ.-ից սկսած դրական է:[24] Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության տպագրած 2006 թ.-ի ժողովրդագրական տեղեկագրի[25] համաձայն, զուտ միգրացիան 2000 թ.-ին 10.4 հազարից նվազել է՝ 2005 թ.-ին կազմելով 7.8 հազար:

Վերջին 5 տարիների ընթացքում Հայաստանում զուտ միգրացիայի մակարդակը բարելավվել է՝ 2000-2005 թթ. ժամանակաշրջանում կազմելով -6.6: 1995-2000 թթ. և 1990-1995 թթ. այն համապատասխանաբար -14.3 և -29.5 էր:[26]

---

Հայաստանում», Միգրացիոն քաղաքականության ինստիտուտ, 2008թ. մարտ: Զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝http://www.migrationinformation.org/USfocus/print.cfm?ID=676:

[21] Հայաստանում գործազրկության մակարդակը հաշվարկվում է որպես գործազուրկների թվի տոկոսային հարաբերակցությունը տնտեսապես ակտիվ բնակչության թվի նկատմամբ: Տես՝ «2007 թ. Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Զբաղվածության մաս, տպագրված՝ Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կողմից: Էլեկտրոնային տարբերակը զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝ http://www.armstat.am/Arm/StatData/Taregirq_07/TAREGIRQ_07_4.pdf: Նույն տարեգրքում նշվում է, որ ԱՄԿ-ի մեթոդաբանության համաձայն գործազրկության մակարդակը, որը հաշվարկվել է Ազգային վիճակագրական ծառայության անցկացրած տնային տնտեսությունների հետազոտության միջոցով, 27.8 տոկոս է:

[22] 2006 թ. տվյալներ՝ վերցված 2007թ. վիճակագրական տարեգրքից: Զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝ http://www.armstat.am/Arm/StatData/Taregirq_07/TAREGIRQ_07_4.pdf:

[23] Ibidem

[24] Տես՝ http://www.dmr.am/ADMR/IRAVIJAK/2004.htm

[25] Զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝ http://www.armstat.am/Arm/Publications/2006/Demos_06/indexeng.html

[26] Զուտ միգրացիայի մակարդակն արտահայտում է որոշակի ժամանակաշրջանում տվյալ տարածքի ներգաղթողների և արտագաղթողների թվի տարբերությունը՝ որը սովորաբար բաժանվում է 1,000 բնակչի

Միգրացիան անդրադառնում է նաև Հայաստանի երիտասարդների վրա: Թեև նրանց մեծ մասը բարձրագույն կրթություն է ստանում հայրենիքում,[27] սակայն շատերն իրենց ուսումն են ստանում արտասահմանում, և շրջանավարտների և գործազրկության մակարդակի համադրությունը վկայում է այն մասին, որ Հայաստանում գոյություն ունի որակյալ մասնագետների առաջարկ, որոնք ի վիճակի չեն աշխատանք գտնել հայրենիքում և, հետևաբար, ստիպված են աշխատանք որոնել արտասահմանում:

Աշխատատեղերի բացակայությունից բացի, երկրում տևականորեն առկա է աղքատության բարձր մակարդակը: Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) կողմից անցկացվող շրջանների տարեկան հետազոտությունների տվյալների համաձայն, 2006 թ.-ի վերջին ընդհանուր միջին բնակչության 26.5 տոկոսը աղքատ է: Այս թիվը 2004 թ.-ին կազմել է 34.6 տոկոս, իսկ 2005 թ.-ին՝ 29.8 տոկոս: Աղքատության տվյալների հաշվարկը հիմնվում է սպառման կառուցվածքի և սննդի և կացարանի հիմնական ծախսերի վրա, որոնք 2006 թ.-ին միջինում կազմել են շուրջ 21,555 ՀՀ դրամ (2006 թ.-ի փոխարժեքի հիման վրա այն 52 ԱՄՆ դոլար է), ԱՎԾ-ի 2007 թ.-ի «Հայաստանում սոցիալական իրավիճակի և աղքատություն» հաշվետվության համաձայն:[28]

Աշխատուժի միգրացիան (թե՛ ժամանակավոր, թե՛ մշտական) շարունակում է ծառայել որպես հայրենիքում աղքատության և սահմանափակ աշխատատեղերի խնդրի լուծման միջոց: Ի լրումն օտարերկրյա օգնությանը և ծավալուն միանվագ ներդրումներին, օրինակ՝ սփյուռքի կողմից ֆինանսավորվող շինարարական ծրագրերը, աշխատանքային միգրանտների դրամական փոխանցումները դարձել են եկամտի կարևոր աղբյուրներից մեկը: Ինչևէ, մասնավոր փոխանցումներից երկրի կախվածության փաստը մտահոգությունների առիթ է տվել:

### Դ.2.1. Ներգաղթը (ներառյալ փախստականները)

<u>Ապօրինի ներգաղթ</u>

Գտնվելով Եվրոպայի և Ասիայի սահմանագծում՝ Հայաստանը ավանդաբար եղել է միգրանտների ծագման և տարանցիկ երկիր: ԱԳՆ-ի տվյալները վկայում են այն մասին, որ վիզաների կարգավորման խստացումը նպաստել է անօրինական միգրանտների համար ուղիների փակմանը[29], սակայն դեռևս պարզ չէ, թե որքան ժամանակ Հայաստանը կմնա տարանցիկ գոտի և, անշուշտ, (նոր) ժամանման երկիր: Փորձագետների համար հասկանալի չէ, թե սահմանի վրա վիզա ստանալու իրավունք չունեցող երկրների թվի կրճատ-

---

վրա: Տվյալների աղբյուրը՝ Միավորված ազգերի քարտուղարության Տնտեսական և սոցիալական հարցերի վարչության Բնակչության բաժնի «Աշխարհի բնակչության վերլուծություն. 2006թ. վերանայում և համաշխարհային ուրբանիզացիայի համայնապատկեր. 2005թ. վերանայում»-ից, որը զետեղված է http://esa.un.org/unpp ինտերնետային կայքում:

[27] Համաշխարհային բանկի տվյալների համաձայն, չափահասների գրաճանաչության մակարդակը Հայաստանում 99.4 տոկոս է: Տես՝ http://devdata.worldbank.org/edstats/SummaryEducationProfiles/CountryData/GetShowData.asp?sCtry=ARM,Armenia. «2005թ. Հայաստանի ժողովրդագրական և առողջապահական հետազոտության» (2006թ. դեկտեմբեր) համաձայն, քաղաքային վայրերում ավագ դպրոցների հաճախելիության մակարդակը 91 տոկոս է, իսկ գյուղական վայրերում այն 87.5 տոկոս է:

[28] Տես՝ 2006թ. Տնային տնտեսությունների ինտեգրված հետազոտության հիման վրա կազմված «Հայաստանում սոցիալական իրավիճակի և աղքատության վերլուծական հաշվետվություն» (Ազգային վիճակագրական ծառայություն և Համաշխարհային բանկ, 2007թ.), որին հղում է արվում Գևորգյան Ալեքսանդր Վ, Գևորգյան Արկադի և Մաշուրյան Կարինե, «Աշխատատեղերի փոքր աճը դարձնում է աշխատանքային միգրացիան և դրամական փոխանցումները նորմ հետ-Խորհրդային Հայաստանում» աշխատությունում, Միգրացիոն քաղաքականության ինստիտուտ, 2008թ. մարտ: Զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝ http://www.migrationinformation.org/USfocus/print.cfm?ID=676:

[29] Տվյալները վերցվել են ԱԳՆ-ի աղբյուրներից, որոնք պնդում են, որ 2005թ. ի վեր բոլոր ուղիները փակվել են, քանի որ ռիսկային խմբերը այլևս չեն կարող դիմել սահմանի վրա (Հնդկաստան. Չինաստան, Կամերուն, Գանա, Եգիպտոս, Բանգլադեշ):

ման պայմաններում ինչպես կարող է բարելավվել անվտանգությունը և նվազել անկանոն միգրացիան: Այս առումով Հայաստանը վերջերս առաջին անգամ արձանագրել է ելքի համեմատ մուտքի դրական տարբերություն (այսինքն` վերոնշյալ զուտ միգրացիայի տվյալները) և հետևաբար, կարող է գտնվել զուտ ծագման երկիր դառնալու անցումային փուլում[30]: Առկա տվյալների անբավարար լինելու պատճառով (դրանք տալիս են միայն Հայաստանի սահմանը հատել փորձող բռնված մարդկանց թվերը) հնարավոր չէ քանակապես որոշել դեպի Հայաստան և երկրից դուրս ապօրինի միգրացիան: Իրականում հնարավոր չէ գնահատել, թե քանի մարդ ապօրինի կարող է անցնել սահմանը առանց բռնվելու: Բացի այդ, բացակայում են տվյալներ, որոնք թույլ կտային ճշտել, թե քանի միգրանտ, օրինականորեն Հայաստան մուտք գործելուց հետո, դառնում է անօրինական` ժամկետը լրանալուց հետո երկրում մնալու կամ միգրացիայի ոլորտը կարգավորող այլ կանոնակարգերի պահանջները խախտելու միջոցով: Ինչևէ, բավականին հեշտորեն վիզաների և կացության արտոնագրերի տրամադրում նախատեսող գործող քաղաքականությունից բխող` երկիր մուտք գործելու բավականին ազատական պայմաններից ելնելով` փորձագետները գտնում են, որ շատ միգրանտներ օրինականորեն մուտք են գործում երկիր, սակայն օգտագործում են Հայաստանը միայն որպես այլ երկրներ անօրինականորեն ներթափանցելու տարանցիկ օղակ: Ըստ էության, ներկայումս Հայաստանում անօրինական դառնալը կարելի է պատկերացնել միայն սահմանը անօրինական հատելուց հետո մուտքի թույլտվության մերժման հիման վրա: Ինչևէ, քանի որ վիզայի և հետագա կացության արտոնագրերը կարելի է բավականին հեշտ ստանալ, ուստի Հայաստանի տարածքում անօրինական միգրանտների թիվը հավանաբար սահմանափակ է, եթե չհաշվենք ԱՊՀ երկրների քաղաքացիներին, ովքեր չեն ներկայանում երկրում երեք ամիս բնակվելուց հետո և պատրաստ են տուգանք վճարել երկրից դուրս գալու պահին: Ոչ ԱՊՀ քաղաքացիները հավանաբար չեն դիմի սահմանված ժամկետը լրանալուց հետո երկրում մնալու ռիսկին, որովհետև, ինչպես արդեն նշվեց, կացության արտոնագրի ստացումը բավականին դյուրին ընթացակարգ է շատ քիչ պահանջներով: Բավական է նշել այն, որ կացության կարգավիճակ ստանալու դիմումի ձևում նույնիսկ չի պահանջվում կացության արտոնագիր ստանալու պատճառների թվարկում (այսինքն` աշխատանք, ուսում, ամուսնություն, առողջական վիճակ և այլն)[31]: Հարկ է կրկին նշել, որ պարզ չէ, թե օտարերկրացի ռեզիդենտներից, այդ թվում` ուսանողներից, քանիսն են Հայաստանում հայտարարագրված նպատակներով և մտադիր են մնալ երկրում առնվազն մինչև իրենց հայտարարագրած գործունեության, այդ թվում` ուսման, ավարտը: Մասնավորապես, կարող են թերի լինել մասնավոր ԲՈՒՀ-երի կողմից գրանցվող տվյալները: Լուրջ խնդիր է երկիր մուտք գործելուց անմիջապես հետո կիրառվող վերահսկողության և գրանցման մեխանիզմի բացակայությունը, այսինքն` անկանոն միգրացիան լոկ սահմանային նշանակության խնդիր չէ:

<u>Ռեզիդենտները</u>

ՀՀ Ոստիկանության տվյալների համաձայն, 2007 թ.-ին Հայաստանում կացության արտոնագիր են ստացել 6,155 օտարերկրացիներ: Նրանցից 30-ը ստացել են մշտական կացության կարգավիճակ, 2,115-ը` հատուկ կացության կարգավիճակ, 142-ը` սովորական կացության կարգավիճակ, իսկ 3,868-ը ստացել են ժամանակավոր կացության կարգավիճակ, ներառյալ Հայաստանի բուհերում սովորողները: 2008 թ.-ի հունվարին և փետրվարին Հայաստանում կացության կարգավիճակ են ստացել ընդամենը 675 օտարերկրացի: Նրանցից 9-ը ստացել են մշտական կացության կարգավիճակ, 353-ը` հատուկ կացության կարգավիճակ, 142-ը` սովորական կացության կարգավիճակ, իսկ 313-

[30] Թեև կարելի է ասել, որ նախորդ տվյալներում հաշվի չի առնվել միևնույն անձանց կողմից մեկից ավելի անգամ երկիր մուտք գործելը (BMIS-ը գրանցելու է մուտքի ընդհանուր տվյալները): Հետևաբար, դրանք կարող են թերի լինել:

[31] Ոստիկանության ԱՎՎ-ի աղբյուրների համաձայն, այս տեղեկությունները ստացվում են բանավոր հարցազրույցների ժամանակ:

ը ստացել են ժամանակավոր կացության կարգավիճակ, ներառյալ Հայաստանի բուհերում սովորող 179 ուսանողները: 2007 թ.-ին հարուցվել է 53 քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածով (պետական սահմանն ապօրինի հատելը), թեև պարզ չէ, թե դատավճռի կայացումից հետո որտեղ են պահվելու այդ մարդիկ[32]: 2007 թ.-ին $132^1$-րդ հոդվածով (մարդկանց առևտուր) հարուցվել է 4 քրեական գործ, 1 քրեական գործ հարուցվել է 261-րդ հոդվածով (մարմնավաճառությամբ զբաղվելը), և 25 գործ հարուցվել է 262-րդ հոդվածով (Պոռնկությամբ զբաղվելու համար որջեր կազմակերպելը, պահելը կամ կավատությունը): 2007 թ.-ին 143 մարդ դարձել է մարդկանց առևտրի և սեռական շահագործման զոհ, որոնցից 32-ը շահագործման են ենթարկվել Արաբական Միացյալ էմիրություններում (ԱՄԷ), իսկ 34-ը՝ Թուրքիայում (ներառյալ աշխատուժի առևտրի 2 զոհերը): 77 մարդ շահագործման է ենթարկվել Հայաստանում, որոնցից 3-ը Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ են:

Հարկ է նշել, որ 2007 թ.-ին 16 մարդ փոխադրվել է ԱՄԷ Ռուսաստանի Դաշնության տարածքով, իսկ 29 մարդ փոխադրվել է Վրաստանի Հանրապետության տարածքով:[33]

## Ուսանողները

2007 թ.-ի Հայաստանի վիճակագրական տարեգրքի համաձայն, Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող 4,239 օտարերկրացիներից 1,175-ը Իրանից են, 1,096-ը՝ Վրաստանից, 828-ը՝ Ռուսաստանից, 562-ը՝ Հնդկաստանից, իսկ 311-ը՝ Սիրիայից:[34] Նշված ուսանողներից (հատկապես Վրաստանի Հանրապետությունից կամ Ռուսաստանի Դաշնությունից եկած ուսանողներից) շատերը հայկական ծագում ունեն: 2005 թ.-ին պատկերը հետևյալն էր. 4,224 օտարերկրացի ուսանողների ընդհանուր թվում 1,116-ը Իրանից էին, 1,122-ը՝ Վրաստանից, 680-ը՝ Ռուսաստանից, 611-ը՝ Հնդկաստանից և 423-ը՝ Սիրիայից: Նախորդ տարում (2004թ.) 3,778 օտարերկրացի ուսանողների ընդհանուր թվում 734-ը Իրանից էին, 1,117-ը՝ Վրաստանից, 477-ը՝ Ռուսաստանից, 536-ը՝ Հնդկաստանից և 624-ը՝ Սիրիայից: [35] Հետաքրքիր կլիներ նաև գնահատել, թե օտարերկրացի այդ ուսանողներից քանիսն են դիպլոմ ստանում, թեև կարելի է ասել, որ «անհայտացած» ուսանողների քիչ դեպքեր են գրանցվել:

## Փախստականները

Հայաստանի Կառավարության առջև ծառացած են մի շարք հարցեր, որոնք առնչվում են Հայաստանի միջազգային սահմաններով միգրացիայի հոսքերի կառավարման և երկրում օտարերկրացիների բնակության հետ: Անկախության հռչակումից ի վեր Հայաստա-

---

[32] Հարկ է նշել, որ Արդարադատության նախարարության Քրեակատարողական վարչությունն այս գործերից տեղյակ չէր: Գնահատումն իրականացնող խմբին ԱԴ-ը տեղեկացրեց, որ ընդհանուր առմամբ, ազատազրկման վայրերում շատ քիչ օտարերկրյա քաղաքացիներ կան (Ռուսաստանից, Վրաստանից, Կիպրոսից, Իրանից) և նրանց մեջ մեծ թիվ են կազմում հայկական ծագում ունեցող անձինք: Օտարերկրյա քաղաքացիները պահվում են Վարդաշենի կալանավայրում, որտեղ և պահվում են մեղադրանքի տակ գտնվող Հայաստանի պետական պաշտոնյաները: Կալանքից կամ ձերբակալությունից հետո օգտվում են Հայաստանի քաղաքացիների համար սահմանված իրավունքներից, այն է՝ իրավական, սոցիալական, հոգեբանական, բժշկական խորհրդատվություն, կարճաժամկետ կամ երկարաժամկետ այցելություններ (որոնք կազմակերպում են դեսպանատները): Հանցագործության մեջ մեղադրվող օտարերկրյա քաղաքացիների հանձնումը իրականացվում է համատեղ համաձայնագրերի հիման վրա, դատախազության (Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների դեպքում) կամ Արդարադատության նախարարության միջոցով (մնացած երկրների մեծ մասի քաղաքացիների դեպքում):

[33] Աղբյուրը՝ ՀՀ Գլխավոր դատախազություն:

[34] «2007թ. Հայաստանի վիճակագրական տարեգիրք» հրապարակված Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կողմից: Տես՝ http://www.armstat.am/Arm/StatData/Taregirq_07/TAREGIRQ_07_6.pdf, էջ 115:

[35] ibidem

նում արձանագրվել են միգրացիայի մի քանի ալիքներ: Միգրացիայի մեծ շարժեր տեղի ունեցան նախկին Խորհրդային Միության փլուզումից և ԱՊՀ-ի ստեղծումից հետո: Բնակչության հոսքերը ձևավորվեցին նաև 1988 թ.-ի աղետաբեր երկրաշարժից հետո, երբ շուրջ 200,000 զոհ էվակուացվեց Հայաստանից: Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդյունքում գրանցվել են 420,000 փախստական (որոնցից 360,000-ը՝ Ադրբեջանից), ինչպես նաև 72,000 ներքին տեղահանված, ովքեր մնացին անօթևան Ադրբեջանի հետ սահմանամերձ գյուղերի ռմբակոծությունների արդյունքում, և Հայաստանում ապաստան գտած վերաբնակիչներ:[36]

Տարածաշրջանում Հայաստանի գրաված աշխարհագրական դիրքը, որը ենթակա է հնարավոր անկայունության, իր բոլոր սահմաններում առաջացրել է փախստականների և տեղահանվածների հոսքերի սպառնացող վտանգ: ՄԱԿ ՓԳՀ-ի 2006 թ.-ի գլոբալ հաշվետվության համաձայն[37], մեկ շնչի հաշվով փախստականների ամենաբարձր թիվն ունեցող երկրների շարքում Հայաստանը գրավում է երկրորդ տեղը (1000 բնակչի հաշվով 38 փախստական), առաջին տեղը զիջելով Հորդանանին: ՄԱԿ ՓԳՀ-ի 2005 թ.-ի վիճակագրական տարեգրքի համաձայն, 2005 թ.-ին գրանցվել է 219,550 փախստական և 70 ապաստան ստանալ ցանկացող: Նշված փախստականներից 219,324-ը Ադրբեջանից էին, իսկ 218-ը՝ Իրաքից: 2005 թ.-ին ներկայացվել է ապաստանստանալու 140 դիմում (բոլոր դիմողները Իրաքից):[38] Լիբանանյան ճգնաժամի սկզբնական փուլում ավելի քան 500 բնիկ հայեր ապաստանգտնելու համար 2006 թվականին Մերձավոր Արևելքից եկան Հայաստան:[39]

Միգրացիայի գործակալության տվյալների համաձայն,[40] Ադրբեջանից բռնի տեղահանված 360,000 մարդ փախստականի կարգավիճակ են ստացել 1988 – 1992 թվականներին: Նշված փախստականներից ավելի քան 80,000-ը դարձել են ՀՀ քաղաքացի: Ի լրումն նշվածի, Սուդանից, Սոմալիից, Իրաքից, Իրանից, Թուրքիայից և Ադրբեջանից ներգաղթած 22 մարդ ստացել է փախստականի կարգավիճակ:

Ադրբեջանից ներգաղթած փախստականների խնդիրները կապված են բնակարանի և աշխատանքի հետ: 2000 թ.-ի դեկտեմբերին ընդունվեց «1988-1992 թթ. Ադրբեջանից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» օրենքը: Ինչևէ, պարզ չէ, թե արդյոք նշված օրենքի կիրառումը որևէ կերպ բարելավել է փախստականների ամենօրյա վիճակը:

Ադրբեջանից ներգաղթած փախստականներից բացի, 1993 թ.-ից Հայաստանում սկսեցին ապաստան փնտրել նաև այլ մարդիկ: ՀՀ Միգրացիոն գործակալության տվյալների համաձայն, տարեկան շուրջ 30 դիմում է ներկայացվում ՄԳ ապաստան ստանալու համար: Դիմումները հիմնականում ներկայացնում են Աֆղանստանի, Իրաքի, Իրանի Իսլամական Հանրապետության, Պակիստանի, աֆրիկական երկրների քաղաքացիները:[41] Նրանք լքում են իրենց երկրները գլխավորապես սոցիալական և տնտեսական դժվարությունների պատճառով, և նրանց մեծ մասը Հայաստանն օգտագործում է որպես տա-

36 Տես՝ Եգանյան Գագիկ, «*Միգրացիայի իրադրությունը Հայաստանում. մարտահրավերներ և լուծումներ*», Ռոջեր Ռոդրիգես (խմբ.), «Միգրացիայի հեռանկարներ. Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա. աշխատուժի միգրացիայի պլանավորում և կառավարում» ՄԱԿ, 2006թ., էջ. 17–25:

37 Տես՝ «ՄԱԿ ՓԳՀ-ի 2006թ. գլոբալ հաշվետվություն», մաս 1-ին: «ՄԱԿ ՓԳՀ. ընդհանուր նկարագիր» էջ 59: Զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝ http://www.ՄԱԿ ՓԳՀ.org/gr06/index.html, http://www.ՄԱԿ ՓԳՀ.org/publ/PUBL/4666d25b0.pdf.

38 Տես՝ http://www.ՄԱԿ ՓԳՀ.org/statistics/STATISTICS/4641835e0.pdf.

39 Տես՝ «ՄԱԿ ՓԳՀ-ի 2006թ. գլոբալ հաշվետվություն», Արևելյան Եվրոպային նվիրված մաս, էջ 413: Զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝http://www.ՄԱԿ ՓԳՀ.org/home/PUBL/4666d24e11.pdf:

40 Աղբյուրը՝ Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալություն, 2008 թ.-ի մարտի 12:

41 Տես՝ http://www.dmr.am/HIMNAX~1/Paxsta~1.htm:

րանցիկ երկիր Եվրոպա մուտք գործելու համար: Ապաստան ստանալ ցանկացող 140 մարդուց 8-ին տրվել է փախստականի կարգավիճակ, ներառյալ 5 մարդ Իրաքից, 2 մարդ Սոմալիից և 1 մարդ Սուդանից:

2008 թ.-ի մարտի դրությամբ Հայաստանում ապաստան ստանալու համար դիմել է ընդամենը 1,396 անձ, որոնցից 147 դիմել են փախստականի կարգավիճակ ստանալու համար (Սուդանից, Սոմալիից, Իրաքից, Իրանից, Թուրքիայից և Ադրբեջանից), իսկ 1249 մարդ Իրաքից, Լիբանանից, Կուբայից, Պակիստանից, Չեչնիայից, Աբխազիայից դիմել են ժամանակավոր ապաստան ստանալու համար: 2008 թ.-ի մարտի դրությամբ Հայաստանում քաղաքական ապաստան ստանալու ոչ մի դիմում չի ներկայացվել:[42]

Հայաստանում ստեղծվել է հատուկ կացարան ապաստան հայցողների համար, որտեղ նրանց տեղավորում են ՀՀ տարածք մուտք գործելուց հետո: Ապաստարան հայցողները հյուրընկալվում են ժամանակավոր կացարաններում մինչև իրենց գործերի մասին որոշման կայացումը: Այդ ընթացքում նրանք անցնում են պարտադիր բժշկական քննություն, փաստաթղթերի ստուգում, ստանում են «ապաստան հայցողի վկայական» (կանաչ քարտ), միանվագ դրամական օգնություն: Նրանք իրավունք ունեն ազատ տեղաշարժվել ՀՀ տարածքի ներսում և ընտրել իրենց բնակության վայրը, ինչպես նաև կարող են օգտվել անվճար իրավաբանական և թարգմանչական ծառայություններից:

2007 թ.-ին ընդունվել է ապաստանի տրամադրման կարգը, որի համաձայն քրեապես հետապնդելի չի համարվում ապաստան հայցների կողմից երկիր ապօրինի մուտք գործելը: Ինչևէ, փորձը ցույց է տվել, որ ապաստան հայցողի փաստացի մուտք գործելը Հայաստան և սահմանի վրա ապաստան հայցելը դժվար գործընթաց է գլխավորապես այն պատճառով, որ սահմանային հսկողության ծառայողները չունեն համապատասխան փորձառություն և գիտելիքներ ապաստանին առնչվող հարցերում: Նրանք հաճախ մերժել են ապաստան հայցողների մուտքն առանց տեղեկացնելու կառավարությանը կամ ՄԱԿ ՓԳՀ-ին:[43]

### Դ.2.2. Աշխատուժի արտագաղթը

Զգալի չափերի է հասնում աշխատուժի միջազգային միգրացիան, թեև հարկ է նշել, որ այն հիմնականում չի վերահսկվում: Աշխատուժի արտահոսքը շարունակվում է և Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության շատ երկրներում, գլխավորապես՝ Ռուսաստանում. ձևավորվել է բավականին մեծ սփյուռք: Հայաստանում շատ տնային տնտեսությունների համար դրամական փոխանցումներն իրենց եկամտի հիմնական աղբյուրն են: Չնայած առանձին ծավալուն տեղեկությունների առկայությանը, աշխատուժի միգրացիայի տնտեսական հարցերի և փոխանցումների, միգրացիայի և զարգացման հարցերի մասին պատկերացումը թերի է:

Աշխատուժի ժամանակավոր միգրացիան շարունակում է զգալիորեն ազդել Հայաստանի Հանրապետության միգրացիայի ոլորտում տիրող իրավիճակի վրա: Որպես կանոն, նրա երկու բաղադրիչներն էլ (աշխատուժի կարճաժամկետ սեզոնային միգրացիան և աշխատուժի երկարաժամկետ կամ անորոշ ժամկետով միգրացիան) չեն կարգավորվում և ընթանում են քաոսային ձևով՝ խախտելով նշանակման երկրների ներգաղթի և աշխատուժի մասին օրենքների պահանջները և հանգեցնելով բավականին բարդ խնդիրների

[42] Աղբյուրը՝ ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալություն, 2008 թ.-ի մարտի 12:

[43] Տես՝ «Մարդու իրավունքների պրակտիկայի վերաբերյալ զեկույցն ըստ երկրի» (2007)՝ թողարկված Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոյի կողմից 2008 թ.-ի մարտի 11-ին: Ձետեղված է՝ http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/2007/100546.htm

առաջացմանը, ներառյալ սոցիալական, տնտեսական, բարոյական, հոգեբանական, իրավական և քաղաքական բնույթի խնդիրները:[44]

Աշխատելու նպատակով Հայաստանից մեկնող քաղաքացիների մասին պաշտոնական տվյալները բացակայում են, քանի որ դեռևս չի գործում միգրացիայի հոսքերի գրանցման տեղեկատվական համակարգը: Այդ իսկ պատճառով Հայաստանից այլ երկրներ աշխատուժի միգրացիայի քանակական և որակական նկարագրությունը գլխավորապես հենվում է տարբեր հետազոտությունների արդյունքների վրա: «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ-ի կողմից վերջերս կատարված ուսումնասիրության տվյալների համաձայն,[45] 2005-2006 թթ. Հայաստանի բնակչության 3.0-3.8 տոկոսը կամ 96000-122000 մարդ ներգրավված է եղել աշխատանքային միգրացիայի գործընթացներում: Աշխատանքային միգրանտների 92.9 տոկոսը մեկնել է Ռուսաստանի Դաշնություն, 1,8 տոկոսը՝ ԱՄՆ, 1.6 տոկոսը՝ Ուկրաինա, 1.1 տոկոսը՝ Իսպանիա, 0.9 տոկոսը՝ Ղազախստան, 0.7 տոկոսը՝ Ֆրանսիա, 0.4 տոկոսը՝ Հունաստան, 0.2 տոկոսը՝ Ավստրիա, 0.2 տոկոսը՝ Վրաստան և 0.2 տոկոսը՝ Սուդան:

ՄՄԿ-ի Հայաստանյան գրասենյակի Միգրացիոն ռեսուրս կենտրոնի (ՄՌԿ) տվյալների համաձայն, ՄՌԿ-ին խորհրդատվություն ստանալու համար դիմող հավանական միգրանտների 27.97 տոկոսը նշում են, որ կգերադասեն մեկնել Ռուսաստան, 11.90 տոկոսը նախընտրում են մեկնել Միացյալ Նահանգներ, 33.61 տոկոսը՝ Եվրոպա (այդ թվում 8.77 տոկոսը՝ Ֆրանսիա, 5.22 տոկոսը՝ Գերմանիա և 5.01 տոկոսը՝ Իսպանիա):[46]

Ռուսաստանի Դաշնության Պետական վիճակագրության դաշնային ծառայության տվյալների համաձայն, 2000 թ.-ին Ռուսաստան ժամանած միգրանտների 359,330 ընդհանուր թվից 15,951 Հայաստանից են, իսկ 2001 թ.-ին Հայաստանից ՌԴ արտագաղթողները միգրանտները ամբողջ թվում (193450) կազմել են 5,814 մարդ: 2002 թ.-ին նրանց թիվը կազմել է 6,802 (միգրանտների 184,612 ընդհանուր թվում): 2003 թվականին այս ցուցանիշը 5,124 է (միգրանտների ընդհանուր թիվը՝ 129144): 2004 թ.-ին գրանցվել է 3,057 Հայաստանից ժամանած՝ միգրանտների 119,157 ընդհանուր թվում, իսկ 2005 թ.-ին՝ նրանց թիվը կազմել է 7,581 միգրանտների 177,230 ընդհանուր թվում: 2006 թ.-ին գրանցվել է 12,949 մարդ, մինչդեռ Ռուսաստան մեկնած ընդհանուր միգրանտների թիվը կազմել է 186,380[47]:

Ռուսաստանի Դաշնության Միգրացիոն դաշնային ծառայության 2005-2006թթ. աշխատուժի օրինական արտաքին միգրացիայի մասին տվյալների համաձայն, 2005 թ.-ին Ռուսաստանի Դաշնությունում օրինականորեն աշխատել է Հայաստանի 26100 քաղաքացի, իսկ 2006 թ.-ին նրանց թիվը կազմել է 39,800: Նշված անձանց 56.6 տոկոսը աշխատել է շինարարության ոլորտում, 11.5 տոկոսը՝ վերամշակման արտադրությունում և հանքագործության ոլորտում, 10.4 տոկոսը՝ սպասարկման ոլորտում, 4.9 տոկոսը՝ տրանսպորտի և հաղորդակցությունների ոլորտում, իսկ 1.8 տոկոսը՝ գյուղատնտեսության ոլորտում:

---

44 Տես՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգ»՝ հաստատված ՀՀ Կառավարության 2004թ. հունիսի 24-ի նիստի արձանագրության «Միգրացիայի իրադրության ընդհանուր նկարագիր» թիվ 24 որոշմամբ:

45 Աշխատուժի արտահոսքը Հայաստանից 2002-2005 թվականներին. տնային տնտեսությունների սոցիոլոգիական հարցում (Երևան, 2005թ.): Ձետեղված է http://www.osce.org/item/18193.html?ch=531kic=H4 ինտերնետային կայքում:

46 Աղբյուրը՝ Հայաստանի ՄՄԿ-ի գրասենյակի Միգրացիոն ռեսուրսների կենտրոն:

47 Տես՝ «2007թ. Ռուսաստանի վիճակագրական տարեգիրք», Միջազգային միգրացիայի մասին բաժին 4.31, որը զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝ http://www.gks.ru/bgd/regl/b07_13/IssWWW.exe/Stg/d01/04-31.htm:

«Հայաստան 2020» ծրագրի[48] կողմից 2003 թ.-ին կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, 2001 թ.-ի ընտրանքային տվյալների հիման վրա հաշվարկված միգրանտների շուրջ 70 տոկոսը Հայաստանից մեկնում է ԱՊՀ երկրներ, հատկապես՝ Ռուսաստան և Ուկրաինա: Ընտրանքում միգրանտների մոտավորապես 50 տոկոսը կարող է դասվել որպես ժամանակավոր աշխատանքային միգրանտներ, որոնց նպատակն է իրենց ընտանիքներին աջակցելու համար ժամանակավոր աշխատանք գտնել հայրենիքից դուրս: Մնացած միգրանտները (բոլոր հայ միգրանտների շուրջ մեկ երրորդը), ովքեր չեն մեկնում որևէ ԱՊՀ երկիր, մեկնում են Եվրոպա կամ Միացյալ Նահանգներ:[49]

Սովորաբար երկրից առաջինը մեկնում են տղամարդիկ, իսկ կանայք ավելի ուշ միանում են նրանց: ԱՎԾ-ի պաշտոնական վիճակագրության համաձայն, աշխատանք չլինելու պատճառով երկրից մեկնող կանանց թիվը երկու անգամ փոքր է տղամարդկանց թվից, իսկ ընտանիքների վերամիավորման նպատակով երկրից մեկնող կանանց թիվը տղամարդկանց համեմատ մոտ վեց անգամ փոքր է:

ՀՎԾ-ի տվյալները վկայում են այն մասին, որ արտագաղթողների մեծ մասը (2003-2006 թթ. միջինում 24 տոկոսը) ծնվել է մայրաքաղաք Երևանում՝ հանրապետության ամենից խիտ բնակեցված քաղաքում: Կան նաև արտագաղթողներ Վրաստանին սահմանակցող հեռավոր և նվազ զարգացած հյուսիսային մարզերից (Լոռի, Շիրակ և Տավուշ), թեև աղքատության մակարդակն ավելի բարձր է բոլոր մնացած շրջաններում:

Պետական մարմինների կողմից անցկացված տարբեր հետազոտությունների տվյալները ցույց են տալիս, որ ամեն տարի մոտավորապես 20,000 հայաստանցիներ մեկնում են երկրից, գլխավորապես տնտեսական նկատառումներով: 2007 թ.-ի ԱՎԾ աշխատուժի միգրացիայի հետազոտությունը[50] տալիս է ներկայիս այն միգրանտների տեսակարար կշիռը, ովքեր վերջին 17 տարում միգրանտ են և հետազոտության անցկացման պահին աշխատում են արտասահմանում, կազմելով է ընդհանուր բնակչության 7.2-ից 8.5 % կամ մոտավորապես 253,000 մարդ: Այս արդյունքներն, այնուամենայնիվ, հաշվի չեն առնում լայն տարածում ստացած կարճաժամկետ սեզոնային բացակայությունները[51]:

Եվրոպա և Միացյալ Նահանգներ հայերը սովորաբար գաղթում են ընտանիքներով (միասին կամ հետագայում ընտանիքի մնացած անդամները միանում են կերակրողին) արտասահմանում մշտական բնակություն հաստատելու նպատակով: ԱՄՆ-ի Ներքին անվտանգության դեպարտամենտի տվյալների համաձայն, 1997 թվականից մինչև 2006 թվականը մշտական ռեզիդենտի կարգավիճակ ստացող հայերի թիվը տարեկան կտրվածքով կրկնապատկվել է, դառնալով 6,317:[52]

---

[48] «Հայաստան 2020»-ը սցենարների մշակմամբ զբաղվող ծրագիր է, որի գործունեության հիմնական ուղղությունը մինչև 2020թ. Հայաստանի Հանրապետության համար զարգացման այլընտրանքային մոդելների որոշումն է և երկրի զարգացման սցենարների մշակումը: Հետազոտական այլ աշխատանքների հետ մեկտեղ, «Հայաստան 2020»-ի հանձնարարությամբ նախաձեռնվել է հետազոտություն՝ նվիրված ներգաղթի պահպանման ուղիներին (Եղիազարյան Արմեն, ԱվանեսյանՎահրամ, Շահնազարյան Նելսոն, «Ամերիա» ընկերություն, «Ինչպե՞ս կանգնեցնել արտագաղթը», 2003թ.: Զետեղված է http://www.armenia2020.org/index.php/am/activities/researches/16 ինտերնետային էջում:

[49] Տես՝ Գևորգյան Ալեքսանդր Վ, Գևորգյան Արկադի և Մաշուրյան Կարինե, «Աշխատատեղերի փոքր աճը դարձնում է աշխատուժի միգրացիան և մասնավոր փոխանցումները նորմ հետ-Խորհրդային Հայաստանում», Միգրացիոն քաղաքականության ինստիտուտ, 2008թ. մարտ: Զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝http://www.migrationinformation.org/USfocus/print.cfm?ID=676:

[50] «Աշխատանքային միգրացիան Հայաստանում. ընտրանքային պիլոտային հետազոտության արդյունքները», 2007թ.: Տես՝ http://www.armstat.am/Eng/Publications/2007/Mig_rep_07e/Mig_rep_07e.pdf:

[51] Տես՝ Գևորգյան Ալեքսանդր Վ, Գևորգյան Արկադի և Մաշուրյան Կարինե, «Աշխատատեղերի փոքր աճը դարձնում է աշխատանքային միգրացիան և դրամական փոխանցումները նորմ հետ-Խորհրդային Հայաստանում», Միգրացիոն քաղաքականության ինստիտուտ, 2008թ. մարտ: Զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝http://www.migrationinformation.org/USfocus/print.cfm?ID=676:

[52] http://www.dhs.gov/xlibrary/assets/statistics/yearbook/2006/OIS_2006_Yearbook.pdf.

Միացյալ Նահանգներ գաղթող այս միգրանտների համարյա 70%  փախստականներ և ապաստան հայցողներ են, իսկ 15 % վերամիավորվում են իրենց մոտիկ հարազատներին, ովքեր ԱՄՆ քաղաքացիներ են, մնացած մասը կազմում են այն անհատները, ովքեր գաղթում են աշխատանքային և այլ վիզաներով: Ինչևէ, փաստերը ցույց են տալիս, որ չնայած հայտարարվող դրդապատճառը հետապնդումից փախուստն է, ապաստան հայցող կամ փախստականի կարգավիճակ ունեցող հայերի զգալի մասն իրականում տնտեսական պատճառներով երկրից հեռացող միգրանտներ են, ովքեր փնտրում են աշխատանքի ավելի լավ հնարավորություններ Հայաստանում իրենց ընտանիքներին ապահովելու համար:

ԱՎԾ-ի ամենավերջին արդյունքների և ԵԱՀԿ-ի ու «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ-ի կողմից հավաքագրված տվյալների համաձայն, համեմատաբար ցածր հմտություններ ունեցողները մեծ մասամբ ժամանակավորապես արտագաղթում են նախկին Խորհրդային Միության երկրներ՝ Ռուսաստան, Ուկրաինա և Ղազախստան, որոնք վաղուց ընդունում են Հայաստանից արտագաղթածներին: Միգրանտները հիմնականում աշխատում են շինարարության վրա, ինչպես նաև որպես փողոցային շուկաների վաճառողներ,  տաքսիների և ավտոբուսների վարորդներ:[53]

Ռուսաստանի վերելք ապրող տնտեսությունը մշտապես գրավում է ավելի շատ հայաստանցի միգրանտների (84.2 %), ինչպես ցույց է տալիս վերջերս կատարված ԱՎԾ-ի աշխատանքային միգրացիայի ուսումնասիրությունը:[54] Չնայած  նրան, որ ճշգրիտ գնահատականները վիճահարույց են, ըստ Եվրասիա ընկերակցության հիմնադրամի տվյալների, հայաստանցի միգրանտների մոտ 90 %-ը անօրինականորեն աշխատում են Ռուսաստանում, չնայած Ռուսաստանի կողմից վերջին ժամանակներս կատարված զգալի  ջանքերին՝ ուղղված գրանցման կանոնների պարզեցմանը: Հայաստանի իշխանությունների և Ռուսաստանի Դաշնության Միգրացիոն ծառայությունների միջև համագործակցության ամրապնդումը որոշ չափով կարող է մեղմացնել այս խնդիրները:[55]

Ռուսաստանի Դաշնության վիճակագրական գործակալության տվյալները հիմնավորում են այս բացահայտումները:[56] Չնայած նրան, որ հայաստանցիները ԱՊՀ երկրներից ներգաղթածների միայն մի փոքր մասն կազմում, նրանք Ռուսաստանում աշխատուժի միգրանտների՝ մեծությամբ հինգերորդ խումբն են: Առկա տվյալները ցույց են տալիս, որ 1997 թվականից հետո Ռուսաստան հայաստանցիների արտագաղթի ամենաբարձր կետը 2007 թվականն է:[57]

Ի լրումն Ռուսաստանի տնտեսության հզորությանը, Ռուսաստանը գրավիչ է հայերի համար մի շարք այլ պատճառներով: Առաջինը՝ հայերը  կարող են Ռուսաստան գնալ առանց վիզայի (և հակառակը): Երկրորդ՝ այդ երկրի աշխարհագրական մոտիկությունը թույլ է տալիս աշխատանքային միգրանտին առանց դժվարությունների մեկնել ու ետ վերադառնալ: Երրորդ՝ հայերի մեծ մասը ազատ խոսում է ռուսերեն, բացի այդ, հայերը

---

53 Տես՝ Գևորգյան Ալեքսանդր Վ, Գևորգյան Արկադի և Մաշուրյան Կարինե, «Աշխատատեղերի փոքր աճը դարձնում է աշխատուժի միգրացիան և դրամական փոխանցումները նորմ հետ-Խորհրդային Հայաստանում», Միգրացիոն քաղաքականության ինստիտուտ, 2008թ. մարտ: Զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝ http://www.migrationinformation.org/USfocus/print.cfm?ID=676:

54 «Աշխատանքային միգրացիան Հայաստանում. ընտրանքային պիլոտային հետազոտության արդյունքները», 2007թ.: Տես՝ http://www.armstat.am/Eng/Publications/2007/Mig_rep_07e/Mig_rep_07e.pdf.

55 http://www.epfound.am/index.php?article_id=46&clang=0.

56 Տես՝ «2007թ. Ռուսաստանի վիճակագրական տարեգիրք», Միջազգային միգրացիայի մասին բաժին 4.31, որը զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝ http://www.gks.ru/bgd/regl/b07_13/IssWWW.exe/Stg/d01/04-31.htm

57 Գևորգյան Ալեքսանդր Վ, Գևորգյան Արկադի և Մաշուրյան Կարինե, «Աշխատատեղերի փոքր աճը դարձնում է աշխատանքային միգրացիան և դրամական փոխանցումները նորմ հետ-Խորհրդային Հայաստանում», Միգրացիոն քաղաքականության ինստիտուտ, 2008թ. մարտ: Զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝http://www.migrationinformation.org/USfocus/print.cfm?ID=676 Զետղված է՝ http://www.migrationinformation.org/USfocus/print.cfm?ID=676.

ռուսների հետ ունեն ընդհանուր մշակութային և կրթական արժատներ: Չորրորդ՝ ռուսական հասարակության հետ մեծապես ինտեգրված հայկական սփռույքը ծագել է այն հայերից, ովքեր հաստատվել են այնտեղ սերունդներ առաջ, հաճախակի վարձելով նոր միգրանտների բազմազան այն ձեռնակություններում, որոնք հայ սփռույքի անդամները տնօրինում և շահագործում են: Վերջ ի վերջո, շնորհիվ հաստատված ֆինանսական և տնտեսական խողովակների, համեմատաբար հեշտ է Ռուսաստանից Հայաստան վաստակած գումարները փոխանցել:[58]

Հայաստանում աշխատանքի տեղավորման գործակալությունները, հատկապես՝ նրանց արտոնագրումն ու կարգավորումը, մնում են մտահոգության առարկա, քանի որ հաճախ նրանց գործունեությունը պարզ չէ, իսկ նրանց հաճախորդներին տված օգնությունը՝ հարցական, չնայած նրան, որ անկասկած, այս գործակալությունները այն մի քանի գործակալությունների շարքում են, որոնք թափանցիկ են աշխատում և շատ դրական արդյունքներ են տվել:

Առանձնահատուկ մտահոգության մեկ այլ ոլորտը «ուղեղների արտահոսքն» է դեպի զարգացած երկրներ, այսինքն՝ բարձր որակավորում ունեցող, հմուտ և միջազգային շուկայում մրցունակ փորձագետների արտագաղթը շարունակվում է: Սա թուլացնում է երկրի գիտական, ստեղծագործական և տնտեսական ներուժը:[59] Համակարգչային մասնագետները «մեկնողների» ամենաբարձր դասին են պատկանում: Համաձայն Համաշխարհային բանկի զեկույցի, ԱՄՆ-ում 2000 թ.-ին Հայաստանից ներգաղթածների թիվը 44,380 էր, որոնցից 17,975 ուներ միջնակարգ կրթություն, և 22,590՝ բարձրագույն կրթություն, որը նշանակում է, որ ԱՄՆ Հայաստանից ներգաղթածների կեսը կարող է բարձր որակավորում ունենալ:[60]

Դրամական փոխանցումներ

Հայաստանի տնտեսության համար սփյուռքի դրամական փոխանցումները վճռորոշ նշանակություն ունեն: Համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների[61], սփյուռքից դրամական փոխանցումները կազմում են ՀՆԱ-ի 20%, սակայն, ըստ էության, շատ ոչ պաշտոնական ուղիներով դրամի փոխանցումների ծավալը, հավանաբար, ԿԲ-ի գնահատականը երկու կամ երեք անգամ բարձրացնում է ՀՆԱ-ում դրամական իրական փոխանցումների տեսակարար կշիռը: Դրամական այս փոխանցումները պաշտպանում են շատ ընտանիքներ (մոտ 40%) ծայրահեղ աղքատությունից:

Հայաստան ուղարկվող դրամական փոխանցումների մեծ մասը (70%) գալիս է Ռուսաստանից: ԱՄՀ-ի տվյալների համաձայն, հայերը դրամական փոխանցումները հիմնականում կատարում են ԱՄՆ դոլարով (90%) և բանկերի միջոցով (55-ից մինչև 85 տոկոս, իսկ համաձայն 2007 թ.-ի հետազոտության՝ այս թիվը 60 տոկոս է):[62]

Ըստ Ազգային վիճակագրական ծառայության, «ընտանիքում միգրանտ անդամի առկայությունը մեծացնում է տնային տնտեսության բարեկեցությունը, ցույց տալով դրամական փոխանցումների նշանակությունը տնային տնտեսությունների կենսամակարդակի

---

[58] ibidem

[59] Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 25-ի թիվ 24 արձանագրային որոշման հավելվածի 1-ին բաժինը՝ «Միգրացիան իրավիճակի ընդհանուր նկարագիրը»

[60] Տե՛ս Adams, Jr., Richard H., "International Migration, Remittances, and the Brain Drain. A Study of 24 Labor-Exporting Countries", World Bank Policy Research Working Paper, June 2003. Ջետեղված է http://www-wds.worldbank.org/external/default/WDSContentServer/WDSP/IB/2003/07/08/000094946_03062104301450/Rendered/PDF/multi0page.pdf.

[61] Տես՝ ՀՀ Կենտրոնական բանկի «2005 թ. տնային տնտեսությունների կողմից արտասահմանից ստացված դրամական փոխանցումների հետազոտության հիման վրա կատարված վերլուծություն»:

[62] Տես՝ "The Republic of Armenia Migration Profile," «ՀՀ-ի միգրացիոն նկարագիրը» ՄՄԿ (2008թ. հունվար):

բարելավման հարցում: 2006 թ.-ին այն տնային տնտեսությունների սպառման մակարդակը, որոնց անդամները արտագաղթել էին Հայաստանից (աշխատելու նպատակով), միջինում 9%-ով բարձր էր այն ընտանիքների սպառման մակարդակից, որոնք չունեին միգրանտ անդամներ: Ի լրումն, այն տնային տնտեսությունները, որոնց միգրանտ անդամները վերջին 12 ամսում վերադարձել էին արտասահմանից նախքան հետազոտության անցկացումը, ունեին ավելի բարձր սպառման մակարդակ, քան միգրանտներ չունեցողները»:[63]

2003 թվականին վերաբերող Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) տվյալները ցույց են տալիս, որ տրանսֆերտները, որոնք վերլուծվում են ըստ դրամական փոխանցումների (ամենամեծ բաղադրիչը), սոցիալական ապահովության նպաստների և այլ տրանսֆերտների, կազմում են տնային տնտեսության միջին եկամուտների 22 տոկոսը: Եկամուտների մոտավորապես 47 տոկոսը ստացվում է վճարովի աշխատանքից կամ ինքնազբաղվածությունից:[64]

2007 թ.-ի Համաշխարհային բանկի զեկույցում նշվում է, որ Հայաստանում դրամական փոխանցումներ ստացող տնային տնտեսությունների թիվը աճում է: Այս տնային տնտեսություններին ուղարկված դրամական փոխանցումները կազմում են նրանց դրամական եկամուտների մինչև 50 տոկոսը: Համաշխարհային բանկի զեկույցում նշվում է, որ այս միջոցները օգտագործվում են հիմնականում ընթացիկ սպառման նպատակով, այսինքն՝ տնային տնտեսության առաջնային կարիքների, բուժման, և որոշ դեպքերում, նույնիսկ պերճանքի առարկաների ձեռքբերման համար, շատ քիչ գումար է ուղղվում ներդրումներին: Թեև շահառուները դրամական փոխանցումների որոշ մասը խնայում են, ճշգրիտ և հուսալի տվյալներ չկան խնայողությունների վերաբերյալ:[65]

Ըստ ԱՎԾ-ի աշխատանքային միգրացիայի հետազոտության տվյալների,[66] դրամական փոխանցումների մեծ մասը ուղարկվում է այն ընտանիքներին, որոնք առնվազն մեկ միգրանտ աշխատող ունեն արտասահմանում:

Ռուսաստան դեպի աշխատանքային ժամանակավոր միգրացիայի վերաբերյալ հետազոտության տվյալների համաձայն, շատ դեպքերում, հատկապես՝ 1990-ականներին, դրամական փոխանցումների ավելի մեծ ծավալները կապված էին արտագաղթի մեծ տեմպերի հետ, քանի որ ընտանիքները խնայում էին դրամական միջոցները արտասահմանում կերակրողին միանալու նպատակով:[67]

ԱՎԾ-ի տվյալների համաձայն Հայաստանում աղքատության մակարդակը փոքր-ինչ նվազել է վերջին երեք-չորս տարիների ընթացքում: Պարզ չէ, թե արդյոք այս միտումն

---

[63] Տես՝ Տես՝ 2006թ. Տնային տնտեսությունների ինտեգրված հետազոտության հիման վրա կազմված «Հայաստանում սոցիալական իրավիճակի և աղքատության վերլուծական հաշվետվություն» (Ազգային վիճակագրական ծառայություն և Համաշխարհային բանկ, 2007թ.), Մաս 1-ին. Հայաստան. տնտեսական աճը, աղքատությունը և աշխատաշուկան 2004-2006թթ., գլուխ 4, էջ 41:

[64] Տես՝ Գևորգյան Ալեքսանդր Վ, Գևորգյան Արկադի և Մաշուրյան Կարինե, «Աշխատատեղերի փոքր աճը դարձնում է աշխատանքային միգրացիան և դրամական փոխանցումները նորմ հետ-Խորհրդային Հայաստանում», Միգրացիոն քաղաքականության ինստիտուտ, 2008թ. մարտ: Զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝http://www.migrationinformation.org/USfocus/print.cfm?ID=676:

[65] Mansoor, Ali and Bryce Quillin (eds.), “Migration and Remittances. Eastern Europe and the Former Soviet Union” World Bank 2007. Զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝ http://siteresources.worldbank.org/INTECA/Resources/257896-1167856389505/Migration_FullReport.pdf.

[66] «Աշխատանքային միգրացիան Հայաստանում. ընտրանքային պիլոտային հետազոտության արդյունքները», 2007թ.: Տես՝ http://www.armstat.am/Eng/Publications/2007/Mig_rep_07e/Mig_rep_07e.pdf.

[67] Տես՝ Գևորգյան Ալեքսանդր Վ, Գևորգյան Արկադի և Մաշուրյան Կարինե, «Աշխատատեղերի փոքր աճը դարձնում է աշխատանքային միգրացիան և դրամական փոխանցումները նորմ հետ-Խորհրդային Հայաստանում», Միգրացիոն քաղաքականության ինստիտուտ, 2008թ. մարտ: Զետեղված է «Աշխատուժի կառավարվող ժամանակավոր միգրացիա. Հայաստանի և Ռուսաստանի օրինակ», Անցումային տնտեսությունների ինստիտուտ, 2006թ.: Զետեղված է՝ http://www.iet.ru/ru/managed-temporary-labor-migration-case-of-armenia-and-russia.html.

ուղղակիորեն կապված է դրամական փոխանցումների ազդեցության հետ, չնայած Համաշխարհային բանկի զեկույցում նշվում է, որ արտաքին դրամական փոխանցումները լրացուցիչ դեր են խաղում աղքատ տնային տնտեսությունների եկամուտների բարելավման հարցում:

Աղքատության կրճատմանը նպաստող մի հզոր մրցակից կա. մասնավոր, պետական ծառայության և այլ եկամուտների մասնաբաժնի աճը, ինչպես ցույց է տրվում ԱՎԾ-ի 2007 թվականի «Սոցիալական պատկերը և աղքատությունը Հայաստանում» զեկույցում:[68] Ի լրումն, ըստ Համաշխարհային բանկի տվյալների, կառավարությունը համագործակցել է զարգացման գործակալությունների հետ հետևողականորեն իրագործելու աղքատության կրճատմանն ուղղված ռազմավարությունները, ինչպիսիք են հիմնական առողջապահական, կրթական և այլ պետական ծառայությունների տրամադրումը[69]:

Սփյուռքի վերադարձը

Առավել վերջերս տեղ գտած երևույթը այն հայերի վերադարձն է, ովքեր մեկնել էին 1990-ից մինչև 2006 թվականն ընկած ժամանակահատվածում: ԱՎԾ-ի տվյալների համաձայն, սփյուռքի վերադարձն իր չափերով կազմում է ընդհանուր բնակչության 8.4-ից մինչև 9.8 տոկոսը կամ մոտավորապես 300,000 մարդ:[70]

Ազգային վիճակագրական ծառայության վերջերս կատարած հետազոտությունը ցույց է տվել, որ հարցման մասնակիցների շրջանում վերադարձած միգրանտների ամենամեծ թվին են պատկանում 20-29 տարիքային խմբի անձանց, որոնց տեսակարար կշիռը 22.8 տոկոս է (52.1% տղամարդիկ և 47,9% կանայք):[71] Երիտասարդ բնակչությունը (16-24 և 16-30 տարեկան) կազմել է 7.1% և 17.5%, մինչդեռ տարեցները (65 տարեկան և ավելի) կազմել են վերադարձած միգրանտ բնակչության 10.1 տոկոսը:

Սփյուռքի վերադարձը խրախուսիչ է և կարող է շարունակել աճել Հայաստանի տնտեսության աճին համընթաց: Աշխատուժի և եկամուտների հետ կապված այս զարգացումների վերածումը տնտեսական և սոցիալական օգուտների պետք է լինի մոտակա տարիների Հայաստանի գերակա խնդիրներից մեկը:

## Դ.3 **Միգրացիայի առկա միտումների հետևանքով ի հայտ եկած մարտահրավերները**

Միգրացիան ոչ միայն ազդում է երկրի տնտեսության վրա, այլ նաև անդրադառնում է անվտանգության և քաղաքականության վրա: Միգրացիան իր ազդեցությունն է թողնում յուրաքանչյուր երկրի և յուրաքանչյուր քաղաքացու վրա: Կարևոր է հետևել և ուշադրությունը կենտրոնացնել միգրացիայի դրական հետևանքների և համընդհանուր ճանաչված այն գաղափարի վրա, որ համաշխարհային տնտեսությունը շահում է մարդկանց ազատ տեղաշարժից: Ազատ տեղաշարժը զարգացման աղբյուր է ոչ միայն անհատի, այլ նաև հասարակության համար: Միևնույն ժամանակ նույնքան կարևոր է չմոռանալ, որ ազատ տեղաշարժը ազգային և միջազգային անվտանգության խնդիր է և պետք է համապատասխան լուծում ստանա: Այս առումով տարածաշրջանի և երկրի միգրացիոն միտումների ըմբռնումը կարևոր նշանակություն ունի ցանկացած համայնքի համար:

---

68 «Սոցիալական պատկերը և աղքատությունը Հայաստանում. 2006թ. տնային տնտեսությունների ապրուստի պայմանների ինտեգրացված հետազոտության արդյունքների վրա հիմնվող վիճակագրական վերլուծական հաշվետվություն» (Ազգային վիճակագրական ծառայություն և Համաշխարհային բանկ, 2007թ.)

69 Տես՝ Գևորգյան Ալեքսանդր Վ, Գևորգյան Արկադի և Մաշուրյան Կարինե, «Աշխատատեղերի փոքր աճը դարձնում է աշխատանքային միգրացիան և դրամական փոխանցումները նորմ հետ-Խորհրդային Հայաստանում», Միգրացիոն քաղաքականության ինստիտուտ, 2008թ. մարտ: Ձետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝ http://www.migrationinformation.org/USfocus/print.cfm?ID=676.

70 Ibidem

71 «Աշխատանքային միգրացիան Հայաստանում. ընտրանքային պիլոտային հետազոտության արդյունքները», 2007թ.: Տես՝ http://www.armstat.am/Eng/Publications/2007/Mig_rep_07e/Mig_rep_07e.pdf

Վիճակագրական տվյալները վկայում են այն մասին, որ Հայաստանում միգրացիոն միտումների բնույթը փոփոխվում է: Օրինակներից մեկը Հայաստանի՝ որպես կրթական ծառայությունների կենտրոններից մեկի նկատմամբ հետաքրքրությունն է, ուր բարձրագույն կրթություն ստանալու համար գալիս են այլ երկրների երիտասարդներ: Սրանում է կայանում դեպի Հայաստան ներգաղթի խրախուսող և բարդ հավասարակշռությունը, երբ զուգահեռաբար ջանքեր են գործադրվում հայաստանցիներին երկրում պահելու և, հետևաբար, «ուղեղների արտահոսքի» երևույթը կանխելու նպատակով:

Տարածաշրջանում տիրող անկայունության պատճառով հնարավոր է, որ Հայաստանում շարունակի մեծանալ փախստականների և ապաստան հայցողների ներհոսքը: Այս առումով միշտ էլ չափազանց դժվար է կանխատեսել, թե ինչպիսին կլինի միգրացիոն միտումը, որը կարող է հսկայական ազդեցություն ունենալ մշտական բնակության նպատակով երկիր ժամանող անձանց թվի վրա: Բացի այդ, փախստականները և ապաստան հայցողները, ովքեր ժամանման պահին ունեն փոքր դրամական միջոցներ և զուրկ են սոցիալական աջակցություն ստանալու հնարավորությունից, պատկանում են չափազանց խոցելի խմբի: Նման միտումը պետք է մանրազնին հսկվի: Ազգային մակարդակում պետք է ապահովվի տարածաշրջանում տեղի ունեցող փոփոխություններին արձագանքող գործուն համակարգ, ինչը հնարավորություն կտա Կառավարությանը պատրաստ լինելու փախստականների անսպասելի ներհոսքին:

# Ե. Միգրացիոն քաղաքականությունը

Վերջին զարգացումները

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 2004 թ.-ին ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչությունը (Միգրացիոն գործակալության իրավանախորդը) ընդունեց «Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում»:[72] Հայեցակարգն ամրագրում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման գործակալությունների կողմից որդեգրած դիրքորոշումների, նպատակների և լուծումների ամբողջությունը, որպեսզի ապահովվի կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում միգրացիոն գործընթացի զարգացումը գերադասելի և կառավարելի ուղղություններով: Հայեցակարգը սահմանում է միգրացիոն գործընթացների պետական կարգավորման նպատակները. «երկրի ազգային անվտանգության ու կայուն մարդկային զարգացման պահանջներին համապատասխանող ազգաբնակչության թվաքանակի, ժողովրդագրական իրավիճակի ձևավորման ու զարգացման ապահովումը, ինչպես նաև միգրացիոն գործընթացներում ներառված անձանց իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով միջազգային փաստաթղթերում ամրագրված դրույթների կիրառումը»:[73] Հայաստանի Հանրապետության միգրացիոն գործընթացների պետական կարգավորման գերակա խնդիրներն են.[74]

---

72 «Հայաստանի Հանրապետությունում բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը» ընդունվել է ՀՀ կառավարության 2004թվականի հունիսի 25-ի թիվ 24 արձանագրային որոշման հավելվածով՝ փոխարինելով նախկինում ընդունված «ՀՀ բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգի մասին» փաստաթուղթը:

73 Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 25-ի թիվ 24 արձանագրային

(1) Հայաստանի Հանրապետությունում արտագաղթի-ներգաղթի գործընթացների վերահսկողության ապահովում: Մասնավորապես՝ սահմանային կառավարման համակարգի բարելավում՝ դրանում ներգրավված մարմինների գործառույթների հստակ տարանջատման միջոցով, սահմանային վերահսկողություն, մաքսային, անձնագրա-վիզային ծառայություններ իրականացնող ստորաբաժանումների աշխատանքների ավտոմատացում և ունիֆիկացում, ինչպես նաև մատնադրոշմային գրանցման ավտոմատացված համակարգի ստեղծում:

(2) Հայաստանի Հանրապետության ինտեգրացում միջազգային աշխատաշուկային. մասնավորապես՝ օրենսդրական կանոնակարգում և պետական նպատակային վերահսկում, աշխատանքային էմիգրանտների իրավունքների և օրինական շահերի պետական պաշտպանություն՝ երկկողմանի միջպետական պայմանագրերի կնքման միջոցով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող աշխատանքային միգրանտների հայրենիք վերադառնալու խրախուսում:

(3) Հայաստանի Հանրապետությունից անօրինական միգրացիայի կանխարգելում, արտերկրներում անօրինական կարգավիճակում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերադարձին և Հայաստանի Հանրապետությունում նրանց ռեինտեգրացիային աջակցում՝ հանրային իրազեկման քարոզարշավի միջոցով, ռեադմիսիայի պայմանագրերի կնքում, անօրինական միգրացիայի կազմակերպմամբ զբաղվող անձանց նկատմամբ պատժամիջոցների նախատեսում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունում:

(4) Հայաստանի Հանրապետությունից մարդկանց անօրինական փոխադրումների և վաճառքի (թրաֆիկինգի) կանխարգելում՝ հանրային իրազեկման, քարոզարշավների, սոցիալ-հոգեբանական, առողջապահական վերականգնողական ծրագրերի իրականացման միջոցով, ինչպես նաև իրավապահ մարմինների հետ համագործակցության ապահովում:

(5) Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց մարդասիրական նկատառումներով Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվող պաշտպանության համակարգի կատարելագործում, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում երկարաժամկետ բնակություն հաստատած փախստականների՝ ներառյալ 1988-92 թթ. Ադրբեջանից բռնագաղթված փախստականների և հարկադիր միգրանտների ինտեգրումն ապահովող պայմանների (օրինակ՝ պետական աջակցության ծրագրերի) ստեղծում:

(6) Հին ու նոր սփյուռքի գաղթօջախների հետ կառուցողական փոխհարաբերությունների պահպանում և զարգացում, հայրենադարձության երևույթը խրախուսող միջոցառումների մշակում և իրականացում:

(7) Հարկադիր միգրանտների դեպի Հայաստան հնարավոր զանգվածային հոսքերի կանխատեսման, իսկ հայկական ծագում ունեցող հարկադիր միգրանտների դեպքում նման հոսքերի կանխարգելմանն ուղղված միջոցառումների մշակում և իրականացում՝ հարկադիր միգրանտների հնարավոր զանգվածային հոսքերի նախնական ահազանգման և կանխատեսման համակարգի ստեղծման միջոցով. համագործակցություն այլ երկրների հետ՝ զանգվածային միգրացիոն հոսքերի կանխարգելման նպատակով. հետ արտակարգ միգրացիոն գործընթացների բա-

---

որոշման հավելվածի 2-րդ բաժինը՝ «Հայաստանի Հանրապետության Միգրացիոն գործընթացների պետական կարգավորման նպատակները և սկզբունքները»:

[74] Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 25-ի թիվ 24 արձանագրային որոշման հավելվածի 3-րդ բաժինը՝ «Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն գործընթացների պետական կարգավորման գերակա խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները»:

ցասական հետևանքների կանխարգելման նպատակով պետական համալիր ծրագրի մշակում՝ ներառյալ հզորությունների պետական համակարգի հիմնադրում և միգրացիայի կառավարման հանրապետական համակարգի ստեղծում:

(8) Հայաստանի Հանրապետության միգրացիոն իրավիճակի մոնիթորինգի և վերլուծության իրականացման համար անհրաժեշտ տվյալներն ապահովող տեղեկատվական բանկի ստեղծում՝ սահմանահատումների հաշվառման համակարգի ստեղծման միջոցով. միգրացիոն գործընթացների վարչական ռեգիստրի մշակում. միջազգային տուրիզմի կազմակերպմամբ, օտարերկրյա աշխատողների ներգրավմամբ ու օգտագործմամբ կամ արտերկրում ՀՀ քաղաքացիների աշխատանքի տեղավորմամբ զբաղվող հայկական իրավաբանական անձանց և արտասահմանյան իրավաբանական անձանց մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման հանրապետական համակարգի ստեղծում. ՀՀ-ում աշխատանքային գործունեություն իրականացնող անձանց, ինչպես նաև օտարերկրացի ուսանողների հաշվառման համակարգի ստեղծում և միգրացիոն հոսքերի միասնական հաշվառման տեղեկատվական բանկի գործարկում:

(9) ՀՀ ազգային անվտանգության և երկրի կայուն զարգացման պահանջներին համապատասխանող ներքին միգրացիոն գործընթացների ուղղորդում՝ սահմանամերձ և այլ ռազմավարական նշանակություն ունեցող տարածքների վերաբնակեցման գործընթացների խրախուսման միջոցով. սահմանամերձ տարածքներից տեղահանված անձանց իրենց նախկին բնակության վայրերը վերադարձի աջակցմանն ուղղված ծրագրերի մշակում և իրագործում:

(10) ՀՀ-ում միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող հասարակական կարծիքի ձևավորում:

Հետևելով վերոնշյալ գերակա խնդիրներին՝ 2007 թ.-ի ՀՀ կառավարության ծրագրի[75] բաժին 4.4.7-ը՝ «Սփյուռք» և բաժին 4.4.8՝ «Միգրացիա» հասցեագրում են միգրացիային և սփյուռքին վերաբերող հարցերը: Մասնավորապես՝ կառավարությունը կշարունակի փախստականների ինտեգրման գործընթացը: Ծրագիրը կարևորում է բնակչության տեղաշարժի ուղղությունների և ծավալների հաշվառման միասնական համակարգի ստեղծումը: Գերակա խնդիրներից է նաև «միջազգային աշխատաշուկային Հայաստանի Հանրապետության քաղաքակիրթ ինտեգրացիան»: Կարևորում են նաև մի կողմից՝ աշխատանքային էմիգրացիայի օրենսդրական կանոնակարգման և, մյուս կողմից՝ աշխատանքային էմիգրանտների իրավունքների և օրինական շահերի պետական պաշտպանության իրականացման հարցերը:

Եվրոպական Միությունը կարևորել է միգրացիայի հարցերի կարգավորման շուրջ Հարավային Կովկասի երկրների հետ համագործակցությունը: Այսպիսով, ԵՄ- Հայաստան եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի «Ընդհանուր նպատակներ» և «Գործողություններ» բաժիններում նշվում են միգրացիայի հարցերը (օրինական և ապօրինի միգրացիա, ռեադմիսիա, վիզա, ապաստան),[76] և սահմանվում են հետևյալ ենթախմբերում միավորված գործողությունները՝ (ա) միգրացիոն հարցերի առնչությամբ համագործակցության զարգացում. (բ) միգրացիայի հարցերի շուրջ երկխոսության ամրապնդում՝ ներառյալ ապօրինի միգրացիայի կանխարգելում և վերահսկում, սեփական քաղաքացիների ռեադմիսիա. (գ) փախստականների ազգային համակարգի արդիականացմանն ուղղված քայլերի ձեռնարկում՝ միջազգային ստան-

---

[75] Հաստատվել է ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 21-ի թիվ 695 - Ա որոշմամբ: Տե՛ս, http://www.gov.am/enversion/reform_12/books/cragir_eng2007.pdf կայքը:

[76] «ԵՄ-Հայաստան եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) գործողությունների ծրագիր», բաժին 4՝ Համագործակցություն արդարադատության, ազատության և անվտանգության ոլորտներում, դրույթ 4.5.2.:

դարտներին համապատասխան, ինչպես նաև ներքին տեղահանվածների պաշտպանության համակարգի ստեղծում և (դ) անհատների տեղաշարժի դյուրացում: Մասնավորապես, անհատների տեղաշարժը դյուրացնելու ներքո ԵՀՔ գործողությունների ծրագիրը սահմանում է վիզաների հարցերով տեղեկատվության փոխանակում:

2007 թ.-ի հունվարին Եվրոպական Հանձնաժողովը Եվրամիջերկրական համագործակցության հանդիպման մասնակիցներին ներկայացրեց վիզաների տրամադրման[77] ճկունության մասին Հանձնաժողովի եզրակացությունների իրականացման մասին Հանձնաժողովի աշխատակազմի աշխատանքային փաստաթուղթը, որտեղ եզրակացությունների իրականացման բարելավման առնչությամբ ԵՀ-ի կողմից քննարկմանն առաջադրված հարցերից մեկը եզրակացությունների շրջանակը ԵՀՔ մասնակից երկրների՝ մասնավորապես Հարավային Կովկասի երկրների վրա տարածելն էր:[78]

Մի շարք այլ ազգային ծրագրեր հաշվի են առնում միգրացիան և հարակից հարցերը՝ համապատասխան ոլորտներում պետական քաղաքականությունը պլանավորելու ժամանակ:

Այսպիսով, Հայաստանի երիտասարդության 2007թ. ազգային զեկույցում նույնպես հասցեագրվում են միգրացիայի խնդիրները: Զեկույցը ներառում է առաջարկություններ երիտասարդության շրջանում գործազրկության կրճատման և զբաղվածության հնարավորությունների ավելացման, ինչպես նաև արտագաղթի ծավալների և միգրացիոն հոսքերի կարգավորման ու մոնիտորինգի վերաբերյալ[79]:

«Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004 – 2010 թթ. ազգային ծրագիրը»[80] նույնպես հասցեագրում է կանանց աշխատանքային միգրացիայի, աղջիկների և կանանց թրաֆիքինգի հարցերը:

«Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը»[81] և «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր. վերանայված տարբերակ»[82] (որը դեռևս գտնվում է քննարկման փուլում) ի թիվս այլ հարցերի անդրադառնում է փախստականների և միգրացիայի խնդիրներին:

2003թ.-ին Հայաստանն ընդունեց «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը»[83], որն ի թիվս այլ հարցերի հասցեագրում է իրավապահ գործակալություններում, պետական կառավարման համակարգում կոռուպ-

---

77 Ներկայումս ԵՄ-ն կնքել է վիզաների դյուրացման համաձայնագրեր Ալբանիայի, Բոսնիայի և Հերցոգովինայի, Մոլդովայի, Մոնտենեգրոյի նախկին Հարավսլավական Մակեդոնիայի Հանրապետության, , Ռուսաստանի Դաշնության, Սերբիայի և Ուկրաինայի հետ:

78 Տե՛ս, «Non – Paper Expanding on the Proposals Contained in the Communication to the European Parliament and the Council On “Strengthening The ENP» – COM (2006) 726 Final of 4 December 2006. ENP – Visa Facilitation (http://ec.europa.eu/world/enp/pdf/non_paper_visa_facilitation_en.pdf).

79 Հայաստանի երիտասարդության 2007թ. ազգային զեկույց (ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, 2007թ.), բաժին 2.3՝ «Արտագաղթ և ներքին միգրացիա. ամփոփում և առաջարկություններ», 2-րդ կետ, էջ 61:

80 «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004 – 2010թթ. ազգային ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը» հաստատվել է ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի թիվ 645-Ն որոշմամբ: Տե՛ս, www.genderpolitics.am/downloads/NAP_Eng.doc.

81 Ընդունվել է ՀՀ Կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի հաստատման մասին» թիվ 994-Ն որոշման համաձայն, զետեղված է՝ http://www.prsp.am/new/pdf/prsp_en.pfd:

82 Տե՛ս, http://www.prsp.am/new/pdf/PRSP2_eng.pdf.

83 Ընդունվել է «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի թիվ 1522-Ն որոշմամբ: Տե՛ս, http://www.gov.am/enversion/programms_9/korup_prog.htm.

ցիայի խնդիրներին և, որի վերջնական նպատակը կոռուպցիայի հաղթահարումն է, այն առաջացնող և դրա տարածմանը խթանող պատճառների ու պայմանների վերացումը և աղքատության հաղթահարումը:

Փաստելով, որ մի քանի հայեր վարակվել են Ռուսաստանի Դաշնությունում և Ուկրաինայում, «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2007-2011 ազգային ծրագիրը»[84] առաջարկում է տեղաշարժվող բնակչության շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման մոտեցման մշակման ռազմավարություն, կանխարգելման ծրագրերի իրականացում, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման կարողությունների զորացում:[85]

2008 թ.-ի ապրիլին Հայաստանի պետական պաշտոնյաների Շվեդիա կատարած ուսումնական այցի ընթացքում փորձագետները տեղեկացան միգրացիայի կառավարման գործընթացում ներգրավված տարբեր գերատեսչությունների վարչական կառուցվածքների և պարտականությունների հնարավոր վերանայման վերաբերյալ հայեցակարգային փաստաթուղթ մշակելու նպատակով վերջերս ձևավորված աշխատանքային խմբի մասին:[86] Փորձագետները հույս են հայտնում, որ միգրացիայի կառավարման սույն գնահատումն օգտակար առաջարկություններ և ուղղորդում կապահովի տվյալ աշխատանքային խմբի հետագա գործունեության համար:

## Ե.1. Քաղաքականության մշակում

Նախքան քաղաքականության շուրջ քննարկում ծավալելն անհրաժեշտ է գտնել «քաղաքականություն» հասկացության ընդհանուր սահմանումը՝ կառավարության, քաղաքական կուսակցության կամ բիզնեսի գործողությունների ծրագիր, որը նպատակ ունի ազդելու որոշումների, գործողությունների և այլ հարցերի ընդունման վրա և հանգեցնելու դրանց կայացմանը: Միգրացիայում այն անշուշտ պետք է հիմնված լինի հետազոտված միտումների և վիճակագրության միասնության վրա՝ ընտրազանգվածի քաղաքական կամքով: Իդեալականն այն է, որ ցանկացած երկրի ազգային քաղաքական դաս ի վիճակի լինի ամրապնդել համապատասխան գործողությունը՝ վեր կանգնելով բացառապես ընտրական նկատառումներից և փոխարենը հաշվի առնելով ներգաղթի քաղաքականության գլոբալ և ինտեգրված դիրքորոշումը: Արդյունքում, սույն համատեքստում «քաղաքականությունը» այն ընդհանուր ուղեցույցներն են, որոնց ուղղությամբ պետք է իրականացվեն օրենսդրական, վարչական և իրավական բարեփոխումները, այն է՝ պարզապես կամքի արտահայտություն:

Ընդհանուր առմամբ, միգրացիոն քաղաքականությունը չպետք է սխալմամբ դիտվի որպես լոկ փախստականների հարցերին վերաբերող քաղաքականություն: Ապաստան հայցողների հարցերը նույնպես պետք է քննության առնվեն միգրացիայի քաղաքականության մեջ: Նմանապես, միգրացիայի մասին խոսելիս միշտ էլ կարևոր է ներգաղթի (իմիգրացիա) և արտագաղթի (էմիգրացիա կամ սփյուռք) տարանջատումը: Այդ երկու հստակ սահմանված կատեգորիաների համար անհրաժեշտ է մշակել առանձին քաղաքականություն:

Բացի այդ, կարևոր է «միգրացիա» հասկացության ընդհանուր սահմանումն այնպես, որ մեկ երկրի ներսում և դրանից դուրս այդ երևույթը սահմանող տվյալները լինեն համապատասխան, միջազգայնորեն համադրելի և հիրավի օգտակար՝ քաղաքականությունը

[84] «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2007-2011 ազգային ծրագրի հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007թ. մարտի 1-ի թիվ # 398-Ն որոշմամբ: Տե՛ս, http://www.armaids.am/NationalProgramme.html.

[85] Նույնը, էջ 7, Նպատակ 5. ՄԻԱՎ-ի կանխարգելումը տեղաշարժվող բնակչության շրջանում:

[86] ՀՀ Նախագահի 2008թ. մարտի 15-ի թիվ ՆԿ-53-Ա հրաման «Հայաստանի Հանրապետության միգրացիայի համակարգի և ՀՀ-ում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի ներդրման մասին»:

մշակողների համար: Միգրացիա հասկացության ազգային սահմանումը հաճախ տարբերվում է միջազգայնորեն առաջարկված սահմանումից: Բացի այդ, միգրացիոն տվյալների հավաստիությունը հաճախ խիստ ցածր է անգամ այն դեպքում, երբ տարբեր երկրներ նույն եզրերով են սահմանում միգրացիա հասկացությունը՝ վերջնական թվերը կարող են խիստ տարբերվել: Ավելին, եթե չեն բացահայտվել ենթաբնակչության բոլոր խմբերը, չկա վստահություն առ այն, որ տվյալներն ամբողջությամբ տարածվում են բնակչության խնդրո առարկա խմբերի նկատմամբ: (Օրինակ՝ ապաստան հայցողներ, ուսանողներ, սեզոնային աշխատողներ և անգամ ԵՄ քաղաքացիները ենթաբնակչության կարևոր այն տեսակներն են, որոնք հաճախ *չեն* ընդգրկվում Եվրոպայում միգրացիայի վիճակագրությունում): Ընդհանուր առմամբ, համադրելի միգրացիոն համակարգերի զարգացման համար պահանջվում են ինչպես տվյալների հավաքման հուսալի համակարգերի ներդրում, այնպես էլ միգրացիայի հասկացության սահմանումների վերաբերյալ գաղափարների համակարգում:[87]

Սույն համատեքստում Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովը (UN/ECE) և այլ միջազգային մարմիններն աշխատում են միգրացիոն տվյալների հավաքման ընդհանուր հուսալիության և համադրելիության բարելավման ուղղությամբ: Միգրացիայի չափման հետ կապված դժվարությունների լուծման մեկ այլ ուղին այն է, որ հաշվի առնվեն «երկարաժամկետ և կարճաժամկետ միգրացիա» հասկացության ՄԱԿ-ի կողմից առաջարկված սահմանումները՝ որպես այն ստանդարտը, որի վրա պետք է հիմնվեն չափումները: Սա կնպաստի վիճակագրական տվյալների հուսալիության և համադրելիության բարելավմանը:

Այդուհանդերձ, դեռևս առկա են մի շարք յուրօրինակ մարտահրավերներ, որոնք կհաղթահարվեն, եթե միգրացիայի վիճակագրական տվյալները լինեն իսկապես հավաստի: Միջազգային միգրացիայի վիճակագրության մասին ՄԱԿ-ի առաջարկությունների համաձայն[88] (վերանայվել է 1998թ.)՝ երկարաժամկետ միջազգային ներգաղթի /իմիգրացիայի/ դեպքն արձանագրվում է այն ժամանակ, երբ անձը մուտք է գործում տվյալ երկիր և մեկ կամ ավելի տարով հաստատում է այնտեղ իր սովորական բնակության վայրը: Կարճաժամկետ ներգաղթի /իմիգրացիայի/ հասկացության ՄԱԿ-ի սահմանումներում նշվում է, որ բնակության ժամկետը սահմանափակվում է երեք ամիսից մինչև մեկ տարի է ժամկետով: Երեք ամիսից պակաս ժամկետով երկրում մնացող անձինք համարվում են «այցելուներ»:

Միգրացիոն տվյալների հավաքման համար ներկայումս կիրառվում են տարբեր աղբյուրներ, որոնք այս կամ այն չափով օգտակար են ՄԱԿ-ի առաջարկություններին համապատասխանությունն ապահովելու համար. դրանք են՝

- ներքին և միջազգային տեղաշարժի հատուկ հարցերի վերաբերյալ համաձայնություն.
- բնակչության վարչական գրանցամատյաններ, որտեղ հաշվառվում է անձանց վարչական բնակությունը, ինչպես նաև տվյալ երկրի տարածք նրանց մուտքը և ելքը.
- մուտքի և ելքի վիզաներ, սահմաններում վիճակագրական տվյալների հավաքում.
- բնակության թույլտվությունների տրամադրման և դրանց երկարացման հաշվառում, օտարերկրացիների բնակության հաշվառման կառավարում և
- միջազգային տեղաշարժին հատուկ և բնակչության ներկայացուցչական նմուշին վերաբերող հետազոտություններ:

[87] Poulain, Michel, and Nicolas Perrin, «Can UN Migration Recommendations Be Met in Europe?» Louvain University, 2003: Տե՛ս, http://www.migrationinformation.org/Feature/print.cfm?ID=139.

[88] http://unstats.un.org/unsd/demographic/migration/Migration.pdf.

## Ե.2. Ներգաղթի ընթացիկ քաղաքականություն

Թվում է, որ առկա են միմյանցից տարբերվող կարծիքներ այն մասին, թե որն է Հայաստանի ներգաղթի ընթացիկ փաստացի քաղաքականությունը, որոնք հիմնավորվում են այն փաստով, որ ներկայումս ներգաղթողների 90 տոկոսը կարող է ազգությամբ հայ լինել: Հիմնականում կան միմյանց թեթևակիորեն հակադրվող տարակարծության երկու միտումներ. մի կողմից, որոշ խորհրդարանականների կողմից առաջ է քաշվում այն գաղափարը, որ բարձր գործազրկության պայմաններում իրենք չեն ցանկանում սխալ ազդանշան տալ և խրախուսել ներգաղթողների մեծ ներհոսք: Մյուս կողմից, ՀՀ արտաքին գործերի նախարարության որոշ ներկայացուցիչներ գտնում են, որ Հայաստանը ցանկանում է իրականացնել «բաց դռների» քաղաքականություն՝ երկրում ներդրումները և տնտեսական աճը խթանելու նպատակով, ներառյալ տուրիզմը:

Խորհրդարանի քաղաքականության գաղափարները կարևորում են վերադարձի և վերաինտեգրման խրախուսումը, ներառյալ՝ սոցիալական վերաինտեգրումը և հայերեն լեզվով կրթությունը: Առկա է երիտասարդ, բարձրագույն կրթություն ստացած հայերի վերադարձի միտումը: Օրենքը պետք է լինի համապարփակ, իսկ ընթացակարգը՝ դյուրըմբռնելի և թափանցիկ: Կա ըմբռնում առ այն, որ ներկայումս առկա է խնդրահարույց կառույց և, որ միգրացիոն գործընթացներում ուղղակիորեն ներգրավված տարբեր գործակալությունները հավանաբար ավելի կշահեն, եթե գործեն միևնույն նախարարության կառուցվածքում՝ պատասխանատու նախարարի ենթակայության ներքո: Այդ նախարարը կամ նախարարությունը նաև պատասխանատու կլինի միգրացիայի քաղաքականության մշակման և այն Ազգային ժողովին ներկայացնելու համար:

Միգրացիայի վերաբերյալ ՀՀ Նախագահի քաղաքականությունն ընդգծում է ԵՄ-նպատակը, ԵՀՔ շրջանակներում իրականացվող աշխատանքները՝ վիզաների ստացման կամ տրամադրման գործընթացները դյուրին դարձնելու նպատակով (որը հաստատվեց Նախագահ Քոչարյանի և Հանձնակատար Ֆրատենիի հանդիպման ընթացքում, որտեղ կարևորվեցին ապաստանի համաձայնագրերը, միգրացիայի կառավարումը և բիոմետրիկ փաստաթղթերը): Անդամությունը ԵՄ-ին չի հանդիսանում պաշտոնական քաղաքականություն, սակայն ԵՄ ստանդարտների իրականացմանը վերաբերող ցանկացած հարց (ներառյալ միգրացիայի ոլորտում) հանդիսանում է պաշտոնական քաղաքականություն: Կմշակվեն քաղաքականության առավել կոնկրետ ուղեցույցներ՝ վիզաների դիմումների և բիոմետրիկ (կենսաչափական) անձնագրերի ընդհանուր կենտրոնի ստեղծման ուղղությամբ, որպեսզի հայաստանցիների ուղևորությունը/տեղաշարժը դառնա դյուրին: Վերոգրյալին նախապատրաստվելու համար իրականացվել է տնտեսական ազատականացման գործընթացներն անցած Բալթյան պետությունների հետ համեմատական ուսումնասիրություն: Հատուկ ուշադրություն է դարձվել հետևյալ լրացուցիչ դրույթների վրա՝

1. Դառնալ օտարերկրացիների համար «կրթության ծառայություններ մատուցող» երկիր:
2. Ավելացնել տուրիզմի ծավալները (էլեկտրոնային վիզաներ և վիզաների ստացում սահմանի վրա, նվազեցնել այն երկրների ցանկը, որոնց վիզաների ստացման համար անհրաժեշտ է դիմել համապատասխան դեսպանատներին): Ազատ տեղաշարժն առավել կարևոր է, քան ազգային անվտանգությունը:
3. Նոր նախարարություն ստեղծելու փոխարեն ապահովել, որ ներկայումս այդ գործընթացների համար պատասխանատու նախարարությունը դառնա առավել ներգրավված և կենտրոնացված խնդրո առարկայի վրա:[89]

---

[89] Փորձագետների համար պարզ չէ, թե արդյոք խոսքը գնում է տարածքային կառավարման, թե՞ ներքին գործերի նախարարության մասին (վերջինս Հայաստանում կոչվում է «Ոստիկանություն»):

4. Սեփական կառույցի ներքո տարբեր օրակարգային հարցերով զբաղվող գործակալությունների պահպանումը կստեղծի մրցակցություն և առավել անուր միջգերատեսչական միջավայր:
5. Միգրացիան կարող է ստեղծել Հայաստանում կայունության պահպանման հնարավոր ռիսկ, որն անուղղակի ռիսկ է ԵՄ-ի[90] համար:

Վերոգրյալ դրույթներն ուսումնասիրելուց հետո փորձագետների խումբն ըստ պատշաճի անդրադարձավ ներգաղթի ոլորտում Հայաստանի քաղաքականության առաջնահերթություններին և նշեց, որ այն հիմնված է «բաց դռների» քաղաքականության վրա, որի նպատակն է ապահովել օտարերկրացիների ներհոսքը հետևյալ զարգացումներն ապահովելու համար.

**► Բարձրացնել զբոսաշրջության համար Հայաստանի գրավչությունը և ավելացնել այցելուների թիվը:**

Սակայն, տուրիզմի նկատառումներից ելնելով նպատակահարմար է քննարկել առանց վիզայի մուտքի հնարավորության ընդլայնումն ավելի մեծ թվով այն զարգացած երկների համար, որոնք առավել մեծ թվով զբոսաշրջիկներ կարող են ուղարկել Հայաստան: Վիզայի անհրաժեշտության հանգամանքը հաճախ կանխորոշում է այս կամ այն երկրում հաջորդ արձակուրդն անցկացնելու որոշումը: Սահմանի վրա գրեթե բոլոր ազգության քաղաքացիներին վիզա տրամադրելու միջոցով վիզաների ընթացիկ համակարգի դյուրինությունը որոշ չափով կխթանի այն զբոսաշրջիկին, որը տեղյակ չէ մեկնելու ժամանակ ակնկալվող բյուրոկրատական գործընթացին (չնայած գործնականում այդ գործընթացը բավականին պարզ է), որը սովորաբար կապված է լրացուցիչ ծախսերի հետ: Դե ֆակտո, սահմանի վրա վիզա ստանալու պարզեցված կարգը չի նպաստում զբոսաշրջիկների թվի ավելացմանը, այլ բերում է անվտանգությանը սպառնացող դեպքերի առաջացմանը և անցանկալի անձանց մուտքի հնարավորությունների հավանականության գործակցի ավելացմանը: Միանգամայն պարզ և հասկանալի է, որ պետական եկամուտների տեսանկյունից վիզան «մուտքի հարկի» վերածելն առավել նպատակահարմար է, քան վիզաների անհրաժեշտությունն ամբողջությամբ վերացնելը: Այդ «մուտքի հարկի» շնորհիվ գոյացած արտարժույթի հաշվարկը հեշտ է կատարել բազմապատկելով վիզայի համար սահմանված 40 եվրո վճարը տարեկան կտրվածքով տրամադրվող վիզաների թվով: Սակայն, հարկ է հաշվի առնել անվտանգության հետ կապված բոլոր այն հետևանքները, որոնց կարող է հանգեցնել նման մոտեցումը:

**► Ներգրավել օտարերկրյա ներդրումները ոչ միայն խոշոր, այլ նաև փոքր և միջին ներդրողների և ձեռնարկատերերի կողմից**

Այս մոտեցումը կիրառելի է նաև փոքր և միջին ձեռնարկատերերի կողմից ներդրումներ ապահովելու պարագայում: Ավելին, փորձագետների կարծիքով ներդրումների խրախուսումն առավել նպատակահարմար է կատարել ոչ թե մուտքի պարզեցված կարգ սահմանելով, այլ հատկապես փոքր ներդրումները պաշտպանելուն, երաշխավորելուն և խրախուսելուն ուղղված այլ միջոցներով: Սա առանց սահմանափակման կարող է ներառել «մեկ պատուհանից» տեղեկատվություն ստանալու և ընթացակարգային հարցերը կարգավորելու գործելակերպի կիրառման միջոցով՝ հատկապես նոր ընկերությունների գրանցման համար օտարերկրացիներին աջակցելու նպատակով: Օտարերկրացիների կողմից ուղղակիորեն անշարժ գույք ձեռք բերելու հնարավորությունը նույնպես խնդիր է առաջացնում: Կարող են հաշվի առնվել հարկային վերադարձումները և գործընթացների դյուրացումը: Քննարկման հարցեր են նաև ավելի շատ թվով օտարերկրացիների աշ-

[90] Փորձագետները ենթադրում են, որ սա նշանակում է դեպի Հայաստան ներգաղթի աճ, սակայն նաև ավելի մեծ ծավալների տարանցիկ տեղաշարժ Հայաստանի միջով դեպի ԵՄ:

խատանքի ընդունման հնարավորությունը և նրանց աշխատանքային պայմանները: Արտահանման գործող կանոնները նույնպես կարևոր են: Կարելի է ստեղծել «ներդրումների խրախուսման կենտրոն» որը կզբաղվի ոչ միայն խոշոր բիզնեսով, այլ նաև ՓՄՁ-ներով:[91] Այս ամենը հավանաբար շատ ավելի կարևոր է, քան հավանական ներդրողի համար մուտքի պարզեցված կարգ և պայմաններ սահմանելը:

► **Շարունակել հանդես գալ որպես հարևան երկրների համար «կրթության ծառայություններ մատուցող»:**

Ինչ վերաբերում է օտարերկրյա ուսանողների համար երկրի գրավչությունն ապահովելուն, նպատակահարմար է ուշադիր ուսումնասիրել, թե որ պետությունների քաղաքացիներն են հայցում այս տեսակի վիզաներ և օտարերկրյա ուսանողների որ տոկոսն է ավարտում իրենց ուսումը Հայաստանում: Ներկայումս տարեկան տրվում է մոտ 5,000 ուսանողական վիզա հարևան պետությունների (Վրաստան, Ռուսաստան, Պարսկաստան, Սիրիա, նաև Հնդկաստան) համալսարանական ուսանողներին: Այն փաստը, որ այս դիմումները մշակելու թույլտվությունը տրված է «գործակալություններին» վկայում է այն մասին, որ ուսանողական վիզա հայցելը չի երաշխավորում հենց այդ նպատակով երկիր մուտք գործելու մտադրությունը: Պարզ չէ, թե արդյոք բոլոր այդ ուսանողներն ավարտում են իրենց ուսումը Հայաստանում: Ավելին, տվյալ տարիքային խմբի այս պետությունների քաղաքացիները հաճախ հայտնվում են ԵՄ արտաքին սահմանների վրա (ըստ Լեհաստանի սահմանային հսկողության աղբյուրների վկայության) և փորձագետների կարծիքով այստեղ կա որոշակի կապ և հավանական է ոչ ցանկալի, սակայն օրինական, տրանզիտ ապահովելու մտադրություն: Յուրաքանչյուր դիմող պետք է անձամբ ստանա թույլտվությունը, բացառությամբ ուսանողների, ովքեր կարող են ստանալ թույլտվությունը մասնավոր գործակալության միջոցով: Այս սցենարում դժվար է հավատալ, որ չարաշահումներ չեն լինի:

## Ե.3. Ներգաղթի քաղաքականության մարտահրավերները

Միգրացիայի արդյունավետ կառավարումը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ քաղաքականությունն ու ռազմավարությունները հիմնվում են միգրացիոն հոսքերի իրողության մասին հավաստի տեղեկությունների և գիտելիքների վրա: Անհրաժեշտ է, որ միգրացիայի կառավարման գործընթացներում ներգրավված մարմինները համաձայնություն ձեռք բերեն միգրացիային առնչվող ընդարձակ հարցերը ներառող համեմատական վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ միգրացիոն միտումները բացահայտելու, դրանց արձագանքելու և ազգային ու միջազգային հաստատությունների հետ արդյունավետ ձևով համակարգելու նպատակով: Հետևաբար, հավաստի և ստուգված տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը և կիրառելի վիճակագրության ստեղծումը, նաև **կանխատեսման** նպատակներով, պետք է հանդիսանան ազգային միգրացիոն քաղաքականության անբաժան մասը:

Այս ճեղքվածքը լրացնելու և հանրապետությունում արտաքին միգրացիայի ծավալների մասին հստակ պատկերացում կազմելու նպատակով՝ Հայաստանի Միգրացիոն գործակալությունը, համագործակցելով ՀՀ Վիճակագրության ազգային ծառայության, տրանսպորտային ընկերությունների և սահմանային անցման կետում հսկողություն իրականացնող ծառայությունների հետ, նախաձեռնել է Հայաստան ժամանող և հանրապե-

[91] 2002թ.-ին ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը ստեղծեց Հայաստանի «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը (http://www.smednc.am/): Զարգացման հայկական գործակալությունը նույնպես աշխատում է ներդրումների խթանման ուղղությամբ:

տությունից մեկնող անձանց մասին տվյալների հավաքման գործընթացի կազմակերպումը: 2000թ.-ից սկսած՝ ՄՓՎ/ՄԳ-ը ամսական կտրվածքով ստանում է տեղեկություններ Հայաստան ժամանող և Հայաստանից մեկնող անձանց թվի վերաբերյալ ստորև նշված մարմիններից՝

- ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն,
- ՀՀ մաքսային պետական կոմիտե,
- ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանային հսկողությունն իրականացնող մարմիններ:

Սակայն դեռևս պարզ չէ, թե արդյոք միասնական տվյալների աղբյուր հանդիսացող քաղաքացիական ռեգիստրում կգրանցվեն նաև օտարերկրացիները և (կամ) փախստականները:

Ազգային վիճակագրության ծառայությունը բարձր կգնահատի տենդենցները և միտումներն առավել լավ գնահատելու հնարավորության ընձեռնումը: Փաստորեն, օրենքի համաձայն, վիճակագրական վելուծությունը պետք է կատարվի քաղաքացիական ռեգիստրում առկա թվերի հիման վրա. Նույն օրենքը սահմանում է բոլոր տվյալների ամբողջական և բաց մատչելիությունը Վիճակագրության ազգային ծառայության համար:[92] Սակայն, գործնականում Վիճակագրության ազգային ծառայությունը կապված չէ կամ չունի մուտք ո՛չ ԱԱԾ-ի սահմանային հսկողության ստորաբաժանումները կողմից կառավարվող ՍԿՏՀ-ի տվյալների շտեմարանին, և ո՛չ էլ Անձնագրերի և վիզաների վարչության տվյալների շտեմարանին: Անհրաժեշտ է ներկայացնել ներգաղթի արդյունավետ վարչական հաշվառման համակարգ, սակայն ներկայումս այդ հնարավորությունը ՉԻ ընձեռնվում ԱԱԾ-ին: Դե ֆակտո, ներկայումս ներգաղթի միտումները կարող են արտահայտվել միայն տվյալների գումարային արտահայտությամբ, քանի որ ԱԱԾ-ի կողմից չի իրականացվում այդ տվյալների որևէ վիճակագրական վերլուծություն:

Միասնական տվյալների հավաքումը կենտրոնանում է սահմանային անցակետերում մուտքի/ելքի հաշվառման վրա: Ամբողջովին բացակայում են երկրի ներսում միգրացիայի հարցերին առնչվող տվյալները, օրինակ՝ որևէ տեսակի կարգավիճակի փոփոխության մասին տեղեկություններ՝ ներառյալ ուժը կորցրած թույլտվություններ և կրթական հաստատություններում օտարերկրյա ուսանողների գրանցում:

Ընդհանուր առմամբ բացակայում է վիճակագրական տվյալների հավաքման նպատակների միասին իրազեկումը և այդ բացակայությունը կարող է բացատրվել սովետական շրջանում վիճակագրության պատմությամբ: Անհրաժեշտ է հասկանալ այն հայեցակարգը, որ վիճակագրական տեղեկությունները կարող են էականորեն օգնել քաղաքականություն մշակողներին:

Ինչ վերաբերում է տվյալների հավաստիության մակարդակի բարձրացմանն ուղղված տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված պոտենցիալին, ՀՀ կառավարությանը ներկայացվել է ՍԿՏՀ-ի և Անձնագրերի և վիզաների վարչության տվյալների շտեմարանները համապատասխանեցնելու առաջարկություն: Այդ գործընթացի իրականացումը կպահանջի մոտ 6 ամիս[93], որի արդյունքում երկրում գտնվող օտարերկրացիների և նրանց կարգավիճակի փոփոխության մասին հավաքվող միասնական տվյալները կարող են կիրառվել վիճակագրական վերլուծության նպատակով:

Այս նկատառումներից ելնելով փորձագետների թիմը **ներգաղթի** ոլորտի համար մշակեց հետևյալ հայեցակարգային առաջարկությունները.

---

[92] «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է 2000թ. ապրիլի 26-ին:

[93] Ժամկետը նշվել է «Ավիա ինֆոտել»ՓԱԸ-ի կողմից:

1. Մշակել միգրացիայի առավել հավասարակշռված քաղաքականություն, որը թույլ է տալիս վերահսկել ոչ միայն անօրինական, այլև օրինական միգրացիան, սրանով իսկ հավասարակշռելով հսկողությունն ու դյուրացումը: Սա չի նախատեսում ապազատականացում կամ փաստացի լրացուցիչ հսկողություն, այլ պարզապես ենթադրում է կարգավորման լրացուցիչ միջոցառումներ՝ հոսքերը վերահսկելու նպատակով և, ըստ էության, ընձեռում է երկրի տարածք մուտքը սահմանափակելու այլընտրանք այն դեպքերում, երբ դա ցանկալի է՝ դյուրացնելով օրինական միգրացիան ու օտարերկրացիների կողմից կատարվող ներդրումները, միևնույն ժամանակ փորձելով կանխել անկանոն միգրացիայի բոլոր ձևերը, այլ ոչ թե միայն սահմանի ապօրինի հատումները:
2. Համապատասխանեցնել նոր քաղաքականությունը Հայաստանի ներքին և արտաքին միգրացիայի իրողություններին, նպատակ ունենալով հսկել և կառավարել միգրացիոն հոսքերն ազգային շահերից ելնելով և ԵՀՔ-ի միջոցով ԵՄ հանձնառություններին համապատասխան: Սույն փաստաթուղթը, ի թիվս այլ հարցերի, կոչ է անում զարգացնել **Միգրացիային ռազմավարության և գործողությունների կուռ ծրագիր**, որը կլինի Հայաստանում համապարփակ միգրացիայի քաղաքականության առաջին գրավոր փաստաթուղթը:
3. Միգրացիայի քաղաքականությունը պետք մշակվի և ընդունվի ազգային բոլոր շահագրգիռ կողմերի կողմից, սակայն, անհրաժեշտ է նշանակել միգրացիայի քաղաքականության մշակման իրավասու մարմին, որը պաշտոնապես կստանձնի ոլորտի համակարգումը միգրացիայի առավել լայն համատեքստում, որը ներառում է նաև փախստականների ընդունում և տեղավորում, ինչպես նաև հաշվի է առնում տնտեսական նպատակներով թե՛ արտագաղթի, և թե՛ ներգաղթի հեռանկարային աճը: Լիազորված նախարարությունը կամ գործակալությունը պետք է միջգերատեսչական միջավայրում վայելի առավել մեծ հեղինակություն՝ միգրացիայի կառավարման բոլոր հարցերը համակարգող արդյունավետ կառույց դառնալու համար. այդ մարմինը պետք է նշանակվի և նրան պետք է պաշտոնապես հանձնարարվի վերոհիշյալ առաջադրանքը:
4. Անհրաժեշտ է վերանայել և միմյանց համապատասխանեցնել տարբեր ճյուղային նախարարությունների (աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության, կրթության, առևտրի և տնտեսական զարգացման և այլ նախարարություններ) կողմից իրականացվող ոլորտային քաղաքականություններն ու ռազմավարությունները՝ այդ հատվածների համապատասխան ասպեկտները միգրացիայի ընդհանուր ռազմավարության մեջ ներառելու նպատակով:
5. Անհրաժեշտ է անցում կատարել «laissez-faire» մոտեցումից դեպի այն մոտեցումը, որ երկրին օգուտ բերելու համար միգրացիան պետք է կառավարվի և կանոնակարգվի: Այս մոտեցումը պետք է փոխակերպվի կառավարության նախաձեռնության և բարեփոխումների գործընթացին աջակցության՝ միգրացիան **կարգավորելու,** եթե ոչ վերահսկելու, և դրանով իսկ պետական մարմինների կողմից այդ գործառույթի իրականացումը հնարավոր դարձնելու համար:
6. Միգրացիայի քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքները վերահսկող և դրանց մասնակցող պետական կառույցները պետք է ուսումնասիրեն և ներդաշնակեցնեն տարբեր ճյուղային նախարարությունների (առևտրի և տնտեսական զարգացման, ֆինանսների և էկոնոմիկայի, կրթության և գիտության և այլն) կողմից իրականացվող ոլորտային քաղաքականություններն ու ռազմավարությունները՝ նպատակ ունենալով միգրացիայի ապագա համապարփակ քաղաքականության մեջ ներառել համապատասխան հարցերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն հանգամանքի վրա, որ գործընթացի որոշ ուղղությունների համար պետք է ապահովվի պետական ֆինանսական աջակցություն:

7. Թեպետ քաղաքականությունը կարող է չմանրամասնել կանոնակարգման հետ կապված հարցերը, կարևոր է, որ ՀՀ կառավարությունը գիտակցի վիզաների և կացության արտոնագրերի տրամադրման չափանիշների, այդ թվում՝ տրամադրման պայմանների, վավերության ժամկետի և կացության կարգավիճակ շնորհելու հիմնավորումների վերանայման անհրաժեշտությունը:
8. Միգրացիայի արդյունավետ կառավարումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ քաղաքականությունն ու ռազմավարությունը հիմնված են միգրացիոն հոսքերի վերաբերյալ հստակ տվյալների վրա: Անհրաժեշտ է, որ միգրացիայի կառավարման գործընթացներում ներգրավված մարմինները համաձայնություն ձեռք բերեն միգրացիային առնչվող ընդարձակ հարցերը ներառող համեմատական վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ՝ միգրացիոն միտումները բացահայտելու, դրանց արձագանքելու և ազգային ու միջազգային այլ հաստատությունների հետ արդյունավետ ձևով համակարգելու նպատակով: Հետևաբար, հավաստի և ստուգված տվյաների հավաքագրումն ու վերլուծությունը և վիճակագրության ստեղծումը պետք է հանդիսանան ազգային միգրացիոն քաղաքականության անբաժան մասը:

## Ե. 4. Արտագաղթի ընթացիկ քաղաքականությունը

Ինչպես կարելի է եզրակացնել վերոհիշյալ բաժնից, քաղաքականությունը կախված է միգրացիոն միտումների ընդհանրությունից և հետևաբար՝ վիճակագրությունից: Արտաքին միգրացիայի առնչությամբ ներկայումս Հայաստանում գործող վիճակագրության համակարգը, որը հիմնվում է ՀՀ ոստիկանության անձնագրային ծառայությունների տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող բնակչության տվյալների հաշվառման և հաշվառումից հանելու վրա, չի արտացոլում բնակչության տեղաշարժի իրական ծավալը, քանի որ բնակչության զգալի մասը դուրս է գալիս հանրապետության տարածքից և բավականին երկար ժամանակով բնակություն է հաստատում արտասահմանում՝ առանց գրանցումից դուրս գալու: Գործնականում, այդ համակարգի միջոցով հավաքվում և մշակվում են միայն երկարաժամկետ էմիգրանտներին և միգրանտներին վերաբերող տեղեկություններ: Ըստ էության, բնակչության միգրացիայի վիճակագրությունը՝ իր ներկայիս ձևով, պարզապես հիմնվում է գրանցման և գրանցումից հանելու գործընթացների վրա:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիների արտահոսքին, առաջնահերթությունների շարքում պետք է ընդգրկել հետևյալը.

> **►Փորձել հաշվառել հայկական սփյուռքը, միաժամանակ ձգտելով հայաստանցիների իրավունքներն արտերկրում պաշտպանելու նպատակով ընդլայնել հյուպատոսական ծառայությունների ցանցը: Բիոմետրիկ անձնագրերն այս քաղաքականության մասն են կազմում:**

Սակայն, կարևոր է հասկանալ, թե ըստ էության ինչ են առաջարկում արտերկրում գործող 73 հայաստանյան ներկայացուցչությունները: Կարևոր է ամրապնդել և դյուրացնել հայաստանցիներին առաջակարկվող ծառայություններն այն ընդունող երկրներում (օրինակ՝ Իսպանիայում), որտեղ ավելի հաճախ են մեկնում հայերը: Ռուսաստանից վերադարձը քննարկելիս փորձագետներին տեղեկացրին, որ ռեպատրիացիան բավականին տարածված երևույթ է և, որ այդ իրավիճակում հայերը վերադառնում են առանց հայկական փաստաթղթերի՝ փոխարենը ներկայացնելով ռուսաստանյան իշխանությունների կողմից տրված մուտքի թույլտվություն: Սա վկայում է ՌԴ պետական մարմինների և Ռուսաստանում Հայաստանի հյուպատոսարանի միջև անբավարար համագործակցության մասին: Խնդիրն այն է, թե արդյոք այս երևույթը հանդիսանում է քաղաքականության դիրքորոշում, թե պարզապես վկայում է առանց փաստաթղթերի մնացած ՀՀ քաղաքացիներին օգնելու գործում հյուպատոսարանի կարողությունների բացակայության մա-

սին: Արտասահմանում գործող հայկական ասոցիացիաների ցանկի (տեղեկատուի) կազմումը, որտեղ կնշվեն նաև ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող միություն-ները, նույնպես կարող է օգտակար լինել:

**► Փորձել դյուրացնել հայաստանցիների ազատ տեղաշարժն արտերկրում, մասնավորապես ԵՄ-ում, առավել պարզեցրած մուտքի կարգ հաստատելու և ապագայում այն վերացնելու շուրջ բանակցությունների միջոցով**:

Սակայն ԵՄ-ի հետ ռեադմիսիոն պայմանագրի բացակայությունը լրացվել է միայն մի քանի երկրների հետ կնքված երկկողմանի ռեադմիսիոն համաձայնագրերով, որոնք չեն նպաստում նրան, որ ԵՄ-ն և անդամ պետությունները վստահեցվեն ՀՀ քաղաքացինե-րին հետ ընդունելու Հայաստանի պատրաստակամության մեջ: Նույն ձևով, անձնագրի վավերության ժամկետը արտասահմանում լրանալու դեպքում կարծես թե գործում է անձնագրի վավերության ժամկետի երկարացնելը կամ նոր անձնագրի ստացումը սահ-մանափակող կանոն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացվում է տվյալ երկրում օրինական կացության տեղեկանք: Սա ապօրինի բնակության դեմ պայքարի սխալ ձև է պարզապես այն պատճառով, որ այն էլ ավելի կծանրացնի արտերկրում ՀՀ քաղաքացի-ների կացությունը:

**►Իրականացնել հատկապես դեպի ԵՄ պետություններ «պարբերական միգ-րացիայի» գաղափարը՝ դրամական փոխանցումների և մասնագիտական գիտելիքների միջոցով տնտեսական զարգացումը խթանելու նպատակով**:

Համաշխարհային Բանկի ուսումնասիրության համաձայն՝ դրամական փոխանցումները կազմում են Հայաստանի ՀՆԱ-ի 20%-ը, սակայն, հաշվի առնելով դրամական փոխան-ցումների ոչ պաշտոնական ուղիները՝ այդ տոկոսը կարող է զգալիորեն ավելի մեծ լի-նել:[94] Փաստացի դրամական փոխանցումները միջինում կազմում են հայաստանյան ըն-տանիքի եկամտի մինչև քառորդ մասը: Սակայն, հետազոտողները մտահոգություն են արտահայտել դրամական փոխանցումների կայունության և դրանցից կախվածության վերաբերյալ: Հայաստանի տնտեսության իր ամփոփ նկարագրում Զարգացման Ասիա-կան Բանկը կոչ է անում ցուցաբերել զգուշավորություն և ահազանգում է հեշտ ֆինան-սավորմից չափից ավելի կախված լինելու վտանգների մասին:[95] Անշուշտ, տարբեր դի-տորդներ (ներառյալ՝ 2003թ.-ին մշակված Հայաստան 2020 ծրագրի հեղինակները) նշել են, որ դեպի Հայաստան իրականացվող դրամական փոխանցումները, չնայած դրանց մեծ ծավալի, չեն հանդիսանում ներքին տնտեսության գործունեության ֆինանսավոր-ման զգալի աղբյուր:[96] Դրամական փոխանցումները դյուրին դարձնելու և դրանք կեն-ցաղայինից դեպի ներդրումային նպատակներն ուղղորդելու քաղաքականության ան-հրաժեշտությունը պարզ է, սակայն, պարզ չէ այն, թե ինչպես են լուծվելու Հայաստան վե-րադարձող սփյուռքի ինտեգրման մարտահրավերները՝ զբաղվածություն, բիզնես, ան-

[94] Տե՛ս, Mansoor, Ali and Bryce Quillin (eds.), “Migration and Remittances. Eastern Europe and the Former Soviet Union” World Bank 2007. Տե՛ս, http://siteresources.worldbank.org/INTECA/Resources/257896-1167856389505/Migration_FullReport.pdf.

[95] Տե՛ս, «Asian Development Outlook 2007», Զարգացման Ասիական Բանկ: Տե՛ս, http://www.adb.org/Documents/Books/ADO/2007/default.asp.

[96] Տես՝ Գևորգյան Ալեքսանդր Վ, Գևորգյան Արկադի և Մաշուրյան Կարինե, «Աշխատատեղերի փոքր աճը դարձնում են աշխատանքային միգրացիան և դրամական փոխանցումները նորմ հետ-Խորհրդային Հայաստանում», Միգրացիոն քաղաքականության ինստիտուտ, 2008թ. մարտ: Զետեղված է հետևյալ ինտերնետային կայքում՝http://www.migrationinformation.org/USfocus/print.cfm?ID=676:

չափահասների կրթություն, վերապատրաստում, առողջապահական և հոգեբանական օգնություն, որը հաստատվել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից: Հարկ է հաշվի առնել, թե ինչպես կարելի է առավելագույնի հասցնել այդ վերադարձողների դրական ազդեցությունը և շրջանառության մեջ դնել արտերկրում ստացած նրանց փորձառությունները: Պարբերական միգրացիայի հետագա դյուրացման համար օգտակար կլինեն նաև մեկնման նախապատրաստական ուսուցումը և այլ երկրների հետ երկկողմանի համաձայնագրերի կնքումը: Ներկայումս մոտ 60,000 – 70,000 սեզոնային աշխատանքային հայ միգրանտներ (գարնանից մինչև աշուն) մեկնում են Ռուսաստան՝ հիմնականում շինարարական աշխատանքներ կատարելու նպատակով, քանի որ սահմանված միակ պահանջը աշխատանքի թույլտվության առկայությունն է: Մյուս կողմից, ԵՄ-ն՝ շատ ավելի խիստ պահանջների պատճառով գրավում է բարձր մասնագիտական որակավորում ունեցող հայերի և միայն անձնական հրավերք ունենալու պայմանով: Հմտությունների ավելի ցածր մակարդակ ունեցող հայերը սովորաբար աշխատում են ԵՄ զուգահեռ շուկայում և անկանոն պարբերականությամբ ժամանում են ԵՄ-ի տարածք: Այս թեմայով ՀՀ Միգրացիոն գործակալությունը մշակել է օրենքի նախագիծ, որի նպատակն է կառավարել աշխատանքային միգրացիայի հոսքերը և պաշտպանել միգրանտների իրավունքները: ՀՀ-ում օտարերկրացիների զբաղվածության մասին օրենքը կներկայացնի պետական համակարգման մեխանիզմները, օտարերկրացիների հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորող աշխատանքային պայմանագրեր, հնարավոր միգրանտ աշխատողներին վարչական և իրավական աջակցության տրամադրման, ինչպես նաև օտարերկրացիների աշխատանքի տեղավորման գործակալությունների լիցենզավորման համակարգ: Նախագիծը ներկայումս ներկայացվել է կառավարության քննարկմանը:

## Ե. 5 Արտագաղթի քաղաքականության մարտահրավերները

Ելնելով այս նկատառումներից՝ փորձագետների թիմը մշակել է **ԱՐՏԱՔԻՆ միգրացիայի** քաղաքականությանն առնչվող մի շարք առաջարկություններ.

1. Ամենայն հավանականությամբ հարկ կլինի, որ Հայաստանը շարունակի արտագաղթի և աղքատության բարձր ծավալների հաղթահարմանն ուղղված ծանրակշիռ կառուցվածքային բարեփոխումները՝ միջազգայնորեն մրցունակ տնտեսություն դառնալու նպատակով: Մինչ դրան հասնելը, անհրաժեշտ է աշխատանքային հատուկ մոդել մշակել, որի միջոցով հնարավոր կլինի կասեցնել մշտական դարձած տնտեսական արտագաղթը և նպաստել ժամանակավոր կամ «շրջանաձև» աշխատանքային միգրացիայի հոսքերի համակարգմանը: Կան բազմաթիվ տարբերակներ, որոնք հավանաբար կնախատեսեն նաև սփյուռքի ներգրավումը:
2. Հարկ է, որ Հայաստանի Կառավարությունը հանձն առնի արտագաղթի ներքին կամ բացահայտ քաղաքականության մշակումը՝ հաշվի առնելով երկրի վրա արտաքին միգրացիայի ժողովրդագրական և տնտեսական ազդեցությունը, ինչպես նաև այս գործընթացներում սփյուռքահայության հնարավոր դերը հետագայում: Շեշտակի ուշադրություն պետք է դարձնել նաև միգրացիայի և զարգացման հետ կապված այնպիսի խնդիրներին, ինչպիսիք են՝ մտավոր ներուժի արտահոսքը կամ վատնումը, ինչպես նաև արտերկրում աշխատող քաղաքացիների դրամական փոխանցումների հոսքերը և դրանց զարգացման հնարավոր ազդեցությունը:
3. Հարկ է համապատասխանեցնել պետական քաղաքականությունը Հայաստանի արտաքին միգրացիայի իրողություններին, հետամուտ լինելով միգրացիոն հոսքերի վերահսկմանն ու կառավարմանն ըստ ազգային շահերի, միաժամանակ, սակայն, հավատարիմ մնալով ԵՄ-ի նկատմամբ ստանձնած պարտավորություններին՝ ԵՀՔ հանձնառությունների միջոցով: Դա անելու հնարավոր ուղիներից են կանոնակարգ-

ված միգրացիայի քվոտաներն այլ երկրների հետ, որոնք ընդունում են այդ քվոտաները որպես իրենց ներգաղթային քաղաքականության բաղադրիչ:

4. Միգրացիայի արդյունավետ կառավարումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե համապատասխան քաղաքականությունն ու ռազմավարությունը խարսխված են իրական միգրացիոն հոսքերի հստակ իմացության վրա: Այսպես, վավերական, արժանահավատ և սպառիչ տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, ինչպես նաև դրանց հիման վրա արդիական վիճակագրության կազմումը պետք է ազգային միգրացիոն կուռ քաղաքականության մաս դառնան, իսկ լավագույն դեպքում՝ ընկած լինեն նրա հիմքում:

5. Ինչպես կամովի, այնպես էլ ստիպողաբար Հայաստան վերադարձողների ընդունման և նրանց վերաինտեգրման կարևորումը պետք է շարունակաբար դիտվի որպես Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը, սակայն նաև քննության առնվի միգրացիոն քաղաքականության ձևավորման ընթացքում: Հնարավորության դեպքում պետք է ներառել անկանոն արտագաղթի կասեցմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ՝ գլխավորապես կապված հանրության իրազեկման հետ:

6. Հայաստանի տնտեսական ու սոցիալական բարօրության վրա դրամական փոխանցումների դրական ներգործությունն ապահովելու համար անհրաժեշտ է համարժեք ինստիտուցիոնալ ֆինանսական համակարգ ունենալ: Օրինակ, փոխանցումներով ապահովված վարկավորումը արդյունավետ կաշխատեր ենթակառուցվածքային զարգացման ոլորտում կամ կնպաստեր նոր փոքր ու միջին ձեռնարկությունների ստեղծմանը: Այս հարցում հարկ կլինի, որ պետական քաղաքականության շրջանակներում քննարկումներ ծավալվեն Հայաստանի բանկային սեկտորի հետ:

## Զ. Միգրացիայի հարցերին վերաբերող օրենսդրությունը

Միգրացիայի ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը ներառում է մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված միջազգային պայմանագրերը ՀՀ օրենսդրության մասն են դառնում և ազգային օրենսդրության հետ հակասության մեջ մտնելու պարագայում պետք է գերակայեն միջազգային իրավական նորմերը: Միգրացիայի ոլորտին վերաբերող Միջազգային Համաձայնագրերի ցանկը կցվում է սույն Զեկույցին (հավելված 4):

Հայաստանն անդամակցում է ՄՄԿ-ին[97], ԱՄԿ-ին, ՄԱԿ-ին[98], Եվրոպայի Խորհրդին և այլ կազմակերպությունների, որոնց հետ կնքել է միգրացիային առնչվող տարբեր միջազգային համաձայնագրեր: Հայաստանը ստորագրել է ԱՄԿ-ի թվով 29 կոնվենցիաներ, այդ թվում՝ 1975 թ.-ի «Միգրանտ աշխատողների մասին» կոնվենցիայի լրացուցիչ դրույթները[99]:

Հայաստանը ստորագրել է ՄԱԿ-ի՝ միգրացիային վերաբերող մի շարք կարևոր միջազգային փաստաթղթեր, այդ թվում՝ «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի» կոնվենցիան (2000) և այն լրացնող՝ «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրությունը, ինչպես նաև ՄԱԿ-ի «Անդրրազգային կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի» կոնվենցիան[100] լրացնող՝ «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների

[97] Հայաստանի Հանրապետությունն անդամակցել է Միգրացիայի Միջազգային Կազմակերպությանը ՀՀ Կառավարության «Միգրացիայի Միջազգային Կազմակերպությանը ՀՀ անդամակցության մասին» 1993 թ. նոյեմբերի 30-ի թիվ 601 որոշմամբ:

[98] Հայաստանն անդամագրվել է Միավորված Ազգերի Կազմակերպությանը 1992 թ.-ի մարտի 2-ին:

[99] Վավերացվել է 2006-ին:

[100] Վավերացվել է 2003 թ. հուլիսի 1-ին:

անօրինական փոխադրումների դեմ» արձանագրությունը: Հայաստանը վավերացրել է նաև ՄԱԿ-ի «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիան (1951)[101]:

Հայաստանը վավերացրել է Եվրոպայի Խորհրդի հետևյալ կոնվենցիաները՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա» (1950)[102], «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիա» (1987)[103], «Հանձնման մասին եվրոպական կոնվենցիա» (1957)[104], «Քրեական գործերով վարույթների փոխանցման մասին եվրոպական կոնվենցիա» (1959)[105]: Հայաստանը ստորագրել, սակայն դեռևս չի վավերացրել «Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների եվրոպայի խորհրդի կոնվենցիան» (2005)[106]:

Հայաստանը չի ստորագրել 1990 թ.-ի «Բոլոր միգրանտ աշխատողների ու նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան» և 1977 թ.-ի «Միգրանտ աշխատողների իրավական կարգավիճակի մասին եվրոպական կոնվենցիան»:

Հայաստանը ստորագրել է ռեադմիցիայի համաձայնագրեր հետևյալ պետությունների հետ՝ Գերմանիա, Դանիա, Լատվիա, Լիտվա, Շվեյցարիա և Բուլղարիա (վավերացումն ակնկալվում է առաջիկայում): Բանակցային փուլում են Չեխիայի Հանրապետության, Կիպրոսի, Էստոնիայի, Լիբանանի, Նորվեգիայի, Լեհաստանի, Ռուսաստանի Դաշնության, Շվեդիայի, Ուկրաինայի և Բենիլյուքսի հետ ռեադմիսիայի համաձայնագրերի նախագծերը:

Հարկ է նշել, որ միգրացիային վերաբերող Հայաստանի օրենքների մեծ մասում փորձ է արվում կանոնակարգել օտարերկրացիների ներգաղթի գործընթացը: Ինչ վերաբերում է Հայաստանի քաղաքացիների արտագաղթի կանոնակարգմանն ու համապատասխան աջակցությանը, ապա ազգային օրենսդրությունն ակնհայտորեն թերի է: Այս առումով ՀՀ Միգրացիոն գործակալությունը հանդես է եկել օրենքի նախագծի առաջարկով, որը նպատակ ունի կառավարելու աշխատանքային միգրացիայի հոսքերը և պաշտպանելու միգրանտների իրավունքները: «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքը կարող է ներառել պետականորեն համակարգվող մեխանիզմներ, աշխատանքային պայմանագրեր օտարերկրյա գործատուների հետ, վարչական և իրավաբանական աջակցություն հօգուտ պոտենցիալ միգրանտ աշխատողների, և արտագնա աշխատատեղեր տրամադրող գործակալությունների արտոնագրում: Առաջարկը ներկայումս քննարկվում է կառավարության կողմից:

Միգրացիայի հարցերին առնչվող ՀՀ օրենսդրությունն ամրագրված է զանազան իրավական ակտերի տեսքով: Հայաստանի Հանրապետության 1995 թ.-ի Սահմանադրությունը կարգավորում է քաղաքացիության հարցը և պարունակում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների բաժին: Փոփոխված Սահմանադրությունը[107] քաղաքացիության հարցի կարգավորումը թողնում է օրենսդրության իրավասության տակ՝ այդպիսով թույլատրելով երկքաղաքացիությունը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին 1995 թ.-ի նոյեմբերի 16-ի օրենքով կանոնակարգ-

[101] Ընդունվել է 1993 թ. հուլիսի 6-ին:

[102] Վավերացվել է 2002 թ. ապրիլի 26-ին:

[103] Վավերացվել է 2002 թ. հունիսի 18-ին:

[104] Ընդունվել է 2002 թ. հունվարի 25-ին:

[105] Վավերացվել է 2002 թ. հունվարի 25-ին:

[106] Ստորագրվել է 2005 թ. մայիսի 16-ին: Վավերացումն սպասվում է մոտ ապագայում:

[107] Սահմանադրության հոդված 11.3. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գտնվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո: Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով»: Երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

վում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման, շնորհման, վերականգնման և դադարեցման խնդիրները:

Միգրացիայի ոլորտը կանոնակարգող օրենքների մեջ առանցքային կարելի է համարել 2007 թ.-ի հուլիսի 16-ին ընդունված «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը, քանի որ այն անդրադառնում է Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների մուտքի, կացության և բնակության, ՀՀ տարածքով նրանց տարանցման և ՀՀ-ից նրանց ելքի հարցերին, ինչպես նաև ՀՀ-ում օտարերկրացիների աշխատանքին առնչվող խնդիրներին:

«Օտարերկրացիների մասին» օրենքը ներառում է նաև օտարերկրյա քաղաքացիների գրանցման խնդիրը: Այն նաև կանոնակարգում է օտարերկրացիների աշխատանքային միգրացիան դեպի Հայաստան: Օրենքը պարունակում է նաև դրույթներ վիզաների տեսակների, մուտքի վիզաների տրամադրման, մերժման, վավերացման և երկարաձգման մասին, ինչպես նաև երկիր մուտք գործելն արգելելու, կացության կարգավիճակների և դրանց ձեռքբերման, դրանց տրամադրումը մերժելու, մերժումների բողոքարկման, կացության կարգավիճակից զրկման, Հայաստանում օտարերկրացիների աշխատանքի, աշխատելու թույլտվության ստացման, աշխատանքային պայմանագրերի կնքման, Հայաստանից կամավոր մեկնման և արտաքսման, հանձնման, օտարերկրացիների ձերբակալման և կալանման, ինչպես նաև օտարերկրացիների անհատական տվյալների պաշտպանության վերաբերյալ:

Վիզաներ

Հայաստանում գործում են մուտքի վիզայի հետևյալ տեսակները՝ այցելության մուտքի վիզա, պաշտոնական մուտքի վիզա, դիվանագիտական մուտքի վիզա, տարանցիկ մուտքի վիզա:

Այցելության վիզան օտարերկրացուն իրավունք է տալիս մուտք գործել Հայաստան և երկրում գտնվել մինչև 120 օրվա ընթացքում[108]: Այցելության վիզա կարող է տրվել միանգամյա կամ բազմակի մուտքերի համար (մինչև մեկ տարի ժամկետում դրանից օգտվելու համար): Միանգամյա մուտքի վիզան կարող է օտարերկրացուն տրվել վիզայի գործողության ժամկետում մեկ անգամ Հայաստանի Հանրապետություն այցելելու համար: Բազմակի մուտքի վիզան կարող է օտարերկրացուն տրվել մեկ տարի ժամկետով: Այցելության վիզա է տրվում, երբ օտարերկրացին նախատեսում է մուտք գործել Հայաստան զբոսաշրջության, բարեկամների կամ այլ անձանց այցելելու նպատակով, կամ գործարարության, փոխադրումների և մասնագիտական այլ շահերի բերումով, բուժում ստանալու համար կամ կարճատև այլ այցով: Գործուղման եկող ճանապարհորդների համապատասխան հաստատումները ստացվում են Հայաստանի դիվանագիտական առաքելությունում կամ հյուպատոսությունում՝ ինտերնետով: Ճանապարհորդող մասնավոր անձինք պետք է ներկայացնեն հրավերի բնագիր օրինակը: Այս դրույթը չի տարածվում հատուկ ցանկով ներկայացված երկրների այն քաղաքացիների վրա, ովքեր կարող են հաստատել իրենց ծագումով հայ լինելը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտանիքի անդամների և իրենց հայկական ծագման վերաբերյալ ապացույցներ կրող անձանց վրա:

Պաշտոնական և դիվանագիտական վիզաները տրվում են պաշտոնական նպատակներով՝ պաշտոնական (ծառայողական) անձնագիր կրող անձանց, դիվանագիտական և ՄԱԿ-ի *Laissez-Passer* կատեգորիայի անձնագրեր կրող անձանց՝ օտարերկրյա նախարարություններից, օտարերկրյա դիվանագիտական առաքելություններից և հյուպատոսական հիմնարկներից, միջազգային կազմակերպություններից ստացված պաշտոնական հրավերի հիման վրա: Պաշտոնական և դիվանագիտական վիզաները կարող են տրվել միանգամյա կամ բազմակի մուտքերի համար: Կիրառվում է ընդհանուր միջազգային փորձը:

[108] Սա Հայաստանի այցելուի վիզայի համար սահմանված առավելագույն ժամկետն է, սակայն սահմանային գոտում նշված առավելագույն ժամկետը հաստատվում է ստանդարտացված կարգով:

Տարանցիկ վիզա է պահանջվում այն դեպքում, երբ Հայաստանը ճանապարհորդների համար հանդես է գալիս որպես երթուղու միջանկյալ կետ: Այն կարող է լինել միանգամյա կամ բազմակի: Տարանցիկ վիզա ստացած օտարերկրացին Հայաստանի Հանրապետությունում կարող է գտնվել առավելագույնը 3 օր յուրաքանչյուր մուտքի դեպքում: Այս կարգի վիզա հնարավոր է ստանալ միայն այն դեպքում, երբ առկա է երրորդ երկիր ըստ անհրաժեշտության պարբերաբար մուտք գործելու վիզան:

Վիզաները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական ծառայությունների կողմից: «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքը (1996 թ.) կարգավորում է Հայաստանի հյուպատոսական կորպուսի գործունեությունը: Վիզաներ կարելի է ստանալ էլեկտրոնային, առցանց եղանակով, Արտաքին գործերի նախարարության վիրտուալ հյուպատոսական ծրագրի միջոցով: Վիզա կարելի է հայցել նաև Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության ներկայացուցչություններում, որոնք գտնվում են Հայաստանի սահմանների հատման հսկիչ կետերում: Երկրի սահմանների հատման հսկիչ կետերում երկիր մուտք գործելու արտոնագրումն իրականացնող ծառայությունները վիզաներ չեն տրամադրում հատուկ ցուցակագրված այն երկրների քաղաքացիներին, որոնց քաղաքացիները կարող են դիմել այցելության կամ տարանցիկ մուտքի վիզա ստանալու համար միմիայն հրավերի առկայության դեպքում: Ներկայումս սահմանների հատման հսկիչ կետերում մուտքի արտոնագրում իրականացնող ծառայությունները տրամադրում են միայն միանգամյա մուտքի եռօրյա տարանցիկ և 120-օրյա այցելության վիզաներ: Էլեկտրոնային վիզաները տրամադրվում են 21 օրով: Դրանք վավերական են միմիայն Երևանի միջազգային օդանավակայանում մուտքի համար:

Մուտքի վիզան պետք է երկարաձգվի մինչև Հայաստանի Հանրապետության տարածքում վիզայի գործողության ժամկետի լրանալը: Պաշտոնական և դիվանագիտական վիզաները երկարաձգվում են արտգործնախարարության հյուպատոսական բաժնում: Այցելության և տարանցիկ վիզաները երկարաձգվում են Ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչությունում: Ժամանակին վիզայի երկարաձգման թերացումը համարվում է վարչական իրավախախտում և հանգեցնում է վարչական պատասխանատվության և տույժերի գանձման (50 000-ից մինչև 100 000 ՀՀ դրամ): Այցելության և տարանցիկ վիզաները երկարաձգվում են ամեն լրացուցիչ օրվա համար 500-ական ՀՀ դրամ վճարի գանձմամբ:

Օտարերկրացուն վիզայի տրամադրումը կարող է մերժվել հետևյալ հիմքերով՝ (ա) վիզա ստանալու նպատակով կեղծ տեղեկատվության տրամադրում, (բ) հավաստի տվյալների առկայություն առ այն, որ վիզա հայցող անձը կարող է զբաղվել Հայաստանում քրեորեն պատժելի համարվող ապօրինի գործունեությամբ, (գ) պատկանում է այն օտարերկրացիների ցանկին, ում մուտքը Հայաստան արգելված է, (դ) սպառնալիք է ներկայացնում ազգային անվտանգությանը, հասարակական կարգին կամ մարդկանց առողջությանը, (ե) մինչ այդ արտաքսվել է Հայաստանի տարածքից կամ զրկվել կացության կարգավիճակից վերջին 3 տարվա ընթացքում, (զ) ենթարկվել է վարչական պատասխանատվության նախորդ մեկ տարվա ընթացքում:

Ադրբեջանի, Բելառուսի, Ղրղզստանի, Մոլդովայի, Մոնտենեգրոյի[109], Ղազախստանի, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Տաջիկստանի, Ուկրաինայի և Ուզբեկստանի քաղաքացիները (վավեր անձնագիր կրող) ազատվում են մուտքի վիզայի պահանջից[110]: Ներքոհիշյալ պետությունների այն քաղաքացիները, ովքեր դիվանագիտական կամ պաշտոնական/ծառայողական անձնագրեր ունեն, նույնպես կարող են մուտք գործել Հայաստան առանց մուտքի վիզայի: Դրանք են՝ Արգենտինա, Բրազիլ, Բուլղարիա

[109] Մոնտենեգրոյի դեպքում, սակայն, հրավեր պահանջվում է:

[110] Վիզայի մասին պահանջից ազատումը կիրառվում է *ad hoc* կարգով և հիմնված չէ պաշտոնական երկկողմանի համաձայնագրի վրա:

(միայն դիվանագիտական անձնագրեր կրողները), Խորվաթիա, Կիպրոս, Հունգարիա, Հնդկաստան (միայն դիվանագիտական անձնագրեր կրողները), Իրան, Լատվիա, Լիտվա, Մեքսիկա, Լեհաստան (միայն դիվանագիտական անձնագրեր կրողները), Չինաստան, Ռումինիա, Սերբիա, Սինգապուր, Սլովակիայի Հանրապետություն, Թուրքմենստան, Ուրուգվայ: Միայն հետևյալ երկրների քաղաքացիներն են կարող դիմել վիզա ստանալու համար` իրավերի առկայության պայմանով` Աֆղանստան, Ալժիր, Անգոլա, Բանգլադեշ, Բենին, Բոտսվանա, Բուրկինա Ֆասո, Բուրունդի, Գաբոն, Գամբիա, Գանա, Գվինեա, Գվինեա-Բիսաու, Եգիպտոս, Եթովպիա, Եմեն, Զամբիա, Զիմբաբվե, Էրիթրեա, Թայվան, Թունիս, Ինդոնեզիա, Իրաք, Հորդանան, Լաոսի ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն, Լեսոտո, Լիբերիա, Լիբիական Արաբական Ջամահիրիա, Կամբոջիա, Կամերուն, Կապո Վերդե, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Կոմորոս, Կոնգոյի Հանրապետություն, Կոտ դ'Իվուար, Կորեայի ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Հասարակածային Գվինեա, Հնդկաստան, Մադագասկար, Մալավի, Մալի, Մավրիտանիա, Մավրիկոս, Մարոկո, Մոզամբիկ, Մյանմար, Նամիբիա, Նիգեր, Նիգերիա, Պակիստան, Պաղեստին, Ջիբուտի, Ռուանդա, Սաուդյան Արաբիա, Սենեգալ, Սիերա Լեոնե, Սոմալի, Շրի Լանկա, Չադ, Չինաստան, բացառությամբ Հոնգ Կոնգի և Մակաոյի Հատուկ Վարչական Շրջանների, Սուդան, Սուրինամ, Սվազիլենդ, Սիրիա, Վիետնամ, Տանզանիա, Տոգո, Տոնգա, Տուվալու, Ուգանդա, Քենյա[111]:

Սովորաբար վիզայի տրամադրման ընթացակարգերը կատարվում են Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաքելություններում և հյուպատոսական բաժիններում` երեք աշխատանքային օրվա ընթացքում: Առանձին դեպքերում կարող է լրացուցիչ ստուգման անհրաժեշտություն ծագել. Նշված պարագայում հարցի քննարկման ժամկետը կարող է երկարաձգվել:

Կացության թույլտվություն

Գոյություն ունեն կացության հետևյալ կարգավիճակներ` ժամանակավոր, մշտական և հատուկ:

Ժամանակավոր կացության կարգավիճակը շնորհվում է մեկ տարի ժամկետով` ամեն անգամ նույն ժամանակով երկարաձգման հնարավորությամբ, հետևյալ հիմնավորող հանգամանքների առկայությամբ` ուսում, աշխատանքի թույլտվության առկայություն, ամուսնություն Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով բնակվող օտարերկրացու հետ, Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու հարազատ լինելը (ծնող, եղբայր, քույր, ամուսին, տատ, պապ, թոռ), և ձեռնարկատիրությամբ զբաղվելը:

Մշտական կացության կարգավիճակը (հինգ տարի ժամկետով, ամեն անգամ նույն ժամկետով երկարաձգման հնարավորությամբ) տրվում է այն օտարերկրացիներին, ովքեր հարազատներ (ծնող, եղբայր, քույր, ամուսին, տատ, պապ, թոռ) ունեն Հայաստանի Հանրապետությունում, ովքեր Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով բնակվել են առնվազն երեք տարվա ընթացքում` նախքան մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելը, ովքեր ապահովված են բնակատեղիով և միջոցներով Հայաստանի Հանրապետությունում ապրելու համար: Մշտական կացության կարգավիճակ կարող է շնորհվել նաև Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեություն ծավալած օտարերկրացիներին:

[111] Սկսած 2008 թ. մայիսից այս ցանկը կկրճատվի և կներառի հետևյալ 17 պետությունները` Աֆղանստան, Բանգլադեշ, Կամերուն, Չինաստան` բացառությամբ Հոնգ Կոնգի և Մակաոյի Հատուկ Վարչական Շրջանների, Եգիպտոս, Հնդկաստան, Իրաք, Նիգեր, Նիգերիա, Պակիստան, Պաղեստին, Սաուդյան Արաբիա, Սոմալի, Շրի Լանկա, Սուդան, Սիրիա, Վիետնամ:

Հատուկ կացության կարգավիճակը (տասը տարի ժամկետով, երկարաձգելի) տրվում է հայկական ծագում ունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող օտարերկրացիներին:

Վերջերս ՀՀ կառավարությունը ընդունել է «Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի քննարկման կարգը, ժամանակավոր կացության քարտի, մշտական կացության քարտի և Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագրի նկարագրերը և ձևերը հաստատելու մասին» որոշումը (2008 թ.-ի փետրվարի 7-ի թիվ 134-Ն որոշում): Օտարերկրացիների մասին օրենքը նաև ամրագրում է Հայաստանից հարկադիր ռեպատրիացիայի հիմքերը, որոնք ներառում են՝ Հայաստանից կամովի մեկնելուց հրաժարվելը (ա) մուտքի վիզայի ժամկետի կամ կացության կարգավիճակի գործողության ժամկետը լրանալուց հետո, (բ) եթե մուտքի վիզան անվավեր է ճանաչվել՝ կապված Հայաստանում ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար դատապարտվելու հետ, կամ աշխատանքային գործունեությամբ առանց համապատասխան թույլտվության զբաղվելու հիմքով, կամ վիզայի տրամադրման մերժում ստացած լինելու, վիզան անվավեր ճանաչելու կամ մուտքը արգելված լինելու հիմքով, (գ) եթե մերժվել է կացության կարգավիճակ ստանալու կամ այն երկարաձգելու մասին դիմումը, և/կամ (դ) եթե անձը զրկվել է կացության կարգավիճակից:

<u>Աշխատանքի հիմքով կացություն</u>

Օրենքը նաև կարգավորում է Հայաստանում օտարերկրացիների աշխատանքային գործունեության ասպեկտները, թեև գործնականում դեռևս գոյություն չունեն օրենքի այս հատվածն իրագործելու մեխանիզմներ:

Մշտական և հատուկ կացության կարգավիճակ ստացած անձինք, ինչպես նաև Հայաստանում հարազատներ ունենալու հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած անձինք աշխատելու իրավունք ունեն առանց աշխատանքի թույլտվության[112]: Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական ծառայությունների, միջազգային կազմակերպությունների և նրանց ներկայացուցչությունների պաշտոնյաների ընտանիքի անդամները նույնպես կարող են աշխատել առանց աշխատանքի թույլտվության՝ ելնելով փոխադարձության սկզբունքից: Փախստականի կարգավիճակ ունեցող օտարերկրացիները, նրանք, ովքեր քաղաքական ապաստան են ստացել Հայաստանի Հանրապետությունում և քաղաքացիություն չունեցող անձինք նույնպես կարող են աշխատել առանց աշխատանքի թույլտվության, սակայն այնքան ժամանակ, որը չի գերազանցում նրանց կացության ժամանակահատվածը: Կան նաև օտարերկրացիների այլ կատեգորիաներ, որոնք կարող են աշխատել Հայաստանում առանց աշխատանքի թույլտվության[113]:

Հայաստանյան գործատուներն իրավասու են աշխատանքային/ծառայությունների պայմանագիր կնքելու օտարերկրացի աշխատողի հետ և օգտագործել նրա աշխատանքը՝ ելնելով լիազորված մարմնի կողմից տվյալ օտարերկրացուն շնորհված աշխատանքի թույլտվությունից: Օտարերկրացի աշխատողին աշխատանքի թույլտվություն տալիս հաշվի են առնվում հայաստանյան աշխատաշուկայի կարիքներն ու զարգացումները[114]:

---

[112] Աշխատանքի թույլտվությունը հիշատակվում է օրենքում, սակայն գործնականում այն գոյություն չունի, քանի որ դեռևս չկա որևէ սուբյեկտ, որը պատասխանատու է թույլ տալու օտարերկրացիների աշխատանքը Հայաստանում:

[113] Տե՛ս «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի Հոդված 23-ը (Աշխատանքի թույլտվության ձեռքբերման բացառությունները):

[114] Իրականում աշխատաշուկայի որևէ գնահատում գոյություն չունի, և չկա որևէ հաստատություն, որն զբաղվում է նման հարցով:

Եթե գործատուն օրենքով սահմանված կարգով Հայաստան մուտք գործած օտարերկրացուն չի ապահովում այն աշխատանքով, որի համար վերջինս աշխատանքի թույլտվություն է ստացել, այդ գործատուն պարտավոր է հատուցել նրա (և նրան ուղեկցելու թույլտվություն ստացած ընտանիքի անդամների) ծագման երկիր վերադառնալու հետ կապված ծախսերը և նրա անձնական ունեցվածքի փոխադրման արժեքը:

## Զ.1. Փախստականների հարցերին վերաբերող օրենսդրությունը

Փախստականների հետ կապված հարցերը հիմնականում կարգավորվում են «Փախստականների մասին» օրենքով (1999 թ.-ի մարտի 27), որն անդրադառնում է փախստականի կարգավիճակի տրման կամ մերժման, հայտատուների երկիր մուտք գործելու, որպես փախստական ճանաչված անձանց իրավունքների և պարտականությունների, փախստականի կարգավիճակն անվավեր ճանաչելու, փախստականների կողմից Հայաստանի քաղաքացիության ձեռք բերելու խնդիրներին: 2002 թվականին օրենքում կատարված լրացումները պարզաբանում են օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին ժամանակավոր ապաստան տրամադրելու կարգը: Ներկայումս փախստականների մասին նոր, ավելի բազմակողմանի տարբերակ է մշակվում:

2000 թ.-ի դեկտեմբերի 27-ին Հայաստանն ընդունել է «1988-1992 թ.թ. Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» օրենքը: Փախստականի կարգավիճակի սահմանման կարգը ներկայացված է Կառավարության 2001 թ.-ի հուլիսի 19-ի թիվ 655 «Փախստականի կարգավիճակ տալու ընթացակարգի մասին» որոշման մեջ: Կառավարության 2003 թ.-ի հունվարի 25-ի թիվ 11-Ն «ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց ժամանակավոր ապաստան տալու կարգի մասին» որոշումը մանրամասն ներկայացնում է ժամանակավոր ապաստանի տրամադրման կարգը: Քաղաքական ապաստան ստանալու համար դիմելու կարգը, դրա ստացումն ու զրկումը, ինչպես նաև քաղաքական ապաստան ստացած անձի կարգավիճակը սահմանված են 2001 թ.-ի հոկտեմբերի 19-ի «Քաղաքական ապաստանի մասին» օրենքով:

Ոլորտին վերնաբերում են նաև 1999 թ.-ի նոյեմբերի 20-ի թիվ 695 «ՀՀ-ում փախստականի վկայական ու ճամփորդական փաստաթուղթ տալու կարգի և դրանց նկարագրերը հաստատելու մասին» որոշումը, 2000 թ.-ի փետրվարի 4-ի թիվ 52 «ՀՀ տարածքում փախստականի կարգավիճակ հայցող անձի տեղաշարժման և բնակության վայրի ընտրության կարգի մասին» որոշումը, 2000 թ.-ի փետրվարի 23-ի թիվ 86 « ՀՀ տարածքում փախստականի կարգավիճակ հայցող անձանց հատուկ և ժամանակավոր կացարաններում տեղավորելու, բժշկական զննման ենթարկելու, թարգմանչական, իրավական խորհրդատվության անվճար ծառայություններ մատուցելու, բժշկական օգնություն և սպասարկում ապահովելու կարգի մասին» որոշումը, 2000 թ.-ի փետրվարի 23-ի թիվ 82 «Հայաստանի Հանրապետության տարածքում փախստականի կարգավիճակ հայցողին միանվագ նպաստ տրամադրելու մասին» որոշումը, և 2001 թ.-ի հուլիսի 19-ի «Փախստականի կարգավիճակ տալու ընթացակարգի մասին» որոշումը:

## Զ.2. Պետական սահմանի պահպանության և կառավարման մասին օրենսդրություն

Պետական սահմանի հատման կանոնները և պետական սահմանի հատումների հսկողությունը կարգավորվում են 2001 թ.-ի դեկտեմբերի 17-ի «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքով և 2001 թ.-ի դեկտեմբերի 17-ի «Սահմանապահ զորքերի մասին» ՀՀ օրենքով: Հայաստանի սահմանների պահպանությունն իրականացնում են ռազմական ուժերը: Սահմանների վերահսկումն անցագրային կետերում դրված է ազգային անվտանգության ծառայության ենթակայության տակ գործող սահմանապահ զորքերի սահմանային վերահսկման ջոկատի վրա, որն իրականացնում է անձնագրային ստուգումնե-

րը: Համաձայն 1991 թ.-ի դեկտեմբերի 29-ի «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ աջակցության և դեպի 21-րդ դարը համագործակցության մասին» համաձայնագրի, Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերն են իրականացնում Թուրքիայի և Իրանի հետ Հայաստանի պետական սահմանի հսկողությունը, իսկ մյուս սահմաններում՝ հայաստանյան սահմանապահների հետ մեկտեղ (օր.՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում): Կարևոր իրավական ակտերից են՝ ՀՀ Կառավարության 1998 թ.-ի մարտի 24-ի թիվ 200 որոշումը «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում պետական լիազորված մարմինների գործառույթների իրականացման կարգը հաստատելու մասին» և ՀՀ Վարչապետի 1995 թ.-ի նոյեմբերի 22-ի թիվ 298 որոշումը «ՀՀ պետական սահմանի մասին ՀՀ օրենքի կիրարկումն ապահովվող միջոցառումների մասին», Կառավարության 2006 թ.-ի հունիսի 22 թիվ 884-N «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» որոշումը, որը կանոնակարգում է պետական սահմանի հսկիչ անցակետերով կատարվող հոսքերի էլեկտրոնային կառավարումը:

Միգրացիայի գործակալությունը ներկայումս աշխատում է «ՀՀ քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին» օրենքի նախագծի վրա:

Այս ոլորտը կարգավորող իրավական ակտերից են նաև «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքը (2002 թ.-ի մայիսի 20) և ՀՀ Կառավարության որոշումը «Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ավիացիոն անվտանգության հսկողության կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» (թիվ 944-Ն, 27 մայիսի, 2004 թ.):

## Զ. 3. Աշխատանքային օրենսդրություն

2004 թ.-ի նոյեմբերի 9-ին ընդունված ՀՀ «Աշխատանքային օրենսգիրքը» կարգավորում է աշխատանքի, աշխատանքային հարաբերությունների, կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների, գործատուների և աշխատողների պարտականությունների և իրավունքների, աշխատանքային իրավունքների, աշխատանքային պայմանագրերի, կոլեկտիվ աշխատանքային վեճերի կարգավորման, աշխատողների անհատական տվյալների պաշտպանության, աշխատանքային ժամերի և հանգստի, աշխատավարձի, երաշխիքների և փոխհատուցման, աշխատողների անվտանգության և առողջության, աշխատանքային կարգապահության և այլ հարցեր: Ըստ օրենսգրքի, Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք ունեն նույն աշխատանքային իրավական հնարավորությունները, ինչպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, եթե այլ կերպ նախատեսված չէ օրենքով[115]: Փաստորեն, ըստ այս օրենքի անգամ օտարերկրյա այցելուները կամ զբոսաշրջիկները կարող են օրինական հիմքով աշխատել Հայաստանում իրենց կացության ընթացքում:

Ո՛չ ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը, և ո՛չ էլ «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (25 նոյեմբերի, 2005 թ.) չեն կարգավորում արտերկրում աշխատող ՀՀ քաղաքացիներին վերաբերող խնդիրները: Հայաստանի Կառավարության հանձնարարությամբ Միգրացիայի գործակալությունը ներկայումս մշակում է «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագիծը, որը նպատակ ունի արտոնագրման կարգ սահմանել արտագնա աշխատանքներ կազմակերպող մասնավոր ընկերությունների համար:

115 Հոդված 15. Քաղաքացիների աշխատանքային իրավունակությունը և գործունակությունը:

## Զ.4. Անկանոն միգրացիային վերաբերող օրենսդրություն

Միգրացիայի ոլորտում իրավախախտումների և հանցագործությունների կանխարգելման և հետապնդման ապահովման համար հիմնականում հղում է կատարվում օրենսդրության այլ ճյուղերի, օրինակ՝ վարչական կամ քրեական օրենսգրքերի նորմերին: Մասնավորապես, 2003 թ.-ի ապրիլի 29-ին ընդունված ՀՀ Քրեական օրենսգրքի երեք հոդվածներ՝ հոդված 329-ը (Պետական սահմանն ապօրինի հատելը)[116], հոդված 178-ը (Խարդախությունը)[117] և հոդված 325-ը (Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը)[118], հիմնականում կիրառվում են ՀՀ քաղաքացիների միգրացիային վերաբերող

---

[116] Հոդված 329. Պետական սահմանն ապօրինի հատելը

1. Առանց սահմանված փաստաթղթերի կամ առանց պատշաճ թույլտվության Հայաստանի Հանրապետության պահպանվող պետական սահմանը հատելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից 200-ապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից կամ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ 3-ից 7 տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի գործողությունը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված քաղաքական ապաստանի իրավունքից օգտվելու համար օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն առանց սահմանված փաստաթղթերի կամ առանց պատշաճ թույլտվության մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն:

[117] Հոդված 178. Խարդախությունը

1. Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 300-ապատիկից 500-ապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ 1-ից 2 տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով:

2. Խարդախությունը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) խոշոր չափերով,

3) կրկին անգամ,

4) այն անձի կողմից, որը դատապարտվել է սույն օրենսգրքի 175-182, 234, 238, 269 Հոդվածներով նախատեսված հանցանքների համար, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 400-ապատիկից 700-ապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ 2-ից 6 տարի ժամկետով և տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը 50-ապատիկի չափով կամ առանց դրա:

3. Խարդախությունը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից,

3) սույն օրենսգրքի 175-182-րդ, 222-րդ, 234-րդ, 238-րդ, 269-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար երկու կամ ավելի դատվածություն ունեցող անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ 4-ից 8 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

[118] Հոդված 325. Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը

1. Իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող վկայական կամ պաշտոնական այլ փաստաթուղթ կեղծելը՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից դրանք օգտագործելու կամ իրացնելու նպատակով կամ այդպիսի փաստաթուղթ իրացնելը կամ նույն նպատակներով կեղծ կնիքներ, դրոշմներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ պատրաստելը կամ իրացնելը, ինչպես նաև ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկից 400-ապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը 1 տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ պատժվում են ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը 2 տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 4 տարի ժամկետով:

իրավախախտումների հետ գործ ունենալիս: Քանի որ բացակայում են հատուկ կացարանները կամ միգրանտներին օժևանող կենտրոնները, կամ անկանոն միգրանտների համար հատուկ նախատեսված հաստատությունները, սահմանները ապօրինի հատող անձինք, որոնք այժմ ավելի շուտ քրեական, քան վարչական պատասխանատվության են ենթարկվում, հայտնվում են բանտերում՝ քրեական հանցանք կատարած այլ անձանց հետ: Օրենքի գերակայության հաստատմանն ուղղված բարեփոխումների արդյունքում քրեակատարողական ծառայությունը փոխանցվեց ՀՀ Արդարադատության նախարարության իրավասությանը: Կալանքի և ձերբակալման, ինչպես նաև ուղիղ-աշխատանքային գաղութների հետ կապված խնդիրները կարգավորվում են ՀՀ Քրեական օրենսգրքով, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքով (1998 թ.-ի սեպտեմբերի 1), «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքով (2002 թ.-ի մարտի 7), ՀՀ քրեակատարողական օրենսգրքով (2004 թ.-ի դեկտեմբերի 24) և «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ծառայության իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով (2001 թ.-ի հոկտեմբերի 1): Հայաստանի Կառավարությունը 2008 թ.-ի փետրվարի 7-ին ընդունել է թիվ 127-Ն «Հայաստանի Հանրապետության սահմանային անցման կետերում և տարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության և օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը սահմանելու մասին» որոշումը, որն ուժի մեջ կմտնի 2008 թ.-ի ապրիլին:

### Ձ. 5. Մարդկանց առևտրի և միգրանտների անօրինական սահմանահատումների վերաբերյալ օրենսդրությունը

2003 թ.-ին ՀՀ Քրեական օրենսգրքում քրեական պատասխանատվություն սահմանվեց մարդկանց առևտրի (թրաֆիքինգ) համար (հոդված 132): Ավելի ուշ, 2006 թ.-ին օրենսգրքում ներմուծված փոփոխություններով նպատակ դրվեց թրաֆիքինգի հետ կապված իրավախախտումներն ավելի հստակ ու բազմակողմանիորեն սահմանել, «թրաֆիքինգ» տերմինի համար հայերենում ավելի համարժեք ձևակերպում գտնել և ավելի խիստ պատիժ նախատեսել հանցագործների համար: Ներկայիս թվով երկրորդ՝ Թրաֆիքինգի դեմ պայքարի ռազմավարությունն ու գործողությունների ազգային ծրագիրն ընդունվել է ՀՀ Կառավարության 2007 թ.-ի դեկտեմբերի 6-ի թիվ 1598-Ն «Հայաստանի Հանրապետությունում 2007-2009 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» որոշմամբ:

Այդ ընթացքում, լրացումներ են կատարվել ՀՀ Աշխատանքային օրենսգրքում, որոնցով արգելվում է հարկադիր աշխատանքը, բռնության գործադրումն աշխատողների նկատմամբ, 14 տարեկանից փոքր երեխաներին աշխատեցնելը. ավելացվել են նաև գործատուների նկատմամբ հանրային հսկողություն նախատեսող հոդվածներ:

Մի շարք կազմակերպություններ են աշխատել Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին օրենքի նախագծի վրա, որը կոչված էր սահմանելու մարդկանց թրաֆիքինգի արգելման, կանխման և դրա դեմ պայքարի իրավական և կազմակերպչական հիմքերը՝ միևնույն ժամանակ ապահովելով նաև գենդերային հավասարության սկզբունքը, պաշտպանելով թրաֆիքինգի զոհերի իրավական կարգավիճակը, կանոնակարգելով նրանց պաշտպանության և աջակցության իրավական խնդիրները:

### Ձ.6. Տվյալների պաշտպանության մասին օրենսդրություն

Միգրացիայի հետ սերտորեն առնչվող մեկ այլ բնագավառ է տվյալների պաշտպանությունը, տվյալների հավաքումն ու մոնիթորինգը: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը մեխանիզմներ է սահմանել միգրացիոն բնույթի տվյալների պաշտպանության համար՝ 2002 թ.-ի նոյեմբերի 22-ի «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Այժմ էլ օրենքը կոչ է անում կանոնակարգի կոնկրետացման

մանրամասն ընթացակարգեր ապահովել, այդ թվում՝ ոստիկանության տվյալների բանկին տարբեր պատասխանատու մարմինների կողմից հասու դառնալու վերաբերյալ: Դա պետք է անել ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի միջոցով:

Հայաստանի Կառավարությունը չի ստորագրել «Անհատական տվյալների ավտոմատացված վերամշակման առնչությամբ անհատների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան:

## Զ.7. Օրենսդրական բնույթի առկա մարտահրավերները

Ստորև շարադրված առաջարկություններում արդյունավետ իրավական դաշտերի ձևավորման մոտեցում է ներկայացվում, որի համար անհրաժեշտ կլինի հաստատել Միգրացիայի կառավարման պատշաճ համակարգ՝ նշված առաջարկությունների իրագործման նպատակով: Այսպես, հարկ կլինի, որ միգրացիայի ոլորտում առաջատար գործակալությունը հանձն առնի օրենսդրական նոր նախագծերի ստեղծումը, կամ, նման հնարավորության դեպքում՝ ներկայումս գործող օրենքների փոփոխումն ու համալրումը: Այս խնդրի իրագործման նպատակով ՄՄԿ-ն պետք է իր աջակցությունը բերի ՀՀ Կառավարությանը՝ ապահովելով իր խորհրդատվական փորձառությունը, ուղղորդումն ու ուսուցումը, հատկապես ԵՄ օրենսդրության տեսանկյունից միգրացիայի ոլորտի խնդիրների քննարկումը:

Հայաստանում **ներգաղթին** վերաբերող օրենսդրության հետագա զարգացմանն ուղղված այս առաջարկություններն անդրադառնում են մի քանի հիմնահարցերի՝ մինչմուտքային ընթացակարգեր և վիզաներ, մուտք և ընդունում, այցելություն և կացություն, վերադարձ, ռեադմիսիա և արտաքսում, անկանոն միգրացիա և մարդկանց թրաֆիքինգ, միգրացիային առնչվող տվյալներ և վիճակագրություն, նաև՝ միգրացիայի արդյունավետ կառավարման ինստիտուցիոնալ համակարգ: Այս ամենը, ինչպես նշվեց վերևում, անհրաժեշտաբար կիաջորդի Կառավարության՝ ներգաղթային քաղաքականությանն առնչվող դիրքորոշման տեղաշարժին: Ավելին, ներկայացվում են առաջարկություններ **արտագաղթի** խնդիրների, ինչպես նաև արտերկրում գտնվող հայաստանցի աշխատավոր միգրանտների պաշտպանության վերաբերյալ: Չափազանց կարևոր լինելով՝ դրանք պետք է մշտապես գտնվեն ուշադրության կենտրոնում. այդ դեպքում հնարավոր կլինի անմիջապես արձագանքել արտագաղթի ոլորտում առկա մարտահրավերներին:

Այս բոլոր խնդիրների շուրջ աշխատանք ծավալելիս հույժ կարևոր է, որ Կառավարությունը պատշաճ ուշադրություն դարձնի եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի դրույթներին և իրավական դաշտը համապատասխանեցնի ԵՄ այն պահանջներին, որոնք վերաբերում են քաղաքական ապաստանին և փախստականների պաշտպանությանը, միգրացիային առնչվող անդրազգային կազմակերպված հանցագործությունների կանխմանն ու հետապնդմանը, անկանոն միգրացիայի արդյունքում անդրազգային կազմակերպված հանցագործությունների զոհ դարձած անձանց պաշտպանությանը, և այլն: Արդյունավետ օրենսդրական դաշտի ձևավորման համար հարկ կլինի հաշվի առնել ԵՄ օրենսդրության մոտեցումները միգրացիայի խնդրին և ԵՄ անդամ պետությունների փորձառությունը՝ ըստ պատշաճի կիրառելու նպատակով:

Միջազգային միգրացիան կարգավորող ՀՀ օրենսդրությունը բաղկացած է տարատեսակ իրավական ակտերից և ներկայացված չէ միասնական օրենքի տեսքով: Բացի այդ, միգրացիայի և հարակից խնդիրների կարգավորման հարցում պետական մեխանիզմներն աչքի են ընկնում գերատեսչական տրոհվածությամբ. պետական մի շարք գործակալություններ և մարմիններ գործ ունեն միգրացիայի տարբեր ասպեկտների հետ, իսկ որոշ դեպքերում առկա է պարտականությունների կրկնօրինակում: Այդ գործակալությունների և մարմինների գործունեությունը կարգավորվում է ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր հանդիսացող կանոնակարգերով: Փաստորեն, տպավորություն է ստեղծվում, որ չափից ավելի տարատեսակ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի առկա-

յությունը չի նպաստում **Միգրացիայի կառավարման հարցերով զբաղվող գլխավոր դերակատարների հստակ սահմանմանը**:

Ընդհանրացնելով ասվածը, գնահատող թիմն առաջարկում է ավելի հստակորեն որոշարկել օտարերկրացիների մասին օրենքի իրավական դրույթներից մի քանիսն ու հարակից իրավական նորմերը՝ կիրարկման ընթացքում հնարավոր սխալ մեկնաբանումներից կամ ոչ պատշաճ գործածումից խուսափելու նպատակով (օրինակ, երբեմն գործածվում են «համաձայն ՀՀ օրենսդրության» և «նախարարության լիազորության սահմաններում» արտահայտությունները, ինչը որոշակի շփոթմունք է առաջացնում, հատկապես երբ համընկնում են տարբեր նախարարությունների լիազորությունները): Հարկ է ձերբազատվել անորոշ ձևակերպումներից՝ դրանք փոխարինելով լրացուցիչ կանոնների, գործող կարգերի կամ հիմնավորող օրենքների հստակ հղումներով: Եթե դա անբավարար համարվի, առաջարկվում է օտարերկրացիների մասին ընդունված նոր օրենքը սատարող ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր ընդունել:

Գործնական դաշտի մշտական հղում է կատարվում Կառավարության (սահմանման ենթակա) ընթացակարգային ակտերին՝ ընթացակարգի իրագործումը, կամ գոնե մշակումը լիազոր գործադիր իշխանությանը հանձնարարելու փոխարեն: Հարկ է նշել, սակայն, որ իրականում նշված ընթացակարգերի և վարչական գործընթացների սահմանումը, որպես կանոն, դրվում է օժանդակ օրենսդրական ակտերի/նորմերի վրա, ինչպիսիք են Կառավարության որոշումները, նախագահական հրամանագրերը կամ տարբեր գործակալությունների կամ հանձնախմբերի կանոնադրությունները: Ըստ էության, այս իրադրության պայմաններում վտանգ է առաջանում, որ նշված ընթացակարգերը փաստորեն կարող են «օրինական» չհամարվել ըստ գոյություն ունեցող ակտերի: Հետևաբար, նպատակահարմար է, որ կարևորագույն, հիմնական հարցերը հստակորեն կարգավորվեն օրենքով, այլ ոչ թե թողնվեն ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի տիրույթում: Այստեղ հարկ է կրկին նշել, որ պարտադիր չէ ընթացակարգերի սահմանումը նույն այն սուբյեկտի կողմից, որը սահմանում է օրենքները. ավելի ճիշտ կլինի, եթե նույն օրենսդիր մարմինն օգտագործի կիրարկման պահանջների շուրջ ծավալված երկխոսությունը: Օրենքները չպետք է չափից ավելի հաճախ փոփոխվեն: Շատ ավելի լավ կլինի, եթե դրանք կառուցվեն ըստ ընթացակարգերի, այնպես, որ հնարավոր դառնա ընթացակարգերն ըստ անհրաժեշտության փոփոխել՝ դրանով իսկ ապահովելով օրենքը կիրառող գործակալության որոշ աստիճանի ճկունությունը: Մյուս կողմից, դատարանները պետք է մեծագույն ուշադրություն դարձնեն օրենքների մեկնաբանության, այլ ոչ՝ ընթացակարգի վրա: Փորձագետները գտնում են, որ ընթացակարգերը չպետք է ամրագրվեն օրենքով, և փոխարենը դրանց կիրառման համար պետք է ապահովվի որոշակի ճկունության հնարավորություն:

Հայաստանում առկա միգրացիոն գործընթացների արդյունավետ կառավարման և գնահատող թիմի առաջարկությունների իրականացման նպատակով նպատակահարմար է համարվում ներկայիս միգրացիոն օրենսդրության (առաջին հերթին՝ «Օտարերկրացիների մասին» օրենքի, ինչպես նաև հարակից մյուս օրենքների) հետագա մշակումը հետևյալ ուղղություններով՝

### Ջ.7.1. Մինչմուտքային ընթացակարգեր/վիզա

*Ներկայումս մասնակիորեն իրականացվում են Արտաքին գործերի նախարարության ենթակայության տակ գտնվող հյուպատոսական բաժնի և ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության կողմից:*

Առաջնահերթ ոլորտներ.

- Վիզայի և արտոնագրի հստակ տարբերակում: Վերջին հաշվով, արտոնագիրն ուղարկվում կամ տրվում է դեսպանատան կողմից մինչև անհատի մուտք գործելը Հայաստան: Սրա անհնարինության դեպքում տրվում է կարճաժամկետ վիզա

(տե՛ս ստորև ներկայացված “C” կատեգորիան) երկիր մուտք գործելու համար, եթե նպատակն աշխատանքի ընդունվելն է, ընտանիքի վերամիավորումը, և այլն: Վիզան ընդամենը պետք է օտարերկրացուն հնարավորություն ընձեռի մուտք գործել երկիր՝ կացության արտոնագիրն ստանալու համար: Պարզ է, որ արտոնագրի տրման հարցը պետք է արդեն որոշված լինի և վիզայի տրամադրման ընթացքում այս հանգամանքը պետք է երևա տվյալների շտեմարանում:

- Վիզայի ավելի կոնկրետ կատեգորիաների մշակում՝ այն օտարերկրացիների դասակարգմամբ, որոնք կարող են դիմել «սովորական» վիզա ստանալու համար, եթե, իհարկե, այս կատեգորիան պահպանվի,
- Կարճաժամկետ և երկարաժամկետ վիզաների և տարանցիկ վիզաների նոր դասակարգման ներմուծում, և
- Արտերկրում այն երկրների քաղաքացիներին վիզա տրամադրելու համար անհրաժեշտ ընթացակարգերի ներմուծում, որոնց դեպքում անհնար է վիզա ստանալ սահմանային գոտում:

Կարևոր է սահմանափակել երկիր ժամանելուն պես սահմանային գոտում վիզա ստանալու հնարավորությունը վիզայի որոշ կատեգորիաների դեպքում (զբոսաշրջություն, մասնավոր այցելություն) և միայն որոշ երկրների քաղաքացիների դեպքում:

Մինչմուտքային ստուգման և վիզայի հետ կապված  ընթացակարգերը միգրացիայի կառավարման մեխանիզմների կարևոր բաղադրիչներ են, որոնք բավարար չափով զարգացած չեն Հայաստանում և կարոտ են Կառավարության հրատապ ուշադրության, հատկապես սահմանային կետերում վիզաների տրման հետ կապված անվտանգության ստուգումների իմաստով:

Վիզան ինչպես հնարավորության, այնպես էլ հսկողության գործիք է: Հնարավորության իմաստով վիզան իր կրողին տրամաբանական վստահություն է տալիս վերջնակետ հանդիսացող երկիր մուտք գործելու առումով: Որոշ երկրներում, ներգաղթային իշխանությունները կարող են մերժել վիզա կրողների մուտքը, օրինակ, այն դեպքում, երբ վիզան ստացվել է ոչ պատշաճ կարգով կամ վիզայի տրմանը հաջորդող ժամանակահատվածում տեղի է ունեցել հանգամանքների փոփոխություն՝ վիզա կրողին անընդունելի դարձնելով տվյալ երկրում: Հսկողության իմաստով վիզա տրամադրող երկիրն իրավասու է անցանկալի անձանց մուտքը խոչընդոտել կամ այս կամ այն եղանակով սահմանափակում ներմուծել (օր.՝ երկրում գտնվելու տևողության կամ նպատակի առնչությամբ):

Մինչմուտքային ստուգումները թույլ են տալիս անցկացնել ոչ ռեզիդենտների դասակարգում՝ մինչ նրանց երկիր մտնելը, հավաքել անհրաժեշտ բոլոր տեղեկությունները և որոշարկել նրանց կողմից երկիր մուտք գործելու և այնտեղ գտնվելու պատշաճ ռեժիմը:

Հայաստանյան իշխանությունների կողմից մինչմուտքային ստուգումների արդյունավետության մեծացման հարցում կարևոր է վիզաների դասակարգման հետագա հստակեցումը՝ ի լրումն հայկական օրենսդրությամբ ներկայումս սահմանված տեսակների: Ելնելով երկրի ներկայիս միգրացիոն իրադրությունից, առաջարկվում է քննության առնել վիզաների հետևյալ, նմուշօրինակային (սակայն **ոչ սպառիչ**) ենթակատեգորիաները.

**Տրամադրումը հնարավոր է սահմանային կետում**

30-60 օր, կարճաժամկետ՝ “A” միանգամյա մուտքով, → 30-60 օր երկարաձգման հնարավորությամբ, սակայն առանց կացության արտոնագրի:

- զբոսաշրջության վիզա
- մասնավոր այցելության վիզա:

**Տրամադրումը սահմանային կետում հնարավոր չէ**

30-90 օր, կարճաժամկետ՝ “B” միանգամյա կամ բազմակի մուտքով, → 30-90 օր երկարաձգման հնարավորությամբ, սակայն առանց կացության արտոնագրի:

- բիզնես վիզա
- բուժման վիզա:

10-30 օր, կարճաժամկետ՝ “C” միանգամյա մուտքով → ԱՌԱՆՑ երկարաձգման իրավունքի, ՄԻԱՅՆ կացության արտոնագրի հաջորդմամբ: Ընդհանուր առմամբ, կացության արտոնագիր արդեն իսկ շնորհվում է, սակայն ոչ ֆիզիկական տեսքով (անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ արտոնագրումը չի կատարվել արտերկրում):

- աշխատանքային վիզա
- ուսանողական վիզա
- գիտական վիզա
- ընտանիքի վերամիավորման վիզա:

Մինչև 180 օր, երկարաժամկետ՝ “D” բազմակի մուտքով, → հնարավոր է կացության արտոնագիր ԿԱՄ նոր վիզա ստանալ:

- ներդրողի վիզա
- շահույթ չհետապնդող կազմակերպություններ
- դիվանագիտական վիզա
- պետության համար կարևոր այլ կատեգորիաներ:

Վիզաների յուրաքանչյուր կատեգորիա պետք է փաստաթղթերի որոշակի փաթեթ նախատեսի դիմումի հետ ներկայացման համար: Վիզաների որոշ կատեգորիաների դեպքում վիզա տրամադրող մարմինը պետք է համակարգի իր որոշումները երկրի համապատասխան կառույցների հետ (օր.՝ աշխատանքային վիզայի պարագայում դա կլինի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը): Բացի այդ, վիզաների տարբեր կատեգորիաներ ենթադրում են կացության տարբեր տևողություն և մուտք գործելու տարբեր քանակներ, ինչպես նաև նախատեսում են ընդունման չափանիշների և սահմանային ստուգումների տարբեր մոտեցումներ: Աշխատանքի ընդունվելու/սեփական բիզնես ծավալելու համար երկիր մուտք գործել ցանկացողներին վիզա տրամադրելու հստակ ընթացակարգերի մշակումը հատուկ ջանքեր է պահանջում, քանի որ ներկայումս նման ընթացակարգերն ըստ պատշաճի կարգավորող աշխատանքի արտոնագրման համակարգ գոյություն չունի:

Նոր դասակարգումը պետք է ներառի տարանցիկ վիզաների, կարճաժամկետ և երկարաժամկետ վիզաների հստակ տարբերակումներ: Վիզաների տրամադրման կարգը պետք է մանրամասն նախատեսվի օրենսդրորեն և գործնականում իրականացվի դիմումների սահմանված ձևերի ներդրմամբ, ինչպես նաև այն կարգի հստակ մատնանշմամբ, որի հիման վրա ընդունվելու են վիզա տրամադրելու կամ չտրամադրելու որոշումները: Վիզայի տրամադրման մերժման հիմքերը պետք է հստակորեն արտացոլվեն օրենսդրության մեջ: Վիզա ստանալու և այն երկարաձգելու դիմումների ընթացիկ ձևերը պետք է լրջորեն վերանայվեն՝ ընդունող պաշտոնյային բավարար տեղեկություններ տրամադրելու նպատակով: Այս պահին նշված ձևերն այնքան ընդհանուր են, որ անհնար է անգամ դրանց լրջորեն մոտենալ, մասնավորապես՝ լրացման ենթակա տարբեր տողերի շատ վատ անգլերեն թարգմանության բերումով:

Ըստ առաջարկվող ընթացակարգերի, հայաստանյան վիզաները պետք է հիմնականում տրամադրվեն արտերկրում: Վիզայի ստացումը սահմանի հատման կետում երկիր մուտք գործելիս պետք է թույլատրվի միայն վիզաների և քաղաքացիության սահմանափակ թվով կատեգորիաների դեպքում, հստակ ընթացակարգերի կիրառմամբ: Սահմանային կետերում վիզաների տրամադրումը պետք է սերտորեն կապված լինի վիզաների վերոհիշյալ (կամ համանման) դասակարգման հետ: Վիզաների որոշակի տեսակներ ոչ մի դեպքում չպետք է տրվեն անձի երկիր մուտք գործելուց հետո (օր.՝ աշխատանքային վիզա, ներդրողի վիզաներ, կամ բիզնես վիզաներ), մինչդեռ որոշ տեսակներ կարելի է տրամադրել ժամանումից հետո (զբոսաշրջության, մասնավոր վիզաներ, և այլն): Դա կարելի է անել հրավիրող կազմակերպությունների կամ անձանց հնարավոր ներգրավմամբ (այցելուի վիզայի դեպքում), պայմանով, որ վիզայի համար դիմողներն ունեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ սատարող փաստաթղթեր, և եթե նրանք համապատասխանում են հայցվող վիզաների տեսակներին:

### Ձ.7.2. Մուտք և ընդունում

*Ներկայումս մասնակիորեն իրականացվում են ՀՀ արտաքին գործերի նախարարության ենթակայության տակ գտնվող հյուպատոսական բաժնի և ՀՀ սահմանապահների կողմից:*

Առաջնահերթ ոլորտներ՝

- Աշխատանքի ընդունվելու/սեփական գործ սկսելու նպատակով երկիր մուտք գործել ցանկացողներին վիզա տրամադրելու հստակ ընթացակարգերի մշակում, քանի որ ներկայումս աշխատանքի արտոնագրման համակարգ գոյություն չունի,
- Մուտքի հետ կապված պահանջների հստակեցում, հատկապես այն դեպքերում, երբ նախատեսվում է երկարաժամկետ այցելություն,
- Վիզայի տրամադրման մերժման հիմքերի հստակեցում,
- Այլընտրանքային մուտքի արտոնագրման այնպիսի համակարգի ներմուծման քննարկում, որը կծառայի որպես հնարավորության և հսկողության գործիք՝ ըստ անձի որոշակի կարգավիճակի, սակայն կսահմանափակի նրա գործունեությունը երկրում, օր.՝ ինքնությունը հաստատող հատուկ քարտի տեսքով:

Մուտքի ընթացակարգերը պետք է հստակ ու ներդաշնակ կանոններ պարունակեն՝ ոչ ռեզիդենտների ընդունման վերաբերյալ որոշումներ կայացնելու համար: Սահմանային կետերում անձանց ընդունող պաշտոնյաները պետք է ընդունման հարցը քննեն ըստ այն վիզայի կատեգորիայի, որով անձը մուտք է գործում երկիր: Միաժամանակ, սահմանի վրա աշխատող պաշտոնյան պետք է իրավասու լինի ընդունման մերժման որոշում կայացնելու, եթե տվյալ անձը չի համապատասխանում նրան տրված վիզայի կատեգորիային, անվտանգության առումով վտանգ է ներկայացնում, կամ նրա անունը զետեղված է մուտքի սահմանափակման հատուկ ցանկում, և այլն: Մերժման հիմքերը պետք է հստակորեն ամրագրված լինեն օրենսդրությամբ, որին պետք է հաջորդի մերժման որոշումների կայացման կարգի սահմանումը: Հարկ կլինի մշակել նաև նման իրավիճակներում բողոքարկման կարգը:

Հարկ է հստակեցնել հյուպատոսական հիմնարկներին ուղղորդող դրույթները, որոնք սահմանում են, թե մուտքի վիզաների որ կատեգորիաների դեպքում (տե՛ս վերը նշված օրինակները) անթույլատրելի է վիզայի տրամադրումը սահմանային կետում: Որոշ դեպքերում օտարերկրացին կարող է ընդունելի լինել կացության արտոնագրի ստացման համար՝ երկիր մուտք գործելուց անմիջապես հետո, և, հետևաբար, վիզան ընդամենը կծառայի որպես երկիր մուտք գործելու արտոնագիր: Մասնավորապես և ըստ ԵՄ օրենսդրության, օտարերկրացու կողմից ինչպես վիզայի համար դիմում ներկայացնե-

լիս, այնպես էլ սահմանի հատման անցակետում (եթե պահանջվում է) իր այցելության նպատակն ու պայմանները հիմնավորող փաստաթղթեր տրամադրելը պետք է համարվի օրենքով սահմանված պահանջներից մեկը:

Բազմաթիվ երկրներում հրավիրող կազմակերպությունների (օր.՝ առևտրային կամ գիտության ոլորտից) կամ մասնավոր անձանց ներգրավումն ապացուցել է իր արդյունավետությունը. այդ կազմակերպությունները կամ անձինք պատասխանատվություն են կրում օտարերկրյա քաղաքացիների հրավերի, երկրում օրինական կարգով գտնվելու և մեկնելու համար և կարող են նրանց մասին տեղեկատվության աղբյուր ծառայել:

### Զ.7.3. Կացություն և բնակություն

*Ներկայումս մասնակիորեն իրականացվում են ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության (ԱՎՎ), ազգային անվտանգության ծառայության և ՀՀ Նախագահի աշխատակազմին կից՝ ներման, քաղաքացիության, պարգևների և կոչումների վարչության կողմից:*

Գերակա ոլորտներ՝

- Կացության արտոնագրերի հստակ դասակարգման ապահովում,
- **Աշխատանքի** հիմքով կացության արտոնագրերի պահանջների հստակեցում (կապերի հաստատում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Զբաղվածության պետական ծառայության հետ) կամ՝ **սեփական բիզնեսի** (կապ հաստատել Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համամասնական տնտեսական զարգացման վարչության հետ):
- Կացության արտոնագրերի հետ կապակցված աշխատանքի արտոնագրերի համակարգի ներմուծում,
- Առավել մանրամասն նկարագրության ապահովում ընտանիքի վերամիավորման՝ որպես կացության արտոնագրումը թույլատրող իրավական դրույթի սահմանման մեջ,
- Կրոնական և բարեգործական գործունեության ներմուծումը որպես կացության արտոնագրումը թույլատրող իրավական դրույթներ (օր.՝ կրոնական աշխատողներ կամ ՀԿ-ներ),
- Միասնական փաստաթղթի տրամադրում երկրում գտնվելու համար, որը պետք է նաև սահմանի այն նպատակները, որոնց բերումով օտարերկրացին բնակվում է Հայաստանում,
- Համապատասխան ընթացակարգերի սահմանում՝ ՀՀ-ում բնակվող (այդ թվում՝ սահմանված ժամկետից դուրս) օտարերկրացիների հայտնաբերման համար:

Ճիշտ այնպես, ինչպես Հայաստան մուտք գործելու ներկայիս համակարգն աչքի է ընկնում իր չափազանց սահմանափակ դասակարգմամբ և միանգամայն ընդհանրական բնույթով, կացության արտոնագրերի ստացման համար համապատասխանության չափանիշները նույնքան ընդհանուր են: Հետևաբար, օտարերկրացիներին տրամադրվելիք կացության արտոնագրերի հստակ ու դիվերսիֆիկացված դասակարգման ապահովումը հույժ կարևոր է Հայաստանի ներգաղթային քաղաքականության ու դրա գործնական կիրարկման բարեփոխման համար, հատկապես նկատի ունենալով անվտանգության խնդիրները և այդ համակարգերի չարաշահման միջոցով անկանոն միգրացիայի «օրինականացումից» խուսափելու անհրաժեշտությունը:

Երկրի տարածքում օտարերկրացիների գտնվելու պայմանները, ոչ ռեզիդենտներին վերագրված իրավունքների և պարտականությունների շրջանակները և նրանց այցելության տևողությունը պետք է կախված լինեն մինչև երկիր մուտք գործելը օտարերկրացու ստացած վիզայի կատեգորիայից:

Այցելության այն նպատակները, որոնց հիման վրա կացության արտոնագիր է տրվում, պետք է նույնը լինեն, ինչպես հավանաբար վեց ամսից ավելի երկար տևողություն նախատեսող վիզաների կատեգորիաների դեպքում: Այսպես, Երկարաժամկետ վիզաներով երկիր այցելող օտարերկրացիները պետք է ի զորու լինեն երկարաձգել երկրում գտնվելու իրենց իրավունքն իրենց ընդունման նպատակներին համապատասխան՝ ստիպված չլինելով կրկին դիմել այլ հիմունքներով: Օտարերկրացուն տրված, ինքնությունը հաստատող մեկ փաստաթուղթը, բացի նրա կացության կարգավիճակը սահմանելուց, պետք է նաև ամրագրի այն նպատակը, որի բերումով նշված օտարերկրացին բնակվում է Հայաստանում: Աշխատանքի ընդունվելու կամ սեփական գործով զբաղվելու մասին խոսելիս հարկ է ընդգծել, որ արտոնագիրը տրվում է կոնկրետ ընկերությունում կոնկրետ աշխատատեղում աշխատելու դեպքում, այդ թվում նաև այն դեպքում, երբ ընկերությունը պատկանում է օտարերկրացուն՝ որպես սեփական գործով զբաղվողի: Այս կարգավիճակներում տեղի ունեցող փոփոխությունները պետք է հայտնվեն իշխանություններին և հաստատվեն նրանց կողմից:

Ոչ ռեզիդենտների այցելությունը երկիր նույնպես սերտորեն կապված է Հայաստանում նրանց կողմից ծավալվող աշխատանքային կամ ձեռնարկատիրական գործունեության հետ: Հետևաբար, չափազանց կարևոր է, որ օրենք ստեղծվի Աշխատանքային միգրացիայի մասին, որով կսահմանվեն ազգային և օտարերկրյա գործատուների արտոնագրման կանոններն ու ընթացակարգերը, ինչպես օտարերկրյա, այնպես էլ Հայաստանի քաղաքացիներին աշխատանքի ընդունելու համար: Ոչ ռեզիդենտներին աշխատանքի նպատակով ընդունելու հստակ ընթացակարգերի սահմանումը ևս բխում է ՀՀ Կառավարության շահերից, Հայաստանի աշխատաշուկայի կարգավորման և պաշտպանության տեսանկյունից, այսինքն՝ օրենսդրությամբ նախատեսվող «աշխատաշուկայի թեստավորման» իմաստով: Այդուհանդերձ, թերևս հարկ կլինի, որ սեփական գործով զբաղվողներն ու ներդրողները կապ հաստատեն այնպիսի կազմակերպության հետ, ինչպիսին է Առևտրի և տնտեսական զարգացման, կամ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը՝ օրենսդրությամբ (Acqui) «տնտեսական օգուտների թեստն» իրականացնելու հնարավորություն ունենալու համար: «Ներդրման խթանման կենտրոնի» ստեղծման իրավական դրույթը, որով ներդրողների համար երաշխավորվում են ազատ տնտեսվարման որոշակի ժամկետներ, նույնպես կարող է նպատակահարմար համարվել:

Աշխատավոր միգրանտների համար աշխատանքի անհատական արտոնագրերի համակարգի ներմուծումը նույնքան օրախնդիր է: Այս համատեքստում կարևոր է մշակել տարբեր ընթացակարգեր՝ աշխատավոր միգրանտների տարբեր կատեգորիաներին (օր.՝ որակավորում ունեցողներին և չունեցողներին) աշխատանքի արտոնագրեր տրամադրելու համար: Աշխատանքի արտոնագիր ստանալու համար դիմելու ընթացակարգերը պետք է հասու լինեն պոտենցիալ աշխատավոր միգրանտներին թե՛ երկրում և թե՛ նրա սահմաններից դուրս: Միևնույն ժամանակ, ինչպես վկայում է ձեռք բերված լավագույն փորձը, երկրում ժամանակավորապես գտնվող օտարերկրացիների որոշակի կատեգորիաներին երկրում գտնվելու ընթացքում չպետք է թույլատրվի աշխատանքի արտոնագիր ստանալ կամ փոխել նրանց կարգավիճակը (օր.՝ զբոսաշրջության), մինչդեռ գործող աշխատանքային օրենսդրությամբ ըստ էության դա հնարավոր է:

Բացի այդ, օրենսդրության մեջ տեղ չեն գտել կրոնական և բարեգործական գործունեության դրույթները՝ որպես կացության արտոնագրի տրման իրավական հիմքեր: Գնահատող թիմն առաջարկում է դրանք ներառել կացության արտոնագրման ընդլայնված դասակարգման մեջ:

Ի վերջո, թեև ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության միջոցով օտարերկրացիների գրանցման համակարգը բավականին լավ է գործում, իրենց վիզաներով և կացության արտոնագրերով նախատեսված ժամկետներից դուրս երկրում գտնվող օտարերկրացիների հայտնաբերման ընթացակարգերի սահմանումները ևս պետք է ներառել ազգային օրենսդրության մեջ, այդ թվում նախատեսելով նաև օրենքների կատարումն ապահովող հատուկ մարմնի կազմավորումը, որը լիազորված կլինի զբաղվելու Հայաստանի տարածքում գտնվող անկանոն միգրանտների հարցերով:

### Զ.7.4. Քաղաքացիություն չունեցող անձանց վերադարձ, ռեադմիսիա և արտաքսում

*Ներկայումս մասնակիորեն իրականացվում են ՀՀ արտաքին գործերի նախարարության և արդարադատության նախարարության կողմից:*

Գերակա ոլորտներ՝

- Վերանայել քրեական հանցանք կատարելու կամ երկրում ապօրինի կացության տևողության հիմքով արտաքսված օտարերկրացիների՝ երկիր մուտք գործելու արգելքի չափանիշները,
- Օտարերկրացիների կալանման համար հատուկ կացարանների (այդ թվում՝ սահմանի հատման հսկիչ կետերում) ստեղծման իրավական կանոնակարգ ներմուծել,
- Հանձնման և արտաքսման հստակ կանոններ սահմանել,
- Պետական բյուջեում հատուկ դրույթ ներմուծել՝ կապված արտաքսման ընթացակարգերի հետ:

Միգրացիոն գործընթացների կառավարման կարևոր կողմերից է երկրից ոչ ռեզիդենտների ելքը, որի առնչությամբ ՀՀ օրենսդրությամբ պետք է հստակ, կատարման համար դյուրին ընթացակարգեր սահմանել:

Հարկ կլինի նաև մշակել որոշ հատուկ ընթացակարգեր՝ միգրացիայի մասին օրենքների խախտումների հետ կապված աշխատանքի և անկանոն կամ անցանկալի օտարերկրացիներին երկրից դուրս բերելու համար: Այդ հատուկ ընթացակարգերը կարող են ներառել անկանոն օտարերկրացի միգրանտների կալանումն ու ձերբակալումը, ոչ ռեզիդենտների կամավոր վերադարձն իրենց ծագման երկրներ, ոչ ռեզիդենտների վարչական, ինչպես նաև հարկադիր վտարումը (արտաքսում): Մինչդեռ վերջինիս պարագայում համապատասխան մարմիններն օտարերկրացուն Հայաստանի տարածքից ֆիզիկապես տեղափոխում են նրա ծագման երկիր, որպես կանոն՝ ռեադմիսիայի մասին համաձայնագրի հիման վրա, վարչական վտարումը նշանակում է, որ համապատասխան մարմնի կողմից օտարերկրացուն տրվել է գրավոր հրաման որոշակի ժամկետի ընթացքում պետության տարածքից հեռանալու մասին: Օրենքի իմաստով, իր կամքով օտարերկրացու չհեռանալը կնշանակի՝ հիմք ստեղծել կալանման և հարկադիր վտարման համար:

Նշված բոլոր ընթացակարգերը, հատկապես՝ կալանավորումը, վտարումն ու արտաքսումը, պետք է մանրամասնորեն սահմանվեն օրենսդրության մեջ. հստակորեն պետք է մատնանշել որոշումների կայացման տրամաբանական հիմքերը, պատասխանատու մարմինները, ինչպես նաև գործողությունների և բողոքարկման կարգի ընթացակարգերը: Վտարման հիմքերը (սակայն ոչ անպայմանորեն ընթացակարգերը) նույնպես պետք է ամենայն մանրամասնությամբ սահմանվեն օրենքով: Օրենսդրության մեջ պետք է առանձնանշվեն այն ոչ ռեզիդենտների կատեգորիաները, որոնց հանդեպ ոչ մի պարագայում չեն կարող կիրառվել վտարումն ու արտաքսումը (օր. փախստականներ, Հայաստանի քաղաքացիների օտարերկրացի ծնողներ, և այլն):

Այնուհետև, առաջարկվում է վերանայել հայրենիք վերադարձված օտարերկրացիների կրկնակի մուտքի արգելման չափանիշները՝ հիմնվելով նրանց վտարման պատճառների, քրեական անցյալի և երկրում ապօրինի գտնվելու տևողության փաստերի վրա: Օրինակ՝ կրկնակի մուտքի արգելքն այն օտարերկրացու դեպքում, որը հանցագործություն է կատարել Հայաստանում կամ որը հինգ տարի ապօրինաբար գտնվել է երկրում, պետք է ավելի երկարատև լինի, քան այն օտարերկրացու դեպքում, որը վեց ամիս է ապօրինաբար երկրում մնացել: Անհրաժեշտ է նաև սահմանել այն առավելագույն ժամկետը, որի ընթացքում օտարերկրացին կարող է վարչական կալանքի տակ գտնվել՝ մինչև արտաքսման ենթարկվելը: Կարևոր է նաև քննել առաջիկա անելիքները (օրենսդրության իմաստով) կապված այն անկանոն միգրանտների հետ, ովքեր անվտանգության հանգամանքների բերումով չեն կարող վտարվել իրենց ծագման երկրներ:

### Զ.7.5. Անկանոն միգրացիա, միգրանտների կողմից սահմանների ապօրինի հատում և մարդկանց թրաֆիքինգ

*Ներկայումս մասնակիորեն իրականացվում են ՀՀ ոստիկանության ներքո գործող՝ անօրինական միգրացիայի դեմ պայքարի և միջազգային համագործակցության բաժինը և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի բաժինը, արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության, ԱԱԾ-ի և գլխավոր դատախազության կողմից:*

Գերակա ոլորտներ՝

- Միևնույն վարչական օրենքի կիրառումը միգրացիային առնչվող իրավախախտումների դեպքում, այդ թվում՝ սահմանների անօրինական հատման (երբ հետագա քրեական մտադրություններ չեն բացահայտվել) և սահմանված ժամկետից դուրս երկրում գտնվելու համար,
- Կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետի սահմանում (քրեական հանցագործությունների համար մեղադրվող անձանցից առանձնացված վայրերում)՝ այն օտարերկրացիների դեպքում, ովքեր ապօրինաբար հատել են երկրի սահմանները, և ներգաղթի կանոնները խախտած օտարերկրացիների դեպքում,
- Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան լրացնող «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական փոխադրումների դեմ» արձանագրության լիակատար իրագործում, այդ թվում՝ հատուկ հոդվածի ներառում քրեական օրենսդրության մեջ, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում միգրանտների կողմից Հայաստանի պետական սահմանների ապօրինի հատման համար:

Օտարերկրացիների մասին ներկայիս օրենքում բոլոր օտարերկրացիները, որոնցից վիզա չի պահանջվում Հայաստան մուտք գործելու համար, իրավունք ունեն առանց վիզայի երեք ամիս գտնվել երկրում, և այդ ժամկետի ընթացքում պարտավոր են դիմել ժամանակավոր կացության արտոնագիր ստանալու համար: Նույն կարգով, այն օտարերկրացիները, որոնցից պահանջվում է վիզա ունենալ Հայաստան մուտք գործելու համար, պարտավոր են դիմել կացության արտոնագիր ստանալու համար նախքան իրենց վիզայի վավերականության ժամկետի լրանալը: Արտոնագիրն ստանալուն պես, օտարերկրացիները մեխանիկորեն գրանցվում են բնակության այն հասցեում, որը նշված է եղել իրենց դիմումի մեջ: Անդրադառնալով վերը նշված վիզայի կատեգորիաներին, օրինականության առումով հնարավոր չպետք է լինի, որ վիզայից ազատված կարգավիճակ չունեցող անձինք կացության արտոնագիր ստանան (այսինքն՝ կարգավիճակի փոփոխում կատարեն), եթե նրանց սկզբնական մուտքը համապատասխանում էր վերը նշված

“A” և “B” կատեգորիաներին, բացառությամբ, իհարկե, բարեգործական հիմքերով մուտք գործողների:

Այնուամենայնիվ, չկա հսկողության իրականացման որևէ մեխանիզմ, որի միջոցով հնարավոր կլիներ պարզել, թե արդյոք օտարերկրացիներն իսկապես դիմում են կացության արտոնագիր ստանալու համար իրենց վիզայի ժամկետը լրանալուն պես, թե վիզա չպահանջող այցելության ընթացքում, և արդյոք նրանք դիմում են իրենց կացության արտոնագրի երկարաձգման համար, հենց որ լրանում է ընթացիկ արտոնագրի ժամկետը: Արդյունքում, բացակայում է տեղեկատվությունը երկրում գտնվելու սահմանված ժամկետից երկար մնացող օտարերկրացիների քանակի մասին, հետևաբար և Կառավարությունը որևէ քայլ չի ձեռնարկում թե՛ Հայաստանում օտարերկրացիների անկանոն հիմքով գտնվելը կանոնակարգելու, և թե՛ վարչական վտարման հրահանգի միջոցով երկրից նրանց հեռանալն ապահովելու ուղղությամբ:

Հայաստանում ներգաղթային կանոնների վարչական իրավախախտումներ թույլ տված օտարերկրացիների համար կալանավորման հատուկ, դատապարտյալ քրեական հանցագործներից առանձնացված կացարանների ստեղծման իրավական հիմքը պետք է անհապաղ քննության առնել՝ հաշվի առնելով պետական բյուջեում կատարվելիք հնարավոր փոփոխությունը: Ներկայումս նման կալանման հայտնի նախադեպ ընդհանրապես չկա, կամ միգուցե լինեն տարեկան 1-2 դեպքեր: Օտարերկրացիների կալանավորման հարցը գործնականում շարունակում է անտեսվել:

Անհրաժեշտ է կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետ սահմանել ներգաղթային օրենքի առանձին խախտումների համար՝ սահմանների անօրինական հատման, վիզաների և կացության արտոնագրերի ժամկետից դուրս երկրում մնալու և այլ խախտումների: Վարչական օրենքներ պետք է կիրառվեն ներգաղթային օրենքի խախտումների դեպքում, այդ թվում՝ ժամկետանց կացության և սահմանների անօրինական հատման (երբ հետագա քրեական մտադրություններ չեն բացահայտվել), այսինքն՝ վարչական պատժամիջոցները պետք է համապատասխանեցվեն անկանոն միգրացիայի հետ կապված իրավախախտումներին և սահմաններն ապօրինաբար հատողների նկատմամբ ներկայումս առաջադրվող քրեական պատասխանատվությանը՝ մի բան, որ չի բխում ԵՄ մոտեցումներից և ենթակա է վերանայման:

Անհրաժեշտ է ամբողջությամբ իրականացնել վերազգային կազմակերպված հանցագործության դեմ պայքարի մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան լրացնող «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական փոխադրումների դեմ» արձանագրությունը, այդ թվում՝ հատուկ հոդվածի ներառել քրեական օրենսդրության մեջ, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում միգրանտների կողմից Հայաստանի պետական սահմանների անօրինական հատման համար:

### Ջ.7.6. Միգրացիային վերաբերող տվյալներ և վիճակագրություն

*Ներկայումս մասնակիորեն իրականացվում են ՀՀ վիճակագրության պետական ծառայության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության, ԱԱԾ-ի և տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության կողմից:*

Գերակա ոլորտներ՝

- Կապ հաստատել տարբեր պետական ռեգիստրների, օրինակ՝ ոստիկանության տվյալների բանկի և Սահմանների կառավարման տեղեկատվական համակարգի միջև (արդեն ամրագրված է օրենսդրությամբ, սակայն իրականացված չէ): Այս տվյալների բանկը կարգավորող օրենքը պետք է սահմանի կոդավորման գործըն-

թացը, տվյալների մատչելիության կարգը և համապատասխան տվյալների պաշտպանության հարցը:

-  Իրավական հենք ստեղծել «համալիր տվյալների» հավաքման և միգրացիային առնչվող տվյալների միջգերատեսչական փոխանակման համար՝ հաշվի առնելով տվյալների պաշտպանության հարցը:
-  Լիազորել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությանը միգրացիոն հոսքերի վերաբերյալ ամենամյա վիճակագրություն կազմել, ինչպես պահանջվում է EUROSTAT-ի կողմից:

**Իրականացնել** Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թ.-ի հունիսի 22-ի թիվ 884-Ն «ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» որոշումը, զուգորդելով բարձրակարգ ՍԿՏՀ-ն ոստիկանության ավելի պարզունակ՝ ԱՎՎ համակարգի հետ, որն այդուհանդերձ, կարևոր տվյալներ է պարունակում վիզաների և կացության արտոնագրերի վերաբերյալ: Նույն կարգով, ԱԳՆ-ի կողմից արտերկրում տրված վիզաների գրանցման համար գործածվող համակարգը ևս պետք է կապակցվի հիմնական համակարգի հետ: Օրենսդրության մեջ բացակայում է տվյալների պաշտպանության հարցը կարգավորող առանձին օրենքը: Նպատակահարմար է տվյալների պաշտպանության մասին առանձին օրենք մշակել, որը նաև կիրառելի կլիներ անհատական միգրացիային առնչվող տվյալների փոխանակման, սակայն ոչ՝ համալիր տվյալների դեպքում: Իսկապես անհրաժեշտ է այնպիսի իրավական դրույթներ մշակել, որոնք կերաշխավորեն ճշգրիտ տվյալների փոխանակման մեխանիզմի արդյունավետությունը ոստիկանության, ԱԳՆ-ի, ԱԱԾ-ի, և այլոց միջև՝ ըստ պատշաճի վերահսկելու համար ոչ միայն օտարերկրացիների մուտքն ու ելքը, այլև Հայաստանում նրանց կարգավիճակի և ընթացիկ բնակության փոփոխությունները:

Այնուհետև, պետք է հնարավոր լինի օրենքով սահմանել, թե համալիր որ տվյալներն է պետք պարբերաբար հասու դարձնել Ազգային վիճակագրական ծառայությանը, որպեսզի վերջինս կարողանա վիճակագրական վերլուծություններին առնչվող իր գործունեությունն իրականացնել, ինչը չափազանց կարևոր է ցանկացած երկրի միգրացիոն քաղաքականության մշակման համար, ինչպես նաև EUROSTAT-ին տարեկան կտրվածքով տրամադրվելիք վիճակագրական հաշվետվությունների իմաստով: Վիճակագրական տվյալներին վերաբերող այս պահանջները սահմանող՝ ԵՄ նոր Ուղենիշը (հուլիս 2007)[119] նախատեսում է տարեկան վիճակագրության տրամադրում հինգ կատեգորիաների ուղղությամբ՝

1. միջազգային միգրացիա, կանոնավոր քաղաքացիներ, քաղաքացիության ձեռքբերում,
2. միջազգային պաշտպանություն,
3. անօրինական մուտքի և ելքի, կացության կանխարգելում,
4. կացության արտոնագրեր և երրորդ երկրի քաղաքացիների կացություն,
5. վերադարձեր:

[119] 862/2007/EC: Regulation of the European Parliament and of the Council of 11 July 2007 on Community statistics on migration and international protection and repealing Council Regulation (EEC) No 311/76 on the compilation of statistics on foreign workers, Պաշտոնական տեղեկագիր, Օր. 199, 31.07.2007 թ., էջեր 23–29.

### Ձ.7.7. Միգրացիայի կառավարման ինստիտուցիոնալ համակարգ[120]

Գերակա ոլորտներ՝

- Միգրացիայի ոլորտում մեկ առանցքային մարմնի ընտրություն և ներգրավում, նրա գործառույթների և պարտականությունների սահմանում,
- Միգրացիայի հարցերով զբաղվող այլ մարմինների գործառույթների և պարտականությունների ճշտում և համապատասխանեցում Միգրացիայի կենտրոնական կառավարման համակարգող մարմնի կողմից ընտրվելիք մարմինների հետ,
- Ներդաշնակեցում ԵՄ օրենսդրության հետ՝ միգրացիայի վերաբերյալ ԵՄ անդամ պետությունների փորձի փոխանակման իմաստով:

Գնահատող թիմի առանցքային առաջարկություններից է միգրացիայի կառավարման մեկ, կենտրոնական մարմնի ընտրությունն ու գործարկումը: Նրա գործառույթների և պարտականությունների սահմանումը պետք է տեղ գտնի ազգային օրենսդրության մեջ: Դրա հիման վրա հարկ կլինի հստակեցնել միգրացիայի ոլորտում այլ գործակալությունների գործառույթներն ու պարտականությունները, դրանք համեմատելով կենտրոնական մարմնի գործառույթների և պարտականությունների հետ, ապա դրանք պետք է ներառվեն Միգրացիայի կառավարման իրավական հենքում:

Նպատակահարմար է այս առանցքային հարցին վերաբերող օրենսդրություն մշակել կամ գործող օրենքների մեջ փոփոխություններ մտցնել՝ ելնելով միգրացիայի ոլորտում ԵՄ օրենսդրությունից և ԵՄ անդամ երկրների համապատասխան փորձից:

### Ձ.7.8. Արտագաղթի քաղաքականություն և Հայաստանից արտագնա աշխատանքների մեկնող միգրանտների պաշտպանություն

ՀՀ անձնագրերը գործածվում են որպես անձի ինքնությունը հաստատող քարտեր և միաժամանակ՝ ճամփորդական փաստաթղթեր: Տարբերությունն առաջանում է անձնագրում հատուկ կնիքի (այսպես կոչված՝ «ելքի» վիզա) առկայության դեպքում, որը վավերականացնում է անձնագիրն օտարերկրյա պետություններում: Այս գործելակերպը հարիր չէ ճամփորդական փաստաթղթերին ներկայացվող միջազգային պահանջներին: Բացի այդ, քանի որ բացառված չէ ելքի վիզայի կեղծումը, առաջարկվում է այս հարցի որևէ այլ լուծում գտնել:

Ըստ գործող կանոնակարգերի, Հայաստանի այն քաղաքացիները, ովքեր որոշում են Հայաստանից մեկնել այլ վայրում մշտական բնակության, պետք է գրանցվեն ոստիկանությունում: Սակայն ինչ-ինչ պատճառներով նման բան հիմնականում տեղի չի ունենում, ինչը նշանակում է, որ ոստիկանության կողմից գրանցված արտագաղթողների թիվը բնավ չի կարող ճշգրտորեն արտացոլել Հայաստանից արտագաղթի իրական պատկերը:

Արտաքին գործերի նախարարությունն արտերկրում բնակվող Հայաստանի քաղաքացիներին խորհուրդ է տալիս գրանցվել տվյալ երկրում հավատարմագրված ՀՀ դեսպանատանը: Ըստ գնահատող թիմին ներկայացված տեղեկատվության, ՀՀ դեսպանատների հյուպատոսական բաժինները գրանցում են ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր բնակության նպատակով արտերկիր մեկնած ՀՀ քաղաքացիներին: Ինչևէ, քանի դեռ օրենքով ավելի առարկայական առավելություններ չեն սահմանված նման գրանցման դեպքում (օր.՝ արտերկրում քվեարկելու իրավունք, կամ ՀՀ-ում տնտեսական արտոնություններ, կապված արտերկրի ռեզիդենտ լինելու հետ), հազիվ թե հաջողվի արտերկրում գտնվող հայաստանցիներին համոզել՝ ընդունելու գրանցման օգտակարությունը:

[120] Որքանով որ նոր օրենսդրություն կպահանջվի:

Քանի որ քաղաքացիների աշխատանքային միգրացիան հիմա էլ միգրացիայի կարևորագույն ասպեկտներից մեկն է Հայաստանի համար, առաջարկվում է համապատասխան իրավական դաշտ ձևավորել ՀՀ քաղաքացիների արտագնա աշխատանքի տարատեսակ ասպեկտները կառավարելու նպատակով, օրինակ՝ երկկողմանի պայմանագրերի միջոցով:

Այս առումով արտերկրում աշխատելու համար ՀՀ քաղաքացիներին հավաքագրող գործակալությունների գործունեության կանոնակարգումը պետք է համարվի առաջնահերթ խնդիրներից մեկը, օրինակ՝ արտոնագրման համակարգի ներմուծմամբ կամ որևէ այլ համակարգի միջոցով, որը համապատասխանում է միջազգային լավագույն պրակտիկային: Նույնքան կարևոր է արտերկրում աշխատող ՀՀ քաղաքացիների աջակցությունն ու պաշտպանությունը, օրինակ՝ մեկնման երկրի հետ աշխատանքային միգրացիայի վերաբերյալ երկկողմ պայմանագրի կնքմամբ, որում ներառված պետք է լինեն հատուկ դրույթներ աշխատավոր միգրանտների պաշտպանության, արտերկրում ՀՀ դեսպանատների աշխատանքի հարցերով կցորդների ներգրավման, ԵՄ անդամ պետությունների հետ համապատասխան համագործակցության մասին, և այլն:

Հայաստանի բնակիչների որոշակի հատված մեծապես կախված է արտերկրից ստացվող փոխանցումներից, սակայն առ այսօր լուծված չէ նման փոխանցումների վերաբերյալ բազմակողմանի քաղաքականության (և, հնարավորության դեպքում՝ նաև օրենքի) հարցը: Այդ օրենքով, մասնավորապես, պետք է կարգավորել ֆինանսական հաստատությունների և միգրանտների պահանջները, ինչպես նաև կարողությունների զարգացման խնդիրը՝ այդ պահանջների պատշաճ կատարման և դրամական փոխանցումների վավերացման համար: Պետք է նշել, սակայն, որ այս խնդրի հետ առնչվելիս Կառավարությունը և օրենսդիրները պետք է չափազանց զգույշ լինեն՝ զերծ մնալով այս համակարգը հարկման դաշտ տեղափոխելու գայթակղությունից: Ցանկացած նման փորձ ընդամենը կխթանի զուգահեռ ուղիների հետագա փնտրտուքը: Փոխարենը՝ համապատասխան կառույցները պետք է հանձն առնեն «կանոնավոր փոխանցումներ կատարողների» խրախուսումը՝ Հայաստանում բնակվող նրանց ընտանիքի անդամների ՓՄՁ-ներին վարկերի տրամադրման միջոցով՝ դիտելով նույն այդ փոխանցումները որպես երաշխիք:

## Է. Միգրացիայի կառավարման համակարգի վարչական կառույցները

### Է.1. Միգրացիայի կառավարման համակարգում ընդգրկված պետական մարմինների ընդհանուր պատկերը

### I. Ընդհանուր պատկերը

| **Գործադիր իշխանություն** | **Հանրապետության Նախագահ** | **Օրենսդիր իշխանություն** | **Դատական իշխանություն** |
|---|---|---|---|
| ⇩ | ⇩ | ⇩ | ⇩ |
| Նախարարություններ | ՀՀ Նախագահի աշխատակազմ | Ազգային ժողով | Դատարաններ |
| | ⇩ | ⇩ | |
| Կառավարությանն առընթեր մարմիններ, պետական այլ մարմիններ<br>Կառավարությանն առընթեր հանձնաժողովներ | ՀՀ Նախագահի - աշխատակազմի Ներման, քաղաքացիության, պարգևների և կոչումների վարչություն | Մշտական հանձնաժողովներ | |

II. Պատկերն ըստ իշխանության մարմինների

**Օրենսդիր իշխանություն**

**Ազգային ժողով**

⇩

- Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողով
- Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով
- Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով
- Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով
- Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով
- Սոցիալական, առողջապահության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողով
- Մարդու իրավունքների պաշտպանության և հասարակական հարցերի մշտական հանձնաժողով

## Գործադիր իշխանություն

1. Նախարարություններ



## Այլ մարմիններ

**Կառավարության առընթեր մարմինները, հանձնաժողովները և այլ կառույցները**

- Ոստիկանություն
  - Անձնագրերի և վիզաների վարչություն
  - Անօրինական միգրացիայի դեմ պայքարի և միջազգային համագործակցության բաժին
  - Մարդկանց առևտրի դեմ պայքարի բաժին
- Ազգային անվտանգության ծառայություն
  - Սահմանապահ զորքեր (վերահսկողության ջոկատ, սահմանային հսկիչ անցագրային կետեր)
  - Երկրորդ գլխավոր վարչության անօրինական միգրացիայի դեմ պայքարի բաժին
  - Ավիացիայի բաժին
- Մաքսային պետական կոմիտե
  - Մաքսային կետեր և մաքսատներ
- Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն
  - Ավիացիոն անվտանգության վարչություն
- Ազգային վիճակագրական ծառայություն
  - Աշխատուժի վիճակագրության բաժին
  - Բնակչության մարդահամարի և ժողովրդագրության բաժին
  - Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
- Գլխավոր դատախազություն
- Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհուրդ

## Է.2. Լիազորությունները

2008 թ.-ի ապրիլի սկզբին Հայաստանի պետական պաշտոնյաների Շվեդիա կատարած ուսումնական այցի ընթացքում փորձագետները տեղեկացան միգրացիայի կառավարման գործընթացում ներգրավված տարբեր գերատեսչությունների վարչական կառուցվածքների և պարտականությունների հնարավոր վերանայման վերաբերյալ հայեցակարգային փաստաթուղթ պատրաստելու նպատակով աշխատանքային խմբի ձևավորման մասին: Փորձագետները հույս են հայտնում, որ միգրացիայի կառավարման սույն գնահատումն օգտակար առաջարկություններ և ուղղորդում կապահովի տվյալ աշխատանքային խմբի հետագա գործունեության համար: Փորձագետները հասկանում են, որ սույն փաստաթուղթը քաղաքականության ձևակերպում Չէ, այլ Հայաստանի միգրացիայի կառավարման համակարգի հնարավոր կազմակերպչական կառուցվածքի և խնդիրների բաշխման փորձերից մեկը:
Ներկայումս Հայաստանում միգրացիայի կառավարման վարչական կառուցվածքը հատկապես բարդ է: Տարբեր գերատեսչությունների կրկնվող լիազորությունները ընդգծում են երկրում միգրացիայի կառավարման բազմակողմանիությունը: Փորձագետները կողմ են համակարգի պարզեցմանը և այդ նպատակով ուսումնասիրել են միգրացիայի կամ միգրացիային առնչվող հարցերով զբաղվող տարբեր գերատեսչությունների լիազորությունները:

**Միգրացիոն գործակալությունը (ՄԳ), նախկինում Միգրացիայի և փախստականների վարչությունը** (ՄՓՎ):[121] 2005 թ.-ին ՄՓՎ-ը վերակազմավորվեց **Միգրացիոն գործակալության** (ՄԳ) և ներառնվեց ՀՀ Տարածքային կառավարման նախարարության կազմում (http://www.mta.gov.am/) 2005 թ.- մայիսի 19-ի Կառավարության թիվ 633-Ն որոշմամբ: ՄԳ-ը մշակում և իրականացնում է միգրացիայի և փախստականների հարցերին ուղղված ծրագրեր: ՄԳ-ը չի իրականացնում միգրացիայի բնագավառի պետական բոլոր իրավասությունները: ՄԳ-ի առաջին խնդիրը ուղևորների հոսքի հաշվառումն էր: ՄԳ-ը Կենտրոնական բանկից ստանում է ամսական տեղեկատվություն փոխանցումների հոսքերի վերաբերյալ: Ինչևէ, ՄԳ-ը որևէ գործառույթ չի իրականացնում կացության արտոնագրերի, վիզաների կամ սահմանների կառավարման ոլորտներում:

http://www.dmr.am/ADMR/INDEX.HTML; http://www.backtoarmenia.am

**ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը** (ԱՍՀՆ) [Աշխատանքի և զբաղվածության վարչություն, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն և աշխատանքի պետական տեսչություն]: Նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչությունը զբաղվում է աշխատուժի միգրացիայի հարցերով: Այն տիրապետում է կազմակերպությունների, թափուր աշխատատեղերի և գործազուրկների տեղեկատվական բազային և, հետևաբար, հնարավորություն ունի իրականացնելու միասնական քաղաքականություն: Նախկինում միգրացիոն գործակալությունը գործում էր ԱՍՀՆ-ի կազմում: Նախարարությունը կատարում է աշխատաշուկայի մանրազնին վերլուծություն և կազմակերպում է դասընթացներ արտասահմանում աշխատել ցանկացողների համար, իսկ դասընթացներն ավարտելուց հետո ուղարկում է նրանց աշխատուժի բարձր պահանջարկ ունեցող երկրներ: Թեև դեռևս այս հարցը վերջնականապես չի հաստատվել, սակայն նախատեսվում է, որ ԱՍՀՆ-ը պատասխանատու կլինի օտարերկրացիներին աշխատանքի թույլտվությունների տրամադրման համար: Նախարա-

[121] ՄՓՎ-ը ստեղծվել էր 1999թ. ապրիլին Կառավարության որոշման հիման վրա: Մինչև 1999թ. միգրացիայի և ապաստանի տրամադրման հարցերով զբաղվում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: ՄՓՎ-ը մշակեց միգրացիոն քաղաքականություն, այդ թվում մշակեց և լրամշակեց գործող օրենսդրությունը, նախաձեռնեց խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծրագրեր, սկսեց վարել միգրացիայի վերաբերյալ վիճակագրական տվյալները:

րություննն ունի նաև իր առանձնացված ստորաբաժանումները, օրինակ՝ աշխատանքի պետական տեսչությունը և «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը: Վերջինս իրեն համարում է կացության կարգավիճակ շնորհող աշխատանքի թույլտվությունների տրամադրման իրավասու մարմին: Ինչևէ, ընթացակարգ դեռևս գոյություն չունի: Ծառայությունն ունի 405 աշխատող և 51 տարածքային կենտրոններ (որոնցից 10-ը գործում են Երևանում): «ՆՈՐՔ» տեղեկատվական բազայի միջոցով նրանք կարող են նաև վիճակագրական ցուցանիշների հիման վրա կատարել աշխատաշուկայի կանխատեսումներ: Ընթացակարգը համահունչ է ԵՄ-ի զբաղվածության ռազմավարությանը, սակայն բացահայտված ամենալուրջ խնդիրը կայանում է նրանում, որ թափուր աշխատատեղերը չեն կարող լրացվել որակյալ կադրերի բացակայության պատճառով:

http://www.mss.am

**ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը** (հյուպատոսական վարչությունը, վերջինիս միգրացիայի բաժինը, իրավաբանական վարչությունը) պատասխանատու է վիզաների և անձնագրերի տրամադրման, արտասահմանում գտնվող հայերի հետ կապերի համար: Նախարարության հյուպատոսական վարչությունը զբաղվում է հայրենադարձության և ռեադմիսիայի հարցերով: ԱԳՆ-ը ունի առցանց կապ ՍԿՏՀ-ի տեղեկատվական բազայի հետ, որի շնորհիվ դիմողների փաստաթղթերը ստուգվում են էլեկտրոնային եղանակով:

http://www.armeniaforeignministry.am/

**ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը** (Երկրորդ գլխավոր վարչության անօրինական միգրացիայի դեմ պայքարի երկրորդ բաժինը և Սահմանապահ զորքերը) (ԱԱԾ) զբաղվում է սահմանային կառավարման և հսկողության խնդիրներով: ԱԱԾ-ը վարում է կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների տվյալները: Եթե օտարերկրացին դիմում է հատուկ կացության կարգավիճակ ստանալու համար, ԱԱԾ-ը տալիս է իր կարծիքը հարցի վերաբերյալ:

**ՀՀ Սահմանապահ զորքերն** ունեն սահմանային վերահսկողության ջոկատ, որը պատասխանատու է սահմանների կառավարման և հսկողության համար: Նրանք վարում են ՍԿՏՀ-ի տեղեկատվական շտեմարան:

1991 թ.-ի դեկտեմբերի 29-ի «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ աջակցության և դեպի 21-րդ դարը համագործակցության մասին» համաձայնագրի հիման վրա Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերը հսկում են հայ-թուրքական և հայ-իրանական սահմանները:

http://www.sns.am

**ՀՀ Ոստիկանությունը (Անօրինական միգրացիայի դեմ պայքարի և միջազգային համագործակցության բաժինը, անձնագրերի և վիզաների վարչությունը, մարդկանց առևտրի դեմ պայքարի բաժինը**): Ոստիկանության **անօրինական միգրացիայի դեմ պայքարի և միջազգային համագործակցության բաժինը,** որը ստեղծվել է 2003 թվականին, հետաքննում է պետական սահմանի ապօրինի հատման, խարդախության, կեղծիքի, կեղծ փաստաթղթերի, դրոշմանիշների, լոգոների, ավտոմեքենաների համարանիշների վաճառքի և օգտագործման դեպքերը և գլխավորապես զբաղվում է ապօրինի միգրանտ դարձած ՀՀ քաղաքացիների հարցերով:

Ոստիկանության **անձնագրերի և վիզաների վարչությունը** (հայերեն հապավումը՝ ԱՎՎ, ռուսերեն հապավումը՝ «ОВИР» Отдел виз и регистраций) գործում է ՀՀ ոստիկանության կազմում (որն, իր հերթին, հաշվետու է ՀՀ Վարչապետին) և պատասխանատու է

սահմանի վրա վիզաների տրամադրման, վիզաների ժամկետների երկարաձգման, տարածքում օտարերկրացիների գրանցման, ՀՀ քաղաքացիների անձնագրերում ելքի կնիքների դրման (անձնագրերի վավերացման) համար: ԱՎՎ-ը վարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրերի տեղեկատվական բազան:

http://www.police.am

**Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ)**

ԱՎԾ-ը հավաքագրում, մշակում, ամփոփում և տպագրում է վիճակագրական տվյալները, ներառյալ միգրացիայի վերաբերյալ տվյալները, համակարգում է տեղեկատվության և տվյալների հավաքագրման աշխատանքները միջազգային ստանդարտների վրա հիմնվող միասնական դասակարգման և կոդային համակարգին համապատասխան, կազմակերպում է վիճակագրական հետազոտություններ, իրականացնում է բնակչության մարդահամարներ: ԱՎԾ-ը հավաքագրում է տվյալներ փոխանցումների (2002 թ.-ի և 2006 թ.-ի տնային տնտեսությունների հետազոտություններ), ներգաղթողների և արտագաղթողների մասին:

http://www.armstat.am

**Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմը (Ներման, քաղաքացիության, պարգևների և կոչումների վարչություն):** Ներման, քաղաքացիության, պարգևների և կոչումների վարչության հիմնական խնդիրներն են. շնորհել ներում դատապարտվածներին, շնորհել քաղաքացիություն, տալ քաղաքական ապաստան, շնորհել Հայաստանի Հանրապետության պարգևներ և մեդալներ, բարձրագույն զինվորական և պատվավոր կոչումներ, ինչպես նաև բարձրագույն դիվանագիտական և այլ կոչումներ: Վարչությունը կատարում է նաև օրենքով նախատեսված այլ գործառույթներ: Վերջին ժամանակներս ՀՀ Նախագահի աշխատակազմը քննության է առել միգրացիայի հարցերին առնչվող երեք իրավական ակտեր՝ վիզաների կնիքների, անցանկալի անձանց տեղեկատվական բազայի և դեսպանատների մակարդակում վիզա ստացող երկրների ցանկի մասին: Վերջին փաստաթղթի հետագա ընթացքը դադարեցվել է ցանկը կրճատելու խնդրանքի հիման վրա: Սա վկայում է այն մասին, որ քաղաքականության ուղղությունը որոշվում է Հայաստանի գերագույն իշխանության մարմնի մակարդակում:

http://www.president.am/administration/eng/

**ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը** (ԱՏԶՆ)[122] պատասխանատու է զբոսաշրջության քաղաքականության մշակման և իրականացման համար: Այն նաև մշակում է երկրի ներդրումային քաղաքականությունը: Բացի այդ, նախարարությունը ձևավորում և իրականացնում է ձեռնարկատիրության, այդ թվում փոքր ու միջին ձեռնարկությունների, զարգացման պետական քաղաքականությունը: 2002 թ.-ին նախարարությունը ստեղծել է «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը (http://www.smednc.am/):

http://www.minted.am/en/

**ՀՀ Առողջապահության նախարարությունը** իրականացնում է վտանգավոր և ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ:

http://www.moh.am/

---

122 2008թ. ապրիլին նախարարությունը վերանվանվեց ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը:

ՀՀ Կառավարությանն առընթեր **պետական մաքսային կոմիտեն** կառավարում, կազմակերպում և վերահսկում է մաքսային գործունեությունը, վերահսկում է ապրանքների մուտքն ու ելքը:

http://www.customs.am

**ՀՀ Արդարադատության նախարարությունը** (ԱՆ) իրականացնում է **քրեակատարողական համակարգի** վերահսկողությունը: Քանի որ Հայաստանում չեն գործում միգրանտների տեղավորման կենտրոններ, ապօրինի միգրանտները պահվում են ընդհանուր քրեակատարողական հիմնարկներում: **Իրավաբանական անձանց պետական ռեգիստրը** (http://www.stateregistry.am) արդարադատության նախարարության ստորաբաժանումներից մեկն է, որը վարում է Հայաստանում գործող բոլոր իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի տեղեկատվական բազան (բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների, որոնք գրանցվում են ՀՀ Կենտրոնական բանկում, որը վարում է վարկային ռեեգիստր): **Քաղաքացիական կացության ակտերի գործակալությունն** իր բաժանմունքներով գործում է արդարադատության նախարարության ենթակայության տակ:

www.justice.am

**ՀՀ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը** մշակում և իրականացնում է ավիացիայի ոլորտի պետական քաղաքականությունները, ինչպես նաև կառավարում և վերահսկում է Հայաստանում գործող ավիացիոն ծառայություններն ու ավիացիոն ենթակառուցվածքները:

http://aviation.am/eng/home.htm

**ՀՀ Գլխավոր դատախազությունը**

Քրեական գործերը հարուցվում են դատախազության կողմից: Դատախազությունը նաև հանդես է գալիս որպես մեղադրող կողմ դատարանում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, ինչպես նաև այլ լիազորությունների շարքում վերահսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

http://www.genproc.am/

**Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհուրդ (նախկինում՝ ՀՀ-ից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման ու առուվաճառքի (թրաֆիքինգի) հետ կապված հարցերի միջգերատեսչական հանձնաժողով**

2002 թ.-ի հոկտեմբերին Հայաստանի Կառավարությունը ստեղծեց միջգերատեսչական հանձնաժողով (ՄԳՀ), որի նպատակն է «ուսումնասիրել և առաջարկություններ ներկայացնել շահագործման նպատակով Հայաստանի Հանրապետությունից մարդկանց ապօրինի փոխադրման և առևտրի հարցերի վերաբերյալ»: Հանձնաժողովում ներկայացված են հետևյալ գերատեսչությունները՝ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ Վարչապետի աշխատակազմ, գլխավոր դատախազություն, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, առողջապահության նախարարություն, արդարադատության նախարարություն, ազգային անվտանգության ծառայություն, ոստիկանություն, միգրացիայի և փախստականների վարչություն (հետագայում վերանվանվեց միգրացիոն գործակալության և ընդգրկվեց տարածքային կառավարման նախարարության կազմում),

Ազգային ժողով, Ազգային վիճակագրական ծառայություն և Հայաստանի Կարմիր խաչի ընկերություն:[123]

ՄԳՀ-ը պաշտոնապես համարվում է Կառավարության խորհրդատվական մարմին, որը չունի որոշումների կայացման իրավասություն: Նրա խնդիրն է մշակել մարդկանց առևտրի դեմ պայքարի ազգային բազմամյա ռազմավարություններ և գործողություննե-րի ծրագրեր: Ելնելով հաշվետվություններից՝ ցավոք, պետք է նշել, որ ՄԳՀ-ն չի իրակա-նացնում համակարգում, գրանցումների պատշաճ վարում, իսկ հանձնաժողովի նիստե-րը պարբերաբար չեն հրավիրվում: Ներկայումս հանձնաժողովի կազմը փոփոխվում է. ծրագրվում է, որ այնտեղ հանդես կգան ավելի բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչը նշանակում է, որ ՄԳՀ-ը կունենա գործունեության ավելի լայն իրավասություններ:

**ՀՀ Ազգային ժողովը** ՀՀ օրենսդիր մարմինն: Ազգային ժողովն ունի մի քանի մշտական հանձնաժողովներ, որոնք այսպես թե այնպես զբաղվում են միգրացիային վերաբերող օ-րենսդրությամբ ու հարցերով: Դրանք են՝ պետական-իրավական հարցերի, պաշտպա-նության, ազգային անվտանգության և ներքին գործերի, սոցիալական, առողջապահութ-յան և բնապահպանության հարցերի, մարդու իրավունքների և հանրային հարցերի, եվ-րոպական ինտեգրման, արտաքին հարաբերությունների, ֆինանսավարկան և բյուջե-տային հարցերի մշտական հանձնաժողովները:

www.parliament.am

ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են **դատարանները**: Գոյություն ունեն ընդհանուր իրավասության (առաջին ատյանի), մասնագիտացված (վարչական, քաղա-քացիական և քրեական), վերաքննիչ (քաղաքացիական և քրեական) դատարաններ, ինչպես նաև վճռաբեկ դատարան (բարձրագույն դատական ատյանը, որի իրավասու-թյունների մեջ չեն մտնում միայն սահմանադրական հարցերը, որոնցով զբաղվում է Սահմանադրական դատարանը):

http://www.judiciary.am/?l=lo

**ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը**[124] մշակում և իրականացնում է պետության եկամուտների ձևավորման, պետական ֆինանսների կառավարման, սո-ցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի համակարգման բնագավառներում պետա-կան քաղաքականությունը:

http://www.mfe.am/mfeengweb/indexarm.htm

**ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը** մշակում և իրականացնում է կրթության և գիտության բնագավառի պետական քաղաքականությունը:

http://www.edu.am

Գործնականում գերատեսչությունների միջև պարտականությունների բաշխումը շարու-նակում է մնալ ոչ հստակ: Մի քանի գերատեսչությունների հավաստմամբ, նրանք ունեն միգրացիայի տարբեր հարցերում իրականացման լիազորություն, ինչը կարող է հան-

[123] ՄԳՀ-ում դիտորդի կարգավիճակով ներկայացված էին միջազգային և միջկառավարական կազմակեր-պություններ (ՄԱԿ, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, ՄԱԿ-ի ՓԳՀ, ԵԱՀԿ և այլն), ինչպես նաև տեղական ՀԿ-երը:

[124] 2008թ. ապրիլին նախարարությունը վերանվանվեց ՀՀ ֆինանսների նախարարության:

գեցնել անարդյունավետության: «ICMPD»-ի հաշվետվության համաձայն, ամենալուրջ շփոթության տեղիք է տալիս ԱԱՅՆ-ի և ԱՏԳՆ-ի միջև իրավասությունների բաշխման հարցը, որոնցից երկուսն էլ պնդում են, որ օժտված են աշխատուժի միգրացիայի հարցերի իրավասությամբ: ԱՏԳՆ-ի կանոնադրությունում նշվում է, որ ԱՏԳՆ-ը միգրացիայի, աշխատուժի միգրացիայի և փախստականների հարցերով զբաղվող գործադիր մարմին է: Դրանից առաջ ՀՀ Կառավարության հաստատած «Միգրացիայի հայեցակարգ»-ի համաձայն, գործողությունների ծրագրի մշակման և հայեցակարգում սահմանված ժամկետների իրականացման իրավասությունը տրվում է Միգրացիայի և փախստականների վարչությանը (ՄՓՎ)՝ ներկայիս ՄԳ-ին:

## Է.3. Առկա կառուցվածքային մարտահրավերները

### *Է.3.1. Կրկնվող լիազորությունները*

Այս ուղղությամբ ամենաակնառու բացթողումը միգրացիայի ոլորտում «գլխավոր» դերակատարի բացակայությունն է (տես վերը նշվող քաղաքականություն ձևավորող մարմինները): Այսօր Միգրացիոն գործակալությունը ապաստան հայցողների տարեկան շուրջ 350 գործի (հիմնականում Իրաքի քաղաքացիների) քննության իր ընթացիկ աշխատանքներով դե ֆակտո հանդիսանում է Փախստականների և ապաստանի համար պատասխանատու գերատեսչություն: Ցավոք, անվանման մեջ «միգրացիոն» բառն ապակողմնորոշիչ է, քանի որ և իր մանդատով, և գործնականում ՄԳ-ը չի զբաղվում սահմանների, վիզաների կամ թույլտվությունների որևէ հարցով, բացառությամբ փախստականներին և ապաստան հայցողներին տրվող ինքնությունը հաստատող քարտերի:

Փորձագետների գնահատմամբ ներկայում միգրացիայի ոլորտում գործունեություն իրականացնող հետևյալ գերատեսչությունները (կառավարության մակարդակում) ունեն որոշակի դերակատարություն.

**Ներգաղթ.**

ԱԳՆ-ի Հյուպատոսական վարչություն

ՀՀ Նախագահի աշխատակազմ

Ոստիկանության ԱՎՎ

ԱՎԾ

ՄԳ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն/«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն

Առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (փոքր և միջին ձեռնարկություններ)

Արդարադատության նախարարություն

**Անուղղակի մասնակցություն.**

ԱԺ

Առողջապահության նախարարություն

**Արտագաղթ և վերադարձ.**

ԱԳՆ

ՄԳ (ոչ հստակ դերակատարություն)

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ԱՎԾ

### Է.3.2. Միգրացիոն ուղղվածության տեխնիկական օժանդակության բացակայությունը

Այսօր Հայաստանում վարվում են մի խումբ տեղեկատվական կամ «քվազի» տեղեկատվական բազաներ, որոնք, հավանաբար, գրանցում են միևնույն օտարերկրացու մասին տարբեր տեղեկություններ: Դրանք են՝ ՍԿՏՀ-ը, Ոստիկանության ԱՎՎ-ի (ՕՎԻՐ), ՄԳ-ի, ԱԳՆ-ի և «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, ինչպես նաև ԱՆ-ի Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գրանցման պետական ռեգիստրի տեղեկատվական բազաները: Ինչևէ, փորձագետները պարզել են, որ ՍԿՏՀ-ի ծրագրավորող ընկերությունից բացի (AIT Sytems), բացակայում է կամ ցածր է տեղեկացվածությունը տարբեր միջև գոյություն չունեցող կապի և դրա պատճառով առաջացող խնդիրների մասին: Կացության թույլտվությամբ սահմանվող ժամկետի լրանալուց հետո երկրում ապօրինի բնակության մասին տեղեկությունների բացակայությունը ՍԿՏՀ-ի համակարգում անհեթեթորեն վտանգ է ներկայացնում Հայաստանի անվտանգության համար: Այս պահի դրությամբ ԱԾ-ի աշխատակիցները օգտվում են ՍԿՏՀ-ի ընդհանուր տվյալներից և միայն կարող են փոփոխել դրանք:

Ի լրումն, անհրաժեշտ է բարձրացնել ՍԿՏՀ-ի համար վերջնական պատասխանատվության հարցը: Թեև «AIT»-ը գերազանց աշխատանք է կատարել միգրացիայի կառավարման համար համաշխարհային կարգի հարթակ ստեղծելու առումով, սակայն չպետք է մոռանալ, որ այս ընկերությունը իր մասնավոր շահերը հետապնդող մասնավոր կազմակերպություն է: Կառավարությունը պետք է քննության առնի այս հարցը և չհայտնվի մասնավոր ընկերությունից կախվածության վիճակում:

Կարելի է ասել, որ չափազանց մեծ ուշադրություն է «կենտրոնացվում» բիոմետրիկ անձնագրերի հարցի վրա: Իրականում հայ պաշտոնյաները լիովին չեն ըմբռնում այն, թե ինչ է բիոմետրիկ անձնագրի գնահատումը: Նշված անձնագրերի ստեղծմամբ զբաղվող հայկական կազմակերպությունը, նախքան մատնահետքերի վերցման եղանակներին անդրադառնալը, պետք է ըմբռնի, որ անձնագրում մատնահետքերը պահելու համար անհրաժեշտ է անձնագրի շապիկի մեջ տեղադրել էլեկտրոնային չիպ, այսինքն՝ նախ անհրաժեշտ է սովորական անձնագրերը վերածել էլեկտրոնային եղանակով ընթերցելի անձնագրերի, որից հետո, որպես երկրորդ քայլ, դրանցում տեղադրել բիոմետրիկ տվյալները:

**Տեխնոլոգիան միջոց է և ոչ թե նպատակ:** Այն պետք է մշակվի կիրարկմանն աջակցելու, այլ ոչ՝ ընթացակարգը թելադրելու համար: Այն պարզապես միջոց է և ոչ թե տեղեկատվության գաղտնի պահուստ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկվում է.

- Նշանակել միասնական, հզոր, համակարգում իրականացնող լիազոր մարմին միգրացիայի ոլորտում: Համակարգումը պետք է իրականացվի հայեցակարգային որոշումների, օրենդրության վերանայման, կիրառման, ինչպես նաև փորձագիտական աջակցության և SS համակարգերի փոխկապակցվածության ուղղություններով:
- Լիազոր համակարգող մարմինը պետք է նշանակվի գոյություն ունեցող կառույցների շարքից, լիազորությունների ընդլայնման միջոցով: Մարմինը պետք է ունենա կացության արտոնագրերի ժամկետներն երկարացնելու և կացության վերաբերյալ այլ հարցեր լուծելու, այդ թվում՝ ապաստան տրամադրելու դիմումներն ուսումնասիրելու պարտականություն: Պարտականությունների շրջանակը չի ընդգրկում սահմանների հսկողությունը:
- Տվյալ կառույցի ներկայացվածությունը մարզերում ապահովվում է ՀՀ Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության տարածքային ստորաբաժա-

նումների միջոցով, որոնք ներկայումս տրամադրում են Հայաստանում օրինական կացությունը հաստատող փաստաթղթեր:

- Բացի օրինական միգրացիայի վերաբերյալ իրավասություններից, տվյալ կառույցը պետք է պատասխանատու լինի օտարերկրացիների անօրինական կացությունը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու համար: Այս առումով անհրաժեշտ է համագործակցել Ոստիկանության հետ, որն ունի Հայաստանի ամբողջ տարածքում նման գործողություններ իրականացնելու համար պահանջվող կարողություններ և միջոցներ, հիմնվելով այլ շահագրգիռ մարմիններից (սահմանապահ զորքեր, Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչություն և այլն) ստացված տեղեկատվության վրա:
- Վարչական կալանքի տակ գտնվող օտարերկրացիներին պահելու համար փակ կենտրոնի ստեղծում: Կենտրոնի գործունեությունը պետք է կառավարի ապօրինի միգրանտների հարցերով սերտորեն զբաղվող գերատեսչությունը, որը Հայաստանի դեպքում Սահմանապահ զորքերն են, Ոստիկանությունը կամ Արդարադատության նախարարությունը, որի ենթակայության տակ ներկայումս գործում է Քրեակատարողական ծառայությունը, որն էլ կարող է իրականացնել այս գործառույթը:
- Առաջարկվում է նշանակել մի կառույց, որը կզբաղվի զբաղվածության վերաբերյալ տեղական պահանջներին համաձայն օտարերկրացիներին աշխատանքի թույլտվություններ տալով և կվարի օտարերկրացիների կողմից կնքված բոլոր աշխատանքային պայմանագրերի շտեմարանը:

Որպեսզի ՀՀ Կառավարությունը կարողանա վերացնել միգրացիայի կառավարման գործող համակարգի վերոնշյալ թերությունները, առաջարկվում է միգրացիայի և ապաստանի տրամադրման բնագավառում ստեղծել կենտրոնական հզոր կառույց, որը կերաշխավորի միգրացիայի կառավարման արդյունավետ ինստիտուցիոնալ դաշտը: Համապատասխան պետական մարմինները պետք է նշանակեն միգրացիայի բնագավառում գործող մեկ «առանցքային կառույց», որը կիրականացնի կենտրոնական համակարգողի դերը, թեև անպայմանորեն չպետք է ստանձնի մյուս մարմինների կողմից ներկայումս իրականացվող բոլոր գործառույթները:

Որպես նման կառույց կարող է հանդես գալ գործող մարմիններից որևէ մեկը, որին կշնորհվեն ավելի լայն իրավասություններ: Նրա առանցքային խնդիրը կլինի առաջնորդել և համակարգել միգրացիայի քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքները, ինչպես նաև վերահսկել միջգերատեսչական քննարկումները և միգրացիայի բնագավառում բոլոր համապատասխան գերատեսչությունների համագործակցությունը: Իդեալականորեն և քաղաքացիության, և միգրացիայի հետ կապված հարցերի հետ կապված գործունեությունը կարող է կենտրոնացվել մեկ նախարարության մեջ: Միգրացիոն գործակալությունը և Ոստիկանության ԱՎՎ-ը կարող են քննության առնել այս առանձին գերատեսչական գործառույթները ստանձնելու խնդիրը՝ միևնույն ժամանակ շարունակելով գործել միևնույն գերատեսչական կազմում:

Ի լրումն օրինական միգրացիայի (ընդունում, կացություն) ոլորտի իր իրավասություններին, նշված կառույցը պետք է օժտված լինի օտարերկրացիների ապօրինի կացության դեմ պայքարի և կանխման անհրաժեշտ իրավասություններ: Այս առումով անհրաժեշտ է համագործակցել ՀՀ Ոստիկանության հետ, որն ունի համապատասխան այլ մարմինների (սահմանապահ զորքերի, Հայաստանում կացության արտոնագիր տրամադրող կառույցի և այլնի) կողմից տրամադրվող տեղեկատվության հիման վրա ՀՀ ողջ տարածքում նման աշխատանքների իրականացման համար պահանջվող կարողություններ: Կենտրոնական միգրացիոն կառույցը պետք է պատասխանատու լինի վիզաների ժամկետների երկարաձգման և կացության հարցերի, այդ թվում ապաստանի տրամադրման

համար: Սահմանների հսկողության համար պատասխանատվությունը կշարունակեն կրել ԱԱԾ-ի ՀՀ Սահմանապահ զորքերը: Արտաքին գործերի նախարարության Հյուպատոսական վարչությունը, բնականաբար, կշարունակի զբաղվել երկրի տարածքից դուրս վիզաների տրամադրման հարցերով:

Միգրացիոն այս առանձքային կառույցի ստեղծումից հետո անհրաժեշտ է համապատասխանաբար ճշգրտել Հայաստանում միգրացիայի հարցերով զբաղվող այլ գերատեսչությունների գործառույթներն ու պարտականությունները: Այս վարչական գործընթացը նաև պետք է իր արտացոլումը ստանա իրավական դաշտում:

Միգրացիոն առանցքային կառույցի ստեղծումից բացի, գնահատման թիմի կարծիքով, գերադասելի է ստեղծել նաև վարչական կալանքի տակ գտնվող օտարերկրացիների պահման փակ կենտրոն: Կենտրոնի գործունեությունը պետք է կառավարի ապօրինի միգրանտների հարցերով զբաղվող գերատեսչությունը: Այն պետք է գործի Սահմանապահ զորքերի (ինչպես շատ երկրներում է) կամ Արդարադատության նախարարության (որը ներկայումս համակարգում է հանրապետության քրեակատարողական հիմնարկների գործունեությունը) կազմում:

Ավելին, առաջարկվում է նշանակել մի կառույց, որը կզբաղվի զբաղվածության վերաբերյալ տեղական պահանջներին համաձայն օտարերկրացիներին աշխատանքի թույլտվություններ տալով: Աշխատանքի թույլտվությունը կտրամադրվի կացության արտոնագրի հետ միասին (հակառակ դեպքում, կտրամադրվի աշխատանքի նպատակով միայն կացության արտոնագիր): Նշված կառույցը նաև կվարի օտարերկրացիների և գործատուների միջև կնքվող բոլոր աշխատանքային պայմանագրերի ամբողջական ու թափանցիկ շտեմարանը: Միանգամայն տրամաբանական է թվում այդ գործառույթի հանձնարարումը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, որը միգրացիոն կենտրոնական կառույցի հետ կհամակարգի ընթացիկ հարցերը և որն ունի տարածքային ստորաբաժանումների գերազանց ցանց: Ինչևէ, ինքնազբաղվածների և ներդրողների համար նման գործառույթ կարող է ստանձնել Առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը կամ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը: Հավանաբար, օտարերկրյա ներդրումների ներգրավման ուղղությամբ Հայաստանի ներկայիս քաղաքականությանը համապատասխան կարելի է ստեղծել նաև «ներդրումների խթանման կենտրոն»:[125]

Ընդհանուր առմամբ, առաջարկվում է, որ Կառավարության ղեկավարությամբ և գործող օրենսդրական դրույթներին համապատասխան միգրացիոն կենտրոնական կառույցին պատկանի միգրացիայի հարցերի կարգավորման վերջնական իրավասությունը: Կառույցի գործառույթների և իրավասությունների շրջանակները պետք է ներառեն քաղաքականության ձևավորման խնդրում հզոր դերակատարությունը, օրենսդրության (մուտքի, ելքի և կացության, օտարերկրացիների իրավական կարգավիճակի, աշխատուժի միգրացիայի մասին դրույթների, ցուցումների և կանոնակարգերի, վարչական կառուցվածքի և այլնի մասին օրենսդրական դրույթների) մշակման և իրականացման նկատմամբ վերահսկողության իրավասությունը և համակարգման հզոր գործառույթը՝ ուղղված այս կարևոր բնագավառում ՀՀ Կառավարության քաղաքականություններում և ծրագրերում համապատասխան բոլոր գերատեսչությունների մասնակցության ապահովմանը:

[125] Այս հարցի շուրջ փորձագետների կարծիքները տարբեր են: Վերը պարբերությունում ներկայացվածի առնչությամբ ՄՄԿ-ը կողմնակից է նրան, որ աշխատանքի թույլտվությունը և կացության արտոնագիրը լինեն առանձին: SMB-ի համար գերադասելի է այն տարբերակը, որտեղ միևնույն կառույցը պատասխանատու է այս երկուսի համար:

## Ը. Կիրարկումը և գործառնական մեխանիզմները

Գնահատման թիմը գտնում է, որ շատ ավելի մեծ ուշադրություն է դարձվում լիազորություններին և իրավասություններին, քան ինքնին միգրացիայի գործընթացին: Միգրացիայի հարցերով զբաղվող կառույցը պետք է դիտվի որպես երկրորդային՝ միգրացիայում տեղի ունեցող առանձին գործողությունների համեմատ: Հարկ է ձևավորել ընթացակարգը՝ հենվելով միգրանտների ձեռնարկած գործողությունների վրա: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ճանաչել միգրացիայի կարևորությունը: Շեշտադրումը պետք է արվի Հայաստանին բնորոշ միգրացիոն միտումների որոշման և դրանց արձագանքման խնդրի վրա, այսինքն՝ ի՞նչ միգրացիա է ցանկալի Հայաստանի համար, ի՞նչ միգրացիոն միտումներ պետք է կարգավորվեն, վերահսկվեն կամ նույնիսկ կանխվեն: Այս ուղղությամբ հնարավոր անհամաչափության օրինակ է սահմանի ապօրինի հատման համար քրեական պատժի սահմանումը և միևնույն ժամանակ առանց երկիր մուտք գործելու պատճառները հաշվի առնելու վիզայի տրամադրումը: Այդ իսկ պատճառով կարելի է ասել, որ Հայաստանում համարյա գոյություն չունի անկանոն միգրացիայի հարցը: Եթե յուրաքանչյուր ոք ցանկալի հյուր է, ապա սահմանների կառավարումը այդքան էլ կարևոր չէ[126], քանի որ կտրուկ նվազում է ապօրինի ճանապարհներից օգտվել ցանկացողների թիվը: Այս պարագայում շատ ավելի է կարևորվում երկրի ներսում հսկողությունը, և անշուշտ, այն պետք է ակտիվորեն խստացվի:

Ընդհանուր առմամբ, ուշադրությունը չի կարելի կենտրոնացնել գործընթացի միայն մի մասի վրա՝ հաշվի չառնելով հետագա քայլերի հետևանքները: Սույն գլխում անդրադառնում ենք միգրացիայի գործընթացին և դրանից բխող նկատառումներին:

### Ը.1 Սահմանները

1996 թ.-ից ի վեր ՄՄԿ-ը համագործակցում է Հայաստանի Կառավարության հետ «Միգրացիայի կառավարման համակարգի կարողությունների զորացում» ծրագրի շրջանակներում (ՄԿՀԿԶ): Սկզբնականում ՄԿՀԿԶ-ի նպատակն էր ստեղծել Հայաստանի Կառավարության միասնական միգրացիոն քաղաքականություն և ամրապնդել երկրում միգրացիայի կառավարման օրենսդրական հիմքերը: Իրականացման երկրորդ փուլում ՄԿՀԿԶ-ի աշխատանքներն ուղղվեցին միգրացիայի կառավարման վարչական և գործառնական մեխանիզմների և կառույցների զորացմանը: ՄՄԿ-ը աջակցում է ՀՀ Կառավարությանը սահմանների կառավարման բարեփոխումների ուղղությամբ՝ սահմանների հատման անցագրային կետերը Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում ներառելու միջոցով:

ՄՄԿ-ը զգալի աշխատանքներ է իրականացրել միգրացիայի կառավարման հարցերով զբաղվող մարմինների կարողությունների զարգացման ուղղությամբ, ներառյալ ՄԳ/ՄՓՎ-ի, ԱԱԾ-ի և նրա ենթակայության տակ գործող սահմանապահ զորքերի (ներառյալ սահմանապահ զորքերի ուսուցման կենտրոնի ստեղծման նպատակով տրամադրված աջակցությունը), Ինտերպոլի Հայաստանի ազգային կենտրոնական բյուրոյի ոստիկանության և նրա կազմում գործող անձնագրերի և վիզաների վարչության, արտաքին գործերի նախարարության և նրա կազմում գործող հյուպատոսական վարչության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և այլն:

Անշուշտ, փորձագետները չեն կարող գնահատել քաղաքական ազդեցությունից գերատեսչությունների անկախ լինելու աստիճանը: Փորձագետները տեղեկացել են, որ օրական 40-ից մինչև 50 վիզա է տրամադրվում Բագրատաշենում (Վրաստանի հետ սահմա-

[126] Օրինակ՝ կարելի է ասել, որ այդքան էլ մեծ կարևորություն չի տրվել Հայաստանի և Վրաստանի միջև կանաչ սահմանի հսկողության հարցին, քանի որ փոքր են սահմանը ապօրինի հատելու դրդապատճառները այն դեպքում, երբ օրինական մնալը այդքան էլ դժվար խնդիր չէ:

քային սահմանի հատման կետում)՝ յուրաքանչյուր վիզայի դիմաց գանձելով մոտ 50 ԱՄՆ դոլար: Մտահոգիչ է այն, որ մերժումներ ընդհանրապես չեն արվում: Փորձագետները տեղեկացել են նաև, որ ԱԱԾ-ը պահպանում է տեղեկությունները ՍԿՏՀ-ում յոթ տարվա ընթացքում: Սահմանապահ զորքերի աղբյուրների համաձայն, Սահմանային կառավարման տեղեկատվական համակարգի հետագա ընդլայնման ՄՄԿ-ի և ՀՀ Կառավարության համատեղ ծրագրի շրջանակներում մինչև 2008 թ.-ի ավարտը սահմանային բոլոր կետերը պետք է կապվեն ՍԿՏՀ-ին: Մինչ օրս (2008 թ.-ի մարտ) համակարգը գործում է միայն Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում, Գյումրիի օդանավակայանում և հայ-վրացական սահմանի Բագրատաշենի հսկիչ կետերում և հայ-իրանական սահմանի Մեղրի-Կարճևան հսկիչ կետում: ՄՄԿ-ի նշված ծրագիրը ավարտում է Այրումի երկաթուղային կայարանը, Վրաստանի հետ սահմանի հատման Բավրայի և Գոգավանի հսկիչ կետերը ՍԿՏՀ-ի հետ միացման աշխատանքները: Ինչևէ, նույնիսկ համակարգին միացված կետերում գրանցումը դեռևս կատարվում է ձեռքով և այնուհետև ուղարկվում կենտրոնական տեղեկատվական բազա ինտերնետային կամ արբանյակային կապի միջոցով:

Սահմանային կառավարման տեղեկատվական համակարգը (ՍԿՏՀ) սկզբում ներդրվել է Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում: Համակարգը մշակվել է «Ավիաինֆոտել», ՓԲԸ-ի կողմից: ՍԿՏՀ-ի հետագա ընդլայնման աշխատանքներն իրականացվել են ՄՄԿ-ի ակտիվ մասնակցությամբ: 2000 թ.-ի սեպտեմբերին ՄՄԿ-ը կատարել է գնահատում, որի արդյունքում կազմվել է Հայաստանում սահմանային կառավարման մասին զեկույց, որտեղ, ի թիվս այլ հարցերի, քննության է առնվել նաև Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում գործող ավտոմատացված տեղեկատվական համակարգը: Ազգային անվտանգության նախարարությունը (ներկայիս Ազգային անվտանգության ծառայությունը) առաջարկել է ընդլայնել տեղեկատվական համակարգը՝ դրանում ներառելով ցամաքային սահմանի հատման կետերը և ստեղծել տվյալների կենտրոնական արխիվ ունեցող ցանց տեղեկատվության պահպանման, վերլուծության և դուրս բերման համար: ՄՄԿ-ը որոշեց կատարել համակարգի անկախ տեխնիկական գնահատում, որը հանձնարարվեց «Oriental Software Private» մասնավոր ընկերությանը: Վերջինիս կողմից Հայաստանի Կառավարությանը ներկայացված հաշվետվության և առաջարկությունների հիման վրա համակարգը ընդլայնվեց՝ 2004-2005 թթ. ներառելով հայ-վրացական ցամաքային սահմանի Բագրատաշենի սահմանային կետը: ԱՄՆ Կառավարության կողմից ֆինանսավորվող ՄՄԿ-ի ծրագրի շրջանակներում վերջին ժամանակներս իրականացվում են ՍԿՏՀ-ի ընդլայնման աշխատանքներ, որին կմիանան սահմանի հատման այլ հսկիչ կետեր, մասնավորապես, Գյումրիի օդանավակայանը, Մեղրի-Քարչևանը (հայ-իրանական սահման), Բավրան, Գոգավանը և Այրումի երկաթուղային կայարանը (երեքն էլ գտնվում են հայ-վրացական սահմանի վրա): Համակարգի ընդլայնումը համահունչ է «Սահմանային կառավարման էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման» մասին ՀՀ Կառավարության որոշմանը[127] և Հայաստանի Սահմանային կառավարման համակարգի բարեփոխման Ազգային անվտանգության ծառայության ժամանակացույցին: Վերոնշյալ որոշման համաձայն, ՍԿՏՀ-ին պետք է միանան հետևյալ մարմինները. Գլխավոր դատախազությունը, արդարադատության նախարարությունը, արտաքին գործերի նախարարությունը, տրանսպորտի և կապի նախարարությունը, պաշտպանության նախարարությունը, ԱԱԾ-ը, ոստիկանությունը, քաղաքացիական ավիացիայի վարչությունը, ազգային վիճակագրական ծառայությունը, միգրացիոն գործակալությունը, հարկային պետական ծառայությունը և դատարանները:

Սահմանի հատման մնացած կետերը (Երևանի «Էրեբունի» օդանավակայանը, Ստեփանավանի օդանավակայանը, հայ-վրացական սահմանի վրա գործող Պրիվոլնոյեն և Ձի-

[127] Տես՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ. հունիսի 22-ի «Սահմանների կառավարման էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման և նրա շահագործման կարգի և օգտագործողների ցանկի հաստատման մասին» թիվ 884-Ն որոշումը:

լիզա հսկիչ կետերը) ՍԿՏՀ-ին միացնելու աշխատանքները իրականացնում է ԱԱԾ-ը, որոնք ընթանում են ՄՄԿ-ի ՍԿՏՀ-ի ընդլայնման ծրագրին զուգահեռ:

ՀՀ Ոստիկանությունը վարում է ՀՀ քաղաքացիների անձնագրերի և հանրապետությունում բնակվող անձանց ռեգիստր: Ներկայումս այն միացված չէ ՍԿՏՀ-ին:

Արդարադատության նախարարության ենթակայության տակ գործող «Իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստր» գործակալությունը պատասխանատու է Հայաստանում գործող իրավաբանական անձանց[128] և անհատ ձեռնարկատերերի գրանցման համար և վարում է իրավաբանական անձանց, նրանց ստորաբաժանումների, ներկայացուցչությունների, մասնաճյուղերի, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի ռեգիստրը:

Հայաստանը ստացել է տեխնիկական աջակցություն միգրացիայի կառավարման բնագավառում գործունեություն իրականացնող տարբեր կազմակերպություններից: Այս համատեքստում չափազանց կարևոր է հաշվի առնել և հիշել, որ տեխնիկական աջակցությունը պետք է հաջորդի գործընթացներին, այլ ոչ՝ հակառակը:

Թեև ներգաղթն ու արտագաղթը սկսվում և ավարտվում են սահմանի վրա, սակայն կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ միգրացիան շարունակվում է անհատի կողմից սահմանը հատելուց հետո: Այդ իսկ պատճառով սահմանի վրա գործող համակարգը պետք է հաշվի առնի շարունակվող միգրացիոն գործընթացի վրա ազդող սահմանի վրա տեղի ունեցող գործողությունների հետևանքները: Կիրառվող տեխնիկական միջոցների համապատասխանեցումից բացի որպես մեկ այլ օրինակ կարելի է նշել սահմանի վրա աշխատող ծառայողների շարունակական ուսուցման և կրթման անհրաժեշտությունը, որոնք պետք է ոչ միայն ծանոթ լինեն սահմանների կառավարման գործին (այդ թվում հսկողությունը և կիրարկմանը), այլ նաև պատկերացում ունենան ընթացիկ միգրացիոն միտումների, թրաֆիքինգի, ապաստանի տրամադրման և այլնի մասին: Փորձագետները տեղեկացել են, որ ցածր աշխատավարձի պատճառով սահմանի վրա աշխատող ծառայողներից շատերը կարճ ժամանակում փոխում են իրենց աշխատանքը: Կադրերի հոսունության արդյունքում աշխատանքի են ընդունվում փորձառություն չունեցող անձինք[129], ինչն իր հերթին անմիջականորեն ազդում է ներգաղթի և արտագաղթի վրա: Ցածր աշխատավարձը կարող է նաև պատճառ հանդիսանալ կաշառակերության և կոռուպցիայի համար: Կառավարությունը ընդունում է, որ անհրաժեշտ է բարելավված ուսուցում[130], սակայն այս առումով փորձագետները կցանկանային շեշտել, որ Կառավարությունը պետք է նաև քննության առնի ուսուցում անցած կադրերին պահելու հարցը:

## Ը.2 Միգրանտների մոնիթորինգը և բացահայտումը

«Հսկողություն» հասկացության ընկալումը թերի է: Պետական շահերի պաշտպանության և հանցագործությունների կանխարգելման հավասարակշռումը ի հակադրություն ներդրումների ու ազատ տեղաշարժման խրախուսման պետք է խորը ուսումնասիրվի, որի նպատակն է հասնել նրան, որ պաշտոնյաների կողմից ավելի լավ ըմբռնվի հսկողության և օժանդակման հավասարակշռման հարցը:

---

128 Բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների, որոնք գրանցվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից, որը վարում է վարկային ռեգիստր:

129 Տես՝ «Country Reports on Human Rights Practices» (2007)՝ թողարկված ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոյի կողմից 2008թ. մարտի 11-ին: Ձետեղված է՝ http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/2007/100546.htm:

130 Նախատեսվող աշխատանքների մանրամասները տես, օրինակ, եվրոպական հանձնաժողովի եվրոպական հարևանության ծրագրի (ԵՀԾ) հետևյալ փաստաթղթում՝ Implementation of the European Neighbourhood Policy in 2007. Progress Report Armenia, [SEC(2008)392], 03.04.2008, ինտերնետային կայք՝ http://ec.europa.eu/world/enp/pdf/progress2008/sec08_392_en.pdf:

Գործնական տեսակետից պարզ չէ, թե ով է այն իրավասու մարմինը, որը պատասխանատու է երկրի ներսում անօրինական միգրանտներին բացահայտելու համար, այսինքն՝ որն է այն իրավապահ մարմինը, որը զբաղվում է երկրի ներսում ապօրինի միգրանտների հարցերով: Սահմանների վրա հսկողության իրականացումը ստեղծում է սահմաններից դուրս երկրի ներսում[131] ազատ գոտի: Սրա զուգակցումը այն փաստի հետ, որ չկան մեխանիզմներ, որոնք կբացահայտեին օտարերկրացու կարգավիճակի փոփոխությունը, օր.՝ զբոսաշրջիկից ծեռնարկատեր, ուսանողից փախստական և այլն դառնալը և կզգուշացնեին այն հնարավոր ապօրինի գործողությունների վերաբերյալ, ինչպես, օրինակ, սահմանված ժամկետից ավելի տվյալ երկրում մնալն է, հիմնականում հանգեցնում են նրան, որ երկրի ներսում անհատների որևէ ավտոմատ կամ պատահական հսկողություն չի իրականացվում: Երկրի ներսում օտարերկրացուն փնտրում են հատուկ հանգամանքներում, հանցագործության մեջ օտարերկրացու հավանական ներգրավման առնչությամբ և ՈՉ թե ապօրինի միգրացիայի առթիվ: Սա համակարգում չարաշահումների որոշակի հնարավորություններ է ստեղծում: Ավելին, առկա տեխնիկական բազան և տեղեկատվական տարբեր բազաների օգտագործումը թույլ չեն տալիս հեշտորեն որոշել երկրում տվյալ անձի ունեցած ստույգ իրավական կարգավիճակը: Օտարերկրացիների նկատմամբ հսկողության իրականացումը պետական պաշտոնյայի (ոստիկանի, սահմանապահի կամ քաղծառայողի կողմից) պետք է պարզեցվի: Պետական պաշտոնյան պետք է իմանա, թե ում հետ կարող է կապվել ներգաղթած անձի իրավական կարգավիճակը պարզելու համար այն դեպքում, եթե տվյալ անձն ի վիճակի չէ տրամադրել տեղեկանք երկրում իր իրավական կարգավիճակի մասին: Այլակերպ հավանական է, որ իրավական կարգավիճակ չունեցող անձին թույլատրվի մնալ երկրում, իսկ իրավական կարգավիճակ ունեցողը անհիմն կալանավորվի կամ ծերբակալվի:

Ապաստանի թույլտվություն խնդրելու դեպքում ակնհայտ է սահմանի վրա փախստականների համար պատասխանատու մարմնի ներկայացուցչի բացակայությունը, հատկապես՝ Իրանի սահմանին: Նրանց ներկայացուցչությունը ցանկալի կլիներ, քանի որ հավանական ապաստան հայցողների հաճախակի հանդիպող դեպքերը ուղղակի ավարտվում են այցելուի վիզայի պահանջով:

Գնահատման թիմը առանձնացրել է երեք կարևոր հարց.

1. Չկա ընդհանուր տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով գրանցման մեխանիզմ չկա, առանց մի քանի իրավասու մարմինների տվյալներում նրանց տվյալների ստուգման հնարավոր չէ որոշել, թե արդյոք անհատը անօրինական ճանապարհով է հայտնվել երկրում: Սահմանների կառավարման տեղեկատվական համակարգի տեղեկատվական բազան պետք է ընդլայնվի՝ ընդգրկելով այն համապատասխան մարմիններին, որոնք զբաղվում են միգրանտների կողմից երկիրը մուտք գործելու կամ երկրից մեկնելու հետ կապված հարցերով: Ըստ էության, ՀՀ ԱԳՆ-ն պետք է կարողանա մուտքագրել անհատի վերաբերյալ առկա տվյալները նախքան նրա կողմից երկիր մուտք գործելը, իսկ Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունը պետք է նաև զետեղի վիզայի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև կարգավիճակի փոփոխությունները, այդ թվում՝ կացության արտոնագրի տրամադրումը (և պատճառները): Այդ դեպքում համակարգը կկարողանա ահազանգել ապօրինությունների և սահմանված ժամկետից ավելի մնալու դեպքերի վերաբերյալ:
2. Ինչևէ, ՏՏ անհրաժեշտ կարողություններից բացի, չկա հետաքրքրություն հետևելու երկրի ներսում գտնվող միգրանտներին: Ողջ գործընթացը հենվում է երկրից

[131] ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է, որ սահմանապահ զորքերը սահմանից միայն 1/2 կմ գոտու երկայնքով են պատասխանատվություն կրում սահմանի համար, դրանից դուրս պատասխանատվությունը կրում է ազգային ոստիկանությունը:

մեկնելու պահին ապօրինությունների բացահայտման և տույժերի վճարման ապահովման վրա: Փորձագետները գտնում են, որ սա պայմանավորված է նրանով, որ մինչև օրս չի ճանաչվել, որ միգրացիան առաջ է բերում անվտանգության կամ տնտեսական բնույթի խնդիրներ, նույնիսկ այն պայմաններում, երբ գործազրկության բարձր տոկոսը իրողություն է Հայաստանում:

3. Ապօրինի միգրացիայի դեպքերի առնչությամբ աշխատելու համար նյութատեխնիկական ապահովման միջոցների պակաս է զգացվում: Առաջին՝ չկա իրավապահ մարմին, որը անմիջապես պատասխանատու լինի երկրի ներսում ապօրինի միգրանտներին հետևելու և ստուգելու համար, ուստի և պատասխանատու լինի նրանց կալանքի տակ վերցնելու համար: Երկրորդ՝ չափազանց դժվար է որոշել կալանքի տակ վերցված անձի իրավական կարգավիճակի առկայությունը կամ բացակայությունը: Երրորդ՝ ապօրինի միգրանտների պահման հատուկ կենտրոն[132]: Եվ չորրորդ՝ ապօրինի միգրանտներին արտաքսելու համար նյութատեխնիկական և ֆինանսական միջոցներ չկան: Այս բոլորը լուրջ խնդիրներ են, որոնք խոչընդոտում են Հայաստանում ապօրինի միգրացիայի կառավարմանը:

Մյուս խնդիրները հետևյալն են.

- Հարց է ծագել, թե ինչ հսկողություն պետք է լինի՝ ուժային, թե՞ քաղաքացիական: Հնարավոր է, որ Ոստիկանությունը ցանկանա զբաղվել երկրից մեկնող և երկիր մուտք գործող միգրանտների գրանցումներով, որը ներկայումս իրականացվում է ԱԱԾ-ի սահմանապահների կողմից: Փորձագետներն առաջարկում են, որ սահմանապահ ստորաբաժանումները շարունակեն իրականացնել ներկայումս իրենց կողմից հաջողությամբ կատարվող աշխատանքները: Փոխարենը Ոստիկանությունը պետք է կենտրոնացնի իր լիազորությունների իրականացումը երկրի ներսում և ինստիտուցիոնալացնի երկիր մուտք գործելուց ՀԵՏՈ ապօրինի միգրացիայի դեպքերի հսկողությունը, ինչպես դա արվում է ԵՄ շատ երկրներում: Հենց սահմանի վրա սահմանապահները և Մաքսային պետական կոմիտեն պետք է ավելի սերտ համագործակցեն:
- Ինչ վերաբերում է տվյալների միասնական բազայի բացակայությանը, ապա ամենից հատկանշական խնդիրը կացության արտոնագրերի ժամկետի և թույլատրելի ժամկետից շատ մնալու դեպքերում ահազանգման համակարգի բացակայությունն է: Առանց նման ավտոմատացված համակարգի բավական դժվար է երկրի ներսում զբաղվել ապօրինի միգրացիայի դեպքերով: Քանի որ երկրի տարածքում գտնվող օտարերկրացիները (հատկապես ԱՊՀ երկրներից) կարող են ապօրինի գործողություններ կատարել: Փորձագետները տեղեկացել են, որ երկրից մեկնելիս վճարված տույժը ապօրինի միգրանտների համար կարող է վերջ ի վերջո ավելի պարզ ու էժան լուծում լինել, քան թե կացության արտոնագրի ստացումը: Բացի այդ, թույլատրելի ժամկետից ավելի մնալու դեպքերում ահազանգման (կամ նույնիսկ ժամկետից ավելի մնալու «մտահոգության») համակարգի բացակայությունը Հայաստանում ապօրինի միգրացիայի վերաբերյալ ամփոփ տվյալների և վիճակագրության բացակայության է հանգեցնում:
- Ինչ վերաբերում է բուհերի օտարերկրացի ուսանողներին, պետք է հստակ հետևել, թե նրանցից քանիսն են մեկ տարուց հետո երկարաձգել իրենց թույլտվությունները, և ինչ է կոնկրետ պատահել նրանց, ում հեռացրել են բուհից: Փորձագետները նշել են, որ գրանցման հավաստագրերի ավելի մեղմ պայմանները կարող են հատկանշական լինել Հայաստանում գործող <u>մասնավոր</u> բուհերին:

[132] Ոստիկանությունը զեկուցում է Երևանից դուրս գտնվող «ուղղիչ աշխատանքային հիմնարկի» մասին, որտեղ մյուս հանցագործների հետ միասին մոտ 50 ապօրինի սահման հատողներ կալանքի տակ են պահվում մինչև երկու տարի ժամկետով: Դեռևս պարզ չէ, թե արդյոք նման հաստատությունը պետք է այլ կարգավիճակ ունենա, քան սովորական բանտը:

Այս ոլորտում չարաշահումները կարող են ոչ այդքան տարածված լինել, սակայն դրանց հնարավորությունը պետք է անպայմանորեն նշվի:

- Փախստականների ներհոսքի հավանական աճի դեպքում, խորհուրդ է տրվում դիտարկել Իրաքից ու Իրանից՝ գլխավորապես ծագումով հայ անհատների ներհոսքի ապագա հավանական առավելագույն սահմանաչափերը: Առաջարկվում է անցկացնել հայ-իրանյան սահմանի վրա ապաստանի հարցերին նվիրված ուսուցում սահմանային հսկողության ծառայողների համար (եթե այն դեռևս չի նախաձեռնվել): Ուսուցման մեջ ներառվում են իրազեկման և կարողությունների զարգացման հարցերը (այդ թվում՝ սահմանի վրա և երկրի ներսում հարմարությունների ստեղծումը), ինչպես նաև իրավաբանական օժանդակման կլինիկաների հիմնումը: Ներկայումս «ՄԱԿ ՓԳՀ»-ը նման հարցերով մեծ մասամբ դիմում է Միգրացիայի գործակալությանը:
- Կապված նախորդ կետի հետ, ապաստանի թույլտվության երկու կատեգորիա կա՝ փախստականի <u>ժամանակավոր</u> կարգավիճակի թույլտվություններ, որոնք տրվում են անհատներին մարդասիրական հիմունքներով կամ այն անհատներին, ովքեր լրացուցիչ պաշտպանության կարիք ունեն և փախստականի <u>մշտական</u> կարգավիճակով թույլտվություններ: Դեպքի հետաքննության ընթացքում Միգրացիոն գործակալությունը ծանուցում է Ազգային անվտանգության ծառայությանը և Ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչությանը և երկրում երեք ամիս ապրելու երկարացված իրավունք է տրամադրում: Եթե մնալու թույլտվություն է տրվում, ապա ապաստան հայցողներին Միգրացիայի գործակալության կողմից տրվում է փախստականի կամ ժամանակավոր ապաստանի թույլտվություն և դա գրանցվում է Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչությունում: <u>Ոչ մի տեղեկատվություն չի տրամադրվում Ազգային անվտանգության ծառայությանը/Սահմանային կառավարման տեղեկատվական համակարգին</u>, չնայած, ըստ էության, ապաստան հայցողների մեծ մասը (95%) անձնագիր ունի և հայկական վիզաներ: Պետք է կատարելագործել անձնագիր ունեցող անհատին փախստականի ճամփորդական փաստաթղթի տրամադրման ընթացակարգը: Ի լրումն, փորձագետները տեղեկացել են այն ոչ պարզ համակարգի մասին, որով «փախստական»-ի թույլտվությունը տարբերվում է ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից տրամադրվող «քաղաքական ապաստան»-ի թույլտվությունից, որը քաղաքական նկատառումներով տրվում է կարևոր անձանց: Միգրացիոն գործակալության պաշտոնյաները նրանց գործերը ուղարկում են ՀՀ նախագահի աշխատակազմ, որը և որոշում է անձի կարևոր լինելու հանգամանքը: Եթե սա մերժվում է, ապա անձը հինգ օրվա ընթացքում պետք է մեկնի երկրից: Բողոքարկման դեպքում անհատը կարող է մնալ երկրում և վտարման որևէ հրաման կասեցվում է: ՀՀ կառավարության տվյալները ցույց են տալիս, որ մինչ օրս Հայաստանում ոչ ոք չի դիմել քաղաքական ապաստան ստանալու խնդրանքով:
- Օրենքով ՀՀ քաղաքացիներին և օտարերկրացիներին անվճար բուժօգնություն է տրամադրվում: Ներկայումս փախստականներն անցնում են պարտադիր բժշկական քննություն, թեև կարելի է ասել, որ առողջապահության համակարգի պաշտոնյաներն այնքան էլ տեղեկացված չեն միգրանտներին տրամադրվող առողջապահության ծառայության հետ կապված բյուջետային հնարավոր հետևանքների մասին: Առողջապահության նախարարությունը պետք է ավելի մեծ մասնակցություն ունենա, հատկապես նոր օրենքների մշակման հարցերում: Նախարարության հետ հավանական համագործակցությունը կարող է հանգեցնել ապօրինի միգրացիայի դեպքերի հետագա բացահայտմանը:
- Թաքնված/անօրինական զբաղվածության հայտնաբերումը չի համապատասխանում Աշխատանքային օրենսգրքի դրույթներին: Պատասխանատվությունը դրվում է գործատուների վրա, որը ճիշտ է, սակայն կրկին, խնդիրը լուծվում է տույժի է

կամ հարկի վճարմամբ, առանց լրացուցիչ ուշադրություն դարձնելու անօրինական միգրանտի վրա, այս դեպքում ոչ մի տարբերակում չի կատարվում, թե արդյոք թաքնված անհատը օտարերկրացի է, թե՞ հայաստանցի:

- Վերջինը, բայց ոչ նվազ կարևորը այն է, որ ՀՀ պետական մարմիններում աշխատողների հոսունություն կա՝ պայմանավորված ցածր աշխատավարձերով, ինչը, վերջին հաշվով, ազդում է նրանց աշխատանքի արդյունավետության վրա: Առաջարկում ենք վերանայել աշխատողների առաջխաղացման և խթանման քաղաքականությունները:

## Ը.3. Օտարերկրացիների աշխատանքը և ձեռնարկատիրական գործունեությունը

Օրենքն անդրադառնում է աշխատանքին և ձեռնարկատիրական գործունեությանը, առանց աշխատանքի թույլտվության տարբերակման, սակայն առանձնացնելով կացության արտոնագրերի հետ կապված դեպքերը: Գործառնական մեխանիզմ չկա և հարցի կարգավորման համար ոչ մի գերատեսչություն չի նշանակված:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը տեղեկատվություն է տրամադրում թափուր աշխատատեղերի վերաբերյալ և կազմակերպում մրցույթներ: Մոտավորապես 100,000 գործատուներ գործակալությանը տրամադրում են իրենց թափուր տեղերի մասին տեղեկատվություն: Սա հնարավորություն է տալիս ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը աշխատանքի հատվածը վերլուծել և որոշել օտարերկրացի աշխատողների անհրաժեշտության չափը: Որպես այդպիսին, շատ հնարավոր է, որ Զբաղվածության պետական ծառայությունը առաջնային դեր կատարի օտարերկրացիների աշխատանքի թույլտվության հաստատման հարցում: Աշխատանքի թույլտվությունը կարող է «վիրտուալ» լինել այն առումով, որ այն տրամադրվում է որպես աշխատանքի նպատակներով կացության արտոնագիր շնորհելու հիմք՝ de facto վերացնելով երկու առանձին փաստաթղթերի անհրաժեշտությունը:

Հայաստանի վերաբերյալ պարբերաբար թարմացվող ուղեցույցը, որը ներկայացնում է տնտեսության հիմնական այն ճյուղերը, որտեղ աշխատողների կարիք կա և աշխատանքի մեծ հնարավորություններ, կարող է օգտակար լինել այս հարցում:

Գնահատումն իրականացնող խմբին ՀՀ Ոստիկանությունը հայտնել է, որ կնախընտրի, որ աշխատանքի թույլտվության տրամադրման կամ մերժման լիազորությունը փոխանցվի համապատասխան իրավասու մարմնին (Աշխատանքի վարչությանը կամ Աշխատանքի պետական տեսչությանը): ՀՀ Ոստիկանությունն առաջարկում է, որ օտարերկրացին ինքը դիմի իրավասու մարմնին: Գնահատման թիմը առաջարկում է, որ սա կարգավորվի երկրի ներսում (նշելով, որ կացության թույլտվությունը պետք է տրամադրվի դիմելու օրվանից 30 օրվա ընթացքում):

Նախքան երկիր մուտք գործելը թույլտվություն (աշխատանքի և կացության) ստանալու հնարավորությունը պետք է հավանական լինի:

ՀՀ Արտգործնախարարության ներկայացուցիչները Գնահատման թիմին հայտնել են, որ Հայաստանում հեշտ չէ ընկերություն գրանցել: Եթե դա այդպես, է, ապա անհրաժեշտ է ընկերության գրանցման գործընթացը դյուրացնել և ավելի դժվարացնել օտարերկրացիների համար թույլտվության ստացումը: Մյուս կողմից, համաձայն ՄԱԿ ԲՀ-ի տվյալների, ընկերության գրանցումը կատարվում է 4 օրվա ընթացքում:

Թեև արտասահմանում աշխատանքի մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակվում է Միգրացիոն գործակալության կողմից, սակայն ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը հակասություններ ունի Միգրացիայի գործակալության հետ՝ կապված «Արտերկրում աշխատանքի մասին» օրենքի հետ և գաղափարը հնացած է համարում: Փոխարենը, գործա-

կալությունը կցանկանար ծրագրեր մշակել մասնագետներին Հայաստանում պահելու համար:

ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը հետաքրքրված է մասնակցելու միգրացիայի այն հարցերի կարգավորմանը, որոնք վերաբերում են ձեռնարկատերերին, որի նպատակն է զարգացնել այս գաղափարը և հնարավոր է, նաև հիմնավորել օտարերկրացի ձեռնարկատերերի՝ կացության արտոնագիր ստանալու խնդրանքը:

## Ը.4. Աշխատակազմի ուսուցումը

Չնայած ՄՄԿ-ն Հայաստանում դասընթացներ է անցկացրել Սահմանապահների և Ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչության աշխատակիցների շրջանում (ճամփորդական փաստաթղթերի անվտանգության ապահովման և կեղծիքների բացահայտման հարցերի շուրջ, անգլերեն լեզվի և համակարգչային հիմունքների, միգրացիայի և ապաստան ստանալու օրենսդրություն և մարդու իրավունքների, Սահմանային կառավարման տեղեկատվական համակարգերի աշխատանքի, և այլ թեմաների շուրջ), Ազգային անվտանգության համակարգի և Ոստիկանության կադրերի բարձր հոսունության պայմաններում դեռևս առկա է սահմանապահների և ոստիկանության աշխատակիցների շրջանում շարունակական ուսուցում անցկացնելու կարիքը: Խորհուրդ է տրվում անցկացնել միգրացիայի հարցերով աշխատանքներին նվիրված հատուկ ուսուցում սահմանապահների համար: Նշված ուսուցումը կարելի է կազմակերպել ուսուցման կարիքների և առկա կարողությունների գնահատումից հետո:

## Ը.5. Կիրարկման առկա մարտահրավերները

1. Նշանակել իրավասու մարմին միգրացիայի կառավարման իրականացման աշխատանքները համակարգելու համար:
2. Զարգացնել միգրացիայի կառավարման մեջ ներգրավված կառույցների միջև համագործակցությունը, կնքելով համագործակցության մասին լրացուցիչ պայմանագրեր կամ թարմացնելով գոյություն ունեցողները,
3. Ստեղծել միգրացիայի ոլորտի տվյալների կառավարման միասնական համակարգ՝ ոլորտում գործող մարմիններից տվյալներ հավաքագրելու, վերլուծելու և փոխանակելու նպատակով, միգրացիայի վերաբերյալ ընդհանուր և բոլոր մարմինների կողմից կիրառվող ցուցանիշների հիման վրա: Այս գործընթացի համակարգումը նույնպես կստանձնի միգրացիայի հարցերով միասնական լիազոր մարմինը:
4. Ստեղծել ՏՏ-ի վրա հիմնված Միգրացիայի միասնական տեղեկատվական բազա, ինչպես որ նախատեսված է Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքում: Միգրացիայի էլեկտրոնային տեղեկատվական բազայի ստեղծման անհրաժեշտության հարցը նշվում է նաև ԵՀՔ Գործողությունների ծրագրի 4.3.2. կետում և Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքում:
5. Ապահովել, որպեսզի սահմանապահներին նախապես հասանելի լինեն Արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրված վիզաների տվյալները:
6. Առաջարկվում է ՀՀ Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությանը հնարավորություն տալ օգտվել սահմանապահների տեղեկատվական բազայից և հակառակը:

7. Առաջարկվում է համապատասխան կառույցների կողմից մշակել համագործակցության մեխանիզմ, որի նպատակն է ընդհանուր ընթացակարգերի ստեղծումը երկրում թույլատրելի ժամկետից ավելի մնացողների բացահայտման նպատակով: Սա ներառում է ՏՏ-ի վրա հիմնված գրանցման համակարգի ստեղծումը և այնպիսի մեխանիզմի ներդնումը, որով հնարավոր կլինի սահմանապահների ու Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության միջև փոխանակել օտարերկրացիների մուտքի և ելքի վերաբերյալ տվյալները:
8. Ամրապնդել համագործակցությունը ծագման և ժամանման հիմնական երկրների հետ և նրանց, հատկապես՝ հարևան երկրների, հետ ստորագրել ռեադմիսիայի մասին համաձայնագրեր:

Վտարման գործողությունների (հարկադիր վտարում ի հակադրության վարչական վտարման) իրականացման նպատակով կարիք կա հատուկ հիմնադրամ ստեղծել (ներառելով միգրանտների ապրելու, տեղափոխության և բուժօգնության հետ կապված ծախսերը):

Միգրացիայի արդյունավետ կառավարման կարողությունների զարգացման առնչությամբ ՀՀ կառավարության համար առաջնահերթ խնդիր է հանդիսանում այն հիմնական կառույցի որոշումը, որը կոչված է համակարգելու միգրացիայի քաղաքականության կառավարումը և իրականացումը: Նման առաջնահերթությունը դիտարկելիս ոչ մի դեպքում չպետք է շփոթել միգրացիայի հարցերը փախստականների հարցերի հետ: Նմանապես, ներգաղթը (օտարերկրացիների մուտքը Հայաստան) պետք է դիտարկվի որպես միգրացիայի կառավարման ընթացիկ առաջնահերթություն, թեև արտագաղթը (արտասահման հայերի մեկնումը և նրանց հարստության դուրս բերումը), անշուշտ, մնում է գերակա առաջնահերթություն, բայց իր բնույթով այն բոլորովին տարբեր է:

Այս իմաստով ներգաղթի կառավարման մեջ ներգրավված բոլոր հաստատությունների միջև համագործակցությունը պետք է ամրապնդվի, ստորագրելով համագործակցության մասին նոր արձանագրություններ կամ թարմացնելով գոյություն ունեցողները: Նորանշանակ «առանցքային հաստատությունը» կստանձնի այս գործընթացը համակարգողի դերը:

Ի լրումն, գնահատող խումբը գտնում է, որ անհրաժեշտ է ստեղծել և գործածել այն մարդկանց «սև ցուցակը[133]», որոնք Հայաստանի տարածքում թույլատրված ժամետից ավելի են մնում: Անհրաժեշտ է ամրապնդել միջգերատեսչական համագործակցությունը (իր առկա կառուցվածքով), հատկապես՝ ՀՀ Ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչության և սահմանապահների միջև: Սահմանապահները պետք է նաև հնարավորություն ունենան օգտվել ՀՀ Արտգործնախարարության կողմից տրամադրված վիզաների վերաբերյալ գրանցումներից, նախքան մարդիկ կմոտենան սահմանին: Առաջարկվում է ՀՀ Ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչությանը հնարավորություն տալ օգտվել սահմանապահների տեղեկատվական բազայից և հակառակը:

Բացի այդ, առաջարկվում է իրավասու հաստատության կողմից մշակել համագործակցության մեխանիզմ, որի նպատակը երկրում թույլատրված ժամկետից ավելի մնացողների բացահայտման ընդհանուր մեխանիզմի մշակումն է: Սա ներառում է ՀՀ սահմանապահների, Ոստիկանության, Արտգործնախարարության շրջանակներում ՏՏ-ի վրա հիմնված գրանցման համակարգի և տվյալների փոխանակման մեխանիզմի ստեղծումը, ներառելով օտարերկրացիների մուտքի և ելքի վերաբերյալ տվյալները: Սահմանների կառավարման տեղեկատվական համակարգը պետք է շտապ արդիականացվի, ներառե-

---

[133] «Սև ցուցակը» սովորաբար գործածվում է բացասական իմաստով, նշանակելով այն մարդկանց վտարումը, ովքեր ընդգրկված են ցուցակում: Սա երբեմն հայտնի է որպես Արգելված ներգաղթողների ցուցակ: Հսկվող ցուցակը որպես կանոն օգտագործվում է թարմացնելու թաքնված զգուշացումները և պահանջում է մանրազնին ուսումնասիրել ցուցակում ընդգրկված անհատին կամ շարունակվող քրեական հետաքննության դեպքում՝ պահանջում է անձի նկատմամբ հսկողություն սահմանել:

լով օտարերկրացիների կարգավիճակի փոփոխությունը և Հայաստանում նրանց մնալու թույլտվության երկարացման մոնիթորինգը: Այս նպատակով ՍԿՏՀ-ում պետք է զետեղվեն ԱԳՆ-ի և Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության տեղեկատվական բազան և գրանցումները: Այս քննարկումներում ՏՏ անձնակազմի ներգրավումը շատ ցանկալի է: Ի լրումն, անհրաժեշտ է վիճակագրության անձնակազմի համապատասխան աշխատանքը, որպեսզի ՏՏ անձնակազմը պատկերացում կազմի, թե տեղեկատվական բազան ինչպիսի ամփոփ տվյալներ պետք է ներկայացնի:

Հայաստանից միգրանտ աշխատողների արտահոսքի և Հայաստան աշխատողների ներհոսքի, ինչպես նաև օտարերկրացիների, փախստականների և ապաստան հայցողների տեղաշարժերի վերաբերյալ հիմնավորված տվյալները այն առանցքային գործոնն են, որոնք նպաստում են միգրացիայի հիմնավոր քաղաքականության մշակմանը և միգրացիայի արդյունավետ կառավարմանը, ներառելով անցյալ և ներկայիս ժամանակահատվածներին հատուկ միտումների վերլուծությունը, ինչպես նաև կարճաժամկետ կանխատեսումներ անելու ունակությունը: Ուստի, անհրաժեշտ է ստեղծել միգրացիայի տվյալների կառավարման միասնական համակարգ, կանոնակարգելով տվյալների հավաքագրումը, վերլուծությունը և այն գործակալությունների միջև տվյալների փոխանակումը, որոնք ներգրավված են միգրացիայի կառավարման գործընթացում, հիմնվելով բոլոր ներգրավված հաստատությունների միջև համաձայնեցված և նրանց կողմից օգտագործվող միգրացիայի ընդհանուր ցուցանիշերի վրա: Թեև միգրացիայի տվյալների միասնական շտեմարանի ստեղծումը նախատեսվել է Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքում, միգրացիայի վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվական բազայի ստեղծման անհրաժեշտության հարցը նշվում է նաև ԵՀՔ Գործողությունների ծրագրի 4.3.2. կետում: Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքի պահանջների իրագործման նպատակով չափազանց կարևոր է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Պետական իշխանության մարմինների կողմից մշակել մուտքագրման ընթացակարգեր և թարմացնել միգրացիայի վերաբերյալ տվյալների միասնական բազան: Տվյալները գաղտնագրողները պետք է դասընթացներ անցնեն չհամաձայնեցված գաղտնագրման դեպքերից խուսափելու նպատակով,
2. Մշակել գործառնական մակարդակում միգրացիայի վերաբերյալ տվյալների փոխանակման և համատեղ օգտագործման ընթացակարգեր,
3. Մշակել համակարգ (համակարգչային ծրագիր) և մեթոդաբանություն, որը թույլ կտա միգրացիայի վերաբերյալ միասնական տվյալների շտեմարանից վերցված տեղեկությունների հիման վրա իրար կապել տվյալները, ընդհանրացնել դրանք և կազմել վիճակագրական միասնական զեկույցներ,
4. Կարգավորել միգրացիայի վերաբերյալ տվյալների միասնական շտեմարանից տեղեկությունների հրապարակումը,
5. Մշակել սահմանափակ հասանելիության ռեժիմ միգրացիայի վերաբերյալ տվյալների միասնական շտեմարանից հատուկ նշանակության տվյալներից օգտվելու համար:

Տվյալների կառավարման այս գործընթացում համակարգողի դերը կարող է կատարել թարմացված կարողություններ ունեցող միգրացիոն «հիմնական» կառույցը:

Գնահատող խումբն առաջարկում է աստիճանաբար ընդլայնել ՍԿՏՀ-ի տեղեկատվական բազան, ներառելով երկիր մուտք գործելուց հետո օտարերկրացու կարգավիճակի բոլոր հետագա փոփոխությունները մինչև նրա մեկնումը երկրից: ՀՀ ԱԳՆ-ն, սահմանապահները և ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունը պետք է գաղտնագրման իրավասություններ ունենան: Ինչ վերաբերում է բիոմետրիկ փաստաթղթերի ներդրմանը, ապա առաջարկվում է այս հարցը քննարկել միգրացիայի կառավարման

ոլորտում առկա կառուցվածքային և ընթացակարգային խնդիրները լիարժեք կերպով կարգավորելուց հետո:

Հայաստանում միգրացիայի կառավարման բարելավման ճանապարհին անհրաժեշտ քայլերից է ծագման և ժամանման հիմնական երկրների հետ համագործակցության ամրապնդումը: Այս երկրների, հատկապես՝ հարևան և ԵՄ անդամ-պետությունների հետ ռեադմիսիայի վերաբերյալ համաձայնագրերի ստորագրումը արտաքին և միգրացիայի քաղաքականությունների գերակա առաջնահերթություններից մեկն է:

Երկրի տարածքից օտարերկրացիների հարկադիր վտարման իրականացման նպատակով կառավարությունը պետք է ստեղծի հատուկ հիմնադրամ, որի միջոցներից պետք է ֆինանսավորվեն համապատասխան գործընթացները, ներառյալ՝ օտարերկրացիների ապրելու, տեղափոխման և բուժօգնության հետ կապված ծախսերը:

Այս առումով կառավարությունը պետք է քննարկի ավիաուղիների և այլ տրանսպորտային ընկերությունների հետ պայմանագրերի կնքման հարցը, որի նպատակն է ներգաղթի համար պատասխանատու մարմիններին ժամանող ուղևորների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը: Սա թույլ կտա, որպեսզի օտարերկրացիների ստուգումները անցկացվեն նախքան Հայաստանի տարածք մուտք գործելը:

## Թ. Եզրափակիչ նկատառումները և հետագա քայլերը

Գնահատող թիմը գտնում է, որ Կառավարության առջև ծառացել են մի քանի մարտահրավերներ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի վրա օտարերկրացիների հոսքի կառավարման և երկրում նրանց հետագա կացության առումով: Հսկողության և պարզեցման մոտեցումների միջև ՊԵՏՔ է ապահովվի հավասարակշռությունը: Կառավարության կողմից լուծման ենթակա առավել կարևոր հարցերից մի քանիսը ներառում են.

- Միգրացիայի հարցերով զբաղվող տարբեր գերատեսչությունների միջև տեղեկատվության փոխանակման ցածր մակարդակ,
- Անձնագրերի և վիզաների վարչությունը սահմանի հատման կետերին և հյուպատոսություններին միացնող համակարգչային ցանցի բացակայություն: Պետական տարբեր մարմինների կողմից վարվող ռեգիստրները (վիզաների ռեգիստր, անձնագրերի ռեգիստր, ՍԿՏՀ և այլն) փոխկապակցված չեն,
- Միգրացիայի հարցերով զբաղվող վարչական կառույցների միջև համակարգման բացակայություն,
- Վիզաների այնպիսի դասակարգման բացակայություն, որում հաշվի է առնվում սահմանի վրա վիզաների տրամադրումը այցելուներով և զբոսաշրջիկներով սահմանափակելու անհրաժեշտությունը,
- Երկրի տարածքում գտնվող ապօրինի միգրանտների գրանցման մեխանիզմի բացակայություն և հետևաբար միգրանտների այս խմբով զբաղվող իրավապահ մարմնի բացակայություն,
- Բացառապես անկանոն միգրանտների, այլ ոչ՝ օրինազանցների, համար նախատեսված հատուկ կացարանների բացակայություն,
- Մի քանի դերակատարների գործունեության համակարգման համար փոխհարաբերությունները մանրամասնող մեխանիզմ ապահովող միասնական միգրացիոն քաղաքականության և ռազմավարության բացակայություն, ոլորտում գործող տարբեր մարմինների միջև համագործակցության բացակայություն,
- Միգրացիայի կառավարման լիազորությունների ապակենտրոնացում կրկնվող իրավասություններով, միգրացիայի կառավարման համար պատասխանատու միասնական մարմնի բացակայություն,
- Սահմանների միասնական կառավարման բացակայություն,

- Միգրացիայի և արտերկրում աշխատանքի օրինական հնարավորություններ ընձեռող աշխատանքի միգրացիայի ծրագրերի բացակայություն,
- Այլ երկրներից հայաստանցի միգրանտների հնարավոր վերադարձի հետ կապված վերաինտեգրման հարցերի առկայություն:

Ի լրումն, միգրացիայի ոլորտում ներկայումս տիրող իրավիճակը երբեմն իր պատշաճ արտացոլումը չի գտնում ՀՀ օրենսդրությունում: Միգրացիայի տարբեր հարցեր ներառված են տարբեր օրենքներում և ՀՀ Կառավարության որոշումներում՝ իրականացնող գերատեսչություններին հաճախ տալով սեփական հայեցողությամբ գործելու հնարավորություն: Բազմաթիվ ընթացակարգեր և վարչական գործընթացներ դեռևս չեն սահմանված ենթաօրենսդրական ակտերում, օրինակ՝ որոշումներում կամ կանոնադրություններում:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ այս բոլոր խնդիրների պատճառը ոչ թե անարդյունավետ վարչարարությունն է, այլ Հայաստանում և ընդհանրապես Հարավային Կովկասում արագորեն փոփոխվող միգրացիոն միտումները: Մասնավորապես, բնակչության կենսամակարդակն արագ տեմպերով աճում է, և դեպի Հայաստան ներգաղթի խնդիրը դառնում է օրակարգի այն հարցերից մեկը, որի քննարկումը չպետք է շատ ձգձգել: Ներգաղթի բացասական հետևանքները ապագայում կրելու փոխարեն (ինչն արդեն տեղի է ունեցել բազմաթիվ այլ երկրներում, որտեղ միգրացիոն գործընթացը պատշաճորեն չի կանխատեսվել կամ կառավարվել) անհրաժեշտ է օգուտ քաղել ներգաղթից:

Հետագա քայլերում պետք է հաշվի առնվեն ԵՄ-ի Եվրոպական հարևանության ծրագրի պահանջները, որոնց համաձայն Հայաստանը պետք է մշակի 2008-2013 թթ. միգրացիայի ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը: Հուսով ենք, որ սույն գնահատումը կծառայի որպես կարևոր ավանդ նշված ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակման խնդրում: Գտնում ենք, որ վերը փաստաթուղթը պետք է կազմված լինի հետևյալ երեք մասերից.

1. Հայաստանում միգրացիայի (ներգաղթի և արտագաղթի) միտումները, հատկապես վերջին 10 տարիներին
2. Առկա իրադրությունը միգրացիայի կառավարման ոլորտում (օրենսդրություն, վարչարարություն և կիրարկում)
3. Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումներ, այդ թվում իրավական, վարչական և կիրարկման բնույթի առաջարկություններ պարունակող Գործողությունների ծրագիր: Այս բաժնում նաև կսահմանվեն աշխատակազմի, սարքավորումների և տեխնոլոգիաների նկատմամբ պահանջները, ինչպես նաև դրանց հետ կապված մոտավոր ծախսերը:

Պատրաստ ենք աջակցելու Հայաստանի կառավարությանը նշված ծրագրի մշակման գործում և օժանդակելու նրա ակտիվ իրականացմանը:

Ի լրումն, կցանկանայինք մեր երախտիքը հատուցել բոլոր այն հայ գործընկերներին, ովքեր պատրաստակամորեն իրենց ավանդն ունեցան ինչպես մեր աշխատանքներում, այնպես էլ սույն փաստաթղթի մշակման մեջ: Մենք պարզապես ուսումնասիրել և ձևակերպել ենք այն տեղեկությունները, որ իրքներդ տրամադրել եք մեզ: Ըստ արժանվույնի ենք գնահատում ձեր ակտիվ մասնակցությունը՝ հուսալով, որ մեր արգասաբեր համագործակցությունը կշարունակվի:

Ստոկհոլմ, Վիեննա, Երևան
2008 թ.-ի մայիս

## *Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք (կրճատ տարբերակ)*

«Հայաստանում միգրացիայի կառավարման ոլորտում կարողությունների զարգացում. գնահատում» ծրագրի համառոտ տեխնիկական առաջադրանքը

2007 թ.-ի մարտին ՄԳ-ը դիմել է ՄՄԿ-ին և Շվեդական միգրացիոն խորհրդին՝ երկրում միգրացիայի կառավարման համակարգի վերակազմավորման համատեքստում Հայաստանի միգրացիայի կառավարման կարողությունների գնահատում կատարելու խնդրանքով: Իր գրության մեջ ՄԳ-ը մասնավորապես հայտնել է ցանկություն միգրացիայի և ապաստանի հարցերի ուղղությամբ համապարփակ, միասնական և հավասարակշռված գործողությունների ազգային ծրագրի մշակման մասին: Նշված ծրագրի մշակումը նախատեսված է Հայաստանի գործողությունների ծրագրում ԵՄ-ի եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում:

Ստորև ներկայացվում է ՄՄԿ-ի և Հայաստանի Կառավարության միջև համագործակցության պատմությունը միգրացիայի կառավարման ոլորտում: ՄՄԿ-ը աջակցում է Հայաստանի Հանրապետության Կառավարությանը միգրացիայի կառավարման ոլորտում 1993 թվականից ի վեր:

1998–2000 թթ., Հայաստանի Հանրապետության խնդրանքով, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) և Միացյալ ազգերի կազմակերպության Փախստականների գծով գերագույն հանձնակատարի (ՓԳՀ) գրասենյակը աջակցեցին ՀՀ Կառավարությանը միգրացիայի կառավարման միասնական համակարգի ստեղծման գործում «Կարողությունների զորացում միգրացիայի ծառավարման ծրագրում. Հայաստան» ծրագրի միջոցով: Ծրագրի նպատակն էր նպաստել Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն գործընթացների և հոսքերի կառավարման միասնական համակարգի ստեղծմանը և գործառնական կարողությունների զարգացմանը: Ծրագրի նկատմամբ մոտեցումը հիմնվում էր 1995-1998 թթ. Հայաստանում կարողությունների զորացման արդյունավետ ծրագրերի իրականացման ժամանակ մշակված մեթոդաբանության վրա:

2001 – 2002 թթ. իրականացվեց ծրագրի երկրորդ փուլը («Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման կարողությունների զորացում»: Այն ուղղված էր ՀՀ Կառավարության կողմից որպես գերակա առաջնահերթություններ ճանաչված հետևյալ բնագավառներին. (1) սահմանային կառավարում՝ Հայաստանի տարածքով ապօրինի միգրացիան և մարդկանց առևտուրը կանխելու և դրանց դեմ պայքարելու, զեղծարարների և զբոսաշրջիկների ճանապարհորդությունը դյուրինացնելու նպատակով, (2) միգրացիայի բնագավառում գիտահետազոտական և վերլուծական կարողությունների կատարելագործում քաղաքականություն ձևավորողներին առավել որակյալ տվյալներ տրամադրելու և տեղեկատվական հոսքերի մասին առավել հավաստի տվյալներ ապահովելու նպատակով, և (3) որպես երկրում աղքատության կրճատման և տնտեսական աճի զարգացման կարևոր միջոց՝ արտասահմանում Հայաստանի քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության խթանում և կարգավորում, այդ թվում նրանց իրավունքների պաշտպանություն:

2000 թ.-ի սեպտեմբերին ՄՄԿ-ը կազմեց գնահատման հաշվետվություն Հայաստանում սահմանային կառավարման մասին: Ուսումնասիրված հարցերից էր Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի մակարդակում գործող ավտոմատացված տեղեկատվական համակարգը: Ազգային անվտանգության նախարարությունը առաջարկեց ընդլայնել տեղեկատվական համակարգը՝ դրանում ներառելով ցամաքային սահմանի հատման կետերը և ստեղծել տվյալների կենտրոնական արխիվ ունեցող ցանց՝ տեղեկատվության պահպանման, վերլուծության և դուրս բերման համար:

Մինչ համակարգի ընդլայնման աշխատանքներում ներդրում կատարելը ՄՄԿ-ը որոշեց կատարել համակարգի անկախ տեխնիկական գնահատում, որից հետո ՄՄԿ-ը վարձեց «Oriental Software Private» (OSP) մասնավոր ընկերությանը, որը պետք է կատարեր գնահատումը և ներկայացներ հաշվետվությունը, որտեղ Հայաստանի Կառավարությանը կներկայացվեին առաջարկություններ համակարգի ընդլայնման, այդ թվում տվյալների այնպիսի կենտրոնական արխիվի ստեղծման մասին, որը համադրելի կլիներ սահմանային հսկողության բնագավառում միջազգային լավագույն փորձի հետ:

2004 – 2005 թթ. ՄՄԿ-ը իրականացրեց «Սահմանի կառավարման տեղեկատվական համակարգի ընդլայնում. Հայաստանի Հանրապետություն» ծրագիրը, որի արդյունքում Երևանի միջազգային օդանավակայանում գործող Սահմանի կառավարման տեղեկատվական համակարգը (ՍԿՏՀ) ընդլայնվեց՝ ներառելով Բագրատաշենը (Սադախլը)՝ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև սահմանի հատման հսկիչ կետը: Ծրագրի հաջող ավարտից հետո 2007 թ.-ի փետրվարին ՄՄԿ-ը նախաձեռնեց մեկ այլ ծրագիր, որը կոչվում է «Սահմանի կառավարման տեղեկատվական համակարգի հետագա ընդլայնում և կայացում. Հայաստանի Հանրապետություն», որի շրջանակներում ՍԿՏՀ-ը կընդգրկի Մեղրիի (Հայաստանի և Իրանի միջև), Այրումի, Բավրայի, Գոգավանի (Հայաստանի և Վրաստանի միջև) ցամաքային սահմանակետերը և Գյումրիի օդանավակայանը:

2006 թ.-ին ՄՄԿ-ը սկսեց «Հայաստանի սահմանապահ զորքերի և հարակից ծառայությունների անձնակազմի կարողությունների զորացում» ծրագիրը: Հենվելով 1999թ. ի վեր ՄՄԿ-ի իրականացրած նախորդ ուսուցման ծրագրերի վրա՝ այս ծրագրի նպատակն է ուսուցման ներքին կարողությունների ձևավորման և սահմանապահ և հարակից ծառայությունների անձնակազմի մինչև 250 մասնակիցներին փաստաթղթերի զննության և կեղծիքների բացահայտման, ինչպես նաև անգլերեն լեզվի և համակարգչային հմտությունների բնագավառում ուսուցման միջոցով կատարելագործել սահմանապահ զորքերի և հարակից ծառայությունների կարողությունները, ինչը, իր հերթին, կնպաստի Հայաստանում սահմանային կառավարման համակարգի բարելավմանը և ապօրինի միգրացիայի հոսքերի կրճատմանը:

2006 թ.-ից ի վեր ՄՄԿ-ը իրականացնում է «Տեղեկացված միգրացիա. ազգային կարողությունների զորացման և Հարավային Կովասի և ԵՄ-ի միջև միջ-տարածաշրջանային երկխոսության միջոցով օրինական միգրացիայի խթանման նկատմամբ ինտեգրված մոտեցում» ծրագիրը, որը ֆինանսավորում է ԵՄ-ի «Միգրացիայի և ապաստանի տրամադրման ոլորտում երրորդ երկրներին ֆինանսական և տեխնիկական աջակցության» ծրագիրը (AENEAS): Ծրագրի նպատակն է խորացնել միգրացիայի և ապաստանի տրամադրման կառավարման հարցերում Հարավային Կովկասի ուղարկող և տարանցիկ երկրների և ԵՄ-ի ընդունող անդամ-պետությունների միջև գոյություն ունեցող երկխոսության տված օգուտները («խմբային» գործընթաց), ինչպես նաև զարգացնել ապօրինի միգրացիայի կրճատմանն ուղղված մեխանիզմները և քաղաքականությունները՝ միևնույն ժամանակ զորացնելով օրինական միգրացիայի, տևական վերադարձի և վերաինտեգրման փորձի և քաղաքականությունների խթանմանն ուղղված Հարավային Կովկասի կարողությունները: Ծրագիրն իրականացվում է Հարավային Կովկասի երեք հանրապետություններում: Ծրագրի շրջանակներում որպես հայաստանյան գործընկեր են հանդես գալիս Տարածքային կառավարման նախարարությունը (և նրա կազմում գործող Միգրացիոն գործակալությունը), Արտաքին գործերի նախարարությունը, Ոստիկանությունը և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: Երկու խմբային հանդիպումներ են կայացել 2006 թ.-ին և 2007 թ.-ին, որոնց արդյունքում ձևավորվել է Շվեդիայից և Հայաստանից կազմված «Երկրների թիմ»՝ վերադարձների ուղղությամբ համագործակցությունը ընդլայնելու նպատակով: Ակնկալվում է, որ երկրների թիմը կպատրաստի կարիքների համաձայնեցված ցանկ և գործողությունների ծրագիր, որոնց հիման վրա կնախաձեռնվեն տարբեր միջոցառումներ և ծրագրերի առաջարկներ: Ծրագրի սույն առաջարկը նման միջոցառման մի փորձ է, իսկ գնահատման թեման

առաջ է քաշվել 2007 թ.-ի մարտին Թբիլիսիում կայացած խմբային հանդիպման ժամանակ: Այդ ընթացքում բանակցություններ են վարվել Շվեդիայի հետ ռեադմիսիայի համաձայնագրի շուրջ, և այն պատրաստ է ստորագրման համար:

1.1.1 Հայաստանում միգրացիայի կառավարման ոլորտում կարողությունների զարգացում. գնահատում ծրագիր (ՄԿԿԶԳ)

Ելնելով միգրացիայի կառավարման ոլորտում ՄՄԿ-ի ձեռք բերած փորձից՝ որդեգրվել է միգրացիայի կառավարման համապարփակ մոտեցում: Վերահսկողական կառուցվածքի ոչ մի մաս չի կարող առանձնացված դիտարկվել և հետևաբար բարելավման ցանկացած ռազմավարության նկատմամբ պետք է ցուցաբերվի ընդգրկուն մոտեցում: Ահա այս շրջանակներն են, որ կքննարկվեն Հայաստանի Հանրապետության համար ապագա ցանկացած ԿԶՄԿ ծրագիր նախագծելիս: Կարևոր է նշել, որ ԿԶՄԿ ծրագիրը կարող է ունենալ շատ ձևեր: Որոշ երկրներում ուշադրության կենտրոնում է սահմանային կառավարումը, այլ երկրներում՝ օրենսդրության մշակումը և այլն: Յուրաքանչյուր երկիր ընտրում է իր ելակետը, սահմանում իր գերակայությունները և համապատասխանեցնում իր կարիքները դոնորների շահերի հետ: Ավելի պարզ լինելու համար նշենք, որ ստորև նկարագրվող մոդելում միգրացիայի կառավարման գործառույթը բաժանվում է երեք տարբեր, սակայն իրար փոխկապակցված բաղադրիչների: Բաղադրիչներից յուրաքանչյուրը կարող է իր հերթին բաժանվել որոշակի թվով տարրերի: Բաղադրիչները ներառում են ծրագրային, կառավարման և հսկողության բաղադրիչներ:

Ծրագրային բաղադրիչը.

Ծրագրային բաղադրիչը ձևավորող տարրերը հետևյալն են.

Քաղաքականությունը. Միգրացիայի կառավարման ոլորտում ազգային նպատակների համապարփակ ամբողջություն, որը ամենաբարձր մակարդակում սահմանում է պետության մոտեցումը: Քաղաքականության այս տարրը սովորաբար բխում է պետական քաղաքականության այլ տարրերից, օրինակ՝ աշխատաշուկայի քաղաքականությունից, արտաքին քաղաքականությունից և ժողովրդագրական քաղաքականությունից և փոխկապակցված է վերջիններիս հետ:

Օրենսդրությունը. Օրենսդրության կառուցվածք, որը քաղաքականությանը տալիս է կոնկրետ արտահայտություն և նախատեսում միգրացիայի կառավարման համար պահանջվող միջոցառումների (օրինակ՝ ներգաղթի, կացության կարգավիճակի շնորհման, սահմանային զննության, ապօրինի մուտքի և բնակության դեպքերին արձագանքման, պետության տարածքից մարդկանց վտարման) իրականացման լիազորություն:

Կանոնակարգերը. Օրենսդրության իրականացման համար նախատեսվող պահանջները մանրամասն սահմանող փաստաթղթեր: Որոշ երկրներում նշված պահանջները հաճախ արտացոլվում են ավելի մանրամասն օրենսդրական փաստաթղթի տեսքով: Այլ երկրներում դրանք գործողությունների ձեռնարկման լիազորությունների շնորհման միջոց են, որոնք ավելի ընդհանրական տեսքով արտացոլվում են օրենսդրությունում:

Ընթացակարգերը. Մանրամասն ցուցումներ, որոնցով առաջնորդվում են պաշտոնյաները՝ քաղաքականությունների իրականացմանն աջակցող կանոնակարգերով սահմանված և օրենքներով լիազորված պարտականությունները կատարելիս:

Կառավարման բաղադրիչ

Կառավարման բաղադրիչի մաս կազմող տարրերը այն փաստաթղթերն են, որոնք միջազգայնորեն ընդունվում են որպես մարդկանց կարգավորված շարժի կառավարման և դյուրինացման միջոց: Դրանք են.

Երկրի անձնագիրը

Սա այն փաստաթուղթն է, որ տրվում է պետության կողմից իր քաղաքացիներին՝ վերջիններիս շարժը դեպի այլ պետությունների տարածքներ կամ այլ պետությունների տարածքներում դյուրինացնելու համար: Այն միջազգայնորեն ընդունված գործիք է մարդկանց ստուգման, գրանցման և նույնականացման համար: Որպես այդպիսին, երկրի անձնագիրը ենթարկվում է անձնագրերի տպագրության միջազգայնորեն համաձայնեցված ստանդարտներին և տրման փործի պահանջներին:

Երկրի վիզան

Սա այն փաստաթուղթն է, որ պետությունը տրամադրում է իր տարածք մուտք գործել ցանկացող և տվյալ պետության քաղաքացի չհանդիսացող անձանց: Այն սովորաբար տրամադրվում է պետության տարածքից դուրս և որպես այդպիսին կատարում է դիմողների ստուգման գործառույթ՝ նպատակ ունենալով արտոնագրեր շնորհել միայն այն անձանց, ովքեր լիովին բավարարում են երկիր մուտք գործելու համար սահմանված պայմաններին: Միջազգային պրակտիկայում երկրի վիզայի միջոցով չի շնորհվում պետություն մուտք գործելու բացարձակ իրավունք, այլ թույլատրվում է վիզան ստացող անձին ներկայանալ ստուգման պետության մուտքի կետերից մեկում: Քանի որ երկրի վիզան դեպի պետություն մարդկանց շարժի կառավարման միասնականորեն ընդունված միջոց է, ապա այն ենթարկվում է նաև վիզաների կազմման միջազգայնորեն համաձայնեցված ստանդարտներին և տրամադրման փործի պահանջներին:

Ինքնությունը հաստատող պաշտոնական փաստաթղթերը

Սրանք ներառում են պետության կողմից իր քաղաքացիներին տրամադրվող բոլոր այլ տեսակների փաստաղթղթերը, որոնք ծառայում են որպես անձի ինքնության հաստատման միջոց: Շատ իրավիճակներում, հատկապես նույնանման մոտեցումներ ունեցող հարևան երկրների փոխադարձ համաձայնությամբ նշված փաստաթղթերը օգտագործվում են պետական սահմաններից դուրս մարդկանց շարժը թույլատրելու համար: Օրինակները ներառում են քաղաքացիության քարտը, ինքնությունը հաստատող քարտը և ներքին անձնագիրը:

Հսկողության բաղադրիչը

Հսկողության բաղադրիչը ձևավորող տարրերը հետևյալն են.

Հետազոտություն

Այս տարրը բաղկացած է հավաքագրված տեղեկատվության միջոցով ձեռք բերված գիտելիքների կուտակային ամբողջությունից, որը հնարավորություն է տալիս ըմբռնել ապօրինի միգրացիայի բնույթն ու դրսևորումները: Առկա գլոբալ միջավայրում մաքսանենգությամբ և թրաֆիքինգով զբաղվողների կողմից օգտագործվող մեթոդների և երթուղիների դեմ պայքարի արդյունավետ ռազմավարություններ մշակելու նպատակով գնալով ավելի մեծանում է ներգաղթի հետախուզության կատարելագործված համակարգերի անհրաժեշտությունը:

Մոնիթորինգ և բացահայտում

Այս տարրը բաղկացած է այն մեթոդներից և մեխանիզմներից, որոնք անհրաժեշտ են թաքուն ներթափանցումը բացահայտելու և կասեցնելու նպատակով կանոնավոր և ոչ կանոնավոր ուղիներով մարդկանց շարժին հետևելու համար: Այն ներառում է այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են օֆշորային գոտու քաղաքացիների մուտքի արգելումը, մուտքի կետերի միջև ցամաքային սահմանի թաքուն հատման դեպքերի մոնիտորինգն ու բացահայտումը, փոխադրամիջոցների (օր.՝ բեռնատար ավտոմեքենաների, կոնտեյներների) զննումը թաքնված միգրանտներին բացահայտելու համար:

Ստուգում

Այս տարրը նկարագրում է միգրացիայի կառավարման գործընթացի հիմնական գործունեությունը: Այն կապված է ինքնությունը հաստատող պաշտոնապես տրված փաստաթղթերի օգտագործման հետ, որն իրականացվում է պետության քաղաքականության նպատակներին և միջազգայնորեն ընդունված կոնվենցիաներին համահունչ: Ստուգման գործընթացը պահանջում է, որ ստուգող պաշտոնյան ստուգի ներկայացված փաստաթղթի վավերությունը և տվյալ փաստաթղթի և այն ներկայացրած անձի միջև կապի իսկությունը:

Արձագանք

Այս տարրն ընդգրկում է գործողությունների ամբողջություն՝ ծեռնարկված հսկողության և օրենքի կիրարկման տեսանկյունից մտահոգություն առաջացնող անձանց առնչությամբ: Այն ենթադրում է քվազի-դատական վարույթ, որի արդյունքում պարզվում է անձի կարգավիճակը կամ դրա բացակայությունը, առանց կարգավիճակի անձանց վտարումը, թրաֆիքինգի զոհ դարձած մարդկանց գործերի քննությունը և միգրանտների շահագործման քրեական ցանցերի գործունեության ընդհատումը կամ վերացումը:

Տարրերի վերոգրյալ նկարագրությունը կոչված է ծառայելու որպես միգրացիայի կառավարման խնդիրները քննության առնելու ժամանակ մտահոգության տեղիք տվող ուղղությունների համառոտ նկարագիր: Հայաստանի Հանրապետությունը բազմակի անգամներ ընդգծել է, որ նախատեսում է ստանձնել իր սահմանները հսկելու և սեփական տարածքի ներսում միգրացիան կառավարելու պատասխանատվությունը: Հայաստանը շահագրգռված է նաև հարևան երկրների հետ աշխատուժի մասին երկկողմ համաձայնագրեր կնքելու, միգրացիայի հոսքերը գրանցելու համար տեղեկատվական բազա մշակելու և միգրացիայի դյուրինացման մեջ: Սրանք բոլորը այն ուղղություններն են, որոնք քննության կառնվեն սույն գնահատման ժամանակ: Կարևոր է նշել, որ թեև գնահատման առանցքային ուղղությունը կլինի ՄԳ-ի գործունեության գնահատումը, սակայն ժամանակ կհատկացվի Հայաստանում միգրացիային առնչվող հարցերով զբաղվող գործընկեր գործակալությունների հետ աշխատանքին: Հարկ է նաև նշել, որ փորձագետների կողմից արվող ցանկացած առաջարկության մեջ, կոնկրետ գործակալությունը, վարչությունը կամ նախարարությունը մյուսներից բարձր դասելու փոխարեն հաշվի կառնվեն Հայաստանի ընդհանուր կարիքները:

ԵՄ-ի օրենսդրությունը

ԵՄ-ի օրենսդրությունը կծառայի որպես լրացուցիչ հիմք Հայաստանի միգրացիայի կառավարման ռազմավարության նպատակների սահմանման համար: Ավելին, գնահատումը կատարելիս փորձագետները հաշվի կառնեն տարածաշրջանում միգրացիայի կառավարման առկա փորձը և կտան Հայաստանի ներկա և ապագա կարիքների գնահատականը:

1.2 Ծրագրի նկարագրությունը

Վիեննայում ՄՄԿ-ի Տեխնիկական համագործակցության կենտրոնի ղեկավարությամբ միգրացիայի գծով երկու փորձագետներ կկատարեն ՄԳ-ի և միգրացիայի հարցերով զբաղվող այլ համապատասխան մարմինների, օրինակ՝ ԱԳՆ-ի, ԱԱՅՆ-ի, Ոստիկանության, կարիքների գնահատում, որը կիրականացվի 4-ից մինչև 12 շաբաթվա ժամանակաշրջանում: Փորձագետներից մեկը կլինի ՄՄԿ-ից, իսկ մյուսը՝ Շվեդական միգրացիոն խորհրդից: Գնահատման աշխատանքները կսկսվեն նշանակված երկու փորձագետների հետ հանդիպումով, որի նպատակը կլինի նախքան Հայաստան այցելելը վերլուծել գործող օրենսդրությունը: Սրան կհաջորդի տեղեկատվության հավաքագրման չորսօրյա փուլը, որի նպատակը կլինի ձեռք բերել ՄԳ-ի առկա կառուցվածքի մանրամասները և ներկայացնել նախնական դիտարկումները:

Երկրորդ այցելությունը, որի նպատակը կլինի քննարկել գնահատման նախնական արդյունքները և ուսումնասիրել գործառնական/գործառական տարբերակները, տեղի կունենա երկուսից չորս շաբաթ հետո:

Գնահատման աշխատանքները կներառեն նաև ՄԳ-ի կարևոր պաշտոններ զբաղեցնող անձանց ուսուցողական այց ԵՄ-ի որևէ անդամ-պետություն կամ ԵՄ-ի անդամության թեկնածու երկիր՝ իրականացման համադրելի մոդելների գնահատում կատարելու համար:

Վերջին այցելության ժամանակ կներկայացվի միգրացիայի վարչության հնարավոր մոդելների ուղեցույցի նախագիծը, որում հաշվի կառնվեն Հայաստանի ներկա, ինչպես նաև ապագա ենթադրվող կարիքները:

Ակնկալվում է, որ գնահատման արդյունքում կներկայացվեն Հայաստանի Հանրապետության միգրացիայի կառավարման իրավական և վարչական ուղղությունների վերաբերյալ նախնական եզրակացություններ: Միևնույն ժամանակ կուսումնասիրվեն այս երկու ուղղությունների կիրարկման հարցերը: Նախնական եզրակացությունները կխմբավորվեն ըստ բոլոր այն կառույցների, որոնք ներգրավված են միգրացիայի կառավարման գործընթացում: Նշված կառույցները պետք է նաև տրամադրեն ուղեցույցներ Հայաստանի Հանրապետության Միգրացիայի և ապաստանի գործողությունների ազգային ծրագրի միգրացիայի բաժնի կազմման հարցում, ինչը ԵՀՔ-ի պահանջներից մեկն է:

2.0. Ընդհանուր նպատակը

Գնահատման արդյունքների միջոցով կզորացվի ՀՀ Կառավարության այն կարողությունը, որն ուղղված կլինի միգրացիայի կառավարման համակարգի զարգացմանը՝ հաշվի առնելով հայաստանյան իրողությունը և համահունչ կլինի միջազգային չափանիշներին և ԵՄ-ի՝ Հայաստանի վերաբերյալ գործողությունների ծրագրին: Ընդհանուր նպատակն է մշակել ուղեցույցներ Հայաստանի Հանրապետության միգրացիայի արդյունավետ ռազմավարության հետ կապված հետագա քայլերի ուղղությամբ:

3.0. Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է գնահատել Միգրացիոն գործակալության (ՄԳ), ինչպես նաև որոշակի առումներով միգրացիայի կառավարման խնդիրներին առնչվող պետական այլ մարմինների, մասնավորապես, ԱԳՆ-ի, ԱԱՅՆ-ի, Ոստիկանության առկա կառուցվածքը և գործառույթները միգրացիայի մասին օրենսդրության վերջերս կատարված փոփոխությունների համատեքստում, ուսումնասիրել մինչ օրս տրամադրված տեխնիկական աջակցությունը և հետազոտել ուսուցման և ռեսուրսների կարիքները: Սույն գնահատման արդյունքում տրամադրվող նախնական ուղեցույցները որպես հիմք կծառայեն Հայաստանի իշխանությունների և հնարավոր դոնորների համար՝ միգրացիայի կառավարման ոլորտի ներսում գործողությունների և աջակցության հիմնական ուղղությունները որոշելիս:

4.0. Արդյունքները

Ծրագրի իրականացման արդյունքում կստացվեն հետևյալ արդյունքները.

• Կներկայացվի միգրացիայի կառավարման վերաբերյալ օրենսդրության բացթողումների վերլուծությունը,

• Կներկայացվի միգրացիայի կառավարման գործակալությունների կառուցվածքի, լիազորությունների և կադրային կարողությունների գնահատումն ու նախնական եզրակացությունները (կազմակերպչական կառուցվածքի գնահատում),

• Կներկայացվեն միգրացիայի կառավարման մարմինների գործունեության կազմակերպման բարելավման տարբերակների և մոդելների մասին նախնական եզրակացությունները,

• Կներկայացվի միգրացիոն տարբեր մարմինների գործունեության խնդիրների կիրարկման գնահատումը, ներառյալ նշված խնդիրների իրականացման ուսումնասիրումը,

• Կտրամադրվեն հատուկ ուղեցույցներ միգրացիայի կառավարման տարբեր մարմինների գործունեության համակարգման և համագործակցության վերաբերյալ,

• Ուսուցողական այցերի միջոցով կզարգանան ՀՀ միգրացիոն մարմինների կարողությունները,

• Կներկայացվեն նախնական եզրակացություններ և ուղեցույցներ Հայաստանի Հանրապետության Միգրացիայի և ապաստանի գործողությունների ազգային ծրագրի միգրացիայի բաժնի կազմման վերաբերյալ, ինչը ԵՀՔ-ի պահանջներից մեկն է:

5.0 Աշխատանքները

5.1 Առկա տվյալների ուսումնասիրումը

• Նախքան առաջին անգամ Երևան այցելելը միգրացիայի գծով երկու փորձագետները կուսումնասիրեն, կվերլուծեն և կմշակեն ՄԳ-ի և Հայաստանի միգրացիայի կառավարման համակարգերի մասին տրամադրված բոլոր գրավոր նյութերը:

5.2 Միգրացիայի հարցերով զբաղվող մարմինների գործունեության բացերի վերլուծություն և կարիքների գնահատում (երկու այցելություն Երևան)

Երկու փորձագետները կկատարեն չորսօրյա երեք այցելություն Երևան՝ ՄԳ-ի և ԱԳՆ-ի, ԱՍՀՆ-ի, Ոստիկանության համապատասխան բաժինների կառուցվածքների մասին տեղեկությունների ձեռք բերելու և գնահատումը նախապատրաստելու նպատակով: Առաջին այցելության ժամանակ կիհավաքագրվի տեղեկատվություն և տեղի կունենան նախնական քննարկումները: Երկուսից մինչև չորս շաբաթ հետո, որի ընթացքում ուսումնասիրման և վերլուծության կենթարկվեն առաջին այցելության արդյունքները, երկու փորձագետները կվերադառնան Երևան, որպեսզի մի շարք քննարկումներ ունենան նախնական գնահատման շուրջ և ուսումնասիրեն գործառնական/գործառական տարբերակները: Այցելությունների ժամանակ աշխատանքները կներառեն.

• ՄԳ-ի, ԱԳՆ-ի, ԱՍՀՆ-ի, Ոստիկանության ղեկավար ներկայացուցիչների և վարչությունների պետերի հետ հանդիպումներ

• Առկա կառուցվածքների ուսումնասիրում/վերլուծություն

• Միջազգային կազմակերպությունների հայաստանյան գրասենյակների հետ հանդիպումներ

• Միգրացիայի կառավարման գլոբալ, ԵՄ-ի և տարածաշրջանային հնարավոր մոդելների ներկայացում և քննարկում

Վերջին այցելության ժամանակ միգրացիայի գծով փորձագետները կներկայացնեն իրենց եզրակացություններն ու առաջարկությունները, ինչպես նաև Միգրացիայի վարչության համար հնարավոր մոդելների նախնական ուղեցույցները:

5.3 Տարբերակների ներկայացումը

Տարբերակների ներկայացումը Երևանում

• ՄԳ-ի և այլ գործակալությունների համար տարբերակների/ընտրությունների ներկայացում և քննարկում
• ՄԳ-ի և այլ գործակալությունների գործունեության ուղղությունների և հետագա քայլերի որոշում
• Փաստերի հոսք

5.4 Ուսուցողական այցը

• Համապատասխան պաշտոնյաների ուսուցողական այց ԵՄ-ի որևէ անդամ-պետություն կամ ԵՄ-ի անդամության թեկնածու երկիր՝ կառույցներին և ընթացակարգերին ծանոթանալու նպատակով:

6.0 Ներդրվող ռեսուրսները

6.1 ՄՄԿ

Ծրագրի կառավարումը կիրականացնի ՄՄԿ-ի Հայաստանի առաքելությունը (Երևան) ՄՄԿ-ի Տեխնիկական համագործակցության կենտրոնի հետ համագործակցությամբ (Վիեննա, Ավստրիա):

6.2 Դոնորները

Դոնոր կառավարությունները կարող են իրենց մասնակցությունն ունենալ ֆինանսավորման, նյութական օգնության կամ իրենց միգրացիոն ծառայություններից փորձագետների տրամադրման միջոցով:

6.3 Հայաստանի Միգրացիոն գործակալությունը

ՄԳ-ի պետը հետևողականորեն պնդել է ծրագրի անհրաժեշտության մասին (համապատասխան գրությունը կցվում է) և խոստացել է անձնապես օժանդակել ՄՄԿ-ին և ակտիվորեն մասնակցել ծրագրի աշխատանքներին, այդ թվում հնարավոր աջակցություն ցուցաբերել ծրագրի իրականացման ուղղությամբ: ՄԳ-ը կտրամադրի անհրաժեշտ տեղեկատվությունը և կներկայացնի իրենց գործունեության իրավական հիմքերի, առկա կառուցվածքի, համակարգման բացերի ընդհանուր նկարագիրը, ինչպես նաև գործակալության վերակազմավորման մասին առաջարկները: ՄԳ-ում մեր հիմնական գործընկերները կլինեն ՄԳ-ի պետ պարոն Գագիկ Եգանյանը, ՄԳ-ի պետի տեղակալ տիկին Լյալյա

Ասլանյանը: Ակտիվ աջակցություն կցուցաբերի Տարածքային կառավարման նախարարի տեղակալ պարոն Վաչե Տերտերյանը:

## 6.4 Կառավարության այլ գործընկեր մարմինները

Կառավարության գործընկեր մարմինները կտրամադրեն իրենց աշխատակիցներին և մասնակիորեն կամ մեծամասամբ կծածկեն դեպի ծրագրի իրականացման վայրերը ուղևորության հետ կապված ծախսերը:

### 6.4.1. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը

Նախարարության համապատասխան բաժինները և ղեկավարները խոստացել են օժանդակել ՄՄԿ-ին և ակտիվորեն մասնակցել գնահատման աշխատանքներին: Համապատասխան բաժինները կտրամադրեն անհրաժեշտ տեղեկատվությունը և կներկայացնեն իրենց գործունեության իրավական հիմքերի, առկա կառուցվածքի, համակարգման բացերի ընդհանուր նկարագիրը:

### 6.4.2. Արտաքին գործերի նախարարությունը

Նախարարության համապատասխան բաժինները և ղեկավարները խոստացել են օժանդակել ՄՄԿ-ին և ակտիվորեն մասնակցել գնահատման աշխատանքներին: Համապատասխան բաժինները կտրամադրեն անհրաժեշտ տեղեկատվությունը և կներկայացնեն իրենց գործունեության իրավական հիմքերի, առկա կառուցվածքի, համակարգման բացերի ընդհանուր նկարագիրը:

### 6.4.3. Ոստիկանությունը

Ոստիկանության համապատասխան բաժինները և ղեկավարները կմասնակցեն գնահատման աշխատանքներին: Համապատասխան բաժինները կտրամադրեն անհրաժեշտ տեղեկատվությունը և կներկայացնեն իրենց գործունեության իրավական հիմքերի, առկա կառուցվածքի, համակարգման բացերի ընդհանուր նկարագիրը:

## *Հավելված 2. Հանդիպումների ժամանակացույցերը*

### Օրակարգ

**Գնահատման առաջին այցելություն**

«Հայաստանում միգրացիայի կառավարման ոլորտում կարողությունների զարգացում. գնահատում» ծրագիր

**Ուրբաթ, 2007 թ.-ի հոկտեմբերի 26-ը**

| | | |
|---|---|---|
| 13:30 – 14:30 | Հանդիպում առաքելության աշխատակիցների հետ<br>գլխավոր գրասենյակ, ծրագրերի մշակման և իրականացման բաժնի և միգրացիոն ռեսուրսի կենտրոնի աշխատակիցներ | Հայաստանում ՄՄԿ-ի առաքելության գլխավոր գրասենյակ |
| 14:30 – 16:30 | ԱՄՆ դեսպանատան արտահանման հսկողության և հարակից սահմանային անվտանգության աջակցության ծրագիր<br>Խորհրդական Փոլ Շոթ | |
| 16:30 – 19:00 | Հանդիպում առաքելության աշխատակիցների հետ | Հայաստանում ՄՄԿ-ի առաքելության գլխավոր գրասենյակ |

**Կիրակի, 2007 թ.-ի հոկտեմբերի 28-ին**

| | | |
|---|---|---|
| 15:00 –17:00 | Փորձագետները հանդիպում են գնահատման առաքելությունը քննարկելու համար | |
| 17:00 – 22:00 | Հանդիպում առաքելության աշխատակիցների հետ<br>գրասենյակի ղեկավար և ԾՄԻԲ-ի պետ | |

**Օր 1-ին. Երկուշաբթի, 2007 թ.-ի հոկտեմբերի 29-ին**

| | | |
|---|---|---|
| 09:30 – 11:00 | Հանդիպում առաքելության աշխատակիցների հետ<br>Գրասենյակի ղեկավար, ծրագրերի մշակման և իրականացման բաժնի և միգրացիոն ռեսուրսների կենտրոնի աշխատակիցներ | Հայաստանում ՄՄԿ-ի առաքելության գլխավոր գրասենյակ |
| 11:00 – 12:00 | Հանդիպում արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության հետ<br>վարչության պետ Ջյունիկ Աղաջանյան | Արտաքին գործերի նախարարություն |
| 12:00 – 13:00 | Հանդիպում արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության հետ<br>վարչության պետ Տիգրան Սեյրանյան և միգրացիայի բաժնի պետ Արամ Խաչատրյան | Արտաքին գործերի նախարարություն |
| 14:30 – 17:45 | Հանդիպում տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալությունում<br>գործակալության պետ Գագիկ Եգանյան, պետի տեղակալ Դավիթ Հակոբյան | ՄԳ |

## Օր 2-րդ. Երեքշաբթի, 2007 թ.-ի հոկտեմբերի 30-ին

| | | |
|---|---|---|
| 09:30 – 12:00 | Հանդիպում աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչությունում վարչության պետ Վահան Սիմոնյան, շխատանքի բաժնի պետ Գագիկ Բլեյան | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| 12:00 – 13:00 | Հանդիպում Աշխատանքի միջազգային կազմակեր-պության գրասենյակում Ազգային թղթակից Նունե Հովհաննիսյան և ծրագրի համակարգող Նվեր Սարգսյան | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| 14:00 – 16:00 | Հանդիպում ՀՀ Ոստիկանությունում անօրինական միգրացիայի դեմ պայքարի և միջազգային համագործակցության բաժին բաժնի պետ Ստեփան Վարդանյանց | ՀՀ Ոստիկանություն |
| 16:00 – 17:00 | Հանդիպում Հայաստանում եվրոպական հանձնաժո-ղովի պատվիրակության հետ ժամանակավոր հավատարմատար Ռաուլ դե Լու-զենբերգեր, և ծրագրի ղեկավար Դավիթ Ավագյան | ԵՀ ներկայացուցչություն |
| 17:00 – 18:00 | Հանդիպում «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի հետ, որն իրականացնում է (Բրիտանական խորհրդի և Հայաստանի Միգրացիայի գործակալության հետ համատեղ) ԵՀ-ի և Բրիտանական խորհրդի կողմից ֆինանսա-վորվող «Աջակցություն Հայաստանում միգրացիայի քաղաքականության մշակմանը և համապատաս-խան կարողությունների զորացմանը» ծրագիրը գործադիր տնօրեն Թևան Պողոսյան, Ուսուցման կենտրոնի տնօրեն Աշոտ Խուրշուդյան, Ծրագրերի կառավարման գրասենյակի պետ Արմեն Գալստյան, Ծրագրերի իրականացման գրասենյակի պետ Պա-րույր Ամիրջանյան, և Հայաստանում Բրիտանական խորհրդի ծրագրի հա-մակարգող Նարեկ Թովմասյան | Անի Պլազա հյուրանոց |

## Օր 3-րդ. Չորեքշաբթի, 2007 թ.-ի հոկտեմբերի 31-ին

| | | |
|---|---|---|
| 09:30 – 11:30 | Քննարկում Հայաստանում ՄԱԿ-ի առաքելությունում | Հայաստանում ՄԱԿ-ի առաքե-լության գլխավոր գրասենյակ |
| 11:30 – 13:30 | Հանդիպում ՀՀ Ոստիկանությունում Անձնագրերի և վիզաների վարչություն վարչության պետի տեղակալ Սամվել Աղաջանյան | ՀՀ Ոստիկանության Անձնագ-րերի և վիզաների վարչություն |
| 14:30 – 17:00 | Ազգային անվտանգության ծառայություն Երկրորդ գլխավոր վարչության ապօրինի միգրացիայի դեմ պայքարի երկրորդ բաժնի պետ գնդապետ Ռուբեն Աբրահամյան, Սահմանապահ զորքերի սահմանային վերահսկո-ղության ջոկատի պետ գնդապետ Շավարշ Միքայել-յան, և միջազգային հարաբերությունների վարչութ-յան աշխատակից Նանա Սաղաթելյան | Ազգային անվտանգության ծառայություն |
| 17:00 – 17:45 | Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակ մշտական ներկայացուցիչ Բուշրա Հալեպոտա | ՄԱԿ-ի ՓԳՀԳ |

**Օր 4-րդ. Հինգշաբթի, 2007 թ.-ի նոյեմբերի 1-ին**

| | | |
|---|---|---|
| 10:00 – 11:00 | Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Երևանյան գրասենյակ<br>Մարդու իրավունքների գծով մասնագետ Սիլվիա Պոգոլշա, ժողովրդավարացման գծով մասնագետ Սվեն Հոլդար | ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակ |
| 11:00 –12:00 | Միավորված ազգերի կազմակերպության «Բնակչության գործունեության հիմնադրամ Հայաստան»-ի գրասենյակ<br>Ներկայացուցիչ Գարիկ Հայրապետյան, Ծրագրերի Ազգային պատասխանատու Արփինե Կորեկյան | ՄԱԿ |
| 12:00 – 13:00 | Այցելություն ՄԱԿ-ի Միգրացիոն ռեսուրսների կենտրոն | ՄԱԿ-ի Միգրացիոն ռեսուրսների կենտրոն |
| 14:00 – 15:00 | Քննարկում Հայաստանում ՄԱԿ-ի առաքելությունում | Հայաստանում ՄԱԿ-ի առաքելության գլխավոր գրասենյակ |
| 15:00 – 16:00 | Ազգային վիճակագրական ծառայություն ծառայության պետ Ստեփան Մնացականյան, Պետական վիճակագրական խորհրդի անդամ Գագիկ Գևորգյան,<br>Աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լուսինե Քալանթարյան | Ազգային վիճակագրական ծառայություն |
| 16:00 – 17:00 | Գլխավոր դատախազության Մարդկանց առևտրի և ապօրինի միգրացիայի դեմ պայքարի վարչություն ավագ դատախազ Վահագն Հարությունյան դատախազ Աշոտ Նաղեյան | Գլխավոր դատախազություն |
| 17:00 – 18:00 | Առողջապահության նախարարություն<br>Արտաքին հարաբերությունների վարչության պետ Հայկ Գրիգորյան, և<br>Առաջնային բուժօգնության վարչության պետ Ռուզաննա Յուզբաշյան | Առողջապահության նախարարություն |

**Օր 5-րդ. Ուրբաթ, 2007 թ.-ի նոյեմբերի 2-ին**

| | | |
|---|---|---|
| 10:00 – 10:30 | Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի Երևանյան գրասենյակ մշտական ներկայացուցիչ Կոնսուելո Վիդալ Բրուս | ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր |
| 10:30 – 12:00 | Քննարկում Հայաստանում ՄԱԿ-ի առաքելությունում | Հայաստանում ՄԱԿ-ի առաքելության գլխավոր գրասենյակ |
| 12:00 – 13:00 | Հանդիպում Արդարադատության նախարարությունում<br>Քրեակատարողական վարչության պետ Աշոտ Մարտիրոսյան, Գլխավոր դատախազության Դատական ակտերի և կիրառրկած այլ միջոցառումների վերահսկողության վարչության նախկին պետ պարոն Վարդանյան | ԱՆ-ի Քրեակատարողական վարչություն |
| 14:30 – 15:30 | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի պետական տեսչություն Աշխատանքային պայմանների վերահսկողության բաժնի պետ Գևորգ Գևորգյան | Աշխատանքի պետական տեսչություն |
| 15:30 – 17:00 | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն<br>գործակալության պետ Սոնա Հարությունյան, պետի տեղակալ Արտակ Սիմոնյան և<br>Զբաղվածության խորհրդատվության և տեղեկատվության բաժնի առաջատար մասնագետ Լիզա Դիասյան | «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն |

Փորձագետներ՝ Պիեր Ռոսի-Լոնգի և Թերեզ Լինդսքրյոմ

Ֆինանսավորումը՝ Շվեդիայի միգրացիոն խորհրդի

**Ծանոթագրություն.** Անգլերենից հայերեն և հակառակը թարգմանությունն ապահովեց թարգմանիչ Արթուր Առուստամովը

Վարորդ՝ Հրայր Աննիկյան

ՄՄԿ-ի Հայաստանի առաքելություն (հեռ.՝ 585692)

Գրասենյակի ղեկավար՝ Իլոնա Տեր-Մինասյան

Ծրագրերի մշակման և իրականացման բաժնի (ԾՄԻԲ) ղեկավար՝ Քրիստինա Գալստյան

Միգրացիոն ռեսուրս կենտրոնի տնօրեն Ռոբերտ Գասպարյան

Ծրագրի համակարգող Նունե Ասատրյան

# Օրակարգ

## Գնահատման երկրորդ այցելություն

«Հայաստանում միգրացիայի կառավարման ոլորտում կարողությունների զարգացում. գնահատում» ծրագիր

**Օր 1-ին. Երկուշաբթի, 2008 թ.-ի հունվարի 28-ին**

Ուղևորություն դեպի Բագրատաշենի (Տավուշի մարզ) սահմանի (Վրաստանի հետ) հատման կետ և սահմանի հատման փաստացի ուսումնասիրում

| | | |
|---|---|---|
| 14:00 – 17:30 | Սահմանի հատման փաստացի ուսումնասիրում Բագրատաշենում<br>Սահմանապահ զորքերի սահմանային հսկողության բաժանմունքի Բագրատաշենի սահմանային վերահսկողության կետի պետի տեղակալ Հայրապետ Հակոբյան,<br>Ոստիկանության Բագրատաշենի Անձնագրերի և վիզաների բաժնի տեսուչ Աշոտ Ղալաչյան | Ազգային անվտանգության ծառայության սահմանային զորքեր |

**Օր 2-րդ. Երեքշաբթի, 2008 թ.-ի հունվարի 29-ին**

| | | |
|---|---|---|
| 09:00 – 13:00 | Փորձագետներն աշխատում են հաշվետվության վրա | Հայաստանում ՄՄԿ-ի առաքելության գլխավոր գրասենյակ |
| 14:30 – 16:30 | Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում սահմանի հատման փաստացի ուսումնասիրում<br>Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի Սահմանային հսկողության ջոկատի հրամանատար գնդապետ Շավարշ Միքայելյան,<br><br>«Զվարթնոց» օդանավակայանի սահմանային հսկողության բաժնի պետ Արմեն Մկրտչյան,<br>Արմենիա միջազգային օդանավակայանների (Երևանի «Զվարթնոց» և Գյումրիի օդանավակայանների կոնցեսիոներ) անվտանգության ծառայության ղեկավար Արմեն Ազնավուրյան<br>Ոստիկանության ԱՎՎ տեսուչ Գոհար Համբարձումյան | «Զվարթնոց» միջազգային օդանավակայան |
| 17:00 – 19:30 | Հանդիպում «Ավիաինֆո Թել» ՓԲԸ-ի հետ (Ընկերությունը իրականացնում է Սահմանային կառավարման տեղեկատվական համակարգի մշակման աշխատանքները)<br>Նախագահ Սամվել Մուրադյան | ԱՄՕ-ի վարչական շենք, «Զվարթնոց» միջազգային օդանավակայան |

**Օր 3-րդ. Չորեքշաբթի, 2008 թ.-ի հունվարի 30-ին**

| | | |
|---|---|---|
| 10:15 – 10:45 | Փորձագետներն աշխատում են հաշվետվության վրա | Հայաստանում ՄՄԿ-ի առաքելության գլխավոր գրասենյակ |
| 11:00 – 13:00 | Հանդիպում ՀՀ Ոստիկանությունում<br>Անձնագրերի և վիզաների վարչություն<br>վարչության պետի տեղակալ Սամվել Աղաջանյան | ՀՀ Ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչություն |
| 14:30 – 16:00 | Հանդիպում Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալությունում<br>գործակալության պետի տեղակալ Դավիթ Հակոբյան,<br>Ապաստան ստանալ ցանկացողների բաժնի պետ Պետրոս Աղաբաբյան, և<br>Միգրացիոն ծրագրերի բաժնի պետ Իրինա Դավթյան | ՄԳ |

| | | |
|---|---|---|
| 16:00 – 17:30 | Առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ճյուղային և տարածաշրջանային տնտեսական զարգացման վարչության պետ Հայկ Միրզոյան, Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման վարչության պետ Արամ Ճշմարիտյան, Ներդրումային քաղաքականության և շուկայի ենթակառուցվածքի զարգացման վարչության պետ Գնել Մայիլյան, Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման վարչության առաջատար մասնագետ Աշոտ Սարշաղուլյան և Համահայկական հիմնադրամի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման կենտրոնի գործադիր տնօրեն, դոկտոր Իշխան Կարապետյան | ԱՏԶՆ |
| 17:30 – 18:30 | Փորձագետներն աշխատում են հաշվետվության վրա | Հայաստանում ՄՄԿ-ի առաքելության գլխավոր գրասենյակ |

**Օր 4-րդ. Հինգշաբթի, 2008 թ.-ի հունվարի 31-ին**

| | | |
|---|---|---|
| 10:00 – 11:30 | Հանդիպում Խորհրդարանի Պետա-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի հետ Հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյան | ՀՀ Խորհրդարան |
| 12:00 – 13:00 | ՀՀ Նախագահի աշխատակազմի Վերահսկողական ծառայությունում Նախագահի օգնական Վիգեն Սարգսյան | Նախագահի աշխատակազմ |
| 14:00 – 15:00 | Փորձագետներն աշխատում են հաշվետվության վրա | Հայաստանում ՄՄԿ-ի առաքելության գլխավոր գրասենյակ |
| 15:00 – 16:00 | Հանդիպում Արտաքին գործերի նախարարության Միջազգային կազմակերպությունների վարչության հետ Վարչության պետ Զյունիկ Աղաջանյան | Արտաքին գործերի նախարարություն |
| 16:00 – 18:00 | Փորձագետներն աշխատում են հաշվետվության վրա | Հայաստանում ՄՄԿ-ի առաքելության գլխավոր գրասենյակ |

Փորձագետներ՝ Պիեր Ռոսի-Լոնգի և Թերեզ Լինդսքրյոմ

Ֆինանսավորումը՝ Շվեդիայի միգրացիոն խորհրդի

Վարորդ՝ Հրայր Աննիկյան

ՄՄԿ-ի Հայաստանի առաքելություն (հեռ.՝ 585692)

Գրասենյակի ղեկավար՝ Իլոնա Տեր-Մինասյան

Ծրագրերի մշակման և իրականացման բաժնի (ԾՄԻԲ) ղեկավար՝ Քրիստինա Գալստյան

Ծրագրի համակարգող Նունե Ասատրյան

# Օրակարգ

## Ուսուցողական այց

«Հայաստանում միգրացիայի կառավարման ոլորտում կարողությունների զարգացում. գնահատում» ծրագիր

**Օր 1-ին. Երեքշաբթի, 2008 թ.-ի ապրիլի 1-ին**

| | | |
|---|---|---|
| 09:30 –11:30 | Արդարադատության նախարարություն | Միգրացիայի ու ապաստանի բաժին. միգրացիայի ու ապաստանի բաժնի պետ, գլխավոր տնօրենի տեղակալ Նիկլաս Քեբբոն և տնօրեն Էվա Օքերման Բյորջե Միգրացիայի հարցերի կառավարման բաժին. բաժնի պետ, գլխավոր տնօրենի տեղակալ Անդերս Քեսլինգ, տնօրեն Յան Էրլանդսոն հասցեն՝ Մալմթորգսգաթան 3 |
| 13:00 – 14:00 | փոխադրում դեպի Արլանդա օդանավակայան | |
| 14:30 – 15:30 | Շվեդիայի սահմանային ոստիկանություն | Ջոկատի հրամանատար Պատրիկ Պետերսոն, Հատվածի ղեկավար, Բենգտ Լինդգրեն, տեսուչ Ջոն Քռուլ հասցեն՝ Արլանդա միջազգային օդանավակայան |
| 15:30 – 17:30 | Շվեդական միգրացիոն խորհրդի օդանավակայանի և արտակարգ իրավիճակների բաժանմունք<br>- խորհրդի մանդատն ու քաղաքականությունը<br>- խորհրդի աշխատանքը սահմանին | Թերեզ Լինդսթրյոմ և Միգրացիայի հարցերով գլխավոր պատասխանատու Մարի Լյունգգրեն հասցեն՝ Արլանդա միջազգային օդանավակայան |

**2-րդ օր. Չորեքշաբթի, 2008 թ.-ի ապրիլի 2-ը**

| | | |
|---|---|---|
| 09:30 – 11:00 | Շվեդիայի ոստիկանություն (անօրինական մնալը, բռնի վերադարձ) | Տեսուչ Պեր-Օկե Կաատի և կրտսեր ոստիկան Նատալիա Կարլսսոն հասցեն՝ Պիրամիդվեգեն 2Ա, Սոլնա |
| 11:00 – 12:00 | Շվեդական միգրացիոն բաժանմունք<br>-անձը հաստատող փաստաթղթերի բաժանմունք | Փորձագետ Բենգտ Հելլսթրյոմ, Փորձագետ Ֆրեդ Ֆորսբերգ հասցեն՝ Պիրամիդվեգեն 2Ա, Սոլնա |
| 13:00 – 14:30 | Շվեդական միգրացիոն խորհուրդ<br>- թույլտվություններ | Բաժնի պետ Կառլ Ինգելս հասցեն՝ Պիրամիդվեգեն 2Ա, Սոլնա |
| 14:30 – 15:30 | Շվեդական միգրացիոն խորհուրդ<br>- վերադարձ | Միգրացիայի հարցերով պատասխանատու Պեր Կարլսսոն հասցեն՝ Պիրամիդվեգեն 2Ա, Սոլնա |
| 15:30 – 16:30 | Շվեդական միգրացիոն խորհուրդ<br>- Կապի պատասխանատուներ | Փորձագետ Քրիստինա Ռեննար հասցեն՝ Պիրամիդվեգեն 2Ա, Սոլնա |

**3-րդ օր. Հինգշաբթի, 2008 թ.-ի ապրիլի 3-ը**

| | | |
|---|---|---|
| 10:00 – 11:30 | կալանավորման կենտրոն | Բաժանմունքի պետ Պեր Սյորենսեն միգրացիոն ծառայողներ Ալեքսանդրա Լիմոնտ և Արամ Բարսեղյան հասցեն՝ Մասկինգաթան, Մերստա |
| 11:30 – 13:00 | Շվեդական միգրացիոն խորհուրդ, ապաստանի բաժանմունք<br>- ընդունման կետրոն<br>- ապաստանի բաժանմունք | Միգրացիայի հարցերով գլխավոր պատասխանատու Մագնուս Կարլսսոն հասցեն՝ Մասկինգաթան, Մերստա |

| | | |
|---|---|---|
| 15:00 – 16:30 | Միգրացիայի գործերով դատարան | Գլխավոր դատավոր Մարի Անդերսոն, ավագ դատավոր Պետեր էնանդեր, դատավոր էն-ժանեթ էրիկսոն, իրավաբաններ Աննա Բենգտսոն, Ժոզեֆին Կառլսոն, Կատարինա Սվեդելիուս և Վիկտորիա Յոֆ<br>hասցեն՝ Թեգելուդդսվեգեն 1 |

## 4-րդ օր. Ուրբաթ, 2008 թ.-ի ապրիլի 4-ը

| | | |
|---|---|---|
| 09:00 – 12:00 | Եզրակացությունների ու առաջարկությունների ներկայացում | hասցեն՝ Պիրամիդվեգեն 2Ա, Սոլնա, Pyramidvägen 2A, Solna |
| 12:00 – 13:00 | Ամփոփում | Բաժնի պետ Լարս Պեհլսոն (hանդես է եկել Գլխավոր տնօրեն Դան էլիասոնի անունից), Եվրոպական և միջազգային համագործակցության բաժնի աշխատակազմի ղեկավար Ուլրիկ էսհուլվուդ, Միջազգային ռազմավարությունների բաժնի պետ Կլաուդիա Մորներ<br>hասցեն՝ Պիրամիդվեգեն 2Ա, Սոլնա |

Ֆինանսավորող ֆոնդ՝ Շվեդական միգրացիոն խորհուրդ

Կազմակերպիչ՝

Շվեդական միգրացիոն խուրհուրդ, Շվեդական միգրացիոն խորհրդի օդանավակայանների և արտակարգ իրավիճակների բաժնի պետ Թերեզ Լինդսքրյոմ

Մասնակիցներ՝

Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության պետ Տիգրան Սեյրանյան
Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետի տեղակալ Գարիկ Սահակյան,
Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարարության Իրավաբանական բաժնի պետ Արսեն Հասասյան
Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարարության Միգրացիայի գործակալության պետ Գագիկ Եգանյան
Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի Սահմանային հսկողության բաժանմունքի հրամանատար գնդապետ Շավարշ Միքայելյան
Հայաստանի Հանրապետության Ոստիկանության իրավական ապահովման վարչության պետի տեղակալ փոխգնդապետ Հովհաննես Քոչարյան
ՄՄԿ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հետ տեխնիկական համագործակցության կենտրոնի տնօրեն Պիեր Ռոսի-Լոնգի

ՄՄԿ-ի Հայաստանի առաքելության ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Քրիստինա Գալստյան:

## *Հավելված 3. Միգրացիայի հարցերին առնչվող միջազգային համաձայնագրերի ցանկ*

**Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է հետևյալ միջազգային իրավական փաստաթղթերը.**

**ԱՊՀ համաձայնագրեր.**

1998 թ. մարտի 6-ի «Ապօրինի միգրացիայի դեմ պայքարի ուղղությամբ ԱՊՀ երկրների համագործակցության մասին» համաձայնագիր (ուժի մեջ է 1999թ. օգոստոսի 13-ից)

1991 թ. դեկտեմբերի 29-ի «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ աջակցության և դեպի 21-րդ դարը համագործակցության մասին» համաձայնագիր

1994 թ. «Աշխատանքային միգրացիայի և միգրանտ աշխատողների սոցիալական պաշտպանության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիր (ուժի մեջ է 1996թ. փետրվարի 26-ից)

1992 թ. հոկտեմբերի 9-ի «Վիզաների փոխադարձ ճանաչման մասին ԱՊՀ երկրների միջև համաձայնագիր»

1992 թ. մայիսի 15-ի «ԱՊՀ հավաքական անվտանգության համաձայնագիր»[134]

**Միավորված ազգերի կազմակերպության համաձայնագրեր.**[135]

Միացյալ ազգերի կազմակերպության 2000թ. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի» կոնվենցիա (վավերացվել է 2003թ. հուլիսի 1-ին)

Միացյալ ազգերի կազմակերպության 2000թ. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի» կոնվենցիան (վավերացվել է 2003թ. հուլիսի 1-ին) լրացնող «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգի կանխման, վերացման և պատժի մասին» արձանագրություն

Միացյալ ազգերի կազմակերպության 2000թ. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի» կոնվենցիան (վավերացվել է 2003թ. հուլիսի 1-ին) լրացնող «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինականփոխադրումների դեմ» արձանագրություն

1951թ. «Փախստականների կարգավիճակի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա (դարձել է կոնվենցիայի անդամ 1993թ. հուլիսի 6-ին)

**Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների համաձայնագրեր**[136]

[134] http://www.dkb.gov.ru: ԱՊՀ Հավաքական անվտանգության համաձայնագիրը ստորագրվել է Հայաստանի, Ղազախստանի, Կիրգիզիայի, Ռուսաստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի կողմից 1992թ. մայիսի 15-ին: 1993թ. Վրաստանը, Բելառուսը և Ադրբեջանը ստորագրեցին նշված համաձայնագիրը, որն ուժի մեջ մտավ 1994թ. ապրիլի 20-ին՝ գործողության 5 տարի ժամկետով, մինչև վերջինիս հնարավոր երկարաձգումը: 1999թ. Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստան, Ռուսաստանը և Տաջիկստանը ստորագրեցին արձանագրություն, որին համապատասխան համաձայնագրի գործողության ժամկետը երկարացվեց ևս հինգ տարով, մինչդեռ Ադրբեջանը, Վրաստանը և Ուզբեկստանը դուրս եկան համաձայնագրից (այժմ Ադրբեջանը, Վրաստանը, Մոլդովան, Ուկրաինան և Ուզբեկստանը անդամակցում են GUAM / GUUAM-ի ժողովրդավարության և տնտեսական զարգացման կազմակերպությանը (ստեղծվել է 1997թ. Ստրասբուրգում, http://www.guam.org.ua/en.phtml):

[135] Աղբյուրը՝ http://www.unodc.org/unodc/en/treaties/CTOC/signatures.html:

[136] Աղբյուրը՝ http://www.unhchr.ch/tbs/doc.nsf/Statusfrset?OpenFrameSet

«CAT» 1984թ. «Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիա» (միացել է կոնվենցիային 1993թ. սեպտեմբերի 13-ին)

«CAT-OP» «Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիա»-ի 2002թ. կամընտիր արձանագրություն (միացել է 2006թ. սեպտեմբերի 14-ին)

«CCPR» 1966թ. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր (միացել է դաշնագրին 1999թ. հունիսի 23-ին)

«CCPR-OP1» «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» պայմանագրի հայեցական արձանագրություն (միացել է 1999թ. հունիսի 23-ին)

«CEDAW» 1979թ. «Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա (միացել է կոնվենցիային 1993թ. սեպտեմբերի 13-ին)

«CEDAW OP» «Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի 1999թ. Կամընտիր արձանագրություն (միացել է 2006թ. սեպտեմբերի 14-ին)

«CERD» 1966թ. «Ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիա (միացել է կոնվենցիային 1993թ. հունիսի 23-ին)

«CESCR» 1966թ. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր (միացել է պայմանագրին 1993թ. սեպտեմբերի 13-ին)

«CRC» 1989թ. «Երեխայի իրավունքների կոնվենցիա» (միացել է կոնվենցիային 1993թ. հուլիսի 23-ին)

«CRC-OP-AC» «Երեխայի իրավունքների կոնվենցիա»-ի 2000թ. «Զինված հակամարտություններում երեխաների մասնակցության մասին» կամընտիր արձանագրություն (վավերացրել է 2005թ. սեպտեմբերի 30-ին)

«CRC-OP-SC» «Երեխայի իրավունքների կոնվենցիա»-ի «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին» կամընտրական արձանագրություն (վավերացրել է 2005թ. սեպտեմբերի 30-ին)

«CED» 2006թ. «Պարտադրված անհայտացումից բոլոր անձանց պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիա (ստորագրվել է 2007թ. ապրիլի 10-ին, դեռևս չի վավերացվել)

**ԱՄԿ-ի կոնվենցիաներ.**[137]

«C14» 1921թ. «Ամեն շաբաթյա հանգստի մասին (Արդյունաբերության ոլորտը)» կոնվենցիա (վավերացրել է 2006թ. հունվարի 27-ին)

«C17» 1925թ. «Արտադրական պատահարների դեպքում աշխատողների փոխհատուցման մասին » կոնվենցիա (վավերացրել է 2004թ. դեկտեմբերի 17-ին)

«C18» 1925թ. «Մասնագիտական հիվանդությունների դեպքում աշխատողների փոխհատուցման մասին» կոնվենցիա (վավերացրել է 2005թ. մայիսի 18-ին)

«C26» 1928թ. «Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին» կոնվենցիա (վավերացրել է 2006թ. հունվարի 27-ին)

C29 1930թ. «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» կոնվենցիա (վավերացրել է 2004թ. դեկտեմբերի 17-ին)

---

[137] Աղբյուրը՝ http://www.ilo.org/ilolex/english/newcountryframeE.htm

«C81» 1947թ. «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» կոնվենցիա (վավերացրել է 2004թ. դեկտեմբերի 17-ին)

«C87» 1948թ. «Միավորման ազատության և կազմակերպելու իրավունքի պաշտպանության մասին» կոնվենցիա (վավերացրել է 2006թ. հունվարի 2-ին)

«C94» 1949թ. «Պետական մարմինների կողմից կնքվող պայմանագրերում աշխատանքային հոդվածների մասին կոնվենցիա» (վավերացրել է 2005թ. մայիսի 18-ին)

«C95» 1949թ. «Աշխատավարձի պաշտպանության մասին կոնվենցիա» (վավերացրել է 2004թ. դեկտեմբերի 17-ին)

«C97» 1949թ. «Զբաղվածության համար միգրացիայի մասին կոնվենցիա» (վերանայված) (վավերացրել է 2006թ. հունվարի 27-ին)

«C98» 1949թ. «Կոլեկտիվ բանակցություններ կազմակերպելու իրավունքի սկզբունքների կիրառման մասին կոնվենցիա» (վավերացրել է 2003թ. նոյեմբերի 12-ին)

«C100» 1951թ. «Հավասար վարձատրության մասին» կոնվենցիա (վավերացրել է 1994թ. հուլիսի 29-ին)

«C105» 1957թ. «Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիա» (վավերացրել է 2004թ. դեկտեմբերի 17-ին)

«C111» 1958թ. «Աշխատանք և զբաղմունքների բնագավառում խտրականության մասին կոնվենցիա» (վավերացրել է 1994թ. հուլիսի 29-ին)

«C122» 1964թ. «Զբաղվածության բնագավառում քաղաքականության մասին կոնվենցիա» (վավերացրել է 1994թ. հուլիսի 29-ին)

«C131» 1970թ. «Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին կոնվենցիա»

«C132» 1970թ. «Վարձատրվող տոնական օրերի մասին» կոնվենցիա (վերանայված) (վավերացրել է 2006թ. հունվարի 27-ին)

«C135» 1971թ. «Աշխատավորների ներկայացուցիչների մասին» կոնվենցիա (վավերացրել է 1994թ. հուլիսի 29-ին)

«C138» 1973թ. «Նվազագույն աշխաատվարձի մասին» կոնվենցիա (վավերացրել է 2006թ. հունվարի 27-ին)

«C143» 1975թ. «Միգրանտ աշխատողների մասին» կոնվենցիայի լրացուցիչ դրույթներ (վավերացրել է 2006թ. հունվարի 27-ին)

«C144» 1976թ. «Աշխատանքի միջազգային նորմերի կատարմանն աջակցելու համար եռակողմ խորհրդակցությունների մասին կոնվենցիա» (վավերացրել է 2005թ. ապրիլի 29-ին)

«C150» 1978թ. «Աշխատանքի հարցերի կարգավորման՝ դերի, գործառույթների և կազմակերպման մասին կոնվենցիա» (վավերացրել է 2005թ. մայիսի 18-ին)

«C151» 1978թ. «Պետական ծառայության մեջ աշխատանքային հարաբերությունների մասին կոնվենցիա» (վավերացրել է 1994թ. հուլիսի 29-ին)

«C154» 1981թ. «Կոլեկտիվ բանակցություններին ավակցելու մասին կոնվենցիա» (վավերացրել է 2005թ. ապրիլի 29-ին)

«C160» 1985թ. «Աշխատանքի վիճակագրության մասին կոնվենցիա» (վավերացրել է 2005թ. ապրիլի 29-ին)

«C173» 1992թ. «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների շահերի պաշտպանության մասին կոնվենցիա» (վավերացրել է 2005թ. մայիսի 18-ին)

«C174» 1993թ. «Խոշոր արդյունաբերական վթարների կանխարգելման կոնվենցիա» (վավերացրել է 1996թ. հունվարի 3-ին)

«C176» 1995թ. «Հանքահորում աշխատանքների հիգիենայի և անվտանգության մասին կոնվենցիա» (վավերացրել է 1999թ. ապրիլի 27-ին)

«C182» 1999թ. «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» կոնվենցիա (վավերացրել է 2006թ. հունվարի 2-ին)

**Եվրոպայի խորհրդի համաձայնագրեր**[138]

005 1950թ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա» (վավերացրել է 2002թ. ապրիլի 26-ին)

009 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա»-ի 1952թ. արձանագրություն (վավերացրել է 2002թ. ապրիլի 26-ին)

044 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա»-ի 1963թ. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանին խորհրդատվական բնույթի եզրակացությունների իրավունք տալու մասին» արձանագրություն թիվ 2 (վավերացրել է 2002թ. ապրիլի 26-ին)

173 1999թ. «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա» (վավերացրել է 2006թ. հունվարի 9-ին)

191 «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա»-ի Լրացուցիչ արձանագրություն (վավերացրել է 2006թ. հունվարի 9-ին)

174 1999թ. «Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիա» (վավերացրել է 2005թ. հունվարի 7-ին)

045 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա»-ի 1963թ. «Կոնվենցիայի հոդվածներ 29-ում, 30-ում և 34-ում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 3 արձանագրություն (վավերացրել է 2002թ. ապրիլի 26-ին)

046 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա»-ի 1963թ. «Կոնվենցիայում և 1963թ. թիվ 1 արձանագրությունում արդեն ամրագրված իրավունքներից և ազատություններից բացի որոշակի այլ իրավունքների և ազատությունների ապահովման մասին» թիվ 4 արձանագրություն (վավերացրել է 2002թ. ապրիլի 26-ին)

055 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա»-ի 1966թ. «Կոնվենցիայի հոդվածներ 22-ում և 40-ում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 5 արձանագրություն (վավերացրել է 2002թ. ապրիլի 26-ին)

114 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա»-ի 1983թ. «Մահապատժի վերացման մասին» թիվ 6 արձանագրություն (վավերացրել է 2003թ. սեպտեմբերի 29-ին)

117 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա»-ի 1984թ. թիվ 7 արձանագրություն (վավերացրել է 2002թ. ապրիլի 26-ին)

118 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա»-ի 1985թ. թիվ 8 արձանագրություն (վավերացրել է 2002թ. ապրիլի 26-ին)

---

[138] Աղբյուրը՝ http://conventions.coe.int/Treaty/Commun/ChercheMembres.asp?CM=3&CL=ENG. 29/2/2008-ի դրությամբ ստորագրված և վավերացված կամ այդ օրվա դրությամբ ընդունման ենթակա համաձայնագրեր

155 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիա»-ի 1994թ. «Կոնվենցիայով սահմանված վերահսկողության համակարգի փոփոխման մասին» թիվ 11 արձանագրություն (վավերացրել է 2002թ. ապրիլի 26-ին)

177 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա»-ի 2000թ. թիվ 12 արձանագրություն (վավերացրել է 2004թ. դեկտեմբերի 17-ին)

194 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա»-ի 2004թ. «Կոնվենցիայով սահմանված վերահսկողական համակարգի փոփոխման մասին» թիվ 14 արձանագրություն (վավերացրել է 2005թ. հունվարի 7-ին)

126 1987թ. «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոնվենցիա» (վավերացրել է 2002թ. հունիսի 18-ին)

151 «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոնվենցիա»-ի 1993թ. թիվ 1 արձանագրություն (վավերացրել է 2002թ. հունիսի 18-ին)

152 «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոնվենցիա»-ի 1993թ. թիվ 2 արձանագրություն (վավերացրել է 2002թ. հունիսի 18-ին)

148 1992թ. «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա» (վավերացրել է 2002թ. հունվարի 25-ին)

157 1995թ. «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության հիմնարար կոնվենցիա» (վավերացրել է 1998թ. հուլիսի 20-ին)

163 1996թ. Եվրոպական սոցիալական խարտիա (վերանայված) (վավերացրել է 2004թ. հունվարի 21-ին)

024 1957թ. «Հանձնման մասին եվրոպական կոնվենցիա» (վավերացրել է 2002թ. հունվարի 25-ին)

086 «Հանձնման մասին եվրոպական կոնվենցիա»-ի 1975թ. Լրացուցիչ արձանագրություն (վավերացրել է 2003թ. դեկտեմբերի 18-ին)

098 «Հանձնման մասին եվրոպական կոնվենցիա»-ի 1978թ. Երկրորդ լրացուցիչ արձանագրություն (վավերացրել է 2003թ. դեկտեմբերի 18-ին)

030 1959թ. «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիա» (վավերացրել է 2002թ. հունվարի 25-ին)

099 «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիա»-ի 1978թ. Լրացուցիչ արձանագրություն (վավերացրել է 2004թ. մարտի 23-ին)

073 1972թ. «Քրեական գործերի վարույթների փոխանցման մասին եվրոպական կոնվենցիա» (վավերացրել է 2004թ. դեկտեմբերի 17-ին)

090 1977թ. «Ահաբեկչության դեմ պայքարի եվրոպական կոնվենցիա» (վավերացրել է 2004թ. մարտի 23-ին)

190 «Ահաբեկչության դեմ պայքարի եվրոպական կոնվենցիա»-ում փոփոխությունների կատարման մասին 2003թ. արձանագրություն (վավերացրել է 2004թ. մարտի 23-ին)

112 1983թ. «Դատապարտյալների փոխանցման մասին» կոնվենցիա (վավերացրել է 2001թ. մայիսի 11-ին)

141 1990թ. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագանձման մասին» կոնվենցիա (վավերացրել է 2003թ. նոյեմբերի 24-ին)

185 2001թ. «Կիբեր-հանցագործությունների մասին» կոնվենցիա (վավերացրել է 2006թ. հոկտեմբերի 12-ին)

189 «Կիբեր-հանցագործությունների մասին» կոնվենցիայի 2003թ. Լրացուցիչ արձանագրություն համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական և կսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին (վավերացրել է 2006թ. հոկտեմբերի 12-ին)

2005թ. մայիսի 16-ի «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին ԵԽ կոնվենցիա» (ստորագրել է, սակայն դեռ չի վավերացրել, վավերացումն սպասվում է մոտ ապագայում)

**Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված համաձայնագրերը քաղաքացիների վերաընդունման մասին**[139]

2003թ. «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Դանիայի Թագավորության Կառավարության միջև առանց գտնվելու թույլտվության անձանց ետընդունման մասին» համաձայնագիր (վավերացվել է 2003թ. օգոստոսի 2-ին)

2002թ. «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լատվիայի Հանրապետության Կառավարության միջև անձանց հանձնման և ընդունման մասին» համաձայնագիր (վավերացրել է 2002թ. օգոստոսի 21-ին)

2003թ. «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լիտվայի Հանրապետության Կառավարության միջև համաձայնագիր առանց թույլտվության գտնվող անձանց ետընդունման մասին» (վավերացվել է 2003թ. դեկտեմբերի 13-ին)

2003թ. «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Շվեյցարիայի Դաշնային Խորհրդի միջև համաձայնագիր առանց թույլտվության գտնվող անձանց ետընդունման մասին» (վավերացվել է 2004թ. ապրիլի 27-ին)

2006թ. «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև համաձայնագիր առանց թույլտվության գտնվող անձանց ետընդունման մասին» (վավերացվել է 2008թ. փետրվարի 25-ին)

2007թ. «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բուլղարիայի Հանրապետության Կառավարության միջև համաձայնագիր առանց թույլտվության գտնվող անձանց ետընդունման մասին» (դեռևս չի վավերացվել)

[139] Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարություն:

## *Հավելված 4. Օգտագործվող հապավումները*

| | |
|---|---|
| ԱԱԾ | ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն |
| ԱԳՆ | ՀՀ Արտաքին գործերի նախարարություն |
| ԱԶԲ | Ասիական զարգացման բանկ |
| ԱԺ | ՀՀ Ազգային ժողով |
| ԱՄԿ | Աշխատանքի միջազգային կազմակերպություն |
| ԱՄՀ | Արժույթի միջազգային հիմնադրամ |
| ԱՄՆ | Ամերիկայի Միացյալ Նահանգներ |
| ԱՄՕ | Արմենիա միջազգային օդանավակայաններ |
| ԱՊՀ | Անկախ պետությունների համագործակցություն |
| ԱՍՀՆ | Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| ԱՎԾ | ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն |
| ԱՎՎ | ՀՀ Ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչություն |
| ԱՏԶՆ | ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն |
| ԳԱԾ | Գործողությունների ազգային ծրագիր |
| ԵԱՀԿ | Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն |
| ԵՀԾ | Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագիր |
| ԵԿԱՄՀԿ | ՄՄԿ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հետ տեխնիկական համագործակցության կենտրոն |
| ԵՄ | Եվրոպական Միություն |
| ԾՄԻԲ | ՄՄԿ-ի Հայաստանյան առաքելության ծրագրերի մշակման և իրականացման բաժին |
| ՀԱՀԿ | Հավաքական անվտանգության համաձայնագրի կազմակերպություն |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՀԿ | Հայաստանի Հանրապետության Կառավարություն |
| ՄԱԿ | Միավորված ազգերի կազմակերպություն |
| ՄԱԿ ԲԳՀ | ՄԱԿ-ի Բնակչության գործունեության հիմնադրամ |
| ՄԱԿ ՓԳՀ | ՄԱԿ-ի Փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակ |
| ՄԳ | ՀՀ Միգրացիոն գործակալություն |
| ՄԶՄԿ | Մարդկային զարգացման միջազգային կենտրոն ՀԿ |
| ՄԻԱՎ | մարդու իմունոանբավարության վիրուս |
| ՄԿԿԶԳ | Հայաստանում միգրացիայի կառավարման ոլորտում կարողությունների զարգացում. գնահատում ծրագիր |
| ՄՄԿ | Միգրացիայի միջազգային կազմակերպություն |
| ՄՌԿ | Միգրացիոն ռեսուրս կենտրոն |
| ՄՓՎ | Միգրացիայի և փախստականների վարչություն |
| ՄՔԾ | Միգրացիոն քաղաքականության ծրագիր |
| ՏԿՆ | ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն |
| ՌԴ | Ռուսաստանի Դաշնություն |
| ՇՄԽ | Շվեդական միգրացիոն խորհուրդ |
| ՍԿՏՀ | Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ |